Միսիոներական նախապատ-րաստության

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՄԱՐ

Կրոնի դասընթաց 130

«Գնացեք ողջ աշխարհը»

Վարդապետություն և Ուխտեր 84.62

Միսիոներական նախապատրաստության

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՄԱՐ

Կրոնի դասընթաց 130

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Դիտողությունները և ուղղումները, ներառյալ տպագրական բացթողումները, ուղարկեք հետևյալ հասցեով.
CES Curriculum, 50 E. North Temple Street, Room 820, Salt Lake City, UT 84150-2720 USA.
Էլ-փոստ. ces-manuals@ldschurch.org

© 2005 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Տպագրված է Գերմանիայում

Անգլերենի հաստատումը. 8/03: Թարգմանության հաստատումը. 8/03:
Missionary Preparation Student Manual-ի թարգմանությունը:
Armenian

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ուսանողի ուղեցույցի համար iv

Գլուխ 1. Կանչվում եք ծառայության 1

Գլուխ 2. Անձնական արժանավորություն 13

Գլուխ 3. Սուրբ Հոգու ընկերակցությունը 20

Գլուխ 4. Հոգով ուսուցանելը 30

Գլուխ 5. Սովորում ենք ուսուցանել «Ուսումնասիրելով և նաև հավատքով», մաս Ա 38

Գլուխ 6. Սովորում ենք ուսուցանել «Ուսումնասիրելով և նաև հավատքով», մաս Բ 49

Գլուխ 7. Երկնային Հոր ծրագիրը 55

Գլուխ 8. Մարգարեները և ուրացությունը 65

Գլուխ 9. Վերականգնումը և նոր սուրբ գրությունների երևան գալը 75

Գլուխ 10. Հավատքը և դարձի գալը 84

Գլուխ 11. Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն 93

Գլուխ 12. Ժամանակի իմաստուն օգտագործումը մարդկանց Քրիստոսի մոտ բերելիս 102

Գլուխ 13. Հետաքրքրվողներին մկրտության և հաստատման պատրաստելը 110

Գլուխ 14. Քրիստոսանման հատկանիշները 120

Ներածություն ուսանողի ուղեցույցի համար

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է, որ «Եկեղեցու առաքելությունն է փրկել հոգիները: Այն ներառում է ավետարանն ուսուցանելն այն մարդկանց, ովքեր պատրաստակամ են լսելու, որտեղ էլ որ լինեն…. Չկա ավելի մեծ աշխատանք: Չկա ավելի կարևոր աշխատանք: Չկա ավելի համոզիչ աշխատանք, քան այս աշխատանքն է, որի իրականացման համար երկնքի Աստվածը մեզ պատասխանատվություն է տվել» («Missionary Service», *First Worldwide Leadership Training Meeting*, Jan. 2003, 21):

Դուք պատրաստվում եք ընդունել աստվածատուր պատասխանատվություն: Աշխատանքը, որ դուք կանեք որպես միսիոներ, կլինի Փրկչի այս հանձնարարության կատարումը՝ «աշակերտել բոլոր ազգերին» (Մատթեոս 28.19): Որպես միսիոներ՝ ձեր նպատակն է «Հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով» («Քարոզիր իմ ավետարանը» [2004], 1):

Ուսանողի այս ձեռնարկի յուրաքանչյուր գլուխ կազմված է այնպես, որպեսզի օգնի ձեզ՝ որպես ապագա միսիոների, Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելիս, ինչպեսև վերականգնված ավետարանի վարդապետություններն ու սկզբունքները Աստծո զորությամբ և իշխանությամբ ուսուցանելիս (տե՛ս Ալմա 17.3): Որոշ գլուխներ կօգնեն նաև ծանոթանալ անձնական և միսիոներական վարքին և միսիայի հիմնական կազմակերպությանը: Գլուխները կազմված են հետևյալ հիմնական խորագրերով.

- **Նախաբան.** Այս բաժինը համառոտ ներկայացնում է յուրաքանչյուր գլխի թեման:
- **Վարդապետություն և սկզբունքներ, որոնք պետք է հասկանալ:** Այս բաժինը տալիս է վարդապետության և սկզբունքների ցանկ, որոնք ուսանողները պետք է հասկանան, ընդունեն և կիրառեն իրենց կյանքում:
- **Հաստատող սուրբ գրություններ և հայտարարություններ:** Այս բաժինը տալիս է առանձնահատուկ ուսմունքներ «Վարդապետություն և սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է հասկանալ» բաժնում թվարկված յուրաքանչյուր վարդապետության և սկզբունքի վերաբերյալ: Դրանք ուսումնասիրելիս դուք կարող եք նշումներ անել ձեր անձնական սուրբ գրություններում և ուսանողի օրագրում, որոնք ձեզ կօգնեն հիշել այն, ինչ սովորեցիք: Ձեզ առաջարկվում է, որ դուք ուսանողի օրագիր վերցնեք, որում կգրանցեք այն ներըմբռնումները, որոնք սովորում եք ավետարանն ուսանելիս: Շատ միսիոներում միսիոներներին հրահանգում են նման օրագիր վարել, այնպես որ սա ձեզ համար կլինի միսիոներական առաջին գործիքներից մեկը: Գլուխներում գոյություն ունի «Նշումներ և տպավորություններ» բաժին, որը տարբերվում է ուսանողի ձեր օրագրից, սակայն դուք կարող եք այդ բաժիններից նշումներ կատարել նաև ուսանողի ձեր օրագրում:
- **Խորհելու հարցեր:** Ժամանակ տրամադրեք, որպեսզի մտածեք այս բաժնում տրված հարցերի շուրջ: Հնարավոր է դուք ցանկանաք գրանցել ձեր մտքերը ուսանողի ձեր օրագրում:
- **Առաջարկվող հանձնարարություններ:** Այս հանձնարարությունները հնարավորություն են տալիս կիրառել այն, ինչ սովորում եք, և այդպիսով, իրական փորձառությամբ ավելացնում ձեր պատրաստվածությունը:
- **Առաջարկվող լրացուցիչ ընթերցանություն:** Այս ընթերցումները, որոնք հիմնականում «Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)» գրքույկից են, կավելացնեն ձեր ներըմբռնումները և կամրապնդեն գլուխներում քննարկվող կամ վկայակոչվող սկզբունքները:
- **Նշումներ և տպավորություններ:** Ուսանողի ձեռնարկի յուրաքանչյուր գլխի վերջում տրված այս բաժինն օգտագործեք, որպեսզի գրեք դասի ժամանակ ստացած տեղեկություններն ու տպավորությունները: Ձեր մտքերն ու զգացումները գրառելը կօգնի ավելի լավ ուսանել և հիշողության մեջ պահպանել կարևոր սկզբունքները և փորձառությունները: Այնուհետև դուք կարող եք այդ նշումներից ու տպավորություններից մի քանիսը գրել ուսանողի ձեր օրագրում:

Եթե դուք հաճախում եք միսիոներների նախապատրաստման դասարան, յուրաքանչյուր դասին ձեր հետ վերցրեք ուսանողի այս ձեռնարկը և ձեր սուրբ գրությունները: Առաջարկվում է, որ դուք ունենաք «Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» (գրացուցակային թիվ 36863) առաջարկվող լրացուցիչ ընթերցանության համար: Առաջին Նախագահության կողմից առաջարկված և Եկեղեցու կողմից հրատարակված այս գրքույկը պարունակում է ավետարանական թեմաներ, տրված այբբենական կարգով:

Միսիոներական ծառայության լրացուցիչ աղբյուրներից մեկը աշխարհով մեկ միսիոներների կողմից օգտագործվող «Քարոզիր իմ ավետարանը» (2004, գրացուցակային թիվ 36617) ուղեցույցն է: «Միսիոներների նախապատրաստության ուսանողի ուղեցույցը» իր սկզբունքներով ու

իմաստասիրությամբ համապատասխանում է «Քարոզիր իմ ավետարանը» ուղեցույցին: Այն մանրակրկիտ գրված է, որպեսզի նախապատրաստի ձեզ՝ հասկանալու այն վարդապետությունը և սկզբունքները, որոնց վրա հիմնված են և որոնց վրա կենտրոնացած են միսիոներական ծրագիրը և «Քարոզիր իմ ավետարանը» ուղեցույցը: Ուսանողի այս ձեռնարկն օգտագործելը և միսիոներների նախապատրաստության դասընթացին մասնակցելը կօգնի ձեզ պատրաստվել լիաժամկետ միսիոներական ծառայության, որտեղ ուսուցման հիմնական աղբյուրը «Քարոզիր իմ ավետարանը» ուղեցույցն է:

Թեմաները, որոնք ընդգրկված են և՛ ուսանողի այս ձեռնարկում, և՛ «Քարոզիր իմ ավետարանը» ուղեցույցում, ընդգրկում են՝ միսիայի ծառայության կոչման էությունը հասկանալը, ավետարանն ուսանելու և ուսուցանելու հմտությունները սովորելը, Ուրացության, Վերականգնման և վերջին օրերի սուրբ գրությունների կարևորության մասին ուսուցանելը. Սուրբ Հոգու դրսևորումները հասկանալը, ճանաչելը և Հոգով ուսուցանելը, Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելը և ժամանակն արդյունավետ օգտագործելը: Նյութերը, որոնք պարունակում է «Քարոզիր իմ ավետարանը», որոնք ընգրկված չեն ուսանողի այս ձեռնարկում, ներառում են միսիայի լեզուն ուսումնասիրելը, ուխտեր կապելիս և պահելիս մարդկանց օգնելը, մկրտության համար մարդկանց պատրաստելը և անդամների հետ աշխատելը: Ճաշ պատրաստելու և տնային տնտեսության հմտությունները, միսիայի մանրամասն կազմակերությունը և բյուջեով ապրելու սկզբունքները ևս ընգրկված չեն ուսանողի այս ձեռնարկում: Ձեր նախապատրաստությունը ձեզ կօգնի դիմակայել դժվարություններին և դառնալ հոգևոր ամուր միսիոներ, ինչպես ասել է Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից. «Եկեղեցու պատմության մեջ այժմ մենք կարիք ունենք միսիոներների ամենափառահեղ սերնդի: Մենք կարիք ունենք արժանավոր, պատրաստված, հոգևորապես եռանդուն միսիոներների, որոնք Հելամանի 2000 պատանի ռազմիկների պես «անսահման անվեհեր [են] խիզախության մեջ, և նաև ուժի և գործունեության մեջ», և որոնք «հավատարիմ [են] բոլոր դեպքերում, ինչ էլ որ նրանց վստահվում [է]» (Ալմա 53.20)» (տես «Conference Report», հոկ. 2002, 50–51 կամ «Ensign», նոյ. 2002, 47):

Գլուխ 1

ԿԱՆՉՎՈՒՄ ԵՔ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Երիտասարդ ամուրիի կյանքի ամենահուզիչ պահերից մեկն այն է, երբ նա բացում է Առաջին Նախագահությունից ստացված նամակը և կարդում է հետևյալ խոսքերը. «Սույն նամակով դուք կանչվում եք ծառայության....»: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի միսիոներները ոգեշնչմամբ կանչվում են ներկայացնելու Տիրոջը: Վերջին օրերի միսիոներական ուժերի մաս դառնալը պատիվ է: Մեծ ոգեվորություն է մասնակցել վերջին օրերի այնպիսի մարգարեությունների իրականացմանը, ինչպիսին է վերականգնված ավետարանի գլորվելը մինչև «աշխարհի ծայրերը» (ՎԿՈ 65.2) ի նախապատրաստություն Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան:

Լիաժամկետ միսիոներները լիազորվում են գործել Աստծո անունով և հրավիրել մարդկանց գալու Քրիստոսի մոտ, ընդունելով Նրա վերականգնված ավետարանի սկզբունքներն ու արարողությունները, հավատարիմ համբերելով մինչև վերջ: Ի լրումն, Եկեղեցու բոլոր անդամներն արտոնություն և պարտականություն ունեն իրենց ողջ կյանքում օգնելու միսիոներական աշխատանքի գործում (տես ՎԿՈ 88.81):

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Եկեղեցու անդամները պարտականություն և արտոնություն ունեն՝ կիսվելու վերականգնված ավետարանով:
- Տերն ասել է. «արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» (ՎԿՈ 4.4):
- Միսիոներներն օգնում են Իսրայելի հավաքման գործում:
- Միսիոներական աշխատանքի կիզակետը մարդկանց Քրիստոսի մոտ հրավիրելն է:
- Լիաժամկետ միսիոների կոչումը գալիս է Տիրոջ կողմից՝ Նրա լիազորված ծառաների միջոցով:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցու անդամները պարտականություն և արտոնություն ունեն՝ կիսվելու վերականգնված ավետարանով:

■ Իր համբարձումից ոչ շատ անց Տերն Իր Առաքյալներին աստվածային պատվիրան տվեց «աշակերտել բոլոր ազգերին» (Մատթեոս 28.19): Վերականգնման վաղ օրերից այս սրբազան կոչը վերահաստատվել է Նրա վերջին օրերի մարգարեների և առաքյալների կողմից: Վարդապետություն և Ուխտերում Տերն ասել է. «Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ.... դուք դրանք կուսուցանեք բոլոր մարդկանց. քանզի դրանք պետք է ուսուցանվեն բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին ու ժողովուրդներին» (ՎԿՈ 42.58): Ավելի ուշ նա ասել է. «Քանզի, ճշմարիտ, ձայնն առաջ պիտի գնա այստեղից դեպի ողջ աշխարհը, և դեպի երկրի ծայրամասերը,– ավետարանը պիտի քարոզվի ամեն արարածի, նշաններով, որոնք կհետևեն նրանց, ովքեր կհավատան» (ՎԿՈՒ 58.64): Վերականգնված ավետարանը, որով մենք պետք է կիսվենք «մեր Երկնային Հոր երջանկության ծրագիրն է: Ավետարանի կենտրոնական վարդապետությունը Հիսուս Քրիստոսի Քավությունն է» («Հավատքին

> *«Այսպիսով, դուք նշանակվում եք ծառայելու....»:*

հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 30): Եկեղեցու վաղ ժամանակներից ի վեր բազում անդամներ մեծ զոհաբերություններ են կատարել, որպեսզի աշխարհին հասցնեն վերականգնված ավետարանի ուղերձը: Որպես Աբրահամի սերունդ՝ Եկեղեցու անդամները հնարավորություն և պատասխանատվություն ունեն՝ կիսվելու վերականգնված ավետարանով՝ որպես Աբրահամի ուխտի իրականացում (տես Աբրահամ 2.9–11): Այս սրբազան պատասխանատվության մասնակից լինելը մեծ արտոնություն է:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մարկոս 16.15
- Հռովմայեցիս 1.16–17
- 3 Նեփի 27.13–22
- Վարդապետություն և Ուխտեր 88.81

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Եկեք ձեռք մեկնենք աշխարհին միսիոներական մեր ծառայության մեջ, ուսուցանելով բոլորին, ովքեր կլսեն վերականգնված ավետարանի մասին, առանց վախի, բայց նաև առանց ինքնագոհության խոսելով Առաջին Տեսիլքի մասին, վկայելով Մորմոնի Գրքի մասին և քահանայության վերականգնման մասին: Եկեք, իմ եղբայրներ և քույրեր, ծնկի իջնենք և աղոթենք նրա համար, որպեսզի հնարավորություն ունենանք մարդկանց բերելու դեպի ավետարանի ուրախությունը» (տես «Conference Report», ապրիլ 2000, 110–11 կամ «Ensign», մայիս 2000, 87):

■ Ո՞րն է ավետարանը, որով պետք է կիսվենք մարդկանց հետ: «Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկում ավետարանը սահմանվում է որպես «մեր Երկնային Հոր երջանկության ծրագիր: Ավետարանի կենտրոնական վարդապետությունը Հիսուս Քրիստոսի Քավությունն է» ([2004], էջ 30): «Bible Dictionary» բառարանում ուսուցանվում է. «*Ավետարան* բառը նշանակում է բարի լուր: Բարի լուրն այն է, որ Հիսուսի քավությունը կատարյալ է մարդկության համար, որը բոլոր մարդկանց կազատի գերեզմանից և ամեն անհատի կհատուցի ըստ իր գործերի: Այդ քավությունը սկսվեց նախաերկրային աշխարհում նրա նշանակմամբ, սակայն Հիսուսի կողմից իրագործվեց իր մահկանացու կյանքի ժամանակ («Gospels», 682):

«Պատրաստեք ձեզ այժմ, որ արժանի լինեք Տիրոջը ծառայելու որպես լիաժամկետ միսիոներ»:

«Քարոզիր իմ ավետարանը» միսիոներական ծառայության ուղեցույցում սովորում ենք. «Հիսուս Քրիստոսի ավետարանը սահմանում է և ձեր ուղերձը, և ձեր նպատակը, այսինքն, այն պատասխանում է միսիոներական աշխատանքին վերաբերող «ի՞նչ» և «ինչո՞ւ» հարցերին: Փրկիչ ն Իր ավետարանը նախատեսել է կենսական և հիմնական վարդապետությունն ընդգրկելու նպատակով: Նա եկավ աշխարհ Իր Հոր կամքը կատարելու, իսկ Նրա Հայրը ուղարկեց Նրան այս աշխարհ խաչի վրա բարձրացվելու համար: Նրա Քավությամբ և Հարությամբ բոլոր մարդիկ կբարձրանան կանգնելու Քրիստոսի առաջ և դատվելու իրենց գործերի համար, լինեն դրանք բարի, թե չար: Նրանք, ովքեր հավատք են գործադրում Քրիստոսի հանդեպ, ապաշխարում են իրենց մեղքերից և մկրտվում են Քրիստոսի անունով, կարող են սրբագործվել Սուրբ Հոգով: Եթե նրանք դիմանում են մինչև վերջ, ապա անբիծ կկանգնեն Քրիստոսի առաջ վերջին օրը և կմտնեն Տիրոջ հանգիստը: Քրիստոսը նրանց անմեղ կհամարի Հոր առաջ: Նա կլինի նրանց Միջնորդը և Դատապաշտպանը» ([2004], էջ 6):

■ Որպես Աբրահամի հետնորդներ և Իսրայելի տուն՝ Եկեղեցու անդամները ավետարանով կիսվելու պատասխանատվություն ունեն: Տասներկու Առաքյալներից Երեց Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է.

«Դուք Իսրայելի տնի՞ց եք: Անկասկա՛ծ: Դուք «Իսրայելի հույսն եք՝ Սիոնի բանակը՝ Խոստումի օրվա զավակները» (*Hymns*, 1985, no. 259):...

Մեզանից շատերը Հովսեփի ազգատոհմից են՝ Եփրեմի կամ Մանասեի միջոցով: Դա այն ազգատոհմն է, որն ընտրվել է լինելու Իսրայելի հավաքման առաջնեկը՝ սերունդ, որը պետք է առաջնորդեր ողջ աշխարհում երկրի բոլոր ազգերն օրհնելու աշխատանքը:

«Միսիոներական աշխատանքն այդ օրհնության միայն սկիզբն է» («Thanks for the Covenant», in *Brigham Young University 1988–89 Devotional and Fireside Speeches* [1989], 58–59):

■ Երեց Նելսոնը շարունակել է, շեշտելով, որ միսիոներական աշխատանքը որպես Աբրահամի հետ Տիրոջ ուխտի մաս. «Ինչպես մեր հայրապետները հնում, մենքևս ստացել ենք քահանայությունը և հավիտենական ավետարանը: Աբրահամը, Իսահակը և Հակոբը մեր նախնիներն են: Մենք Իսրայելի մասն ենք: Մենք իրավունք ունենք ստանալու ավետարանը, քահանայության օրհնությունները և հավերժական կյանք: *Երկրի ազգերը օրհնվելու են մեր ջանքերով և մեր հետնորդների ծառայությամբ:* Աբրահամի անմիջական սերունդը և որդեգրությամբ նրա ընտանիքում հավաքվող

բոլոր մարդիկ ստանում են այդ խոստացված օրհնությունները, որոնց նախապայմանն է ընդունել Տիրոջը և հնազանդվել նրա պատվիրաններին» (տես «Conference Report», ապրիլ 1995, 42–43 կամ «Ensign», մայիս 1995, 33. շղագիրն ավելացված է):

■ Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների քվորումից, բացատրել է, որ «բոլոր ազգերին աշակերտելու» հանձնարարությունն այսօր դեռ ուժի մեջ է. «Իր երկրային ծառայության վերջում հարություն առած Հիսուսը հրահանգեց իր աշակերտներին հետևյալ խոսքերով. «Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նրանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն» (Մատթեոս 28.19–20): Այդ հրահանգն այսօր ուժի մեջ է և այն իրավունքն է, որով Բարձրագույն Իշխանությունները և միսիոներները.... ճամփորդում են աշխարհի չորս ծայրերը՝ ուսուցանելով ավետարանը» (տես «Conference Report», հոկ. 1988, 34 կամ «Ensign», նոյ. 1988, 28):

Մարդկանց ոտքերին, © Clark Kelley Price. Պատճենահանել չի թույլատրվում

■ Երեց Հենրի Բ. Այրինգը՝ Տասներկու Առաքյալների քվորումից, խոսել է այն պատասխանատվության մասին, որն ունի Եկեղեցու յուրաքանչյուր անդամ՝ վերականգնված ավետարանով կիսվելու համար.

«Մեր զգուշացման ձայնով մարդկանց սրտերին դիպչելու կարողությունը նշանակություն ունի բոլորի համար, ովքեր Հիսուս Քրիստոսի ուխտյալ աշակերտներ են: Ահա թե ինչ պատասխանատվություն է տրված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու յուրաքանչյուր անդամի. «Ահա, ես ուղարկել էի ձեզ՝ վկայելու և զգուշացնելու մարդկանց, և ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին» (ՎԿՈՒ 88.81):

Այդ պատվիրանը և վտանգի զգուշացումը տրվել է Վերականգնման սկզբում կանչված միսիոներներին: Սակայն մեր մերձավորներին զգուշացնելու պարտականությունն ընկնում է բոլորիս վրա, ովքեր ընդունել են մկրտության ուխտը: Մենք պետք է խոսենք ոչ անդամ ընկերների և ազգականների հետ ավետարանի մասին: Մեր նպատակն է հրավիրել նրանց՝ ուսուցանվելու լիաժամկետ միսիոներների կողմից, որոնք կանչված և ի սպաս են դրված ուսուցանելու» (տես «Conference Report», հոկ. 1998, 40–41 կամ «Ensign», նոյ. 1998, 32–33):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը՝ Տասներկու Առաքյալների քվորումից, բացատրել է, թե որքան կարևոր է եղել լիաժամկետ միսիայի ծառայությունն իր համար. «Իմ ողջ կարողությամբ ես քաջալերում եմ ձեզ աղոթել լիաժամկետ միսիայի ծառայության համար, մինչ դուք օրհնում եք ուրիշների կյանքը, որ գտնեն ճշմարտությունը և ստանան փրկության արարողությունները որպեսզի, այն իրականանա ձեր կյանքում: Բոլոր բաները, որոնք ես այսօր փայփայում եմ իմ կյանքում, սկսել են հասունանալ լիաժամկետ միսիայի իմ ծառայության ժամանակից» (տես «Conference Report», հոկ. 1997, 48. կամ *Ensign,* նոյ. 1997, 36):

Տերն ասել է. «արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» (ՎԿՈՒ 4.4):

■ «Արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» արտահայտության պատկերը հասունացած հացահատիկի դաշտի տեսքն է արևի շողերի ներքո: Տերը հաճախ է օգտագործել այս արտահայտությունը, երբ հայտարարել է, որ երկիրը պատրաստ է հոգիների հավաքմանը (տես ՎԿՈՒ 4.4, 6.3, 11.3, 12.3, 14.3, 33.3, 7): Երկնային Հոր զավակներից շատերը պատրաստ են լսել և ընդունել վերականգնված ավետարանը: Նրանք պատրաստ են բերվելու Տիրոջ Եկեղեցին, որպես վերջին օրերի հնձի մի մաս:

Ոսկի հունձ, © 1993 Marlee Campbell. Պատճենահանել չի թույլատրվում

1829 թվականի փետրվարին, երբ Տերն ասաց, որ «արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» (ՎԿՈՒ 4.4), Նա սկսեց աշխարհով մեկ դռներ բացել միսիոներական աշխատանքի համար: Չնայած որ Եկեղեցու անդամությունը կազմում է աշխարհի բնակչության փոքր տոկոսը, ի վերջո, Եկեղեցին կհաստատվի բոլոր երկրներում: Երբեմն մարդիկ Եկեղեցի են գալիս «քաղաքից մեկը և ազգատոհմից՝ երկուսը» (Երեմիա 3:14): Երբեմն էլ մարդիկ Եկեղեցի են բերվում մեծ քանակով: Օրինակ,

Վիլֆորդ Վուդրուֆը ավելի քիչ, քան մեկ տարվա ընթացքում Մեծ Բրիտանիայում մկրտել է ավելի քան 2000 նորադարձի: 14 տարիների ընթացքում, երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթն առաջնորդել է Եկեղեցին՝ 1830 թվականի ապրիլի 6-ից մինչև 1844 հունիսի 27-ը, Եկեղեցու անդամների թիվը 6-ից հասել էր 26000: Սկսվելով փոքր թվաքանակից՝ Եկեղեցին դարձել է աշխարհասփյուռ կազմակերպություն, և 1829 թվականին տրված Տիրոջ այդ հայտարարությունը դեռ իրագործվում է:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 11.3
- Վարդապետություն և Ուխտեր 33.3
- Վարդապետություն և Ուխտեր 123.12

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հետևյալ խոստումն է տվել ապագա միսիոներներին. «Ձե՛զ, որ կընդունեք առաջ գնալու և ծառայելու կոչը, ես կարող եմ խոստանալ, որ ձեր բարի անունը երբեք չի մոռացվի այս աշխարհում, ոչ էլ գալիք հավերժությունում: Այնպես որ կրկին մենք կանչում ենք փողի ձայնով և աղոթում ենք, որ հունձի Տերը մեծ քանակով մշակներ ուղարկի, որովհետև արտը սպիտակել է՝ ամբողջությամբ պատրաստ է լիառատ հունձի (տես ՎԵՈՒ 4.4)“ (տես «Conference Report», ապրիլ 1992, 33–34 կամ «Ensign», մայիս 1992, 25):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է. «Սկզբնական վեց անդամներից աճել է երկրպագողների մեծ ընտանիք.... Ամերիկայի հողում աճած ոչ մի եկեղեցի այսքան արագ չի աճել, ոչ էլ այսքան լայն տարածվել է: Այն անդամներ է ընդգրկում շատ ազգերից, որոնք խոսում են շատ լեզուներ: Սա իր նմանությունը չունեցող երևույթ է: Անցյալի գոբելենի գործվելով՝ մեր առջև գեղեցիկ տեսարան է բացվել: Այն իր արտացոլումն է գտնում երջանիկ և հրաշալի մարդկանց կյանքում: Այն նախանշան է, որ դեռևս սքանչելիքներ են սպասվում ապագայում» (տես «Conference Report», ապրիլ 2002, 3 կամ «Ensign», մայիս 2002, 4):

«Ձե՛զ, որ կընդունեք առաջ գնալու և ծառայելու կոչը, ես կարող եմ խոստանալ, որ ձեր բարի անունը երբեք չի մոռացվի այս աշխարհում, ոչ էլ գալիք հավերժությունում»:

Միսիոներներն օգնում են Իսրայելի հավաքման գործում:

■ Ավետարանի ուռկանում մարդկանց հավաքելը՝ Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարգևի միջոցով, Իսրայելի հավաքման մասն է: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է. «Յուրաքանչյուր անձ, որ ընդունում է ավետարանը, դառնում է Իսրայելի տան մասը: Այլ խոսքերով ասած, նրանք դառնում են ընտրյալ ազգատոհմի անդամները, կամ Աբրահամի զավակները՝ Իսահակի և Հակոբի միջոցով, որոնց տրված են խոստումները» («Doctrines of Salvation», comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 3:246):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Երեմիա 16.14–17
- 1 Նեփի 22.4, 11–12
- Վարդապետություն և Ուխտեր 29.7
- Վարդապետություն և Ուխտեր 110.11

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է Իսրայելի հավաքման մասին. «Իսրայելի հավաքումը ներառում է ճշմարիտ եկեղեցուն միանալը և ճշմարիտ Աստծուն ճանաչելը: Հետևաբար, յուրաքանչյուր անձ, որն ընդունել է վերականգնված ավետարանը, և որն այժմ ձգտում է երկրպագել Տիրոջն իր մայրենի լեզվով և Սրբերի հետ՝ այն երկրում, որտեղ ապրում է, հնազանդվում է Իսրայելի հավաքման օրենքին և ժառանգորդն է վերջին օրերում Սրբերին խոստացված օրհնություններին» (*The Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 439):

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ «միսիոներական աշխատանքը» Իսրայելի հավաքման միայն սկիզբն է: «Այդ օրհնությունների ձեռք բերումն ու կիրառումը գալիս է այն ժամանակ, երբ նրանք, ովքեր մտել են մկրտության ջրերը, կատարելագործում են իրենց կյանքն այն աստիճան, որպեսզի մտնեն սուրբ տաճարը: Այնտեղ օժտում ստանալը Եկեղեցու անդամների վրա կնքում է Աբրահամի ուխտը» (*Perfection Pending, and Other Favorite Discourses* [1998], 207):

Միսիոներական աշխատանքի կիզակետը մարդկանց Քրիստոսի մոտ հրավիրելն է:

■ Երբ Տիրոջ Եկեղեցին վերականգնվեց երկրի վրա, մարդիկ կրկին հնարավորություն ստացան մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և ավետարանի մյուս սկզբունքներն ու արարողությունները, ինչպես դրանք հայտնի էին

դարձվել Տիրոջ կողմից: Տիրոջ վարդապետությունն ու ուխտերը zնում է դեպի հավերժական կյանք Նրա և մեր Երկնային Հոր հետ: Մորոնի մարգարեն ուսուցանել է. «Այո, եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից. և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում. և եթե Աստծո շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում, դուք ոչ մի կերպ չեք կարող ուրանալ Աստծո զորությունը» (Մորոնի 10.32):

Միսիոներները և Եկեղեցու անդամները կարող են ուրախություն և խաղաղություն զգալ, երբ կիսվում են վերականգնված ավետարանի ուղերձով, որը մարդկանց տանում է Քրիստոսի մոտ:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 1 Նեփի 6.4
- 2 Նեփի 25.26
- Հակոբ 1.7
- Վարդապետություն և Ուխտեր 133.37–39

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, վկայություն է բերել Քրիստոսի մասին և Եկեղեցում Նրա առանցքային դերի մասին. «Մենք սիրում ենք Տեր Հիսուս Քրիստոսին: Նա Մեսիան է՝ մեր Փրկիչը և մեր Քավիչը: Նրանն է միակ անունը, որով մենք կարող ենք փրկվել (տես Մոսիա 3.17, 5.8, ՎԱՈՒ 18.23): Մենք ջանում ենք ծառայել նրան: Մենք պատկանում ենք նրա եկեղեցուն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն: Մեր միսիոներները և անդամները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին աշխարհի շատ ազգերի մեջ» (տես «Conference Report», հոկ. 1987, 78 կամ «Ensign», նոյ. 1987, 65):

«Ավետարանի կենտրոնական վարդապետությունը Հիսուս Քրիստոսի Քավությունն է»:

■ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է իր կյանքի մասին՝ որպես ճշմարտության վկա.

«Իմ ամենամեծ ցնծությունը և բոլոր իրականացումներից ամենաուրախալին այն է, որ ես հնարավորություն ունեմ, ինչպես Նեփին է շարադրել «խոսել Քրիստոսի մասին.... հրճվել Քրիստոսով.... քարոզել Քրիստոսի մասին [և].... մարգարեանալ Քրիստոսի մասին» (2 Նեփի 25.26), որտեղ էլ որ լինեմ և ում հետ էլ որ լինեմ, մինչև իմ կյանքի վերջին շունչը....

Սակայն իմ ամենամեծ խանդավառությունն առաջանում է այդ նույն հանձնարարությունից: Սուրբ գրությունների այրող մի տող չափից առավել համեստ ձևով մեզ հիշեցնում է, որ «նրանք, ովքեր քարոզում են ավետարանը, պետք է ապրեն ըստ ավետարանի» (Ա Կորնթացիս 9.14): Իմ խոսքերից և ուսմունքներից բացի, իմ կյանքը պետք է լինի Հիսուսի վկայության մասը: Իմ էությունը պետք է արտացոլի նրա աշխատանքի աստվածայնությունը: Ինձ համար անտանելի կլիներ, եթե իմ ասած և արած բաներից որևէ մեկը թուլացներ ձեր հավատքն առ Քրիստոս» (տես «Conference Report», հոկ. 1994, 39–40 կամ «Ensign», նոյ. 1994, 31):

Լիաժամկետ միսիոների կոչումը գալիս է Տիրոջ կողմից՝ Նրա լիազորված ծառաների միջոցով:

■ Լիաժամկետ միսիոներ լինելը մեծ հնարավորություն է: Իր լիազորված ծառաների միջոցով Տերը կանչում է միսիոներներին, որ մարդկանց հրավիրեն գալ Քրիստոսի մոտ: Սա Տիրոջ աշխատանքն է: Միսիոներներն իշխանություն ունեն՝ ուսուցանելու վերականգնված ավետարանը և, քահանայության միջոցով, սպասավորել փրկության համար անհրաժեշտ արարողությունները:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ալմա 42.31
- Վարդապետություն և Ուխտեր 11.15
- Վարդապետություն և Ուխտեր 64.29

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին Եկեղեցու երիտասարդ տղաներին կոչ է արել լուրջ վերաբերվել միսիոներական ծառայությանը և հնարավորությանը. «Ես կոչ եմ հղում այսօրվա մեծաքանակ լսարանի երիտասարդ տղաներին: Պատրաստեք ձեզ այժմ, որ արժանի լինեք Տիրոջը ծառայելու որպես լիաժամկետ միսիոներ: Տերն ասել է. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա» (ՎԱՈՒ 38.30): Նախապատրաստվեք՝ նվիրելու ձեր կյանքի երկու տարիներն այդ սուրբ ծառայությանը: Դա, ըստ

էության, կկազմի ձեր կյանքի առաջին քսան տարիների տասանորդը» (տես «Conference Report», սեպ.–հոկ. 1995, 70 կամ «Ensign», նոյ. 1995, 51–52):

■ Երեց Մոնտե Ջ. Բրաուն՝ Յոթանասունից, մեծ կարևորություն է տվել նրան, որ միսիայի կոչումը գալիս է Տիրոջ կողմից.

«Չորս տարբեր առիթներով ես և քույր Բրաունը և մեր ընտանիքը ոգևորությամբ բացել ենք ծրարը, որում եղել է մեր երեխաներից մեկի համար եկած միսիայի կանչը և հանձնարարությունը: Յուրաքանչյուր անգամ մենք ոգևորությամբ մտածել ենք ծառայելու տարբեր հնարավորությունների մասին, և չնայած ինչ-որ տեղ նախապատվությունը տվել ենք տեղում ծառայելուն, այնուամենայնիվ, այն պահին, երբ նրանց աչքերը տեսել են խոսքերը. «Այսպիսով, դուք նշանակվում եք ծառայելու (միսիայի անունը)» առանց բացառության, ճշմարտապես , բարու հրաշալի զգացումներ են առաջացել ընտանիքի յուրաքանչյուր անդամի մոտ: Մենք բոլորս գիտակցել ենք, որ աստվածային ընտրության այդ գործն առաջնորդվում է մարգարեի կողմից և մեր բոլոր չորս զավակներն ուրախությամբ ընդունել են իրենց կոչումը: Տասնյակ հազարավոր վերադարձած միսիոներներ նույնպես կարող են վկայել այդ գործընթացի մասին և իրենց միսիոներական կոչման աստվածայնության մասին....

«....Անձնական և մարգարեական հայտնությունն է այն հիմքը, որի վրա ամուր ձևով կառուցված է Եկեղեցական ծառայությունը» (տես «Conference Report», ապրիլ 1997, 37–38 կամ «Ensign», մայիս 1997, 28):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոտն ուսուցանել է միսիայում ծառայելու երիտասարդ տղայի պատասխանատվության մասին. «Եթե դուք ֆիզիկապես ունակ և հոգեպես կայուն երիտասարդ տղա եք, աղոթեք Տիրոջ առաջ ունեցած հնարավորության և պատասխանատվության մասին, որ պատրաստվեք լինելու լիաժամկետ միսիոներ: Դա նշանակում է հասկանալ սուրբ գրությունները, լինել հնազանդ, պահել ձեր անձը մաքուր, անբիծ և արժանի՝ տաճարում օժտում ստանալու համար: Երբ տարիքը գա, ընդունեք Եկեղեցու Նախագահի կողմից եկող կանչը՝ երկու տարվա ընթացքում ծառայելու որպես Տիրոջ պատվիրակ» (տես «Conference Report», հոկ. 1997, 48 կամ «Ensign», նոյ. 1997, 36):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ձեզ համար ի՞նչ է նշանակում «արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել» արտահայտությունը:
- Ի՞նչ առումով է միսիայի գնալը զոհաբերություն: Ի՞նչ առումով այն զոհաբերություն չէ:
- Իմացությունն այն մասին, որ ձեր միսիայի կանչը եկել է Փրկչից ի՞նչ ձևերով կարող է ազդել միսիայի ծառայության յուրաքանչյուր օրվա ժամանակն օգտագործելու վրա:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սկսիր ուսանողի օրագիր վարել: Սա մի տետր է, որում կգրանցեք այն ներընմբռնումները, որոնք սովորում եք ավետարանն ուսանելիս: Շատ միսիաներում միսիոներներին հրահանգում են նման օրագիր վարել, այնպես որ սա ձեզ համար կլինի միսիոներական առաջին գործիքներից մեկը:
- Մտապահեք Վարդապետություն և Ուխտեր 4 բաժինը և պատրաստ եղեք այն անգիր ասել հաջորդ դասի հոգևոր մտքի ժամանակ (կամ հնարավոր է դուք այն անգիր ասեք դասարանի հետ միասին):
- Մտապահեք (կամ վերհիշեք) Հավատո Հանգանակը:
- Խոսեք վերջերս վերադարձած մի միսիոների հետ միսիայի արժեքավորության մասին, և թե արդյոք այդ ծառայությունը նրա համար զոհաբերություն է եղել, թե ոչ:
- Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 31.3–13 հատվածները և վերլուծեք միսիոներներին տված Տիրոջ խոստումները:
- Բերեք սուրբ գրությունները և ուսանողի այս ձեռնարկը դասարան ամեն շաբաթ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Միսիոներական աշխատանք» (145–147 էջեր)

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սամուել Հ. Սմիթ

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, գրել է արդի տնտեսության առաջին միսիոների՝ Ջոզեֆ Սմիթի եղբայրներից մեկի՝ Սամուել Սմիթի մասին: Այս միսիոները կարևոր օրինակ է ծառայում հավատարիմ միսիոներների համար, որոնք զգում են, թե իրենք չնչին պտուղներ են քաղում իրենց աշխատանքից, ինչպեսև նրա համար, թե ինչպես օգտագործել Մորմոնի Գիրքը միսիոներական աշխատանքում:

«Նա վիճատեցնող իրավիճակը հաղթահարելու մեծ հավատքի և քաջության պատմություն ունի: Պատահական չէր, որ նա կանչվել էր որպես առաջին միսիոներ: Հոգևոր հաստատում ստանալով իր մարգարե-եղբոր կողմից ասված բաների մասին, նա դարձավ երրորդ անձը, որը մկրտվեց արդի տնտեսության ժամանակ՝ հաջորդելով Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին:

Նա սկսեց իր միսիան Ջոզեֆ Սմիթի կողմից կատարվող սրբազան աշխատանքի ճշմարտության, ինչպեսև Մորմոնի Գրքի ճշմարտության մասին վստահ գիտելիքով: Որպես ութ վկաներից մեկը՝ Ջոզեֆ Սմիթը թիթեղները ցույց էր տվել Սամուել Սմիթին, և նա արտոնություն էր ունեցել իր ձեռքը վերցնել թիթեղները և ուսումնասիրել նրա վրայի հնադարյան գրերը: Նա նաև եղել էր Եկեղեցու հիմնադիր վեց անդամներից մեկը, երբ այն կազմավորվեց 1830 թվականի ապրիլի 6-ին:

Պաշտոնական միսիոներական կոչում ստանալուց կարճ ժամանակ անց, Սամուելը Մորմոնի Գրքի մի օրինակ վաճառեց Ֆինեաս Յանգին՝ ճամփորդող մի քարոզիչի: Իր այս նախնական հանդիպման ժամանակ նա պահել էր գիրքն իր ձեռքին և առաջարկել այն Ֆինեասին:

««Ես մի գիրք ունեմ, պարոն, որը կցանկանայի, որ դուք կարդաք»:

Ֆինեասը տատանվելով ասաց. «Ասեք, պարոն, ի՞նչ գիրք ունեք դուք»:

–Մորմոնի Գիրքը, կամ ինչպես ոմանք անվանում են, ոսկյա Աստվածաշունչը:

– Օ՜, պարոն, դա պետք է որ հայտնություն լինի, այո՞:

– Այո՛, այն հայտնություն է Աստծուց:

Երիտասարդը Ֆինեասին ցույց տվեց գրքի վերջին երկու էջերը և խնդրեց, որ նա կարդա վկաների վկայությունները: Ապա երիտասարդը շարունակեց. «Եթե դուք կարդաք այս գիրքը աղոթող սրտով և խնդրեք Աստծուն ձեզ վկայություն տալ, դուք կիմանաք այս աշխատանքի ճշմարտության մասին»:

Նրա անկեղծ վարքն ու ուղղամտությունը տպավորեց Ֆինեասին, որը երիտասարդին ասաց, որ անկասկած կկարդա այն: Ֆինեասը հարցրեց նրա անունը. նա ասաց, որ այն Սամուել Հ. Սմիթ էր:

– Ա՜հ, ուրեմն դուք վկաներից մե՞կն եք:

– Այո՛, ես գիտեմ, որ այս գիրքը հայտնություն է Աստծուց, որը թարգմանվել է Սուրբ Հոգու պարգևով ու զորությամբ, և որ իմ եղբայրը՝ Ջոզեֆ Սմիթը, Մարգարե, Տեսանող և Հայտնող է» (մեջբերում S. Dilworth Young, *Brigham Young—His Life (First Half)*, Բրիգամ Յանգի Համալսարանի տարվա ելույթներից [17 մարտ 1964], էջ 3):

Երբ Սամուելը գնաց իր առաջին միսիային, Եկեղեցու կազմավորումից կարճ ժամանակ անց, նա զինված էր ճշմարտության մասին վկայությամբ և այլ փոքր բաներով: Բայց նրան պետք էին այլ փոքր բաները: Նա ուներ վկայություն, և նա ուներ Մորմոնի Գրքի օրինակներ՝ միսիոներական գործիքը դարձի բերելու համար: Նա իր մեջքին իրերի պարկ էր տանում, որի մեջ գրքերի այնքան օրինակ կար, որքան նա կարող էր տանել: Հավանաբար, մի օրինակ էլ նրա ձեռքում էր:

Պետք է հիշել, որ սա երբեք չէր արվել նախկինում: Նա չուներ գործընկեր, որին ցույց կտար, թե ինչպես պետք է օգտագործել Մորմոնի Գիրքը: Այդ երիտասարդի համար չկար միսիոներների պատրաստման կենտրոն:

Այդպես Սամուելը գնաց Պալմիրայից, ճամփորդելով գյուղերով, փնտրելով նորադարձների և հետաքրքրվողների, որոնք կգնեն Մորմոնի Գիրքը: Այդ առաջին օրը նա քայլեց մոտ 40 կիլոմետր և հասնելով մի իջևանատուն, հարցրեց, թե արդյոք իջևանատերը կցանկանա գնել գրքերից մեկը: Երբ իջևանատերն ավելի շատ իմացավ նրա միսիայի մասին, նա դուրս հրավիրեց Սամուելին, այնպես որ նա ստիպված էր գիշերն անցկացնել խնձորի ծառի տակ:

© 2004 Robert Barrett. Պատճենահանվել է թույլատրվում

Հաջորդ օրը Սամուելը հանդիպեց Ջոն Փ. Գրին անունով Մեթոդական մի քարոզչի: Պրն. Գրինն անձամբ հետաքրքրված չէր գիրքը կարդալով, սակայն ասաց, որ կպահի գիրքը, որ տեսնի, թե արդյոք ինչ-որ մեկը կցանկանա այն գնել: Սամուելը չէր հանձնվում: Նա կրկին վերադարձավ Գրինի ընտանիք և իմացավ, որ պրն. Գրինի կինը՝ Ռոդա Յանգ Գրինը՝ Ֆինեաս Յանգի քույրը, կարդացել էր գիրքը: Ավելի ուշ, վերջինս համոզել էր իր ամուսնուն, որ նա նույնպես կարիք ուներ կարդալու գիրքը: Այդ առաջին միսիայի ընթացքում Սամուելը չմկրտեց ոչ մի հոգու, սակայն Մորմոնի Գրքի այդ երկու օրինակները, որոնք տրվել էին Ֆինեաս Յանգին, և Ջոն Փ. Գրինին, ի վերջո, շատ մարդկանց դարձի գալու միջոց դարձան, որոնց թվում էին Բրիգամ Յանգն իր ընտանիքով և Երեց Հեբեր Չ. Քիմբալն իր ընտանիքով» («Մորմոնի

Գիրքը: The Heart of Missionary Proselyting», *Ensign*, սեպ. 2002, 15–16):

Հեբեր Չ. Քիմբալ

Երեց Հեբեր Չ. Քիմբալն՝ այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից, 1837 թվականին կանչվել էր որպես առաջին միսիոներ՝ քարոզելու վերականգնված ավետարանը Անգլիայում: Նա թողեց իր ընտանիքը Կիրթլենդում՝ Օհայո, ծառայելու Ատլանտյան օվկիանոսի մյուս կողմում վերջին օրերի Եկեղեցու առաջին միսիայում օվկիանոսից այն կողմ: Նա նկարագրել է իր կանչվելը, տանից իր հեռանալը և իր ժամանումը Անգլիա.

«Իմ մտքին երբեք չէր եկել այն, որ ես պետք է լինեմ առաջիններից մեկը, որին կհանձնարարվի քարոզել հավիտենական ավետարանը Եվրոպայի ափերին, և ես կարող եմ հավաստիացնել իմ ընկերներին, որ անակնկալի էի եկել, երբ եղբայր Հայրում Սմիթը՝ Եկեղեցու Նախագահությունից մեկն, ինձ տեղեկացրեց, որ Հոգու թելադրանքով ես նշանակվել և Եկեղեցու իշխանությունների անցկացրած համաժողովին հաստատվել էի, որ վերցնեմ հանձնարարությունը՝ միսիայի գնալու Մեծ Բրիտանիայի թագավորություն:

Հեբեր Չ. Քիմբալը և Օրսոն Ֆոթին Հարտfորդում՝ Անգլիա © Paul Mann. Պատճենահանվում չի թույլատրվում

Նման կարևոր կոչման և միսիայի կանչվելու գաղափարը կարծես ավելին էր, քան ես կարող էի տանել: Ես զգում էի թույլ և անարժան, և թվում էր՝ ինձ վրա դրված այդ հանձնարարության տակ ես կխորտակվեմ, և ես ցանկություն էի զգում բացականչել. Ո՜վ Տեր, ես «թոթովախոս շուրթերով» մարդ եմ և ամբողջովին անկարող եմ նման աշխատանք կատարել: Ինչպե՞ս կարող եմ ես գնալ քարոզելու մի երկրում, որը լույսի, գիտելիքի և բարեպաշտության մեծ հռչակ ունի քրիստոնեա աշխարհում և կրոնի բնօրաններից է. մի ժողովրդի, որի խելացիությունն այդքան գովաբանվում է:

Կրկին, այն միտքը, որ իմ ընտանիքը պետք է թողնեմ այդքան երկար ժամանակով, որը կպահանջվեր այդ երկիր գնալու համար, որ պետք է կտրվեմ սիրված ընկերներներից, որոնց հետ շատ օրհնություններ եմ վայելել և լավ ժամանակներ անցկացրել, որ պետք է թողնեմ իմ հայրենիքը և օտարության մեջ օտարների հետ ապրեմ, գրեթե անտանելի էր:

Ինչևէ, բոլոր այդ նկատառումներն ինձ ետ չպահեցին պարտականության կատարումից: Ոչ էլ ես մարմնի ու արյունի հետ խորհուրդ արեցի. Այլ այն պահին, երբ հասկացա Երկնային Հոր կամքը, ես վճռականություն զգացի անցնել բոլոր դժվարություններով, հավատալով, որ Նա կաջակցի ինձ Իր ամենազոր ուժով և կօժտի ինձ ամեն մի անհրաժեշտ հատկանիշով: Եվ չնայած իմ ընտանիքը շատ թանկ էր ինձ համար, և ես պետք է թողնեի նրանց գրեթե ընչազուրկ վիճակում, այնուամենայնիվ, ես զգում էի, որ ճշմարտության գործը՝ Քրիստոսի ավետարանը, ավելի ծանրակշիռ էր, քան բոլոր մյուս նկատառումները. և ես զգում էի, որ պատրաստ եմ թողնել նրանց, հավատալով, որ նրանց կարիքները կհոգա այն Աստվածը, որը «հոգում է ճնճղուկների մասին» և «կերակրում է ագռավի ձագերին, երբ կանչում են»....

Մի քանի օր նախապատրաստվելուց և իմ գործերը կարգավորելուց հետո, մ. թ. 1837 թվականի հունիսի տասներեքերորդ օրը, ես մնաք բարով ասացի իմ ընտանիքին և ընկերներին և Կիրթլենդ քաղաքին, որտեղ կանգնած էր Տիրոջ Տունը:

Մեկ ամսից քիչ անց՝ հուլիսի 18-ին, երեց Հեբեր Չ. Քիմբալը և միսիայի նրա գործընկերները ժամանեցին Լիվերպուլ՝ Անգլիա: Նա գրել է. «Խարիսխ գցելուց հետո, անմիջապես, փոքրիկ մի նավակ մոտեցավ և ուղևորներից շատերը, այդ թվում եղբայր Հայդը, Ռիչարդսը, Գուդսոնը և ես, նստեցինք նավակը և գնացինք ափ: Երբ մի երկու մետր էր մնացել ծովապատնեշին, ես ցատկեցի և իմ կյանքում առաջին անգամ ոտք դրեցի Բրիտանական հողի վրա՝ օտարների մեջ, որոնց պահվածքը և սովորությունները տարբերվում էին իմ երկրի մարդկանցից: Ես եզակի զգացումներ ունեի, հատկապես երբ մտածում էի իմ միսիայի էության, կարևորության և տարածքի և այն աշխատանքի մասին, որին նշանակվել էի Տիրոջ կողմից, որը պետք է շուտով սկսեի» »: (*Journal of Heber C. Kimball*, comp. R. B. Thompson [1840], 9–11, 15. punctuation and capitalization modernized. paragraphing altered):

Վիլֆորդ Վուդրուֆ

1839 թվականի ամռան վերջին Երեց Վիլֆորդ Վուդրուֆը թողեց իր տունը և ընտանիքը շատ դժվար պայմաններում, որպեսզի ծառայի Մեծ Բրիտանիայի միսիայում: Նա և իր կինը շատ աղքատ և շատ հիվանդ էին: Այնուամենայնիվ, Երեց Վուդրուֆը հավատարիմ էր իր կոչմանը, և Տերը օրհնեց

նրան մեծ հաջողությամբ իր միսիոներական աշխատանքների ժամանակ: Մի կարևոր իրադարձություն տեղի ունեցավ այն ժամանակ, երբ նա, հետևելով ոգեշնչմանը, դուրս գալ այն քաղաքից, որտեղ նա հաջողությամբ քարոզում և մկրտում էր: Նա գրել է.

«Ես առանձնացա Տիրոջն աղոթելուհամար և հարցրեցի Նրա կամքը իմ վերաբերյալ:

Պատասխանը, որ ստացա, այն էր, որ ես պետք է գնայի հարավ, որովհետև Տերը մեծ աշխատանք ուներ ինձ համար, որ կատարեի այնտեղ, քանի որ շատ հոգիներ էին սպասում Տիրոջ խոսքին»:

Ճամփորդելով մոտ 80 կիլոմետր ծածկակառքով և ոտքով դեպի մի տարածք, որտեղ Վերջին օրերի սրբերը երբեք չէին եղել, Վիլֆորդը հանդիպեց Ջոն և Ջեյն Բենբոներին: Նրանք հարուստ ագարակատերեր էին և մի համայնքի անդամներ էին, «որոնք կտրվել էին Ուեսլիական մեթոդականներից և իրենց վրա էին վերցրել Միացյալ եղբայրություն անունը»: Վիլֆորդ Վուդրուֆը գրել է.

Միացյալ եղբայրության այս համայնքը լույս և ճշմարտություն էր փնտրում, բայց սահմանափակ էին իրենց առաջընթացում և շարունակում էին կանչել առ Տերը, որ Նա լույս և գիտելիք տա իրենց, որպեսզի իմանան փրկության ճշմարիտ ճանապարհը:

Լսելով այս բաները՝ ես կարող էի պարզորոշ տեսնել, թե ինչու էր Տերն ինձ պատվիրել, մինչ ես Հենլի քաղաքում էի, որ թողնեի այդ վայրը և գնայի հարավ, քանի որ Հիրֆորդշայրում հունձքի մեծ արտ կար՝ Աստծո արքայությունում շատ Սրբեր հավաքելու համար»:

Ծառայելով այս տարածքում՝ նա 600-ից ավել մարդ մկրտեց: Նրա օրագրից հիշատակման արժանի ուսուցանելու մի եզակի փորձառություն օգնում է ցույց տալ, թե որքան «սպիտակ» էր այդ արտը՝ հնձելու համար.

«Կիրակի օրը՝ ամսի 8-ին, առավոտյան ես քարոզում էի Ֆրոմզի բլրի վրա, ցերեկը՝ Ստենդլի բլրի վրա, իսկ երեկոյան՝ Բենբոու ագարակի բլրի վրա:

Եղբայր Բենբոուի հարևանությամբ կանգնած տեղի եկեղեցին, որը նախագահում էր տեղի ծխական քահանան, օրվա ընթացքում այցելում էին միայն մի տասնհինգ մարդ, մինչդեռ իմ ցերեկվա և երեկոյան ժողովներին մարդկանց մեծ բազմություն էր հավաքվում՝ թվով մոտ հազար մարդ:

Երեկոյան, երբ ես ոտքի կանգնեցի, որ խոսեմ Եղբայր Բենբոուի տանը, դռից ներս մտավ մի մարդ և ինձ տեղեկացրեց, որ ինքը տեղի պարեկային ոստիկանն էր, և որ նա եկել է տեղի ծխական քահանայի հրամանով՝ բերման ենթարկելու ինձ:

Ես հարցրեցի նրան. «Ի՞նչ հանցանքի համար»:

Նա ասաց. «Մարդկանց քարոզելու համար»:

Ես ասացի, որ ես, ինչպես որ ծխական քահանան, ավետարանը մարդկանց ուսուցանելու համար արտոնագիր ունեի, և եթե նա բարեհաճեր նստել, ես նրան ժամանակ կհատկացնեի ժողովից հետո:

Նա վերցրեց իմ աթոռը և նստեց իմ կողքին: Ես ուսուցանեցի հավիտենական ավետարանի առաջնային սկզբունքները մեկ և քառորդ ժամի ընթացքում: Աստծո զորությունն իջել էր ինձ վրա, Հոգին լցրել էր տունը և մարդիկ համոզվում էին:

Ժողովի վերջում ես հրավիրեցի մկրտվելու և յոթ հոգի ցանկություն հայտնեցին: Նրանց թվում կային չորս քարոզիչներ և պարեկային ոստիկանը:

Վերջինս ոտքի կանգնեց և ասաց. «Պրն. Վուդրուֆ, ես ցանկանում եմ մկրտվել»:

Ես նրան ասացի, որ պատրաստ եմ նրան մկրտել: Ես մտա մկրտության ավազան և մկրտեցի յոթ հոգու: Դրանից հետո մենք կրկին հավաքվեցինք, և ես հաստատեցի տասներեք հոգու և հացը կտրեցի Սրբերի համար և բոլորս միասին ուրախացանք:

Ոստիկանը վերադարձավ ծխական քահանայի մոտ և նրան ասաց, որ եթե նա ցանկանում է, որ պրն. Վուդրուֆը ձեռբակալվի ավետարանը քարոզելու համար, ապա պետք է անձամբ գնա և դա անի, քանի որ այն, ինչ նա լսել է, միակ ճշմարիտ քարոզն էր, որը նա երբևէ լսել էր իր կյանքում:

Քահանան չիմանալով ինչպես վարվի, ուղարկեց Անգլիական եկեղեցու երկու սպասավորների՝ որպես լրտեսներ, որպեսզի հաճախեն մեր ժողովներին և տեղեկանան, թե ինչ եք մենք քարոզում:

Սակայն Հոգին դիպչեց նրանց երկուսի սրտերին, և նրանք ընդունեցին Տիրոջ խոսքը ուրախությամբ, մկրտվեցին և հաստատվեցին որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ:

Դրանից հետո քահանան զգուշացավ և այլևս չէր համարձակվում մարդ ուղարկել»(*Leaves from My Journal* [1881], 93–97):

Դեն Ջոնս

Վերականգնման մեծ միսիոներներից է եղել նաև Դեն Ջոնս անունով Եկեղեցու մի նորադարձ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին գրել է Դեն Ջոնսի միսիայի մասին իր հայրենիքում՝ Ուելսում:

Դեն Ջոնսը ծնվել է 1810 թվականի օգոստոսի 4-ին՝ Ուելսի, Ֆլինտշայր կոմսության Հալկին բնակավայրում: Տասնյոթ տարեկանում նա գնաց ծով: Նա շատ բան սովորեց նավերի ու ծովագնացների մասին, դաժան քամու փչած աղաջրի այրոցի և այն մասին, թե ինչ դժվար է նավը կառամատույցին մոտեցնել սարսափելի փոթորիկի

ժամանակ: 1840 թվականին նա եկավ Ամերիկա: Աստեղ նա ձեռք բերեց և դարձավ նավապետը փոքր մի նավի, որը նավարկում էր Միսիսիպիի ջրերով....

Գետի երթևեկությամբ զբաղվելու ընթացքում Դենը լսեց Մորմոնների մասին, որոնք քշվել էին Միսսուրիից և ժամանակավոր ապաստան էին գտել Քուինսիում՝ Իլինոյս, իսկ հետո առաջ էին գնացել հաստատելու «Գեղեցիկ Նավու» քաղաքն այն մասում, որտեղ գետը լայն ոլորան ունի, կազմելով մի թերակղզի, որը տարածվում է՝ կարծես հասնելով ջրին: Նշանները հուշում են, որ Դեն Ջոնսը կարդացել էր հակամորմոնական քննադատականներ, որոնք այդ ժամանակ շատ էին տարածված: Դրանք շարժել էին նրա հետաքրքրությունը: Նրա մոտ ցանկություն էր առաջացել ավելի շատ իմանալ այդ մարդկանց մասին: Նա հանդիպեց նրանց, ուսուցանվեց և ընդունեց ճշմարտությունը: 1843 թվականին նա մկրտվեց Միսիսիպի գետի սառը ջրերում....

Դեն Ջոնսի արքունիքը Ինդյում, © Clark Kelley Price. Պատճենահանվել չի թույլատրվում:

Դեն Ջոնսը կանչվեց [միսիայի գնալու] Ուելս: Նրա կինը՝ Ջեյնը, ուղեկցեց նրան: Նրանք ճամփորդեցին Վիլֆորդ Վուդրուֆի և ուրիշների հետ դեպի Բրիտանական կղզիներ: Երեց Ջոնսը նշանակվեց ծառայելու Ուելսի հյուսիսում: Չնայած որ նա մեծ առավելություն ուներ, իմանալով թե՛ Ուելսի և թե՛ Անգլիայի լեզուն, նա համեմատաբար քիչ արդյունք ունեցավ այդ տարածքի մարդկանց սրտերին դիպչելու գործում: Մյուս կողմից, Վիլյամ Հենշոուն, որը չէր խոսում Ուելսի լեզուն, բավական մեծ հաջողություն էր վայելում հարավում:

Երբ մեկ տարի անց եղբայր Հենշոուն ազատվեց, երեց Ջոնսը կանչվեց նախագահելու ողջ Ուելսի վրա: Նա կենտրոնական գրասենյակ ստեղծեց Մերթիր Թայդֆիլում, որը Ուելսի հարավ-արևելքում էր: Աշխատելով միայն փոքր թվով միսիոներներով՝ նա նշանակալից հունձքի ականատես եղավ: 1845–1848 թվականներին մոտ 3600 մարդ մկրտվեց: Ուելսի բնակչության մոտավոր միջին հաշվարկով 278 մարդուց մեկն այդ ժամանակ մկրտվել էր ՎՕՍ Եկեղեցում:

«Եկեղեցու հակառակորդները, որոնց հասանելի էին լրագրերն ու տպագիր մամուլը, քննադատականներ էին գրում մորմոնական միսիոներների հասցեին: Սակայն երեց Ջոնսոնի համար մամուլը փակ էր: Ուստի, նա որոշեց հանդես գալ իր սեփական հրատարակություններով: Նա օգտագործեց իր եղբոր Ջոն Ջոնսոնի օգնությունը, որը բողոքական քահանա էր և տպագրատուն ուներ: Ասում են, որ Ջոնը շաբաթվա ընթացքում տպագրում էր Դենի գրականությունը, իսկ կիրակի օրը՝ նրան ամբիոնից քննադատում:

Դեն Ջոնսի հրատարակությունը Մորմոնական առաջին պարբերական է եղել ոչ անգլերեն լեզվով....

.... Նա ոչ ոքից չէր վախենում: Նա առաջ էր գնում մեծ համարձակությամբ: Նրա աշխատելաոճի մասին գրվել է. «Հաճախ նա քաղաքում մի քանի շաբաթ գովազդում էր, որ գալիս է «դարձի բերելու» ողջ քաղաքը: Նա տեղեկացնում էր քաղաքապետին, քաղաքի ավագանուն և մյուս ծառայողներին, ոստիկանությանը իր մտադրությունների մասին: Եկեղեցու տեղի անդամների միջոցով նա հազարավոր գրքույկներ էր բաժանում ողջ քաղաքով: Երբ նա ժամանում էր, երկաթգծի կայարանում հաճախ նրան հանդիպում էին քաղաքի բոլոր պաշտոնյաները և բազում հետաքրքրված քաղաքացիներ» [Rex LeRoy Christensen, «The Life and Contributions of Captain Dan Jones», Master’s thesis, Utah State University, 1977, 39–40]:

Ուրիշ եկեղեցիների ծառայողները հարձակվում էին նրա վրա: Նրանք օգտագործում էին ամբիոնը և հասարակական մամուլը: Իր դեմ նրանց թշնամանքի մասին Դեն Ջոնսը գրել է. «Ամերիկայի խեղճ եղբայր Ջոզեֆի մասին գրված պատմություններից մեծ մասն ասում են, թե պատմել է նավապետ Ջոնսը, և ես հաճախ եմ լսում մարդկանց, որ [անձամբ] չճանաչելով այդ փոքր մարդուն, առանց վարանելու նրան «այս ազգի անեծքն» են կոչում» [Christensen, «Life and Contributions», 27]:

Հասարակական կարծիքը մոլեգնում էր՝ մերթ մի կողմ, մերթ՝ մյուս կողմ: Սակայն ընկրկելու փոխարեն, Դեն Ջոնսը օգտվում էր այդ վիճաբանություններից: Նա հասարակական այնպիսի ուշադրություն էր գրվում, որ մարդիկ պետք է որոշեին արդյոք մորմոնական վարդապետությունը ճիշտ էր, թե սխալ: Եկեղեցուն միացող նորադարձների թիվը աճում էր, չնայած որ Մորմոնների դեմ, ընդհանուր առմամբ, և Երեց Ջոնսի հանդեպ, մասնավորապես, իսկական փոթորիկ էր բարձրանում: Նրան վատաբանում էին մամուլում: Նրա դեմ հայտարարություններ էին անում փողոցում: Նրա կյանքին սպառնում էին....

.... [1852] թվականին նա կանչվեց ծառայելու իր երկրորդ միսիան հայրենիքում: Կրկին, առանց վարանելու, նա ընդունեց կոչումը....

Վերադառնալով Ուելս՝ երեց Ջոնսն իր ողջ եռանդով կրկին գործի անցավ: Իր երկրորդ միսիայի ժամանակ

մոտ երկու հազար նորադարձներ եկան Եկեղեցի: Դա ապշեցուցիչ էր....

Այսօրվա Եկեղեցու անդամներից տասնյակ հազարավորների նախնիներ ուսուցանվել և մկրտվել են նրա և նրա գործընկերների կողմից: Դարձի բերած մարդկանց թվով Դեն Ջոնսը անկասկասկած պետք է ընդգրկվի Եկեղեցու պատմության առաջին հինգ կամ տասը արդյունավետ միսիոներների թվում: Նա իր կյանքը նվիրեց արդարության ուսուցմանմանը և հավատքի կառուցմանը» («The Thing of Most Worth», *Ensign*, սեպ. 1993, 2, 4, 6–7):

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

© Steve Tregeagle: Պատճենահանել չի թույլատրվում

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ձեր կյանքի օրհնություններից ամենամեծը կլինի Տիրոջ տաճար գնալը և ձեր տաճարային օժտումը ստանալը: Օժտումը ձեզ տալիս հոգևոր գիտելիքներ և ուժ, որը ձեզ կօգնի ավելի լավ ծառայել Տիրոջը և ի վերջո, ձեզ կպատրաստի մտնել Նրա արքայությունը: Տաճարում ձեռք բերած գիտելիքների, զորության և ուժի շնորհիվ ապագա միսիոներները, նախքան իրենց միսիոներական ծառայությունը, որպես կանոն, հնարավորություն են ունենում գնալ տաճար և ստանալ իրենց տաճարային օժտումը: Որպես միսիոներ Տիրոջ աշխատանքը կատարելու և Նրա սուրբ տունը մտնելու համար անհրաժեշտ է անձնական արժանավորության բարձր մակարդակ:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Անձնական արժանավորությունը անհրաժեշտություն է միսիոներական աշխատանք կատարելու համար:
- Անձնական արժանավորությունն ապագա միսիոներներին հնարավորություն է տալիս ձեռք բերել տաճարային օրհնությունները:
- Ապաշխարությունը մաքրագործման գործընթաց է, որը մեզ հնարավորություն է տալիս վերականգնել մեր արժանավորությունը:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անձնական արժանավորությունը անհրաժեշտություն է միսիոներական աշխատանք կատարելու համար:

■ Միսիոներները պետք է մաքրաբարո լինեն, որպեսզի ունենան հոգին՝ Տիրոջը ներկայացնելու համար: Անձնական մաքրությունը ներառում է մաքուր մտքեր, բարոյական մաքրություն, ավետարանի սկզբունքներին հավատարմություն և պատվիրանների կատարում: Միսիոներական ծառայության կարիքները պահանջում են հոգևոր ամրություն: Քահանայության ղեկավարները օգնում են ապագա միսիոներներին պատրաստվել այդ խստա պահանջ աշխատանքին, օգնելով նրանց ապաշխարել և արժանի դառնալ ծառայելու որպես լիաժամկետ միսիոներներ:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 38.42 (տես նաև ՎԿՈՒ 133.5)
- Վարդապետություն և Ուխտեր 88.74
- Վարդապետություն և Ուխտեր 121.45

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Յոթանասունի նախագահության անդամ՝ Երեց Չարլզ Դիդիեն խոսել է այն մասին, թե ինչ պետք է հասկանան ապագա միսիոներները Տիրոջը ծառայելու

համար պատրաստ լինելու վերաբերյալ. «Իմ ցանկությունն է, որ ուսուցանենք ապագա միսիոներներին խուսափել այնպիսի բաներից, որոնց համար մեծ ապաշխարություն է պետք: Ավելի լավ է կանխենք, քան փրկագնենք: Մենք պետք է նրանց ուսուցանենք, որ սիրո ոգի ունենան Տիրոջ և նրա պատվիրանների հանդեպ: Եթե նրանք ունենան այդ ոգին, մենք կարիք չենք ունենա արգելքներ դնելու՝ ասելով նրանց. «Եթե այդ բանը կատարես, դու չես կարող ծառայել»» (in «Teaching from the Heart», *Ensign*, հունիս 2004, 10):

■ Այն հարցին, թե ինչպիսին պետք է ձգտի լինել կամ դառնալ ապագա միսիոները, Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, պատասխանել է. «Արժանի՛. որպեսզի Հոգին նրան առաջնորդի»: Բացի այդ, նա ասել է.

«Նրանք պետք է մեղքի սահմանից այնքան հեռու մնան, որքան հնարավոր է: Դա նրանց ամենամեծ երջանկությունը կտա, մինչ նրանք նախապատրաստվում են: Դա նրանց կապահովի ամենամեծ կարողությամբ՝ առաջնորդվել Հոգու կողմից և օրինակ լինել միսիայի ծառայության ընթացքում:

Գրեթե յուրաքանչյուր միսիոներ անձամբ ծանոթ է ապաշխարության քայլերին կամ կարող է դրանք նկարագրել: Սակայն, իրականում, նրանք պետք է հասկանան լրջությունը, որով Տերը նայում է որոշ օրինազանցությունների վրա և չկատարեն դրանք» (in "Teaching from the Heart», *Ensign*, հունիս 2004, 9–10):

> *«Այս աշխատանքը խստապահանջ է.... այն պահանջում է մաքուր ձեռքեր և անարատ սիրտ»*

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նկարագրել է արժանավորության չափանիշը, որը պետք է ձեռք բերեն միսիոներները.

«Այս աշխատանքը խստապահանջ է.... այն պահանջում է մաքուր ձեռքեր և անարատ սիրտ....

Ինչպիսի՜ վեհ և ծանրակշիռ նախաձեռնություն է այս աշխատանքը: Այն պահանջում է, որ միսիայում ծառայողները արժանի լինեն ամեն առումով: Մենք պարզապես չենք կարող թույլ տալ նրանց, ովքեր իրենց արժանի չեն պահում, որ նրանք գնան աշխարհ, որպեսզի հայտարարեն ավետարանի ուրախության ավետիքը:

Համոզված եմ, որ արժանավորության չափանիշը բարձրացնելը կօգնի մեր երիտասարդներին, հատկապես, մեր տղաներին, որ ինքնակառավարում դրսևորեն, աշխարհի ցածր չափանիշներից վեր բարձրանան, որպեսզի խուսափեն օրինազանցությունից և ավելի բարձր ճանապարհով քայլեն իրենց բոլոր գործողություններում: Մենք գիտակցաբար չենք ուղարկի երիտասարդ տղաներին, որպեսզի բարեփոխենք նրանց: Եթե նրանց կյանքը բարեփոխման կարիք ունի, դա պետք է լինի նախքան նրանց գնալը....

.... Մենք միսիոներների կարիք ունենք, սակայն նրանք պետք է ի վիճակի լինեն աշխատանքը կատարել: Նրանք պետք է հոգևորապես զգայուն լինեն՝ անելու այն, ինչ պահանջվում է իրենցից, որն իրապես հոգևոր աշխատանք է: Նրանք պետք է բարոյապես արժանավոր լինեն ամեն առումով, իրենց մաքուր պահելով աշխարհի չարիքներից: Եթե մեկը ենթարկվել է գայթակղության, ապա պետք է լինի համապատասխան ապաշխարություն....

Մենք կատարելություն չենք սպասում: Տիրոջ գործը կատարվում է սովորական մարդկանց միջոցով, որոնք աշխատում են արտասովոր ձևով: Տերը փառավորում է նրանց, ովքեր ջանք են ներդնում: Ոչ մի տեղ դա այդքան ակնհայտ չէ, որքան միսիոներական ծառայության մեջ.... Փոքր միջոցներով է Տերն իրականացնում իր զարմանալի աշխատանքը» («Missionary Service», *First Worldwide Leadership Training Meeting*, Jan. 2003, 17–18):

■ Նախագահ Հինքլին զգուշացրել է պոռնոգրաֆիայի դեմ. «Մեր շուրջը մի համաճարակ է պտտվում, որը գնալով տարածում է ձեռք բերում: Այդ աղբի արտադրության մատակարարները ջանասիրաբար հանք են փորում, որը նրանց միլիոնների շահ է բերում: Նրանց արտադրանքի մի մասը վարպետորեն կեղծված է: Դրանք նախատեսված են արթնացնել և գրգռել բնազդային զգայարանները: Շատ տղամարդիկ, որոնք ճաշակել են այդ արգելված պտղից և ապա, բացահայտել, որ.... կորցրել են ինքնահարգանքը.... սկսել են գիտակցել, որ դեպի ծուղակ տանող այդ մանկական խաղը, որին իրենք հետևել են, սկսվել է պարզապես տպագրական նյութեր կարդալուց կամ նայելուց: Ոմանք, ովքեր դեմ չեն մի բաժակ խմիչքին կամ մի գլանակ ծխախոտին, արդարացնում են պոռնոգրաֆիա դիտելը: Նման մարդիկ ապականում են բարքերը, լիովին անհամապատասխան դառնալով նրանց, որ կարգված են Աստծո քահանայության» (տես «Conference Report», հոկ. 1983, 66 կամ «Ensign», նոյ. 1983, 45):

■ Արժանավորության և վկայության ի՞նչ չափանիշներով պետք է ապրի ապագա միսիոները:

- Ունենա հավատք Երկնային Հոր, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հանդեպ և վկայություն նրանց մասին:
- Ունենա վկայություն Հիսուս Քրիստոսի Քավության մասին և որպես Փրկիչ Նրա դերի մասին:

- Ունենա վկայություն Մարգարե Ջոզեֆ Սմիթի և ավետարանի Վերականգնման մասին:
- Աջակցի Եկեղեցու իշխանություններին:
- Պահի մաքրաբարոյության օրենքը: Դրա մեջ մտնում է նաև պոռնոգրաֆիայի ցանկացած տեսակից հեռու մնալը:
- Պահի մկրտության ժամանակ, ինչպեսև մյուս դեպքերում կապած ուխտերը:
- Հաճախի Եկեղեցական բոլոր ժողովներին:
- Ազնիվ լինի ուրիշների հետ իր գործերում:
- Լրիվ տասանորդ վճարող լինի:
- Պահի Իմաստության խոսքը:
- Ապաշխարի և խոստովանի իր մեղքերը: Լուրջ մեղքերը խոստովանի նաև քահանայության ղեկավարներին:

Անձնական արժանավորությունն ապագա միսիոներներին հնարավորություն է տալիս ձեռք բերել տաճարային օրհնությունները:

■ Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ուսուցանել է միսիայի ծառայությանը վերաբերող տաճարային օրհնությունների մասին. «Եկեք նախապատրաստենք յուրաքանչյուր միսիոների, որ արժանի լինի գնա տաճար, և որ այդ փորձառությունն ավելի մեծ իրադարձություն դառնա, քան միսիայի կոչում ստանալը» (տես «Conference Report», հոկ. 1994, 118 կամ «Ensign», նոյ. 1994, 88):

Ինչո՞ւ է տաճարային փորձառությունն այդքան կարևոր միսիոների համար: Տաճարային օրհնությունները ուժ են տալիս արժանավոր միսիոներներին: Տիրոջ տանը ձեռք բերած օրհնությունները գալիս են նրանց, ովքեր արժանի են: Արժանավորության անհրաժեշտ չափանիշները կբարձրացնեն հոգևորությունը և կավելացնեն վերակազնված ավետարանն ուրիշներին ուսուցանելու յուրաքանչյուր միսիոների կարողությունը:

Տաճարում օժտում ստացած միսիոները հավելյալ զորություն ստանալու իրավունք ունի: Այդ զորությունը գալիս է Երկնային Հոր ծրագիրն ավելի լավ հասկանալուց, ուխտերից և այն օրհնություններից, որոնք ձեռք ենք բերում միայն տաճարում:

«Մենք ունենք աստվածային զորության կարիքը, որ ավելացնենք մեր ջանքերը և հաստատուն ձևով առաջ տանենք Եկեղեցին»

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Սաղմոս 24.3–5
- Վարդապետություն և Ուխտեր 95.8
- Վարդապետություն և Ուխտեր 109.22–23
- Վարդապետություն և Ուխտեր 110.7–9

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, որ տաճարային աշխատանքը կարող է «խարիսխ լինել՝ առաջնորդության, պաշտպանության, ապահովության, անվտանգության, խաղաղության և հայտնության աղբյուր լինել ամենօրա կյանքի համար» (տես «Conference Report», ապրիլ 1992, 123 կամ «Ensign», մայիս 1992, 88):

■ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե ինչու միսիոներներն ունեն տաճարային արարողությունների կարիքը, որպեսզի արդյունավետ ձևով քարոզեն ավետարանը.

Անչափ կարևոր է հասկանալ, որ ձեր անձնական օժտման համար տաճար գնալը.... միսիայի նախապատրաստության ձեր անբաժան մասն է.... [Դուք պետք է] հասկանաք տաճարային ուխտերի կարևորությունը և ձեր օժտման և ձեր միսիոներական ծառայության հաջողության միջև եղած անբաժան կապը: Ինքը՝ *օժտում* բառը, իրապես ցույց է տալիս այդ կենսական կապի իմաստը: Օժտումը պարգև է:

Այս աշխատանքը հնարավոր չէ միայնակ կատարել: Մենք պետք է ունենանք երկինքների օգնությունը. մենք պետք է ունենանք Աստծո «պարգևները».... Այս աշխատանքն այնքան լուրջ է և փորձիչի ընդդիմությունն այնքան մեծ է, որ մենք ունենք աստվածային զորության կարիքը, որ ավելացնենք մեր ջանքերը և հաստատուն ձևով առաջ տանենք Եկեղեցին» («Making and Keeping Covenants» [արբանյակային հեռարձակում միսիոներների համար, ապրիլ 25, 1997]):

■ Երեց Բրյուս Ռ. ՄակՔոնկին, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, բացատրել է, թե ինչպես են տաճարային օրհնությունները պատրաստում մարդուն, որ գնա և քարոզի վերականգնված ավետարանը. «Բոլոր դարերում թե՛ Առաքյալները և թե՛ մյուս սպասավորները կամ միսիոներները լիովին պատրաստ չեն եղել, որ առաջ գնան, քարոզեն ավետարանը և կառուցեն արքայությունը, մինչև որ չեն ունեցել Սուրբ Հոգու պարգևը, ինչպեսև ի վերուստ չեն օժտվել զորությամբ, այսինքն՝ չեն ստացել որոշակի գիտելիքներ, զորություն և օրհնություններ, որոնք սովորաբար տրվում են միայն Տիրոջ Տաճարում» (*Doctrinal New Testament Commentary*, 3 vols. [1966–73], 1:859):

■ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրել է, թե ինչու են տաճարային օրհնություններն անհրաժեշտ նախքան միսիոներական ծառայությունը սկսելը. «Ձեզ հասկանալի՞ է, թե ինչու են մեր միսիոներները գնում տաճար նախքան միսիոներական ծառայությունը սկսելը: Սա անհրաժեշտություն է նրանց համար.... (այն տեղերում, որտեղ տաճարը հասանելի է), որովհետև Տերն ասել է, որ դա պետք է արվի: Եկեղեցու վաղ օրերին նա բոլոր միսիոներներին կանչեց Կիրթլենդ, որպեսզի օժտում ստանան այնտեղ կառուցված տաճարում: Նա ասաց, որ դա անհրաժեշտ էր, որպեսզի նրանք ծառայեին ի վերուստ օժտված առ ավել մեծ զորությամբ և առավել մեծ պաշտպանությամբ» («Doctrines of Salvation», comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:255):

■ Երեց Դեյվիդ Բ. Հեյթը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, այսպես է նկարագրել տաճարային օժտումը ստանալու օրհնությունները. «Տաճարի մթնոլորտն այնպիսին է, որ կարող է Եկեղեցու արժանավոր անդամին տալ լուսավորության, վկայության և հասկացողության զորություն: Տաճարային օժտումը ճշմարտության մասին գիտելիք է տալիս, որի կիրառումը ուժ և համոզմունք է ներշնչում» (*A Light unto the World* [1997], 49):

■ Որպես յոթանասունական ծառայելիս Երեց Ջեկ Հ. Գոսլինդ կրտսերը խոսել է օժտման և միսիոներական ծառայության կապի մասին. «Պատվիրաններին հնազանդվելով և այս ուխտերը կապելով մենք սրբագործվում, մաքրագործվում և ծնվում ենք Հոգուց: Մենք արժանի անոթ ենք դառնում ստանալու Սուրբ Հոգին և Հոգու ուղեկից պարգևները, որոնք անհրաժեշտ են այս աշխատանքում, եթե ուզում ենք հաջողություն ունենալ» (տես «Conference Report», հոկ. 1983, 47–48 կամ «Ensign», նոյ. 1983, 33):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը խոսել է տաճարային երաշխավորագրի հարցազրույցի մասին. «Նախքան տաճար մտնելը դուք հարցազրույց կունենաք ձեր եպիսկոպոսի և ցցի նախագահի հետ ձեր տաճարի երաշխավորագրի համար: Ազնիվ և անկեղծ եղեք նրանց հետ: Այդ հարցազրույցը մի ստուգարք չէ, որը պետք է հանձնեք, այլ կարևոր քայլ, որպեսզի հաստատեք, որ դուք բավականաչափ հասուն և հոգևոր եք, որպեսզի ստանաք, կապեք և պահեք Տիրոջ տանն առաջարկվող բարձրագույն արարողություններն ու վեհացնող ուխտերը: Անձնական արժանավորությունը կենսական անհրաժեշտություն է, որ կարողանանք վայելել տաճարի օրհնությունները: Ցանկացած մարդ, որն անմտորեն անարժան լինելով կմտնի տաճար, անեծքի կարժանանա» (տես «Conference Report», ապրիլ 1999, 31 կամ «Ensign», մայիս 1999, 25):

■ Երեց Դեյվիդ Բ. Հեյթն ուսուցանել է. «Երբ տաճարի դռնապան սպասավորին ներկայացնում ենք մեր երաշխավորագիրը, մենք կրկին հաստատում ենք տաճար մտնելու մեր արժանավորությունը» (տես «Conference Report», ապրիլ 1992, 19 կամ «Ensign», մայիս 1992, 15):

Ապաշխարությունը մաքրագործման գործընթաց է, որը մեզ հնարավորություն է տալիս վերականգնել մեր արժանավորությունը:

■ Անձնական արժանավորությունը և միսիայի ծառայության հաջողությունը ամուր կապված են միմյանց հետ: Նախքան միսիայի ծառայությունը սկսելը, ապագա միսիոներները պետք է պատշաճ ձևով ապաշխարեն անցյալի մեղքերից:

Ապաշխարությունը մի սկզբունք է, որը կօրհնի միսիոներների, ինչպեսև այն հետաքրքրվողների կյանքը, ովքեր հավատք են գործադրում Հիսուս Քրիստոսի հանդեպ,

ապաշխարում են իրենց մեղքերից և ընդունում են ավետարանի սկզբունքներն ու արարողությունները:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Եսայի 1.18
- Ա Հովհաննես 1.5–10
- Մոսիա 26.29
- Հելաման 14.13

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը գրել է, որ կենսական կարևորություն ունի, որ մենք հասնենք այն ըմբռնմանը, որ Քրիստոսի ճշմարիտ հավատքը մեզ մղում է մեղքերից ապաշխարության. «[Երիտասարդ Ալմայի փորձառությունից] մենք սովորում ենք, որ բոլոր ապաշխարությունների ետևում կանգնած զորությունը Քրիստոսն է.... Ալման ազդվել էր իր հոր ուսմունքներից, սակայն առավելապես կարևոր էր այն, որ նա հիշեց մարգարեությունը «մի Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյան վերաբերյալ՝ քավելու համար աշխարհի մեղքերը»: (Ալմա 36.17): Դա է անունը և դա է այն ուղերձը, որ յուրաքանչյուր անձ պետք է լսի.... Ինչպիսի տարբեր աղոթքներ էլ որ ասենք, ինչպիսի տարբեր կարիքներ էլ, որ ունենանք, բոլորս էլ ինչ-որ ձևով կախված ենք այս աղերսանքից. «Ո՜վ Հիսուս, դո՛ւ, Աստծո՛ Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ»: Նա պատրաստ է տալ այդ ողորմությունը: Նա վճարել է իր կյանքով, որ կարողանա առաջարկել այդ ողորմությունը» (*However Long and Hard the Road* [1985], 85):

«Ամենազորավոր խորհուրդը, որ կարող եմ տալ ապագա միսիոներին, արժանի մնալն է»:

■ Յոթանասունի քվորումից՝ Երեց Գլեն Լ. Փեյսը ուշադրություն է հրավիրել միսիայի ծառայությունից առաջ չլուծված մեղսագործությունները լուծելու կարևորության վրա.

«Ամենազորավոր խորհուրդը, որ կարող եմ տալ ապագա միսիոներին, արժանի մնալն է: Երկրորդ ամենազորավոր խորհուրդը արժանավոր դառնալն է նախքան Միսիոներների նախապատրաստման կենտրոն մտնելը: Համոզվեք, որ դուք ազնիվ եք քահանայության ձեր ղեկավարների հետ....

Երիտասարդների մոտ ընդհանուր մտածելակերպ կա, որ լուրջ մեղսագործության միակ իրական անհանգստությունը մեղքի համար եպիսկոպոսին խոստովանելուց եկող ցավն է ու ամոթի զգացումը: Սակայն դա միայն սկիզբն է: Միայն մտնելով եպիսկոպոսի գրասենյակ, խոստովանելով մեղքը և կրկին դուրս գալով, մարդ չի կարող Սուրբ Հոգին մշտական իր հետ ունենալ: Մեզանից ոչ ոք չի հավատում մահվան մահճի ապաշխարությանը: Ինչո՞ւ են մեզանից շատերը հավատում «միսիայի մահճի» ապաշխարությանը: Այն, որ ապագա միսիոները լավ է սովորում [դասերը].... մարդկանց վստահությունը ձեռք բերելը և բոլոր մյուս հմտությունները, քիչ նշանակություն ունի: Առանց Հոգու դրանք դատարկ բաներ են.... Առանց Հոգու դուք չպետք է ուսուցանեք» («Why?» [«Ռիկս քոլեջում» անցկացված հոգևոր երեկոյի ելույթ, սեպ. 24, 1991], 2–4):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը խորհուրդ է տվել նրանց, ովքեր լիովին ապաշխարել են, սակայն դեռևս ծանրություն են զգում գործած մեղքերի պատճառով.

«Եթե դուք ապաշխարել եք լուրջ մեղսագործությունից և սխալմամբ մտածում եք, որ միշտ երկրորդ կարգի քաղաքացիներ կլինեք Աստծո արքայությունում, իմացեք, որ այդ միտքը ճիշտ չէ: Փրկիչն ասել է.

« Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք:

Ա յս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից,– ահա նա կխոստովանի և կթողնի դրանք»: [ՎԵՈՒ 58.42–43]» (տես «Conference Report», հոկ. 2000, 33 կամ «Ensign», նոյ. 2000, 26):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, նկարագրել է ապաշխարության մաքրագործող զորությունը. «Հուսախաբ անող միտքը, որ կատարված մի սխալի (կամ այն կրկնելու) պատճառով ամեն բան հավիտյան ուշ է, չի գալիս Տիրոջից: Նա ասել է, որ *եթե* ապաշխարենք, Նա ոչ միայն կների մեզ մեր մեղքերը, այլ կմոռանա մեր մեղքերը (տես Եսայիա ԽԳ.25, Եբրայեցիս Ը.12, Ժ.17, Ալմա 36.19, ՎԿՈՒ 58.42): Ապաշխարությունը նման է օճառի. այն կարող է մեղքերն անդարձ լվանալ: Խորը կեղտաբծերի համար անհրաժեշտ կլինի ուժեղ լվացող պարագաների կարգապահությունը, սակայն ի վերջո, դրանք կանցնեն» (տես «Conference Report», ապրիլ 1989, 72 կամ «Ensign», մայիս 1989, 59):

■ Նախագահ Ն. Էլդոն Թանները, որը Առաջին Նախագահության խորհրդական էր, բացատրել է, թե ինչու պետք է միսիոներները արժանի և մաքուր լինեն. «Ապագա միսիոներները պետք է գիտակցեն, որ Տերը ցանկանում է մեկին, որին կարող է ամբողջովին վստահել, մեկը, որը մաքուր է և ամեն ձևով արժանի, որ Իր ներկայացուցիչը լինի միսիոներական ծառայության ժամանակ: Եթե դուք արժանի չեք, մի ընդունեք կոչումը, մի խաբեք, որպեսզի գնաք, այլ ապաշխարության միջոցով նախապատրաստվեք գնալու: Շատ ավելի լավ է սպասել մեկ տարի, քան անարժան ձևով գնալ: Ունեցեք քաջություն և տղամարդկություն, կորով և վճռականություն, տոկունություն, ասել ճշմարտությունը, փաստերը, պատրաստեք ձեզ ամեն ձևով, անելով ամեն բան, ինչ Տերը կցանկանա, որ անեք (տես «Conference Report», ապրիլ 1976, 67 կամ «Ensign», մայիս 1976, 44):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր տաճարային օժտում ստանալ նախքան միսիայի ծառայությունը:
- Ի՞նչ սխալ կա այն մտածողության մեջ, որ կարելի է հիմա մեղք գործել, իսկ հետո ապաշխարել:
- Ինչո՞ւ են Հիսուս Քրիստոսի հանդեպ անկեղծ հավատք ունեցող մարդիկ ցանկանում ապաշխարել իրենց մեղքերից:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր խոստովանել լուրջ մեղքերը քահանայություն կրողներին, ինչպեսև Տիրոջը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մտապահեք Վարդապետություն և Ուխտեր 58.42–43 և 121.45–46 հատվածները:
- Քննեք ձեր անձնական արժանավորությունը միսիայում ծառայելու համար: Եթե նկատում եք խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն, որոշեք, թե ինչ պետք է արվի և ապա հետևեք ձեր որոշմանը:
- Ուսումնասիրման ձեր օրագրում գրեք, թե ինչու են Հիսուս Քրիստոսի հանդեպ անկեղծ հավատք ունեցող մարդիկ ցանկանում մեղքերից ապաշխարել, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներները հասկանան այս կապը իրենց անձնական կյանքում: Ինչո՞ւ պետք է նրանք պարզորոշ ուսուցանեն այս ճշմարտությունը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Մաքրաբարոյություն» (136–141 էջեր)
- «Ապաշխարություն» (24–28 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 3



Պատճենահանել չի թույլատրվում

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԲԱՆ

Հաջողակ միսիոներական աշխատանքի համար կենսական նշանակություն ունի պատրաստակամությունը փնտրելու հետևել Սուրբ Հոգու հուշումներին: Հետևաբար, միսիոներները պետք է արժանի լինեն՝ ստանալ այդ աստվածային առաջնորդությունը: Նրանք պետք է զգայուն լինեն Աստծո Հոգու հանդեպ, որպեսզի ուսուցանեն զորությամբ ու համոզվածությամբ: Փնտրելով, ստանալով Սուրբ Հոգու առաջնորդությունը և հետևելով դրան, նրանք կլինեն մաքրաբարո, պատրաստ ուսուցանել Վերականգնման վարդապետությունը, և Հոգին կվկայի նրանց պատգամի ճշմարտացիության մասին(տես ՎԱՈՒ 11.21, 50.13–14):

Քրիստոսի Լույսը ոգեշնչման աղբյուր է, որը մեր Երկնային Հայրը տվել է Իր բոլոր զավակներին: Քրիստոսի Լույսը և Սուրբ Հոգու դերը հասկանալը ձեզ կօգնի գիտակցել Աստծո ազդեցությունը ձեր կյանքի վրա: Քրիստոսի Լույսի Սուրբ Հոգու ազդեցությունն այն մարդկանց մտքերի և սրտերի վրա, ովքեր փնտրում են ճշմարտությունը, կենսական է դարձի գալու ընթացքի վրա:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Քրիստոսի լույսը բարու զորություն է բոլոր մարդկանց կյանքում:
- Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամներից մեկն է:
- Սուրբ Հոգին բազում ձևերով ազդում է մեր կյանքի վրա՝ բարիքի համար:
- Միսիոների ներուժի մեծագույն պաշարներից մեկը Հոգին զգալը և հնազանդվելն է:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրիստոսի լույսը բարու զորություն է բոլոր մարդկանց կյանքում:

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, ուսուցանել է, որ Քրիստոսի Լույսը «խթանում է ամեն բան, ինչ բարի է» («The Light of Christ», *Ensign,* ապրիլ 2005, 10): Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է. «Քրիստոսի Լույսը, որը երբեմն անվանում են Քրիստոսի Հոգին կամ Աստծո Հոգին, «լույս է տալիս ամեն մարդու, որն աշխարհ է գալիս» (ՎԱՈՒ 84.46): Դա այն լույսն է, «որը բոլոր բաների մեջ է, որը կյանք է տալիս բոլոր բաներին» (ՎԱՈՒ 88.13): Մորմոն Մարգարեն ուսուցանել է, որ «Քրիստոսի Հոգին տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին տարբերել չարից» (Մորոնի 7.16, տես նաև 19 հատվածը. 2 Նեփի 2.5, Հելաման 14.31)» (տես «Conference Report», հոկ. 1996, 79 կամ «Ensign», նոյ. 1996, 60):

Քանի որ ձեզ հանդիպած ամեն մարդու տրվել է Քրիստոսի Լույսը, կարևոր է, որ դուք հասկանաք այդ մեծ ազդեցության դերը: Նրանք, ովքեր հետևում են Քրիստոսի Լույսին, կառաջնորդվեն դեպի Քրիստոսը, հավատք կզարգացնեն Քրիստոսի հանդեպ, կապաշխարեն իրենց մեղքերից և կընդունեն մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը՝ դառնալով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մորոնի 7.16–19
- Վարդապետություն և Ուխտեր 84.46–47
- Վարդապետություն և Ուխտեր 88.11–13

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Քրիստոսի Լույսը չպետք է շփոթել Սուրբ Հոգու հետ: Այն անձնավորություն չէ, ինչպես Սուրբ Հոգին: Դրա ազդեցությունը առաջնորդում է մարդկանց գտնել ճշմարիտ ավետարանը, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը (տես Հովհաննես ԺԲ.46, Ալմա 26.14–15): («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 213, տես նաև Սուրբ գրությունների ուղեցույց «Քրիստոսի լույսը», էջ 150):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերն ուսուցանել է, որ Քրիստոսի Լույսը «ոգեշնչման մեկ այլ աղբյուր է, որը մեզանից յուրաքանչյուրը կիսում է ողջ մարդկության ընտանիքի մյուս անդամների հետ: Եթե ճանաչենք Քրիստոսի Լույսը, մենք կհասկանանք, որ բոլորիս մեջէլ այն կա և կկարողանանք ճիշտ օգտագործել ճշմարտությամբ կիսվելու մեր այդ ցանկությանը :

Յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա ամեն ազգի, հավատքի կամ մաշկի գույնի,– ամեն մարդ՝ անկախ նրանից, թե որտեղ է ապրում կամ ինչ է անում, իր մեջ ունի Քրիստոսի մշտնջենական Լույսը: Այդ իմաստով բոլոր մարդիկ ստեղծված են հավասար: Քրիստոսի լույսի առկայությունը բոլորի մեջ՝ վկայություն է այն մասին, որ Աստված անաչառ է մարդկանց հանդեպ (տես ՎևՈՒ 1.35): Նա բոլորին հավասարապես օժտել է Քրիստոսի Լույսով (*Ensign*, ապրիլ 2005, 8, 10):

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, որ Քրիստոսի լույսը մարդկանց օգնում է նախապատրաստվել վերականգված ավետարանի ուղերձի և օրհնությունների համար. «Նրա ազդեցությունը նախորդում է և նախապատրաստում է մարդուն ստանալու Սուրբ Հոգին: Քրիստոսի լույսը ազնիվ հոգուն կառաջնորդի՝ «ձայնին [ականջ դնելու]» [ՎևՈՒ 84.46], գտնելու ճշմարիտ ավետարանը և ճշմարիտ Եկեղեցին և այսպիսով, ստանալու Սուրբ Հոգին» (տես «Conference Report», ապրիլ 2003, 26 կամ «Ensign», մայիս 2003, 26):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը բացատրել է, որ կարևոր է հասկանալ, որ Աստծո բոլոր զավակներին տրված է Քրիստոսի Լույսը.

«Որքան շատ իմանանք Քրիստոսի Լույսի մասին, այնքան ավելի լավ կհասկանանք կյանքի մասին և ավելի խորը սեր կունենանք մարդկության նկատմամբ: Մենք կլինենք ավելի լավ ուսուցիչներ և միսիոներներ և ծնողներ և ավելի լավ տղամարդիկ և կանայք և երեխաներ: Մենք ավելի մեծ հարգանք կտածենք Եկեղեցու մեր եղբայրների և քույրերի հանդեպ, և նրանց հանդեպ, ովքեր դեռ չեն հավատում և դեռ չեն ստացել Սուրբ Հոգու պարգևը....



© 2004 Robert Casey. Պատվիրակությունը չի թույլատրվում

Ուսուցչի և միսիոների կամ ծնողի համար կարևոր է իմանալ, որ Սուրբ Հոգին կարող է աշխատել Քրիստոսի Լույսի միջոցով: Ավետարանի ճշմարտությունը ուսուցանող ուսուցիչը օտար կամ նոր բան չի սերմանում չափահասի կամ երեխայի մեջ: Փոխարենը, թե միսիոները, թե ուսուցիչը շփման եզրեր է գտնում աշակերտի մեջ գտնվող Քրիստոսի Հոգու հետ: Ավետարանը ծանոթ «հնչերանգ » է դառնում նրանց համար» (*Ensign*, ապրիլ 2005, 8, 10):

Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամներից մեկն է:

■ Սուրբ գրություններն ուսուցանում են Աստվածագլխում ունեցած Սուրբ Հոգու դերի մասին: Որպես Աստվածության անդամ՝ Սուրբ Հոգին կատարում է պարտականություններ, որոնք կարևոր է, որ միսիոներները հասկանան:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հովհաննես 14.26
- 3 Նեփի 28.11
- Վարդապետություն և Ուխտեր 130.22

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ռոբերտ Դ. Հեյզը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նկարագրել է Սուրբ Հոգու պարտականություններից մի քանիսը. «Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է, որը ոգեղեն էակ է: Նա Մխիթարիչն է, Աստծո Հոգին, Խոստումի Սուրբ Հոգին: Նա վկայում է Հիսուս Քրիստոսի, Նրա աշխատանքի և երկրի վրա Նրա ծառաների աշխատանքի մասին: Նա մաքրող ներգործություն ունի, որը մեզ մաքրագործում և սրբագործում է մեղքից: Նա մեզ մխիթարում է և խաղաղություն է բերում մեր հոգիներին: Նրա մշտական ընկերակցության իրավունքն ամենամեծ պարգևներից է, որ կարող ենք ստանալ մահկանացու կյանքի ժամանակ, քանի որ Նրա հուշումների լույսով և Նրա մաքրագործող զորությամբ մենք կարող ենք վերադառնալ Աստծո ներկայությունը» (տես «Conference Report», ապրիլ 2002, 80 կամ «Ensign», մայիս 2002, 70):

■ Երեց Դալին Հ. Օքսն ուսուցանել է, որ Սուրբ Հոգու դրսևորումները «տրվում են ճշմարտության անկեղծ փնտրողներին ծանոթացնելու Տիրոջ և Նրա ավետարանի հետ» և որ «այդ դրսևորումները հասանելի են ամեն մարդու [տես 2 Նեփի 26.13]»: Ապա նա բացատրել է տարբերությունը Քրիստոսի Լույսի, Սուրբ Հոգու դրսևորումների և Սուրբ Հոգու պարգևի միջև.

«Քրիստոսի Լույսը տրվել է բոլոր տղամարդկանց և կանանց, որպեսզի նրանք բարին տարբերեն չարից. Սուրբ Հոգու դրսևորումները տրվում են ավետարանի ճշմարտությունն անկեղծ փնտրողներին, նրանց առաջնորդելու համար, որպեսզի նրանք համոզվեն ապաշխարել և մկրտվել:

Սուրբ Հոգու պարգևն առավել բազմակողմանի է....

Սուրբ Հոգու պարգևը ներառում է մշտական ընկերակցության իրավունքը, որպեսզի «նրա Հոգին միշտ [մեզ] հետ ունենանք» (ՎԱՈՒ 20.77):...

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու հավատարիմ անդամներիս համար Սուրբ Հոգու ընկերակցությունն այնքան ծանոթ կլինի, որ պետք է զգուշանանք, որ այդ պարգևին անլուրջ չվերաբերվենք: Օրինակ՝ այն լավագույն զգացողությունը, որն ունեցել եք այս համաժողովի ելույթները և երաժշտությունը լսելիս, Հոգու հաստատող վկայությունն է, որը մշտապես ուղեկցում է հավատարիմ անդամներին: Մի առիթով եկեղեցու անդամներից մեկը հարցրեց, թե ինչպես է, որ հաղորդության ժողովին հնչած ելույթներից ու երաժշտությունից նա իրեն շատ լավ էր զգում, մինչդեռ իր հրավիրած հյուրը նման զգացումներ չէր ապրում: Սա մի օրինակ է այն հակադրության, որը կա մեկի մեջ, ով ունի Սուրբ Հոգու պարգևը և Նրա հուշումներին ունկընդրիր՝ ապրում է ներդաշնակ, և մյուսի միջև, որը չունի պարգևը նչի ապրում ներդաշնակ » (տես «Conference Report», հոկ. 1996, 79–80 կամ «Ensign», նոյ. 1996, 60):

■ Երեց Բրյուս Ռ. ՄակՔոնկին, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, բացատրել է Սուրբ Հոգու ազդեցության և Սուրբ Հոգու պարգևի միջև. «Նախքան մկրտությունը [բոլոր մարդիկ] կարող են հայտնություն ստանալ Սուրբ Հոգուց, որի նպատակը նրան վկայություն պարգևելն է ճշմարտության մասին և երկրի վրա Տիրոջ աշխատանքի ճշմարտացիության մասին: Մկրտությունից հետո նրանք ստանում են Սուրբ Հոգու պարգևը և դրանից հետո նրանց իրավունքն է՝ վայելել Աստվածագլխի այդ անդամի մշտական ընկերակցությունը, եթե նրանք պահեն պատվիրանները: Մկրտությունից առաջ ստացած վկայությունը, այլաբանորեն ասած, գալիս է որպես կայծակի փայլատակում, որը լույս է տալիս մութ և փոթորկալից գիշերով. այն գալիս է, որպեսզի լուսավորի այն ճանապարհը, որով պետք է քայլեն իրենց երկնային տնից հեռացած և տափաստանում ու աշխարհի ճահճուտներում մոլորված երկրի պանդուխտները, եթե ցանկանում են վերադառնալ Աստվածային Ներկայությունը: Սուրբ Հոգու ընկերակցությունը, մկրտությունից հետո, նման է ցերեկվա արևի շարունակվող փայլին, որն իր ճառագայթներն է սփռում կյանքի ճանապարհի և նրա շրջապատի բոլոր բաների վրա» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 262):

Սուրբ Հոգին բազում ձևերով ազդում է մեր կյանքի վրա՝ բարիքի համար:

■ Հոգու դրսևորումներն արտահայտվում են տարբեր ձևերով: Սուրբ գրությունները մեզ օգնում են ավելի լավ հասկանալ Սուրբ Հոգու հուշումները: Ապագա միսիոներները պետք է ի վիճակի լինեն ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունն իրենց կյանքում և ունենան հավատք ու քաջություն՝ հետևելու այդ հուշումներին: Տերը տվել է հետևյալ հանձնարարությունը. «այն, ինչ Հոգին վկայում է ձեզ, ճիշտ այդպես ես կկամենայի, որ դուք վարվեք՝ սրտի խոնարհությամբ» (ՎԱՈՒ 46.7):

Ապագա միսիոներները պետք է նաև ի վիճակի լինեն բացատրել Սուրբ Հոգու հիմնական բնությունը և արտահայտությունը:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հովհաննես 14.26
- Հովհաննես 15.26
- Հովհաննես 16.13
- Գաղատացիս 5.22–23
- 1 Նեփի 4.6
- 2 Նեփի 31.17–18
- 2 Նեփի 32.5, 8
- 2 Նեփի 33.1
- Ալմա 21.16
- Մորոնի 10.5

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Մահկանացու ոչ մի ուսուցիչ, անկախ նրանից, թե որքան գիտակ կամ փորձառու է, չի կարող տալ վկայության և դարձի բերելու օրհնությունները մեկ այլ մարդու: Դա Սուրբ Հոգու կամ Հոգու պաշտոնն է: Ավետարանի ճշմարտության մասին մարդիկ իմանում են Սուրբ Հոգու զորությամբ» (*Teaching, No Greater Call* [1999], 41):

■ Ստորև տրված են Սուրբ Հոգու ազդեցության վերաբերյալ որոշ կարևոր սկզբունքներ, որոնք պետք է հասկանալ.

1. Մենք կարող ենք հոգևոր տպավորություններ ստանալ:

- Տես Հռովմայեցիս 15.13:
- Տես Ալմա 32.28:
- Տես Վարդապետություն և Ուխտեր 9.8–9:
- «Չնայած մենք հաճախ նկարագրում ենք Հոգուց եկող հաղորդակցությունը որպես ձայն, այդ ձայնը այնպիսին է, որ մենք ավելի շատ զգում ենք, քան լսում: Եվ երբ խոսում ենք Սուրբ Հոգու հուշումները «լսելու» մասին, մենք հաճախ նկարագրում ենք հոգևոր հուշումն ասելով. «Ես զգացի....»: Տիրոջ խորհուրդը Օլիվեր Քաուդերիին Վարդապետություն և Ուխտերի 9-րդ բաժնում.... սովորեցնում է այս սկզբունքը: Սակայն այդ խորհուրդը երբեմն սխալ է հասկացվում: Կարդալով այդ հատվածը, երբեմն որոշ Եկեղեցու անդամներ շփոթության մեջ են ընկնում, վախենալով, որ նրանք երբեք Սուրբ Հոգուց հուշում չեն ստացել, որովհետև երբեք իրենց կրծքում այրոց չեն զգացել: Ուշադրություն դարձրեք Տիրոջ վերջին խոսքերին Վարդապետություն և Ուխտերի 9.8-ում. «ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է»: Այս հատվածում նկարագրվող այրոցը հանգստության և անդորրի զգացում է և ոչ թե անպայման տաքության զգացում: Երբ ձեր կյանքում շարունակում եք որոնել և հետևել Տիրոջ կամքին, դուք սկսում եք ճանաչել, թե ինչպես է Սուրբ Հոգին ձեզ վրա անհատապես ազդում» (*Հավատքին հավատարիմ*, էջ 95):

«Անձնական հայտնությունները.... մտքում զգում ենք որպես խոսքեր, իսկ սրտում՝ որպես զգացումներ»:

- Յոթանասունի անդամ ծառայելու ընթացքում, Երեց Լ. Լիոնել Դենդրիկը նկարագրել է, թե ինչպես է Հոգին ազդում թե՛ մտքի և թե՛ սրտի վրա. «Անձնական հայտնությունները ստացվում են և՛ մտքում, և՛ սրտում: Այդ տպավորությունները մտքում զգում ենք որպես խոսքեր, իսկ սրտում՝ որպես զգացումներ: Երեց Բոյդ Ք. Փակերը բացատրել է. «Այդ առաջնորդությունը տրվում է տպավորությունների և հուշումների միջոցով՝ որպես մտքեր, որպես զգացումներ» («Revelation in a Changing World», *Ensign*, նոյեմբեր 1989, էջ 14): Ժամանակ առ ժամանակ, Հոգին կարող է ազդել և՛ մտքի, և՛ սրտի վրա միաժամանակ: Սովորաբար, երբ գլուխդ և սիրտդ ստանում են միևնույն տպավորությունները, զգում ես, որ անձնական հայտնություն ես ստանում: Փրկիչը հրահանգել է Հայրում Սմիթին. «Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին» (ՎԱՈՒ 11.13)» («Personal Revelation», *Brigham Young University 1996–97 Speeches* [1997], 256):
- Նախագահ Բոյդ Ք. Փակերը բացատրել է, թե ինչպես է մեր միտքը հաղորդակցություն ստանում աստվածային աղբյուրներից. «Սուրբ Հոգին մեր հոգու հետ հաղորդակցվում է ավելի շատ բանականության միջոցով, քան ֆիզիկական զգացումների միջոցով: Այդ առաջնորդությունը տրվում է տպավորությունների և հուշումների միջոցով՝ որպես մտքեր, որպես զգացումներ: Միշտ չէ, որ հեշտ է նկարագրել ոգեշնչումը: Սուրբ գրությունները մեզ ուսուցանում են, որ հոգևոր հաղորդակցության խոսքերը մենք պետք է ավելի շուտ «զգանք», քան լսենք, ավելի շուտ տեսնենք հոգևոր, քան մահկանացու աչքերով (տես 1 Նեփի 17.45)» (տես «Conference Report», սեպ.–հոկ. 1989, 16 կամ «Ensign», նոյ. 1989, 14):

2. Մենք կարող ենք ունենալ խաղաղության զգացում:

- Տես Ծննդոց 41.16:
- Տես Վարդապետություն և Ուխտեր 6.22–23:
- Սուրբ Հոգին հաճախ կոչվում է Մխիթարիչ (տես Հովհաննես 14.26, ՎԱՈ 39.6): Երբ Նա հայտնում է ձեզ Տիրոջ կամքը, Նա խաղաղություն կհաղորդի ձեր մտքին (տես ՎԱՈ 6.23): Այն խաղաղությունը, որ Նա է տալիս, չի կարող կեղծվել աշխարհիկ ազդեցություններով կամ կեղծ ուսմունքներով: Դա այն խաղաղությունն է, որ Փրկիչը խոստացավ, երբ Նա Իր աշակերտներին հավաստիացրեց, որ կուղարկի Մխիթարիչին. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե ինչպես աշխարհն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի և չվախենա (Հովհաննես 14.27)» (*Հավատքին հավատարիմ*, էջ 95):
- Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նկարագրել է կուրծքը ներսում այրվելու հետ կապված զգացումները. «Ի՞նչ է նշանակում «կուրծքդ կայրվի քո ներսում»: Արդյոք այն պետք է լինի այրվածք առաջացնող տաքության զգացում: Եթե դա է իմաստը, ապա ես երբեք չեմ ունեցել կրծքի ջերմային այրում իմ ներսում: Անկասկած, սուրբ գրության այս հատվածում «այրվել» բառի նշանակությունը մխիթարության և հանգստի զգացում է: Դա է այն վկայությունը, որ շատերը ստանում են: Այդպես է գործում հայտնությունը» («Teaching and Learning by the Spirit», *Ensign*, մարտ 1997, 13):
- Յոթանասունական՝ Երեց Ռոբերտ Ք. Դելենբախն ուսուցանել է, թե ինչպես կարող է խաղաղությունն օրհնել մեր կյանքը. «Եթե անկեղծորեն աղոթենք Տիրոջը և ապավինենք նրա աստվածային հուշումներին, ապա մեղմ, բարակ ձայնը կայցելի մեզ (տես Հելաման 5.30): Մենք կստանանք խաղաղություն, իմանալով, որ Աստված պատասխանել է մեր աղոթքներին: Հիշեք այն խաղաղությունը, որ ստացել էր Օլիվերը [տես ՎԱՈՒ 6.23]: Հոգևոր այդ մոխիրը կարող է վերածվել վկայության վառ կրակի (տես Հելաման 5.45)» (տես «Conference Report», հոկ. 1990, 28 կամ «Ensign», նոյ. 1990, 23):

> *«Երբ բարիք եք գործում, ձեզ լավ եք զգում, որովհետև Սուրբ Հոգին է խոսում ձեզ հետ»:*

3. Մենք կարող ենք ունենալ մեղմ, բարակ ձայնը:

- Տես Գ Թագավորաց 19.9–12:
- Տես Հելաման 5.30:

© 2005 Robert Casey, Պատճենահանվել է թույլատրվում

- Նախագահ Բոյդ Ք. Փակերն ուսուցանել է Հոգու ձայնի վերաբերյալ. «Հոգու ձայնը մեղմ, բարակ ձայն է՝ ձայն, որն ավելի շուտ *զգում* ենք, քան լսում: Հոգևոր ձայնն է, որ ծնվում է բանականության մեջ ինչպես սրտումդ դրված միտքը» (տես «Conference Report», ապրիլ 2000, 8 կամ «Ensign», մայիս 2000, 8):
- Երեց Հենրի Բ. Այրինգը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նշել է, թե ինչպես է Աստծո ցանկությունն իմանալու մեծ կարիքը պատասխաններ բերում. «Ես ստացել եմ իմ աղոթքների պատասխանները: Այդ պատասխաններն առավել հստակ են եղել, երբ իմ ցանկությունները տեղի են տվել Աստծո ցանկությունն իմանալու անհաղթահարելի կարիքին: Այդ ժամանակ է, որ սիրող Երկնային Հոր պատասխանը կարող է լսվել մտքի մեջ՝ մեղմ և բարակ ձայնի միջոցով և կարող է գրվել սրտի վրա» (տես «Conference Report», հոկ. 2000, 111 կամ «Ensign», նոյ. 2000, 86):
- Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը խոսել է այն մասին, թե ինչ կարող է անել մեզ համար Սուրբ Հոգու պարգևը. «Սուրբ Հոգին քեզ օգնում է ընտրել ճիշտը: Սուրբ Հոգին կպաշտպանի ձեզ չարից: Նա բարակ մեղմ ձայնով ձեզ հուշում է գործել ճիշտը: Երբ բարիք եք *գործում*, ձեզ *լավ* եք զգում, որովհետև Սուրբ Հոգին է խոսում ձեզ հետ: Սուրբ Հոգին հրաշալի գործընկեր է: Նա *միշտ* հասանելի է ձեզ օգնելու համար» (տես «Conference Report», ապրիլ 1989, 103 կամ «Ensign», մայիս 1989, 82):

4. Մենք կարող ենք նոր մտքեր ունենալ:

- Տես Վարդապետություն և Ուխտեր 8.2:
- Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, թե ինչպես կարող է հայտնության ոգին նոր մտքեր հաղորդել. «Մարդ կարող է օգտվել՝ նկատելով հայտնության ոգու առաջին նշույլները. օրինակ, երբ զգում ես, թե ինչպես է մաքուր բանականություն իջնում քո վրա, որը կարող է քեզ մտքերի հանկարծակի բռնկում տալ, այնպես որ նկատելով այն, դու կարող է տեսնես, որ այն իրականանում է նույն օրը կամ շուտով. այլ խոսքերով ասած, այն բաները, որոնք ձեր

մտքին են ներկայացվել Աստծո Հոգով, կիրականանան. և այդպիսով, սովորելով Աստծո Հոգին և հասկանալով այն, դուք կարող եք աճել հայտնության սկզբունքի մեջ, մինչև որ կատարյալ դառնաք Հիսուս Քրիստոսում» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 151):

5. **Մենք պետք է հիշենք, որ Հոգու հայտնությունները սրբազան են:**

- Տես Ալմա 12.9:
- Նախագահ Բոյդ Ք. Փակերը զգուշացրել է, որ Հոգու հայտնությունները սրբազան բնույթ ունեն.

  «Երազները և տեսիլքները և այցելությունները անսովոր բան չեն Եկեղեցում և մաս են կազմում բոլոր այն բաների, ինչ Տերը հայտնի է դարձրել արդի տնտեսության ժամանակ:

  Հնարավոր է, որ դուք զարմանալի հոգևոր փորձառություն ստանաք: Ես եկել եմ այն համոզման, որ նման փորձառությունները անձնական են և չպետք է հրապարակվեն: Խորհեք դրանք ձեր սրտերում և անլուրջ մի խոսեք դրանց մասին [տես Ալմա 12.9]» («*The Great Plan of Happiness and Personal Revelation*“ [ԵԿՀ հավաք երիտասարդ ամուրիների համար, նոյ. 7, 1993], 7–8):

6. **Տերը մեզ հայտնություն է տալիս Իր ուրույն ժամանակին:**

- Տես Եսայիա 55.8–9:
- Տես Մորոնի 7.2:
- Տես Վարդապետություն և Ուխտեր 88.68:
- Երեց Դալին Հ. Օքսն ուսուցանել է Տիրոջ կողմից ոգեշնչում ստանալու ժամանակի մասին. «Պետք է գիտակցենք, որ Տերը կխոսի մեզ հետ Հոգու միջոցով իր ուրույն ժամանակին և իր ուրույն ձևով: Այս սկզբունքն անհասկանալի է շատ մարդկանց համար: Նրանք հավատացած են, որ երբ իրենք պատրաստ են և երբ իրենց հարմար է, նրանք կարող են կանչել առ Տերը և նա անմիջապես կարձագանքի, նույնիսկ իրենց նշանակած ձևով: Հայտնությունը չի գալիս նման ձևով» (*Ensign,* մարտ 1997, 10):
- Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Նիլ Ա. Մաքսվելը, շեշտել է այն փորձությունը, որին պետք է մեզ ենթարկենք Տիրոջ ժամանակին, մինչ սպասում ենք մեր աղոթքների և այլ արդար ցանկությունների պատասխաններին. «Քանի որ Տերը ցանկանում է, որ մարդիկ «փորձվեն բոլոր բաներում» (ՎԱՈՒ 136.31), ի՞նչ եք կարծում, ինչպես պետք է մենք փորձվենք: Նա ասում է՝ Ես կփորձեմ իմ ժողովրդի հավատքը և համբերությունը (տես Մոսիա 23.21): Քանի որ Տիրոջ ժամանակի հանդեպ մեր հավատքը կարող է փորձվել, եկեք ոչ միայն սովորենք ասել «Քո կամքը թող կատարվի», այլ նաև համբերությամբ՝ «Քո ժամանակին թող կատարվի» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 76 կամ «Ensign», մայիս 2001, 59):

© 1989 Bryant Livingston. Պատվիրված լիցենզիայով օգտագործվում է

7. **Մենք չպետք է սպասենք հայտնության բոլոր բաներում:**

- Տես Հակոբոս 4.3:
- Տես Վարդապետություն և Ուխտեր 58.26–29:
- Երեց Դալին Հ. Օքսը զգուշացրել է. «Աստծուց եկող հայտնությունները՝ Հոգու ուսուցումն ու առաջնորդությունները, անընդհատ չեն: Մենք հավատում ենք շարունակվող հայտնություններին, ոչ թե շարունակական հայտնություններին: Մենք հաճախ ենք մենակ թողնվում, որպեսզի լուծենք մեր խնդիրները, առանց Հոգու թելադրանքի կամ առաջնորդության: Դա մահկանացու կյանքի փորձառության մասն է: Բարեբախտաբար, մենք երբեք Փրկչի տեսադաշտից դուրս չենք, և եթե մեր դատողությունը մեզ տանում է թույլատրելի սահմանից այն կողմ, և եթե մենք լսում ենք մեղմ, բարակ ձայնը, Տերը մեզ կփորձի սանձել իր Հոգու հուշումներով» (*Ensign,* մարտ 1997, 14):
- Երեց Օքսը զգուշացրել է նաև մեր կյանքի յուրաքանչյուր մանրուքի համար հայտնություն փնտրելու մասին. «Քիչ հավանական է, որ Տիրոջ Հոգին մեզ հայտնություն տա առօրյա գործերի համար: Մի անգամ ես լսեցի երիտասարդ մի կնոջ վկայություն, որը գովաբանում էր իր ամուսնու հոգևորությունը, նշելով, որ իր կյանքի յուրաքանչյուր հարցում նա

դիմում էր Տիրոջ օգնությանը: Նա պատմեց, թե ինչպես էր ամուսինն իրեն ուղեկցում գնումներ կատարելիս և անգամ պահածոյացված բանջարեղենների տեսականիի մեջ ընտրությունն աղոթքով էր անում: Ինձ համար սա ոչ պատշաճ է հնչում: Ես հավատացած եմ, որ Տերը սպասում է, որ նման տեսակի ընտրությունների մեջ մենք կօգտագործենք մեզ տրված բանականությունն ու կյանքի փորձը» («Revelation», *New Era*, սեպ. 1982, 46):

Միսիոների ներուժի մեծագույն պաշարներից մեկը Հոգին զգալը և հնազանդվելն է:

■ Միսիոներն ուսուցանում է վերականգնված ավետարանի ճշմարտությունը հետաքրքրվողին, սակայն Հոգու ազդեցությունն ամենազորավոր գործոնն է դեպի վերականգնված ավետարանը մարդուն դարձի բերելիս: Խիստ կարևոր է, որպեսզի միսիոներները զգայուն լինեն Հոգու նկատմամբ և սովորեն հետևել իրենց ստացած տպավորություններին: Հոգու դերի մեր հասկացողությունը կաճի, երբ մենք սովորենք հնազանդվել նրա հուշումներին:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 2 Նեփի 33.1
- Վարդապետություն և Ուխտեր 43.15–16
- Վարդապետություն և Ուխտեր 50.21–22

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է դարձի գալու գործում Հոգու դերի մասին. «Միսիոներական կենտրոններում մենք միսիոներներին ուսուցանում ենք, որ նրանք պետք է հավատք ունենան Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ: Նրանք ուսուցանվում են, որ իրենք պետք է անկեղծորեն ջերմ, անձնական, հոգատար հարաբերություններ զարգացնեն նրանց հետ, ում հանդիպում են: Նրանք պետք է սովորեն լսել և հասկանալ և անկեղծորեն կիսել հետաքրքրությունները ու մտահոգությունները նրանց, ում իրենք ուսուցանում են: Վարդապետությունը ուսուցանելիս միսիոներները պետք է պարզեն, թե ինչ են մտածում և զգում իրենց լսողները, որպեսզի կարողանան պարզել թյուրիմացությունը, թեթևացնել կասկածը, ցրել մտահոգությունները և քաջալերել: Որովհետև Միսիոներների ջերմ և անկեղծ ոգին կենսական է, այն կ օգնի ոչ անդամներին զգալ և ճանաչել Տիրոջ Հոգին, քանզի Հոգին է զորությունը, որը դարձի է բերում» (տես «Conference Report», հոկ. 1988, 34 կամ «Ensign», նոյ. 1988, 28):

Հոգու ազդեցությունն ամենազորավոր գործոնն է դեպի վերականգնված ավետարանը մարդու դարձի գալիս:

■ Յոթանասունական երեց Ջին Ռ. Կուկը՝, ուսուցանել է, թե ինչպես է մեր վկայություններով կիսվելը հրավիրում Հոգին. «Հաճախ վկայեք, երբ ուսուցանում եք: Դա հնարավոր է ավելի կարևոր լինի, քան այն, ինչ դուք ուսուցանում եք: Վկայեք՝ Տիրոջ անունով, որ այն, ինչ դուք ուսուցանում եք, ճշմարիտ է: Եթե դա անեք, Տիրոջ Հոգին ներկա կգտնվի» (*Raising Up a Family to the Lord* [1993], 49):

© 1995 Merrett T. Smith. Պատճենահանվել չի թույլատրվում

• Նախագահ Բոյդ Ք. Փակերը նկարագրել է կարևոր մի դաս, որը նա սովորել է միսիայի ծառայության ընթացքում.

«Որպես Միսիայի նախագահ՝ ես սովորեցի սթափեցնող մի դաս: Այդ ժամանակ ես Բարձրագույն Իշխանավոր էի: Աշխատանքի օգտի համար ինձ մի քանի անգամ հուշում էր եղել՝ ազատել իմ խորհրդականներից մեկին: Բացի դրա մասին աղոթելուց, ես մտածել էի, որ դա ճիշտ որոշում կլիներ: Սակայն ես գործը չէի կատարում: Ես մտավախություն ունեի, որ դա կվիրավորեր այդ մարդուն, որը երկար ժամանակ ծառայել էր Եկեղեցում:

Հոգին հեռացել էր ինձանից: Ես չէի կարողանում հուշումներ ստանալ, թե ով պետք է խորհրդական կանչվեր, եթե ես ազատեի նրան: Դա տևեց մի քանի շաբաթ: Աղոթքներս կարծես մնում էին իմ սենյակում: Ես փորձում էի աշխատանքը կազմակերպելու մի քանի այլ տարբերակներ, սակայն ապարդյուն: Ի վերջո, ես արեցի այն, ինչ Հոգին հուշել էր: Անմիջապես, պարգևը վերադարձավ: Օ՜, ինչ քաղցր բան է կրկին զգալ այդ պարգևը: Դու գիտես դա, քանի որ այն քո հետ է՝ Սուրբ Հոգու պարգևը: Եվ եղբայրը չէր վիրավորվել, իրականում, նա մեծապես օրհնվեց և դրանից հետո, անմիջապես, աշխատանքը առաջադիմեց» («*That All may Be Edified*» [1982], 341):

■ Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին, որն Առաջին Նախագահության խորհրդական էր, շեշտել է Տիրոջ կողմից ուղղություն ստանալուց հետո դրան հետևելու կարիքը. «Երբ մարդ իմանում է, թե որն է Տիրոջ խորհուրդը և հետևում է դրան, նա անկաշկանդ մոտենում է Հոգուն: Ի սկզբանե, երկրի վրա իր զավակների հետ Աստծո գործերի պատմությունը վկայում է այն փաստը, որ նրանք, ովքեր չեն հարգում իր խորհուրդը, ձախողվում են և կսկիծ ապրում» («Seek Not to Counsel the Lord», *Ensign*, Aug. 1985, 2):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ ձևերով է Տիրոջ Հոգին ոգեշնչել ձեզ:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի մեծացնեք Հոգու ազդեցությունը ձեր կյանքում: Ինչպե՞ս է անձնական արժանավորությունն ազդում մարդու կյանքում ունեցած Հոգու ազդեցության վրա:
- Ի՞նչ ձևերով կարող եք ավելի մեծացնել , ընկալելու ունակություն զարգացնել Հոգու նկատմամբ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Որոշեք, թե ինչ փոփոխություններ կարող եք անել ձեր կյանքում, որպեսզի ավելի զգայուն լինեք Հոգու նկատմամբ:
- Ընտրեք ժամանակ և վայր, որտեղ կարող եք մենակ լինել: Հնարավոր է, դուք ցանկանաք ծոմ պահել: Սկսեք աղոթքով և հարցրեք Երկնային Հորը, թե ինչ կցանկանար, որ դու անես, մինչ դու պատրաստվում ես լինել Նրա միսիոներներից մեկը: Աղոթելուց հետո ժամանակ տրամադրեք, որ խորհեք այն մտքերի և զգացումների մասին, որոնք գալիս են քեզ: Գրի առեք այդ տպավորությունները ձեր օրագրում: Դա կարող է լավ սկիզբ լինել ձեր միսիոներական օրագրի համար:
- Ձեր ուսումնասիրած սուրբ գրություններից ստացած տպավորությունները և ներըմբռնումները գրի առեք սուրբ գրությունների ուսումնասիրման ձեր օրագրում:
- Աղոթքով կարդացեք ձեր հայրապետական օրհնությունը, նկատելով այն խորհուրդները և տպավորությունները, որոնք կարող են կիրառվել ձեր միսիայում: (Եթե հայրապետական օրհնություն չեք ստացել, մտածեք այն ստանալու մասին):
- Ելույթ նախապատրաստեք հետևյալ թեմայով՝ «Ինչո՞ւ է Հոգով առաջնորդվելը կարևոր յուրաքանչյուր միսիոների համար»: Կիսվեք ձեր ելույթով ձեր ընտանիքի կամ վստահելի ընկերոջ հետ:
- Կարդացեք տրված աղյուսակի ձախ սյունակի սուրբ գրության հղումները: Աջ սյունակում համառոտակի նկարագրեք, թե ըստ սուրբ գրության նկարագրության, ինչպես կարող է Սուրբ Հոգին ազդել մեր վրա: Հնարավոր է ցանկանաք սուրբ գրությունների «շղթա» կազմել տրված սուրբ գրություններով՝ խաչաձև հղելով առաջինը երկրորդին, երկրորդը՝ երրորդին և այդպես մինչև վերջ՝ վերջինը հղելով առաջինին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Սուրբ Հոգի» (178–180 էջեր)
- «Աղոթք» (8–14 էջեր)
- «Հայտնություն» (91–96 էջեր)

	Ինչպես է Սուրգ Հոգին ներգործում մեզ վրա
Հովհաննես 14.26	
Հովհաննես 15.26	
Հովհաննես 16.13	
Գաղատացիս 5.22–23	
Մոսիա 5.2	
ՎԿՈՒ 6.14–15	
ՎԿՈՒ 6.22–23	
ՎԿՈՒ 8.2–3	
ՎԿՈՒ 9.8–9	
ՎԿՈՒ 11.12–13	
ՎԿՈՒ 50.17–23	

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Լեռան քարոզը», հեղինակ՝ Հարրի Անդերսոն

ՀՈԳՈՎ ՈՒՍՈՒՑԱՆԵԼԸ

ՆԱԽԱԲԱՆ

Միսիոներները կանչված են ուսուցանելու վերականգնված ավետարանը Աստծո զորությամբ ու իշխանությամբ: «Ուստի, Ես՝ Տերս, տալիս եմ ձեզ այս հարցը,– Ինչի՞ համար եք դուք կարգվել: *Քարոզելու իմ ավետարանը Հոգով*» (ՎԱՈՒ 50.13–14, շրագիրն ավելացված է): Խոսելով ավետարանն արդյունավետ ուսուցանելու կարևորության մասին, Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, որ «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու յուրաքանչյուր անդամ ուսուցիչ է կամ կլինի», որ «բոլորս Նրա ծառաներն ենք՝ և ու ենք սրբազան պարտականություն ուսուցանել բոլոր ժամանակների ամենամեծ ուղերձը՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը : Մենք ավելի շատ այն ուսուցիչների կարիք ունենք, ովքեր համապատասխանում են այդ ուղերձին» (տես «Conference Report», հոկ. 1999, 100, 104 կամ «Ensign», նոյ. 1999, 78, 80):

> *«Մենք Նրա ծառաներն ենք՝ սրբազան պարտականություն ունենալով ուսուցանելու Հիսուս Քրիստոսի ավետարանը»:*

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Փրկությունը չի կարող գալ առանց հայտնության. առանց դրա ապարդյուն է սպասավորություն անել» (*History of the Church*, 3:389): Նախագահ Բրիգամ Յանգը նույնպես շեշտել է Հոգու անհրաժեշտությունը՝ ավետարանն ուսուցանելիս. «Եթե Մորմոնի Գրքի հետ միասին ինձ ուղարկվեր աշխարհի ողջ տաղանդը, դատողությունը և իմաստությունը, և երկրի ամենաբաձրաձաշակ պերճախոսությամբ հայտարարվեր դրա ճշմարտացիության մասին, ապացուցելով դա աշխարհիկ գիտելիքով և իմաստությամբ, դա ինձ համար կլիներ միայն ծուխ, որն առաջանում է միայն անհետանալու համար: Սակայն, երբ ես տեսա մի մարդու, որը զուրկ էր հրապարակախոսական տաղանդից կամ պերճախոսությունից, որը կարող էր միայն ասել. «Ես գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ Ջոզեֆ Սմիթը Տիրոջ Մարգարեն է», այդ անձից փոխանցվող Սուրբ Հոգին լուսավորեց իմ հասկացողությունը, և լույսը, փառքն ու հավերժությունը բացվեցին իմ առջև: Ես պարուրվեցի դրանցով, լցվեցի դրանցով, և ինքս իմացա, որ այդ մարդու վկայությունը ճշմարիտ է» (in Journal of Discourses, 1.90):

Որպես Տիրոջ ծառաներ, դուք պետք է սովորեք ծառայել, որը նշանակում է Հոգով ուսուցանել: Սա ներառում է սովորել և օգտագործել ուսուցման հմտություններ և սկզբունքներ, որոնք ձեզ և ձեր հետաքրքրվողներին թույլ են տալիս ստանալ Հոգու ազդեցությունը: Տերը գիտի, թե ինչ պետք է սովորի յուրաքանչյուր անձնավորություն: Եթե Հոգու զորությամբ և պարզությամբ ուսուցանում ես ճշմարիտ վարդապետությունները և սկզբունքները, ուղերձը զորությամբ շարժում է սրտերը: Ոգեշնչված ուսուցումը կդիպչի հոգու լարերին, ինչը դարձի կբերի՝ վերականգնված ավետարանի առաջին սկզբունքները և արարողություններն ընդունելու միջոցով:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Հոգով ուսուցանելու համար անհրաժեշտ է անձնական պատրաստվածություն և արժանավորություն:
- Միսիոներները կարող են Սուրբ Հոգուն հրավիրել մասնակցելու իրենց ուսուցմանը:
- Միսիոներները պետք է կիրառեն ուսուցման վեհացնող մեթոդներ:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգով ուսուցանելու համար անհրաժեշտ է անձնական պատրաստվածություն և արժանավորություն:



■ Տերը կօրհնի Իր Հոգու ներկայությամբ այն միսիոներներին, ովքեր պատրաստ են և արժանի: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Յուրաքանչյուր միսիոներ պետք է ձգտի ամեն օր ժամ հատկացնել ուսումնասիրել և աղոթքով կշռադատել ավետարանի սկզբունքները և Եկեղեցու աստվածաբանությունը: Նա պետք է կարդա և մտորի և աղոթի.... Նա իր բանականության մեջ մտքերի պաշար պետք է հավաքի, որոնք արժանի է խոսել, արժանի է լսել, արժանի է հիշել. ապա հոգու ոգեշնչումն առաջ կբերի ճշմարտություններ, որի կարիքն ունեն [լսողները] և իշխանություն կհաղորդի նրա խոսքերին» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 363):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ալմա 5.46
- Ալմա 8.10
- Ալմա 17.2–3
- Վարդապետություն և Ուխտեր 11.21–22
- Վարդապետություն և Ուխտեր 84.85

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ «Հոգու նպատակներից մեկը «ճշմարտության մասին հայտնելն է. . .բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.4–5): Միայն Հոգու ազդեցության միջոցով կարող է ավետարանի ուսուցումը խրատող և ոգեշնչող լինել:

Ձեր արտոնությունը որպես ավետարանի ուսուցիչ գործիք լինելն է, որի միջոցով Սուրբ Հոգին կարող է սովորեցնել, վկայել, սփոփել և ոգեշնչել....

Եթե դուք պատրաստվեք հոգեպես, Սուրբ Հոգին կօգնի ձեզ իմանալ ինչ անել և ասել ձեր ուսուցման ժամանակ: Դուք կարող եք պատրաստվել հաճախ աղոթելով, ուսումնասիրելով սուրբ գրքերը, ապրելով ըստ ավետարանի , լինելով խոնարհ» («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 36):

■ Երեց Դեյվիդ Բ. Հեյթը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, ուսուցանել է. «Մեր միսիոներներն ուսուցանում և վկայում են Հոգու օգնությամբ: Սակայն նրանք պետք է ներդաշնակ ապրեն Տիրոջ հետ: Հոգու վրա հույս դնելը բավական չէ: Աղոթելը բավական չէ: Միսիոներները պետք է անեն այն, ինչ պահանջում է Տերը. ապրել պատվիրաններով, լինել մաքրաբարո, լինել ողջամիտ `գործերով և մտքերով: «Տերն ասել է, որ նա չի բնակվում անսուրբ տաճարներում» (Ալմա 34.36)»: (տես «Conference Report», հոկ. 1977, 86 կամ «Ensign», նոյ. 1977, 57):

■ Առաջին Նախագահության խորհրդական՝ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը, Հոգին ստանալու համար արժանի լինելը համեմատել է բջջային հեռախոսի ազդանշան ստանալու հետ.

«Հաղորդակցվելու համար մեր ժամանակներում շատ են օգտագործվում բջջային հեռախոսները: Սակայն, ժամանակ առ ժամանակ, մենք գտնվում ենք ծածկույթից դուրս, որտեղ հեռախոսը ազդանշան չի ընդունում: Դա կարող է տեղի ունենալ, երբ մենք հայտնվում ենք թունելի մեջ կամ լեռնանցքում կամ հանդիպում ենք այլ արգելքների:

Այդպես է նաև աստվածային հաղորդակցության հետ: Մեղմ և հանդարտ ձայնը, չնայած մեղմ է և հանդարտ, այնուամենայնիվ, շատ զորավոր է: Այն «շշնջում է և թափանցում բոլոր բաների միջով» [ՎԱՈՒ 85.6].... Խոչընդոտներից մեկը, որ հավանաբար, մեզ թույլ չի տալիս լսել ուղերձը, մեր «անզգայանալն» է [տես 1 Նեփի 17.45]: Հաճախ մենք հայտնվում ենք հոգևոր ծածկույթից դուրս՝ այն վայրերում կամ իրավիճակներում, որոնք խոչընդոտում են աստվածային ուղերձների հասանելիությունը: Այդ խոչընդոտների թվում են բարկությունը, պոռնոգրաֆիան, մեղսագործությունը, եսասիրությունը և Հոգու համար վիրավորական մյուս իրավիճակները»: (տես «Conference Report», ապրիլ 2004, 67–68 կամ «Ensign», մայիս 2004, 67):

■ Երեց Դալին Հ. Օքսը նկարագրել է, թե ինչ կարող ենք անել Հոգին հրավիրելու համար.

Հայտնության հոգին ստանալու լավագույն ձևը Սուրբ Հոգու ներգործությամբ խոսված խոսքեր լսելը և ուսումնասիրելն է: Այլ կերպ ասած, մենք Հոգին ստանում ենք՝ կարդալով սուրբ գրությունները կամ կարդալով ոգևշնչված ղեկավարներին և լսելով նրանց խոսքերը....

Նվիրելով մեզ Տիրոջ աշխատանքին՝ մենք պետք է պատրաստ լինենք խորասուզվել նախապատրաստություն կոչվող ծանր աշխատանքում» («Teaching and Learning by the Spirit», *Ensign,* մարտ 1997, 9):

■ Երեց Հենրի Բ. Այրինգը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ընդգծել է, որ աղոթքը Սուրբ Հոգու ներկայությունը սնուցելու միջոց է. «Ճիշտ ինչպես սուրբ գրությունների շուրջ մտորելը հրավիրում է Սուրբ Հոգին, նման գործ է անում ամենօրյա աղոթքը: Եթե աղոթքով

չխնդրենք, Նա հազվադեպ կայցելի մեզ, և եթե չփափագենք, Նա երկար չի մնա: «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով. և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎԱՈՒ 42.14): Սուրբ Հոգու ընկերակցության համար սրտաբուխ, հաստատուն խնդրանքները, մեր Հոր զավակներին սնուցելու անկեղծ մտադրությամբ, անկասկած օրհնություններ կբերեն մեզ և նրանց, ում մենք սիրում և ծառայում ենք » (տես «Conference Report», հոկ. 1997, 115 կամ «Ensign», նոյ. 1997, 84):

■ Երեց Դալին Հ. Օքսը խոսել է այն հարցի շուրջ, թե ինչ պետք է անենք, երբ չենք զգում Հոգու առաջնորդությունը մեր խոսքերում. «Մեզ անհրաժեշտ է մանրակրկիտ պատրաստվել այն ժամանակների համար, երբ մեզ առնանձնահատուկ խոսքեր չեն տրվի, որ խոսենք: Ելնելով իմ փորձից՝ մեզ հաճախ թույլ է տրվում ձևավորել մեր իսկ խոսքերը, որպեսզի արտահայտենք մեր ուսումնասիրած ավետարանի ճշմարտությունները և մեր ստացած վկայությունները: Տերը մեզ չի թելադրում ամեն մի գործում ու խոսքում, այնպես որ մենք պետք է միշտ պատրաստ լինենք շարժվել մեր իսկ լավագույն դատողությամբ : Այդպես վարվելով մենք կարող ենք աճել՝ մի կողմից հավատքով ու հոգևորով, մյուս կողմից՝ մահկանացու փորձառությամբ» («Teaching by the Spirit» [address delivered at the Provo Missionary Training Center, հունիս 21, 1988], 7):

Միսիոներները կարող են Սուրբ Հոգուն հրավիրել մասնակցելու իրենց ուսուցմանը:

■ Երեց Ջին Ռ. Կուկը՝ Յոթանասունից, հայտարարել է. «Դուք՝ որպես ուսուցիչ, պետք է ձեր կարողության սահմաններում անեք ամեն բան՝ *նախապատրաստելու, մարդկանց սրտերը* որպեսզի Հոգին կարողանա ուսուցանել» (տես «Conference Report», հոկ. 1988, 48 կամ «Ensign», նոյ. 1988, 38): Միսիոներները պետք է սովորեն, կարողանալ հրավիրել Հոգին, տարբեր ձևերով, այդ թվում սուրբ գրություններն օգտագործելով և վկայությամբ կիսվելով: Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է. «Երբ Հոգին ազդում է սրտի վրա, սիրտը փոխվում է: Երբ մարդիկ.... զգում են Հոգու ներգործությունն իրենց վրա կամ, երբ նրանք Տիրոջ սիրո և ողորմության նշաններ են նկատում իրենց կյանքում, նրանք հոգևորապես վեհանում և ամրանում են, և Նրա հանդեպ նրանց հավատքն աճում է» (տես «Conference Report», հոկ. 2000, 97 կամ «Ensign», նոյ. 2000, 75):

> *«Երբ Հոգին ազդում է սրտի վրա, սիրտը փոխվում է»:*

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ալմա 5.45–46
- Վարդապետություն և Ուխտեր 84.62
- Վարդապետություն և Ուխտեր 100.7–8

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին սովորեցրել է, թե ինչպես կարելի է Հոգով ուսուցանել. «Մենք պետք է ինքներս ամրանանք և մեր մարդկանց ամրացնենք այնպես, որ մեր ուսուցիչները խոսեն ավելի շուտ իրենց սրտից, քան իրենց գրքերից, որպեսզի իրենց սերը ցույց տան Տիրոջ և այս թանկարժեք աշխատանքի հանդեպ, և ինչ-որ ձևով այն կրակ կառաջացնի նրանց սրտերում, ում իրենք ուսուցանում են» (*Teachings of Gordon B. Hinckley* [1997], 619–20):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է. «Միսիոներներին ուսուցանվում է՝ իրենց մտքերը և սրտերը լցնել հիմնարար սկզբունքներով, ամրապնդող սուրբ գրություններով և իրենց կյանքի պատշաճ փորձառություններով: Դրանք կդառնան նյութերի պաշարներ, որոնցից իրենք կօգտվեն, երբ Հոգու միջոցով կզանազանեն հետաքրքրվող ընտանիքի կամ անհատի կարիքները» (in «Teaching from the Heart», *Ensign*, հունիս 2004, 6):

■ Երեց Հենրի Բ. Այրինգը շեշտադրել է Սուրբ Հոգու դերը հետաքրքրվողներին ուսուցանելիս ու նախապատրաստելիս, որպես որոշակի ճշմարտություններ. «Սուրբ Հոգին յուրաքանչյուրիս ուսուցանում է անհատական ձևով: Բայց ես խոստանում եմ ձեզ, որ եթե [հետաքրքրվողներն ու միսիոներները] խորհեն ու աղոթեն Մորմոնի Գրքի ուղերձների մասին, Սուրբ Հոգին կվկայի Փրկչի մասին, նրանք կհիշեն Նրան, և ժամանակի ընթացքում, Սուրբ Հոգին կդառնա նրանց գործընկերը»: Այն նրանց կհիշեցնի ճշմարտությունը: Այն մարդկանց սրտերի խորհուրդները հայտնի կդարձնի [միսիոներներին]: (*Մորմոնի Գիրքը* [ելույթ նոր միսիայի նախագահների սեմինարին, հունիս 25, 2003], 6):

■ Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, Հոգով ուսուցանելու հնարավորության որոշ նախադրյալներ է անվանել . «Մեր ուսուցումն արդյունավետ կլինի, եթե մեր մոտեցումը լինի խոնարհությամբ՝ աղոթքով ու ուսանելով: Այն ժամանակ, խոսքը հասցնելիս, Հոգին մեզ կօգնի, որ հետևենք և համահունչ լինենք նրան, ինչ Տերը ցանկանում է, որ ուսուցանենք (տես «Conference Report», ապրիլ 1999, 7 կամ «Ensign», մայիս 1999, 8):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, պատմել է այն դասի մասին, որը նա սովորել է, մինչ ծառայում էր որպես միսիայի նախագահ: Նա գրել է, որ իր միսիան այնքան չէր առաջադիմում, որքան հարկավոր էր: Նա չգիտեր, թե ինչն էր անհրաժեշտ փոփոխել: Գոտու համաժողովի վկայության ժողովի ժամանակ, նա լսեց մի վախվորած՝ նոր միսիոների վկայություն: Նախագահ Փակերը մտաբերում է.

«Անձնական վկայությունն այն գործոնն է, որը մարդկանց կյանքում շրջադարձային է դառնում, երբ նրանք գալիս են այս Եկեղեցի»:

«Բոլոր մյուս միսիոներների վկայությունները մոտավորապես նման ձևով էին. «Ես երախտապարտ եմ միսիայի ծառայության մեջ լինելու համար: Ես շատ բան եմ սովորել դրանից: Ես լավ գործընկեր ունեմ: Ես շատ բաներ եմ սովորել նրանից: Ես երախտապարտ եմ իմ ծնողների համար: Անցյալ շաբաթ մենք հետաքրքիր փորձառություն ունեցանք: Մենք թակում էին մարդկանց դռները և....» Ապա միսիոները ինչ-որ փորձառություն էր պատմում: Ապա ավարտում էր մոտավորապես այս ձևով. «Ես երախտապարտ եմ միսիայում լինելու համար: Ես վկայություն ունեմ ավետարանի մասին»: Եվ նա ավարտում էր. «Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն»:

Այդ երիտասարդ երեցը ինչ-որ ձևով տարբեր էր: Շտապելով, որ ոտքի վրա լրացուցիչ րոպե չանցկացնի, նա պարզապես, վախվորած խոսքերով ասաց. «Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է: Ես գիտեմ, որ մենք Աստծո մարգարե ունենք, որ առաջնորդում է Եկեղեցին: Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն»:

Այ դա վկայությո՛ւն էր: Դա պարզապես փորձառություն չէր, ո՛չ էլ երախտագիտության արտահայտում: Դա հայտարարություն էր, փաստի վկայում:

Երեցներից շատերն ասում էին. «Ես ունեմ վկայություն», սակայն չէին հայտարարում այն: Իսկ երիտասարդ երեցը հայտարարեց՝ մի քանի խոսքով արտահայտեց իր վկայությունը՝ ուղղակի, հիմնարար բաների մասին, և արդյունքում՝ զորավոր:

Այդ ժամանակ ես հասկացա, թե որն էր ուղղելու բանը մեր միսիայում: Մենք կիսվում էինք պատմություններով, երախտագիտություն էինք արտահայտում, խոստովանում էինք, որ վկայություն ունեինք , սակայն չէինք կիսվում վկայությամբ» (*Teach Ye Diligently* [1975], 275):

■ Ձեր վկայությունը ամենազորեղը կլինի, երբ կարտահայտվի կարճ, սրտատրոփ համոզմունքով՝ Փրկչի մասին, Նրա ուսմունքների և Վերակագնման մասին: Աղոթեք առաջնորդության համար, և Հոգին ձեզ կօգնի իմանալ՝ ինչպես արտահայտել ձեր սրտի զգացումները» (*True to the Faith,* 180):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նշել է վկայության կարևորությունը դարձի գալու ընթացքում. «Անձնական վկայությունն այն գործոնն է, որը մարդկանց կյանքում շրջադարձային է դառնում, երբ նրանք գալիս են այս Եկեղեցի» (տես «Conference Report», ապրիլ 1998, 90 կամ «Ensign», մայիս 1998, 69):

■ Նախագահ Հինքլին նկարագրել է միսիոների վկայության ուժը. «Վկայությունը մի բան է, որ հնարավոր չէ հերքել: Ընդդիմախոսները կարող են սուրբ գրություններ մեջ բերել և անվերջ վիճել վարդապետության շուրջ: Նրանք կարող են խելացի լինել և համոզիչ խոսել: Բայց երբ մարդ ասում է՝ «Ես գիտեմ», դա կլինի վիճաբանության ավարտը: Հնարավոր է այն չընդունվի, սակայն ո՞վ կարող է հերքել կամ ժխտել հոգու ներքին խաղաղ ձայնը, որն անձնական համոզմունք է ներշնչում» (տես «Conference Report», ապրիլ 1998, 91 կամ «Ensign», մայիս 1998, 70):

Միսիոներները պետք է կիրառեն ուսուցման վեհացնող մեթոդներ:

■ Հոգով ուսուցանելը պահանջում է, որ մենք հասկանանք ուսուցանելու կարևոր մեթոդները, որպեսզի Հոգին ուղեկցի մեր ջանքերը: Հոգով ուսուցանելը չի նշանակում, որ մենք պետք է ուսուցանենք ճանձրալի, ոչ խանդավառ ձևով: Ճշմարիտը ճիշտ հակառակն է: Մենք պետք է ուսուցանենք այնպիսի ձևով, որը շենացնում է: Շենացնել նշանակում է հոգևորապես լուսավորել, գիտելիք ու վեհացում ներշնչել: Մենք դա անում ենք, երբ օգտագործում ենք պարզ ու հասարակ բացատրություններ, տալիս ենք լավ հարցեր, հետևում ենք մեր հետաքրքրվողների արձագանքին և խանդավառությամբ կիսվում ենք մեր ուղերձով:

Միսիոներները պետք է հետաքրքրվողներին օգնեն հասկանալ Հոգու դերը դարձի գալու գործընթացի ժամանակ: Հետաքրքրվողների հետ ավետարանի վերականգնման

մասին իրենց զգացումներով կիսվելը կօգնի նրանց ճանաչել Հոգու ներգործությունը (տես ուսանողի այս ձեռնարկի 3-րդ գլխի «Սուրբ Հոգին բազում ձևերով ազդում է մեր կյանքի վրա՝ բարիքի համար» սկզբունքնի հաստատող սուրբ գրությունները և հայտարարությունները, 00 [23–27] էջեր):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հռովմայեցիս 14.19
- 2 Նեփի 33.1
- Վարդապետություն և Ուխտեր 50.13–14, 17–23

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Փրկիչն օգտագործում էր ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք շինություն էին բերում: Ահա մի քանի ձևեր, որով միսիոներներն ուսուցանելիս կարող են նմանվել Փրկչին.

- ***Աղոթեք:*** Փրկիչն աղոթում էր նրանց համար, ովքեր լսում էին Իր խոսքերը (տես 3 Նեփի 19.27–29): Երբ դուք աղոթում ենք նրանց համար, ում ուսուցանում եք, դուք հավատք եք գործադրում, որպեսզի Աստված փափկացնի նրանց սրտերը: Ձեր աղոթքներում արտահայտեք ձեր սերն Աստծո հանդեպ և նրանց հանդեպ, ում ուսուցանում եք:
- ***Օգտագործեք սուրբ գրությունները:*** Հիսուս Քրիստոսն ուսուցանում էր սուրբ գրություններից (տես Ղուկաս 24.27): Սուրբ գրություններն օգտագործելը հրավիրում է Սուրբ Հոգուն մասնակցել ձեր ուսուցմանը:
- ***Կիսվեք վկայությամբ:*** Հիսուսը վկայում էր Երկնային Հոր մասին և Իր աստվածային դերի մասին (տես Հովհաննես 10.17–18, 27–30): Վկայությունը հավատքի պարզունակ, ուղիղ հայտարարություն է. դա զգացում կամ համոզմունք է: Երբ կիսվեք ձեր ուսուցանած ավետարանի սկզբունքի վերաբերյալ, Հոգին ձեզ կվկայի դրանց ճշմարտացիության մասին:
- ***Օգտագործեք երաժշտություն:*** Հիսուսը և Նրա առաքյալները «օրհներգ երգեցին» (Մատթեոս 26.30): Երաժշտության միջոցով՝ դուք և նրանք, ում դուք ուսուցանում եք, կարող եք հրավիրել Սուրբ Հոգու ներկայությունը և արտահայտել զգացումներ, որոնք այլ կերպ դժվար կլինի արտահայտել:
- ***Կիսվեք պատմություններով ու օրինակներով:*** Հիսուսն ավետարանի սկզբունքները ուսուցանում էր պատմություններով, ինչպես օրինակ՝ բարի Սամարացին (տես Ղուկաս 10.25–37) և անառակ որդին (տես Ղուկաս 15.11–32): Օգտագործեք իրական պատմություններ՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող են վերականգնված ավետարանի սկզբունքները կիրառվել կյանքում:
- ***Օգտագործեք առարկաներ և նկարներ:*** Հիսուսը հասարակ առարկաներ և համեմատություններ էր օգտագործում, որպեսզի ուսուցաներ ավետարանի սկզբունքները, ինչպես մանանեխի հատիկը (տես Մատթեոս 17.20) և Իր Առաքյալներին «մարդկանց որսորդներ» անվանելը (տես Մատթեոս 4.18–22): Նմանապես նաև նկարները կարող են օգնել սուրբ գրությունների պատմությունների և ավետարանի սկզբունքների ավելի լավ ըմբռնմանը:
- ***Հարցեր տվեք և լսեք:*** Հիսուսը հարցեր էր տալիս, ինչպես՝ «Ո՞վ եք ասում, որ ես լինեմ» (Մատթեոս 16.15) և «Ի՞նչ է գրված օրենքում, ինչպե՞ս ես ընթերցում» (Ղուկաս 10.26), և լսում էր պատասխանները: Իմաստալից հարցերը նպաստում են, որպեսզի հետաքրքրվողները մասնակցեն քննարկմանը և կիսվեն անձնական փորձառություններով: Երբ լսում եք, դուք սեր եք ցուցաբերում հետաքրքրվողների հանդեպ և Հոգին կարող է ձեզ օժանդակել զրույցի ընթացքում:
- ***Ապրեք ըստ պատվիրանների:*** Հիսուսն ուսուցանում էր, որ եթե կամենում ենք որևէ ճշմարտության կամ պատվիրանի իսկությունն իմանալ, մենք պետք է ապրենք ըստ դրա (տես Հովհաննես 7.17): Նա իր աշակերտներին ուսուցանում էր միսիոներական աշխատանքի մասին՝ ուղարկելով նրանց միսիայի ծառայության (տես Ղուկաս 9.1–6): Միսիոներները կարող են օգնել հետաքրքրվողներին աղոթել սովորել՝ հրավիրելով նրանց դասի ընթացքում աղոթել: Հետաքրքրվողները կարող են սովորել ճշմարտությունը Իմաստության Խոսքի վերաբերյալ, երբ սկսեն ապրել ըստ դրա: Նրանք կվայելեն Մորմոնի Գրքի ոգին, երբ կարդան ու աղոթեն դրա մասին:
- ***Մեկնաբանել.*** «Մեկնաբանել նշանակում է լուսաբանել կամ պարզորոշ բացատրել: Դա նշանակում է, որ դուք բացատրում եք վարդապետության և սուրբ գրությունների հատվածների իմաստը պարզ և հստակ, ապավինելով Սուրբ Հոգուն, որը կհուշի ձեզ այն, ինչ պետք է ասեք» («Քարոզիր իմ ավետարանը» [2004], 182): Փրկիչը մեկնաբանում էր սուրբ գրությունների իր ուսմունքները, երբ ուսուցանում էր Մորմոնի Գիրքը ժողովրդին (տես 3 Նեփի 26.1–5):
- ***Օգտագործեք իրադարձությունները:*** Հիսուսը հաճախ էր օգտագործում իրադարձությունները, ինչպիսին էր, օրինակ, Զատկի տոնը, որպեսզի ուսուցանի ավետարանի սկզբունքները: Օրինակ՝ Զատկի տոներին նա օգտագործեց բազմությանը կերակրելը, որպեսզի ուսուցանի, որ Նա է Կյանքի Հացը (տես Հովհաննես 6.1–14, 22–65): Դուք կարող եք օգտագործել ձեր հետաքրքրվողների

կյանքի իրադարձությունները, որպեսզի ուսուցանեք ավետարանի սկզբունքները, ինչպես օրինակ՝ երեխայի ծնունդը՝ վերստին ծնվելու գաղափարն ուսուցանելու համար:

Երբ մտածում եք ուսուցողական հատուկ մեթոդ օգտագործելու մասին, տվեք հետևյալ հարցերը. Այս մեթոդը կհրավիրի՞ Հոգու ազդեցությունը: Այն արդյո՞ք համապատասխանում է այն սկզբունքների սրբազանությանը, որոնք ես ուսուցանում եմ: Այն կխրատի՞ և կուժեղացնի՞ նրանց, ում սովորեցնում եմ:

Հիշեք, որ որպես ավետարանի ուսուցիչ, դուք ներկայացնում եք Տիրոջը: Ուշադիր եղեք, որ այն բոլորը, որ դուք անում և ասում եք, լինի ակնածալի և Նրա կամքի համաձայն («Հավատքին հավատարիմ», 37):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը նկարագրել է կարևոր ուսումնական մեթոդ, որ միսիոներները պետք է սովորեն կիրառել. «Զգոն ուսուցչի աչքերը հաստատուն ձևով շարժվում են առաջ և ետ՝ դասարանով մեկ, նկատելով յուրաքանչյուր շարժում, գրանցելով յուրաքանչյուր արտահայտություն, արագ արձագանքելով անհետաքրքրությանը կամ շփոթությանը: Նրանք անմիջապես կարդում են տարակուսած դեմքի արտահայտությունը, կամ միանգամից զգում են, երբ ուսուցումը տեղ է հասնում» (*Teach Ye Diligently*, 138–39):

■ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նկարագրել է մեր ուսուցանած մարդկանց լսելու կարևորությունը. «Հավանաբար, խոսելուց շատ ավելի կարևոր է լսելը: Այդ մարդիկ անշունչ առարկաներ չեն, որոնք քողարկվում են մկրտության վիճակագրության ներքո: Նրանք Աստծո զավակներ են՝ մեր եղբայրներն ու քույրերը, և նրանքունեն այն ամենի կարիքն, ինչ մենք ունենք: Անկեղծ եղեք: Անկեղծորեն մոտեցեք հետաքրքրվողներին: Հարցրեք այդ ընկերներին, թե ինչն է *իրենց* համար արժեքավոր: Ի՞նչն է *նրանց* համար հոգեհարազատ: Եվ ապա լսեք: Եթե իրավիճակը հարմար է, կարող եք հարցնել, թե ինչ մտավախություններ ունեն նրանք, ինչ փափագներ կամ ինչի կարիք իրենց կյանքում: Խոստանում եմ, որ նրանց ասածի մեջ *ինչ-որ բան* կապված կլինի ավետարանի որևէ ճշմարտություն հետ, որի մասին դուք կարող եք վկայություն բերել, և որի մասին դուք, այնուհետև, կարող եք ավելին առաջարկել.... Եթե մենք լսենք սիրով, մենք անհանգստանալու կարիք չենք ունենա , թե ինչ ասենք: Այն կտրվի մեզ՝ Հոգու միջոցով և մեր ընկերների միջոցով» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 16–17 կամ «Ensign», մայիս 2001, 15):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Կարդացեք Նախագահ Հարոլդ Բ. Լիի հետևյալ հայտարարությունը և խորհեք ուսուցման մեթոդների մասին, որոնք ամենաօգտակարը կլինեն պարզորոշ ուսուցանելու համար. «Դուք պետք է ուսուցանեք.... ոչ թե այնքան պարզ, որ նրանք պարզապես հասկանան, այլ Եկեղեցու վարդապետությունը պետք է այնպես ուսուցանեք, որպեսզի ոչ ոք սխալ չհասկանա» (*The Teachings of Harold B. Lee* [1996], 459):
- Ի՞նչ կարող է անել միսիոները, երբ նրա գործընկերը խոսում է, ինչը կարող է հետաքրքրվողին օգնել զգալ Հոգին և ավելի պարզորոշ հասկանալ ուղերձը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հարցեր տվեք ձեր իմացած ամենալավ ավետարանի ուսուցիչներից մեկին կամ երկուսին: Խնդրեք նրանց կիսվել, թե ինչն է նրանց օգնել սովորել Հոգով ուսուցանել: Հրավիրեք նրանց կիսվել մտքերով՝ ինչպես ուսուցանել և ինչպես հրավիրել Հոգին ուսուցանելիս: Գրառումներ կատարեք հարցազրույցների ժամանակ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Ավետարանի ուսուցումը» (35–37 էջեր)
- «Վկայություն» (182–184 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորում ենք ուսուցանել «ուսումնասիրելով և նաև հավատքով», մաս Ա

ՆԱԽԱԲԱՆ

Տերը մեզ պատվիրել է. «Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎԱՈՒ 88.118): Որպես միսիոներ՝ ձեր հավատքն առ Հիսուս Քրիստոս ձեզ նախապատրաստում է սովորել սուրբ գրություններից և Տիրոջ օծված մարգարեներից ու առաքյալներից: Երբ անձնական ուսումնասիրման ժամանակ դուք հավատք գործադրեք՝ աղոթելով հասկացողության համար, ձեր հավատքը կավելանա: Երբ ձեր հավատքն ավելանա, դուք ավելի ապահով վարդապետական հիմք կկառուցեք վերականգնված ավետարանն ուսուցանելու և ուրիշներին հրավիրելու համար, որ գան Քրիստոսի մոտ: Անձամբ և գործընկերոջ հետ ուսումնասիրելը միսիոներական աշխատանքի առանցքային բաղադրիչներ են:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Աղոթքը և սուրբ գրությունների շուրջ խորհելը մեզ օգնում են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը:
- Մենք պետք է փնտրենք ձեռք բերել խոսքը:
- Մենք խոսքը ձեռք ենք բերում ուսումնասիրելով և նախապատրաստվելով ուսուցանել վերականգնված ավետարանը:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղոթքը և սուրբ գրությունների շուրջ խորհելը մեզ օգնում են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը:

■ Տիրոջ պատվիրաններին հնազանդվելը կարևոր հոգևոր նախապայման է, որպեսզի թույլ տանք Սուրբ Հոգին ներգործի մեր կյանք: Միսիոներական ծառայության ժամանակ միսիայի կանոններին հնազանդվելն անհրաժեշտ պայման է հոգևորը զարգացնելու համար: Հնազանդության հետ զուգահեռ, աղոթքը և սուրբ գրությունների շուրջ խորհելը ձեզկ օգնի ոգեշնչում ստանալ Տիրոջից՝ Սուրբ Հոգու միջոցով:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 1 Նեփի 11.1
- 2 Նեփի 4.15–16
- Ալմա 5.46
- Վարդապետություն և Ուխտեր 11.21–22
- Վարդապետություն և Ուխտեր 19.38
- Վարդապետություն և Ուխտեր 63.64
- Վարդապետություն և Ուխտեր 138.1–2, 6, 11

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Լ. Լիոնել Կենդրիկը, մինչ ծառայում էր որպես Յոթանասունի անդամ, խոսել է աղոթքի մասին՝ որպես հաղորդակցության միջոց Աստծո և Իր զավակների միջև. «Երբ խոսում ենք Երկնային Հոր հետ, մենք դա անում ենք աղոթքի միջոցով: Երբ նա է խոսում մեզ հետ, նա դա անում է անձնական հայտնության միջոցով: Երկկողմանի այդ հաղորդակցությունը վճռական կարևորություն ունի մեր հաջողության համար, մեր բարօրության զգացողության համար, ապահովության զգացման համար և մեր հոգևոր փրկության համար: Էական է, որ մենք հասկանանք անձնական հայտնություն ստանալու ընթացքը: Մենք միշտ աղոթում ենք մեր Երկնային Հորը և միայն նրան: Մեր աղոթքները հղվում են Որդու անունով և պատասխանվում են Սուրբ Հոգու զորությամբ: Մենք չենք աղոթում Փրկչին կամ որևէ այլ մեկին: Այդպես անելը անհարգալից կլինի Երկնային Հոր նկատմամբ և նշան կլինի, որ մենք պատշաճ կերպով չենք հասկանում Աստվածության անդամների միջև փոխհարաբերությունը: Փրկիչը և Սուրբ Հոգին կարևոր դեր են կատարում անձնական հայտնություն ստանալու ընթացքում»: («Personal Revelation», *Brigham Young University 1996–97 Speeches* [1997], 251):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, ուսուցանել է աղոթքի մասին հետևյալը. «Սովորեք ինչպես աղոթել և ինչպես ստանալ ձեր աղոթքների պատասխանները: Երբ աղոթում եք ինչ-որ բանի շուրջ, դուք պետք է երկար-երկար ժամանակ համբերատար սպասեք, նախքան պատասխան ստանալը: Որոշ աղոթքներ, ձեր իսկ ապահովության համար, կպատասխանվեն անմիջապես, իսկ որոշ հուշումներ կգան նույնիսկ նախքան դուք կհասցնեք աղոթել»: (տես «Conference Report», ապրիլ 1976, 47 կամ «Ensign», մայիս 1976, 31):

■ Որպես Երեխաների Միության գերագույն նախագահ՝ քույր Էնի Ջ. Վիրթլինն ուսուցանել է, որ խորհելու քայլերը մեծացնում են մեր ըմբռնումը. «Փրկիչը մեզ օրինակ է տվել, որ հետևենք սուրբ գրություններն ուսումնասիրելիս: Մենք լսում ենք խոսքը, մենք խորհում ենք նրա իմաստի մասին, մենք խնդրում ենք Երկնային Հորը, որ օգնի մեզ հասկանալ, և այդ ժամանակ, մեր միտքն ու մեր հոգին պատրաստ են ստանալ խոստացած օրհնությունները.... Հոգին վկայություն է բերում մեր սրտին, երբ մենք աղոթքով փնտրում ենք իմանալ մեր Երկնային Հոր կամքը» (տես «Conference Report», ապրիլ 1998, 10 կամ «Ensign», մայիս 1998, 10):

«Էական է, որ դուք ուսումնասիրեք արքայության վարդապետությունը և սովորեք ավետարանը՝ թե՛ ուսումնասիրելով, թե՛ հավատքով»:

Մենք պետք է փնտրենք ձեռք բերել խոսքը:

■ Միսիոները պետք է ուսումնասիրի և սովորի վերականգնված ավետարանը, ինչպես որ ուսուցանվում է սուրբ գրություններում և ապրող մարգարեների ու առաքյալների խոսքերում: Ավետարանի ճշմարտությունը սովորելը մեծացնում է Երկնային Հոր հավերժական ծրագրի մեր ըմբռնումը և այն ուրիշներին պարզությամբ ուսուցանելու մեր կարողությունը:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 11.21
- Վարդապետություն և Ուխտեր 42.14
- Վարդապետություն և Ուխտեր 84.85
- Վարդապետություն և Ուխտեր 100.5–8

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է այն մասին, թե ինչ է անհրաժեշտ նախքան մենք ի վիճակի կլինենք զորությամբ ուսուցանել. «Նախքան ձեր ուսանողներին [կամ հետաքրքրվողներին] ամրապնդելը, էական է, որ դուք ուսումնասիրեք արքայության վարդապետությունը և սովորեք ավետարանը՝ թե՛ ուսումնասիրելով, թե՛ հավատքով: Հավատքով ուսումնասիրելը Տիրոջ Հոգին փնտրելն է՝ աղոթքով հավատ և հասկացողություն փնտրելն է: Դրանից հետո դուք զորություն կունենաք համոզել ձեր ուսանողներին» (*The Gospel Teacher and His Message* [address to religious educators, սեպ. 17, 1976], 3–4):

© 2005 Robert Casey. Ներմուծմամբ՝ թույլատրվում

■«Միսիոներները պարզապես անգիր չեն անում մեկ հատված, որպեսզի միշտ օգտագործեն, ինչպես նվագարկչի մի ձայնագրություն», ասել է Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը: «Նրանք պետք է իրենց միտքը և սիրտը լցնեն վարդապետության հիմունքներով, ուղեկից սուրբ գրություններով, և թե ինչպես են դրանք կապված սեփական փորձառությունների հետ, որոնք կարող են օգտագործվել: Ներկայումս մեր միսիոներներն ավելի լավ են պատրաստված, որպեսզի մարդկանց ներկայացնեն Վերականգնման փառահեղ ուղերձը» (in «Be One of the Greatest», *New Era*, մարտ 2004, 15):

Մենք խոսքը ձեռք ենք բերում ուսումնասիրելով և նախապատրաստվելով ուսուցանել վերականգնված ավետարանը:

■ Սուրբ գրություններն ու մարգարեների խոսքերն ուսումնասիրելու համար չկա փոխարինող բան: Հրաշալի խոստումներ են տրված նրանց, ովքեր իրենց խորասուզում են ավետարանի ուսումնասիրման, մասնավորապես, սուրբ գրությունների ուսումնասիրման մեջ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խոսել է օրհնությունների մասին, որոնք կտրվեն. «Հուսով եմ, որ ձեզ համար [սուրբ գրություններ կարդալը] կլինի ավելին, քան պարտականությունը՝ հաճույք. որն , ավելի շուտ, այն կդարձնի Աստծո խոսքը սիրված գործ: Ես ձեզ խոստանում եմ, որ երբ դուք կարդաք, ձեր միտքը կլուսավորվի և ձեր հոգին կբարձրանա: Սկզբում այն հոգնեցուցիչ կթվա, սակայն աստվածային մտքերով ու խոսքերով այն կվերածվի հրաշագործ փորձառության» («The Light within You», *Ensign*, մայիս 1995, 99):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 88.118; տես նաև 109.7

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը բացատրել է, թե ինչ տեղի կունենա, եթե սուրբ գրությունները դարձնենք մեր ուսումնասիրման կենսական մասը.

«Արդարակեց ապրելակերպից բխող հաջողություն, խաբեությունից խուսափելու և գայթակղությանը դիմադրելու զորություն, ամենօրյա կյանքում առաջնորդություն, հոգու բժշկում,– սրանք Տիրոջ տված խոստումներից միայն մի քանիսն են նրանց համար, ովքեր կնդունեն Նրա խոսքը: Մի՞թե Տերը կխոստանա և չի կատարի: Անկասկած, եթե նա ասում է, որ այդ բաները տեղի կունենան մեզ հետ, եթե մենք կառչած մնանք Նրա խոսքին, ապա խոստումները մեզ կտրվեն: Իսկ եթե մենք չկատարենք, ապա օրհնությունները կկորչեն: Որքան ջանասեր էլ որ լինենք այլ ոլորտներում, կան որոշակի օրհնություններ, որոնք կարող ենք գտնել միայն սուրբ գրություններում, միայն Տիրոջը մոտենալով և նրա խոսքին կառչած մնալով, մինչ մենք խավարի միջով ճանապարհ ենք հարթում դեպի կյանքի ծառը....

.... Ես հորդորում եմ ձեզ՝ պարտավորություն վերցրեք ուսումնասիրել սուրբ գրությունները: Ամեն օր խորասուզվեք նրանցում, որպեսզի ունենաք Հոգու զորությունը՝ ձեր կոչման մեջ ձեզ այցելելիս» («The Power of the Word», *Ensign*, մայիս 1986, 82):

■ Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, անդրադարձել է նրան, թե ինչպես է սուրբ գրությունների միսիոներական ուսուցումը օգուտ տվել նրան.

«Միսիոներական լավագույն հիշողություններից մեկը սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունն էր: Ավետարանը սովորելու սուրբ գրությունների ուսումնասիրման ծրագրին հետևելու կարգապահությունը հրաշալի, հատուցող փորձառություն էր: Անհատական ուսումնասիրման միջոցով սուրբ գրություններն ուսուցանելու գիտելիքը փառահեղ ձևով բացահայտվում էր....

Ամեն օր մենք մեկ ժամ կամ ավելի շատ ժամանակ էինք տրամադրում որպես գործընկերներ միասին ուսումնասիրելու համար: Երկու զույգ աչքերով ավետարանի վարդապետությունը զննելը կարծես ավելացնում էր մեր հասկացողությունը: Մենք միասին կարդում էինք, ապա կիսվում մեր ներըմբռնումներով:

Մեր մտքերը սրվում էին, երբ հետևում էինք անձամբ և գործընկերոջ հետ ուսումնասիրելու սովորությանը: Այդ սովորությունը մեզ մոտեցնում էր՝ որպես գործընկերներ, և ավելացնում էր վարդապետության արքայության մեր ըմբռնումը» (տես «Conference Report», հոկ. 2001, 93 կամ «Ensign», նոյ. 2001, 76):

■ Նախագահ Հովարդ Վ. Հանթերը հորդորում էր, որ ամեն օր կանոնավորապես ուսումնասիրենք սուրբ գրությունները. «Մեր ուսուցումը չպետք է քառասային լինի, այլ պետք է կանոնավոր ուսումնասիրման ծրագիր զարգացնենք: Ոմանք ամեն օրվա կամ շաբաթվա համար ունեն ծրագրավորված էջերի կամ գլուխների քանակ, որ կարդում են: Դա շատ խրախուսիչ է և կարող է շատ հաճելի լինել, եթե մարդ կարդում է հաճույքի համար, սակայն դա չի համարվում իմաստալից ուսումնասիրություն: Ավելի լավ է ամեն օր ժամանակ հատկացնենք սուրբ գրությունների ուսումնասիրման համար, քան պարզապես կարդալու համար: Երբեմն կարող ենք հայտնաբերել, որ սուրբ գրության մի հատվածի ուսումնասիրությունը կարող է զբաղեցնել ողջ ժամանակը» (տես «Conference Report», հոկ. 1979, 92 կամ «Ensign», նոյ. 1979, 64):

■ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ վերականգնված ավետարանի ուսումնասիրությունն անկանոն սովորություն չէ. «Աստծո բաները խորապես կարևորություն ունեն. և ժամանակը, փորձառությունը, մանրամասն ու ծանրակշիռ և վեհ մտքերը միայն կարող են ըմբռնել դրանք» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 137):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին առաջարկել է, որ մենք ուսումնասիրենք ավետարանը ինչպես ինքը՝ ավելի շուտ սուրբ գրություններից, քան երկար մեկնաբանություններից.

«Ես ինձ շատ չեմ անհանգստացնում՝ կարդալով երկար մեկնաբանության հատորներ, որոնք նախատեսված են ավելացնելու սուրբ գրություններում գրվածների ծավալը: Փոխարենը, ես նախընտրում եմ օգտվել աղբյուրից՝ ճաշակելով ճշմարտության աղբյուրի անեղծ ջրերից՝ Աստծո խոսքից, ինչպես որ նա տվել է և ինչպես գրվել է մեր կողմից որպես սուրբ գրություն ընդունված գրքերում.... Սուրբ գրությունները կարդալու միջոցով մենք կարող ենք Հոգուց համոզվածություն ստանալ, որ այն, ինչ կարդացել ենք, Աստծուց է եկել՝ իր զավակներին լուսավորելու, օրհնելու և ուրախություն պարգևելու համար:

Ամենուր մեր ժողովրդին ես հորդորում եմ ավելի շատ կարդալ սուրբ գրությունները» («Feasting upon the Scriptures», *Ensign,* դեկ. 1985, 45):

■ **Սուրբ գրություններն ուսուցանելու մեթոդները և մարտավարարությունը**: Հետևյալ մեթոդները և մարտավարությունը կարող է օգնել, որ սուրբ գրությունների ուսումնասիրությունն ավելի արդյունավետ դարձնենք.

Փնտրելու սկզբունքներ. Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է. «Երբ հոգևոր գիտելիք եք փնտրում, փնտրեք սկզբունքներ: Զգուշորեն առանձնացրեք սկզբունքները դրանք բացատրող մանրամասնություններից: Սկզբունքը բազմազան պարագաներում օգտագործվելու համար փաթեթավորված ճշմարտության խտանյութ է» (տես «Conference Report», հոկ. 1993, 117 կամ «Ensign», նոյ. 1993, 86): Սուրբ գրություններում հակիրճ շարադրված շատ սկզբունքներ ենք գտնում, ինչպես օրինակ՝ Փրկչի ուսուցումը ապաշխարության վերաբերյալ (տես ՎԼՈՒ 58.42–43) և Մորմոնի հայտարարությունը Սատանայի վերաբերյալ (տես Ալմա 30.60):

«Երբ հոգևոր գիտելիք եք փնտրում, փնտրեք սկզբունքներ»:

Նշումներ կատարեք սուրբ գրություններում: Սուրբ գրություններում նշումներ կատարելը ձեզ օգնում է հիշել սուրբ գրությունների որոշակի հատվածների տեղը, գունավորել սուրբ գրությունները ըստ կապակցված խմբերի, որոշակի թեմաների և այլն: Նշումներ կատարելու ձևերից են՝ ընդգծելը, եզրագծելը, ստվերագծելը, շրջանակի մեջ վերցնելը, համարակալելը և խաչաձև հղումներ գրելը: Զարգացրեք սուրբ գրություններում նշումներ անելու մեթոդներ, որոնք լավագույն ձևով ձեզ կօգնեն հասկանալ դրանք:

Օգտագործեք սուրբ գրություններն ուսանելու օժանդակ նյութերը. Սուրբ գրությունների ուսումնասիրման օժանդակ նյութեր. Սուրբ գրությունների Վերջին Օրերի Սրբերի հրատարակություններն ընդգրկում են ուսումնասիրման օժանդակ նյութեր, ինչպիսիք են «Սուրբ գրությունների ուղեցույցը», խաչաձև հղումները, դժվար բառերի և արտահայտությունների բացատրություններ, քաղվածքներ Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունից (ՋՍԹ), աստվածաշնչյան և

Եկեղեցու պատմության քարտեզներ և լուսանկարներ, ինչպեսև գլուխների նախադրություններ, բաժինների նախադրություններ և հատվածների ամփոփ նկարագրություններ: («Սուրբ գրությունների ուղեցույցը» ոչ անգլերեն լեզուների համար պատրաստված ուսումնասիրման օժանդակ նյութ է: Այն կարելի է գտնել նաև Ինտերնետում՝ scriptures.lds.org կայքում):

Տեքստին վերաբերող հարցեր տվեք: Նմանատիպ հարցեր տվեք, օրինակ՝ «Ո՞վ է խոսողը», «Ո՞ւմ է ուղղված նրա խոսքը», «Ո՞րն է այս հատվածի կամ գլխի ուղերձը»: «Ե՞րբ և որտե՞ղ են տեղի ունենում այս հատվածում նկարագրված իրադարձությունները»: «Որո՞նք են այս հատվածի առանցքային բառերը և արտահայտությունները»: «Ի՞նչ են ուսուցանում այս հատվածները Քրիստոսի կամ փրկության ծրագրի մասին»: «Ի՞նչպես է այս հատվածը կիրառելի իմ կյանքում այս պահին»:

Նկատի առեք սուրբ գրություններում տրվող հարցերը: Հաճախ հարցերը ստիպում են դադար տալ և խորհել ավետարանի ճշմարտության մասին և այն մասին, թե մենք անձամբ ինչպես ենք ապրում դրանով: Օրինակ՝ մտածեք, թե ինչ պատասխան կտայիք իր աշակերտներին տված Փրկչի հարցին. «Իսկ դուք իմ մասին ի՞նչ էք ասում, ո՞վ եմ ես» (Մատթեոս 16.15) կամ «Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. դեռեւս հաւատ չունէ՞ք» (Մարկոս 4.40):

Ստուգեք անծանոթ բառերի և արտահայտությունների սահմանումները: Երբեմն սուրբ գրությանը հաջորդող բառը կամ արտահայտությունը բացատրություն է նախորդի համար: Օրինակ՝ Նեփին ուսուցանել է, որ որոշ մարդիկ «ոչինչ են համարում և ոտնակոխ են անում.... հենց Իսրայելի Աստծուն», և ապա բացատրել է, թե այդ արտահայտությունը նշանակում է, որ «նրանք ոչինչ են համարում նրան և ականջ չեն դնում նրա խորհուրդների ձայնին» (1 Նեփի 19.7):

Նկատեք խորհրդանիշները և սովորեք դրանց մասին: Սուրբ գրությունները հաճախ են օգտագործում խորհրդանիշներ և պատկերավոր արտահայտություններ: Խորհրդանիշներ կարելի է գտնել գույների, կենդանիների, անունների, հագուստի և այլ բաների մեջ: Շատ խորհրդանիշներ մեզ բերում են Քրիստոսի մոտ (տես Մովսես 6.63): Օրինակ՝ օգտագործեք «Սուրբ գրությունների ուղեցույցը, որպեսզի սովորեք Հիսուսի ծննդավայրի՝ «*Բեթլեհեմ*» քաղաքի անվան իմաստը: Ինչպե՞ս է նրա իմաստը վկայում Քրիստոսի մասին (տես Հովհաննես 6.35):

Տեղադրեք ձեր անունը: Օգտագործեք ձեր անունը սուրբ գրության մեջ, որպեսզի սուրբ գրությունների ուսմունքներն ավելի անձնական դարձնեք: Օրինակ՝ «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել [ձեր անունը] անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Նկատեք սուրբ գրությունների ցանկերը: Սուրբ գրությունները պարունակում են բազմաթիվ ցանկեր, որոնք արտահայտում և ուսուցանում են Տիրոջ կամքը և վարդապետությունը: Օրինակ՝ Վարդապետություն և Ուխտեր 20.37-ում տրված է մկրտության հատկանիշների ցանկ: Բենյամին թագավորը թվարկել է, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի մեր վրայից հանենք բնական մարդուն (տես Մոսիա 3.19):

Մտապահեք առանցքային սուրբ գրությունները: Կարևոր սուրբ գրությունները և նրանց բովանդակությունը հիշելը առավելություն է միսիոներների համար: Հետևյալ ձևերը մի քանի հուշումներ են, որոնք օգտակար կլինեն սուրբ գրությունները մտապահելիս.

- Գրեք կամ տպեք սուրբ գրությունները փոքր բացիկների կամ թղթի կտորների վրա և պահեք այն ձեզ մոտ: Կարդացեք այն օրվա մեջ մի քանի անգամ:
- Սուրբ գրության հատվածը բաժանեք մի քանի մասի: Կրկնեք առաջին մասը մինչև որ կարողանաք անգիր ասել: Ավելացրեք երկրորդ մասը և կրկնեք այդ մասը, մինչև որ երկուսն անգիր սովորեք: Ավելացրեք երրորդ մասը և այդպես շարունակ:
- Օրվա մեջ մի քանի անգամ գրեք սուրբ գրության հատվածը թղթի վրա:
- Մի քանի անգամ ընթերցեք հատվածը և ձայնագրեք ձեզ, այնուհետև լսեք ձայնագրությունը դպրոցի, աշխատանքի ճանապարհին կամ այլ տեղ գնալիս:
- Օգտագործելով սուրբ գրությունները՝ թղթի վրա արտագրիր յուրաքանչյուր բառի առաջին տառը: Ապա փորձիր հիշելով գրել սուրբ գրությունը:
- Խնդրեք ընտանիքի անդամներին, դասընկերոջը կամ ընկերներից որևէ մեկին , որ օգնեն ձեզ սովորել սուրբ գրության հատվածը՝ լսելով ձեզ սուրբ գրությունն արտասանելիս, կամ՝ կարդալով սուրբ գրությունը և բաց թողնելով որոշ բառեր, որոնք դուք պետք էփորձեք լրացնել , կարդալով ձեզ տվյալ սուրբ գրությանը բնորոշ տարբեր բառեր և թողնելով, որ դուք կռահեք և արտասանեք սուրբ գրությունը:

Խորհեք և աղոթեք առանձին սուրբ գրությունների մասին: Խորհելն ու աղոթելը կենսական տարրեր են սուրբ գրությունների ուսումնասիրության գործում: Հնարավոր է դուք ընտրեք կամ նույնիսկ հուշում զգաք ուսումնասիրել սուրբ գրության առանձին համարի կամ հատվածի իմաստը: Ժամանակ տրամադրեք մտածել սուրբ գրության

մասին, աղոթեք այն հասկանալու համար, ապա փորձեք ներըմբռնել այն ինչ հայտնվել է ձեր մտքում, մինչ դուք հետևում եք տպավորություններին: Կարդացեք սուրբ գրության այլ հատվածներ և ժամանակակից մարգարեների ու առաքյալների ուսմունքները, որպեսզի համոզված լինեք, որ ձեր ըմբռնումը համահունչ է Եկեղեցու վարդապետության հետ: Երբ ստանաք տպավորություններ, գրի առեք դրանք ուսումնասիրման օրագրում:

Դասի ծրագիրն օգտագործեք որպես օգնություն, սակայն ուսուցանելիս խոսեք սրտից:

■ **Դասի ուսուցման ծրագիր կազմելը բարձրացնում է ուսումնասիրման և ուսուցման արդյունավետությունը:** Գրավոր ուսուցման ծրագիրը մեզ օգնում է կազմակերպել մեր մտքերը: Դա տեղեկությունը պարզ և հակիրճ ձևով կազմակերպելու միջոց է: Դասի ծրագիրն սկսվում է առանձին մի մտքով կամ թեմայով, որն ամրապնդվում է հիմնական մտքին առնչվող տեղեկությամբ: Կազմակերպված դասի ծրագիրը հեշտացնում է տեղեկությունը հիշելը և այն հետաքրքրվողին ներկայացնելը: Այն մեզ օգնում է նաև նկատել սկզբունքներ, որոնք նախապատրաստվելիս, հնարավոր է, բաց թողած լինեինք: Դասի ծրագիրը կարող է լինել շատ հակիրճ, ինչպես թեման և դրան առնչվող մի քանի բան գրելը: Կամ կարող է լինել ավելի մանրամասն, ինչպես առնչվող տեղեկության հավաքածուն՝ բաժանված մի քանի ենթավերնագրերի:

Դասի ծրագիր պատրաստելու շատ ձևեր կան: Փորձեք մի քանիսը, որպեսզի տեսնեք, թե որ մեթոդն է լավագույնը ձեզ համար: Ի նախապատրաստություն՝ դուք կարող եք ընդհանուր բնույթի մի շարք հարցեր զարգացնել, որոնք վարդապետությունն ուսումնասիրելիս կօգնեն գտնել պատասխանը կամ դասակարգված տեղեկությունը ,կամ, որոնք հնարավոր կլինի փոխել՝ տվյալ իրավիճակին հարմարացնելու համար: Հնարավոր է հայտնաբերեք, որ դասի նյութը հասարակ նկարներով կամ պարզ աղյուսակով կամ ցանկով կազմակերպելը առավել արդյունավետ է: Սովորեք դասի ծրագիր կազմելու սկզբունքները, և ապա ընտրեք մեթոդները, որոնք լավագույնս կ բավարար են նրանց կարիքները, ում դուք ուսուցանելու եք:

Դասի ծրագիրն օգտագործեք որպես օգնություն, սակայն ուսուցանելիս խոսեք սրտից՝ ինչպես առաջնորդում է Հոգին: Երեց Չարլզ Դիդիեն՝ Յոթանասունի նախագահությունից, հայտարարել է. «Մենք խնդրում ենք, որ միսիոներները անհատական և զուգընկերոջ հետ ուսումնասիրման ժամանակ պատրաստեն [դասի ծրագրի] ուրվագիծը, ըստ այդ օրն ուսուցանվողի կարիքների» (in «Be One of the Greatest», *New Era*, մարտ 2004, 14): Նա նաև բացատրել է. «Յուրաքանչյուր հետաքրքրվող տարբեր է: Այնպես որ միսիոներները պատրաստում են ուրվագծեր, որպեսզի ծրագրեն, թե ինչպես են պատրաստվում ուսուցանել հետաքրքրվողին՝ համաձայն նրա կարիքների: Ուրվագիծը [դասի ծրագիրը] միսիոներներին օգնում է իրենց մտքում պատկերացնել դասը: Եթե դասը լավ տպավորված է, այն հստակ կլինի և բառերը հեշտությամբ կգան և միսիոներները Հոգով կուսուցանեն (in «Teaching from the Heart», *Ensign*, հունիս 2004, 8):

Հետևյալը առաջարկներն ընդհանուր ուղեցույցներ են դասի ծրագիր պատրաստելու վերաբերյալ.

1. Որոշեք ուսուցանելու հիմնական միտքը և հաստատող դրույթները և կազմակերպեք դրանք տրամաբանական ձևով:

2. Որպես հիմնական աղբյուր օգտագործեք սուրբ գրությունները և ապրող մարգարեների հայտարարությունները: Լրացուցիչ ներըմռնման համար, կարող եք օգտագործել «Սուրբ գրությունների ուղեցույցը» և «Հավատքին հավատարիմ. Ավետարանի վկայակոչում» գրքույկը:

3. Ժամանակ թողեք, որպեսզի կիսվեք ձեր ուսուցանած սկզբունքին վերաբերող անձնական վկայությամբ:

Դուք ձ եր դասի ընդհանրական ծրագիրը հնարավոր է ծավալելք և ձևափոխեք , մինչ ձեր միսիայի ընթացքում օգտագործվող ծրագրի ծավալից : Դրանով դուք կկարողանաք ձեր կողմից ուսուցանվող տարբեր դասերի հատուկ ծրագրեր զարգացնել հետաքրքրվողների համար: Ուսուցանվող յուրաքանչյուր փորձառություն տարբեր է և բազմազան մտքերն ու մոտեցումները ձեզ կօգնեն, որպեսզի արդյունավետ ձևով ուսուցանեք:

Դասերի ծրագրերը կազմելու վերաբերյալ հետևյալ նկատառումները տրված են որպես օգնություն, մտքեր հաղորդելու համար, թե ինչպես կարող եք դասի ծրագիրը կազմել կամ ուրվագծել: Առաջարկի մեջ ներառված է նաև դասի ծրագրի մի օրինակ:

Դասերի ծրագրեր կազմելու նկատառումներ

Վարդապետություն, սկզբունք կամ իրադարձություն

Ձևակերպեք ձեր դասի առանցքային ուղերձը: Դա կարող է լինել մեկ բառ կամ համառոտ արտահայտություն (օրինակ՝ «Մկրտություն», «Հավատք» կամ «Առաջին տեսիլք») կամ հասարակ հայտարարություն (օրինակ՝ «Մկրտությունն անհրաժեշտ է փրկության համար», «Հիսուս Քրիստոսի մոտ գալու համար անհրաժեշտ է հավատք» կամ «Ջոզեֆ Սմիթը տեսավ Հորը և Որդուն»): Առանցքային ուղերձը կարող է լինել նաև վարդապետության ավելի հիմնարար ուսումնասիրությունը (օրինակ՝ «Փրկության ծրագիրը»):

Ինչ ուսուցանել

Թվարկեք այն կետերը, որոնք պետք է ներառեք հիմնական վարդապետությունը, սկզբունքը կամ իրադարձությունն ուսուցանելիս:

Սուրբ գրություններ

Կազմեք սուրբ գրությունների ցանկ, որոնք հաստատում են հիմնական վարդապետությունը, սկզբունքը կամ իրադարձությունը, որը պատրաստվում եք ուսուցանել: Օգտագործեք սուրբ գրությունների հղումները, որոնք վկայակոչված են «Սուրբ գրությունների ուղեցույցում» և «Հավատքին հավատարիմ» գրքույկում և այն հատվածները, որոնք գտնվում են սուրբ գրությունների ուսումնասիրման ձեր օրագրում:

Ուսումնասիրման օժանդակ նյութեր

Գտեք և ամփոփ գրեք հայտարարություններ, որոնք տրված են «Սուրբ գրությունների ուղեցույցում», «Հավատքին հավատարիմ» գրքույկում, Եկեղեցական ամսագրերում և նմանատիպ աղբյուրներում, որոնք ուսուցանում կամ պարզաբանում են վարդապետության հիմնական, սկզբունքի կամ իրադարձության տարբեր կետերը: Որտեղ հնարավոր է, օգտագործեք ապրող մարգարեների և առաքյալների խոսքերը:

Ինչպես ուսուցանել

Թվարկեք ուսուցանելու առանձին մեթոդները, որոնք պատրաստվում եք օգտագործել: Այդ մեթոդների թվում կարող են լինել սուրբ գրությունները, նկարները և անձնական պատմությունները:

Վկայեք

Մտածեք, թե ինչպես կարող եք արտահայտել ձեր մտքերը վարդապետության, սկզբունքի կամ իրադարձության վերաբերյալ: Օրինակ՝ կարող եք կիսվել ձեր վկայությամբ կամ հավատք ներշնչող օրինակներ օգտագործել ձեր կյանքից: Հիշեք՝ «հավատքը բոցավառվում է հավատք ունեցողների վկայությունը լսելուց» (Bible Dictionary, «Faith», 669):

Առանցքային պարտավորություններ

Գրի առեք մտքեր, թե ինչ եք անելու, որպեսզի հրավիրեք ձեր հետաքրքրվողներին ապրել, կիրառելով ավետարանի սկզբունքները և պարտավորվել պահել խոստումը , որոնք տվել եք նրանց:

Դասի ծրագրի օրինակ

Վարդապետություն, սկզբունք կամ իրադարձություն

Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Ինչ ուսուցանել

1. Ջոզեֆ Սմիթը փնտրում էր ճշմարտությունը և գնաց Աստծուն աղոթելու:
2. Աստված և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին:
3. Ինչպես ավելի վաղ տնտեսությունների մարգարեները (Ադամը, Նոյը, Աբրահամը և Մովսեսը), Ջոզեֆ Սմիթը կանչվեց որպես այս վերջին տնտեսության մարգարե:
4. Ջոզեֆ Սմիթի միջոցով Աստված վերականգնեց ավետարանի լրիվությունը:
5. Քահանայությունը վերականգնվեց երկնային այլ սուրհանդակների միջոցով և կազմավորվեց Քրիստոսի Եկեղեցին:
6. Այսօր Եկեղեցին ղեկավարում է ապրող մարգարեն:

Սուրբ գրություններ և ուսումնասիրման օժանդակ նյութեր

1. Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.5–15
2. Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.16–19
3. Սուրբ գրությունների ուղեցույց «Տնտեսություն» 210–211 էջեր, Վարդապետություն և Ուխտեր 1.17:
4. Վարդապետություն և Ուխտեր 35.17, 135.3
5. Վարդապետություն և Ուխտեր 13, 27.12, 21.1–3
6. «Հավատքին հավատարիմ», 129–130

Ինչպես ուսուցանել

1. Օգտագործել սուրբ գրությունները (եթե մատչելի են) և ամփոփ ներկայացնել Առաջին Տեսիլքին նախորդող իրադարձությունները. հետաքրքրվողների հետ կարդալ Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.10–14 հատվածները:
2. Կարդալ կամ խնդրել հետաքրքրվողներին կարդալ Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.15–17 հատվածները:

Վկայիր

1. Վկայիր, որ Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարեն է, որը վերականգնել է Հիսուս Քրիստոսի Եկեղեցին իր աստվածային ճշմարտությամբ ու իշխանությամբ:
2. Համառոտ պատմիր, թե ինչպես ես դու ուսումնասիրել և աղոթել, որպեսզի վկայություն ստանաս Վերականգնման մասին:

Առանցքային պարտավորություններ

Խնդրիր ընտանիքի անդամներին աղոթել այս ուղերձի մասին: Խնդրիր նրանց նախքան մյուս հանդիպումը կարդալ Մորմոնի Գրքի ընտրված մասերը:

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ինչպե՞ս կնկարագրեիք սուրբ գրությունները կարդալու և սուրբ գրություններն ուսումնասիրելու տարբերությունը:
- Ի՞նչ արժեք ունի գրավոր նախապատրաստությունը վերականգնված ավետարանն ուսուցանելիս:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մտածեք այն մասին, թե ինչպիսին են ավետարանի մասին ձեր գիտելիքները, ի տարբերություն նրա, թե ինչպիսին կցանկանայիք, որ լինեին, երբ սկսեիք ձեր միսիայի ծառայությունը: Որոշեք, թե ինչ պետք է անեք, որպեսզի հասնեք այդ մակարդակին և գրեք որոշ նպատակներ, թե ինչ պետք է անեք, որպեսզի հասնեք ավետարանի այդ ըմբռնմանը:
- Ընտրեք վերականգնված ավետարանի որևէ վարդապետություն կամ սկզբունք, որը կցանկանաք ավելի լավ հասկանալ: Ուսումնասիրեք այդ վարդապետությունը կամ սկզբունքը և ձեր ուսումնասիրման հիման վրա դասի մի ծրագիր կազմեք: Օգտագործեք ձեր դասի ծրագիրը՝ ուսուցանելով մի ընկերոջ կամ ընտանիքի մի անդամի:
- Սկսեք կամ բարելավեք ձեր սեփական սուրբ գրություններում նշումներ անելու ծրագիրը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Կրթություն» (84–85 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորում ենք ուսուցանել «ուսումնասիրելով և նաև հավատքով», մաս Բ

ՆԱԽԱԲԱՆ

Կա մի ասացվածք, որ չես կարող ուսուցանել այն, ինչ չգիտես, այնպես, ինչպես չես կարող վերադառնալ այնտեղից, որտեղ երբեք չես եղել: Որպեսզի կարողանաս Հոգով ուսուցանել, սկզբում անհրաժեշտ է, որ հասկանաս վերականգնված ավետարանի վարդապետությունն ու սկզբունքները,: Երբ նախապատրաստվում ես հետաքրքրվողներին ուսուցանել , երբ ուսումնասիրում ես սուրբ գրությունները, ապրող մարգարեների և առաքյալների ուսմունքները և «Քարոզիր իմ ավետարանը» պետք է հավատք գործադրես : Ապրելով արժանապատիվ և ջանասիրաբար աշխատելով Սուրբ Հոգին կօգնի ձեզ դառնալ Հիսուս Քրիստոսի վարականգնված ավետարանի հմուտ ուսուցիչ:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Վկայություն բերելը հրավիրում է Հոգու ներկայությունը մեր ուսուցման մեջ:
- Խոսքը մենք ձեռք ենք բերում հավատքի միջոցով:
- Աստված Սուրբ Հոգին խոստանում է նրանց, ովքեր գանձում են Նրա խոսքը:

«Հաջողակ միսիոները սովորեցնում, վկայում և հրավիրում է ուրիշներին անել այնպիսի բաներ, որոնք հավատք են կառուցում Հիսուս Քրիստոսի հանդեպ»:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վկայություն բերելը հրավիրում է Հոգու ներկայությունը մեր ուսուցման մեջ:

■ «Վկայությունը հոգևոր համոզմունք կամ հավաստիացում է, որը տրվում է Սուրբ Հոգու կողմից: Վկայություն բերել նշանակում է կատարել պարզ, ուղղակի հայտարություն հավատքի մասին, որը զգացողություն, հավաստիացում կամ համոզմունք է ավետարանի ճշմարտության վերաբերյալ: Ձեր վկայությամբ կիսվելը հաճախ ամենազորեղ եղանակներից է, որով կարելի է հրավիրել Հոգին և օգնել ուրիշներին զգալ Հոգին: Այն ավելացնում է անձնական վկայությունն այն ճշմարտություններին, որոնք դուք սովորեցրել եք սուրբ գրություններից: Հաջողակ միսիոները սովո-

բեցնում, վկայում և հրավիրում է ուրիշներին անել այնպիսի բաներ, որոնք հավատք են կառուցում Հիսուս Քրիստոսի հանդեպ: Սա ներառում է խոստումները, որոնք գալիս են ճշմարիտ սկզբունքներով ապրելու արդյունքում»: («Քարոզիր իմ ավետարանը» [2004], 223):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 2 Նեփի 33.1
- Վարդապետություն և Ուխտեր 100.5–8

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Հենրի Բ. Այրինգը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է «թե ինչպես է վկայությունը հաստատվում մեր սրտում». «Քանի որ Սուրբ Հոգին է, որ վկայում է սրբազան ճշմարտությունների մասին, մենք կարող ենք անել առնավազն երեք բան, որպեսզի [նրանք, ում մենք ուսուցանում ենք], վայելեն այդ փորձառությունը: Նախ՝ մենք կարող ենք ուսուցանել որոշ սրբազան ճշմարտություններ: Ապա կարող ենք վկայել, որ այն, ինչ ուսուցանել ենք, ճշմարիտ է: Դրանից հետո մենք պետք է գործենք այնպես, որ մեր վկայությունը լսողները տեսնեն, որ մեր գործերը համապատասխանում են նրան, ինչ ասել ենք, որ ճշմարիտ է: Այդ ժամանակ Սուրբ Հոգին նրանց կհաստատի մեր ասածի և մեր իմացածի ճշմարտությունը»: (տես «Conference Report», ապրիլ 1996, 84 կամ «Ensign», մայիս 1996, 62):

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, շեշտել է վկայության և Սուրբ Հոգու կարևորությունը դարձի գալու անհատական գործում. «Ճշմարիտ եկեղեցին դարձի չի բերում նշանների ու զարմանալիքների միջոցով, այլ Սուրբ Հոգու վկայությամբ: Կրոնական ճշմարտություններն ուսուցանելու Տիրոջ ձևը ոչ թե հրապարակավ հրաշքն է կամ նշանը, այլ անձնական վկայությունը» (*The Lord's Way* [1991], 88):

Խոսքը մենք ձեռք ենք բերում հավատքի միջոցով:

■ Երբ «հավատքով» ուսումնասիրում ենք վերականգնված ավետարանը, մենք հասկացողություն ենք փնտրում Երկնային Հոր կողմից՝ աղոթելով, ավետարանի սկզբունքները կիրառելով և սուրբ գրությունները փնտրելով: Մեր հասկացողությունն ու մեր հավատքն ուսումնասիրածի վերաբերյալ աճում է, երբ ապրում ենք մեր սովորած ճշմարտություններով: «Աստծուց եկող բոլոր օրհնությունների նման, հավատքը ձեռք է բերվում և աճում է անձնական հնազանդության և արդար գործերի միջոցով» («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 104): Հավատքի վերաբերյալ այս սկզբունքը ճշմարիտ է՛ թե միսիոներների և թե՛ հետաքրքրվողների համար: Երկնային Հայրը հատուցում է մեր ջանքերի դիմաց՝ աճող հայտնությամբ: Տերն ուսուցանել է. «Եթե խնդրես, դու կստանաս հայտնություն հայտնության վրա, գիտություն գիտության վրա, որ կարողանաս իմանալ խորհուրդներն ու խաղաղարար բաները,– որոնք բերում են ուրախություն, որոնք բերում են կյանք հավերժական»: (ՎԱՈՒ 42.61):

«Ճշմարիտ եկեղեցին դարձի չի բերում նշանների ու զարմանալիքների միջոցով, այլ Սուրբ Հոգու վկայությամբ»:

Հետաքրքրվողներին ուսուցանելու մարտահրավերներից մեկը երջանկության այս սկզբունքներն այնպես հաղորդելն է, որպեսզի նրանք կիրառեն դրանք իրենց կյանքում և այդպիսով, դարձի գան:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հռովմայեցիս 10.17
- Վարդապետություն և Ուխտեր 42.14
- Վարդապետություն և Ուխտեր 88.118, տես նաև 109.7

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, ասել է. «Ուսանելը պետք է ուղեկցվի հավատքով, և ինչպես Մորմոնի Գիրքն է ուսուցանում մեզ, ուսյալ լինելը «լավ է, եթե [մենք] ականջ ենք դնում Աստծո խորհուրդներին»: (2 Նեփի 9.29)»: (տես

«Conference Report», ապրիլ 1982, 121 կամ «Ensign», մայիս 1982, 84):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե ինչպես է ավետարանի ուսումնասիրությունը գործում հավատքի հետ. «Խորհիմաստ հոգևոր ճշմարտությունները հնարավոր չէ պարզապես փոխանցել մի մտքից և սրտից մյուսը: Անհրաժեշտ է հավատք և քրտնաջան աշխատանք: Թանկարժեք ճշմարտությունը գալիս է ամեն անգամ քիչ-քիչ, հավատքի միջոցով, մեծ ջանքերով, իսկ երբեմն նաև ճգնեցուցիչ տքնաջան աշխատանքով: Տերը նախատեսել է, որ այդպես լինի, որպեսզի մենք կարողանանք հասունանալ և առաջադիմել»: (տես «Conference Report», հոկ. 1993, 119 կամ «Ensign», նոյ. 1993, 88):

■ Երեց Դալին Հ. Օքսը բացատրել է.

«Ժամանակակից հայտնության մեջ Տերը մեզ պատվիրել է «ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով»: (ՎԱՈՒ 109.7): Ուսումնասիրելով ուսում փնտրելիս մենք օգտագործում ենք տրամաբանությունը: Հավատքով ուսում փնտրելիս մենք պետք է ապավինենք հայտնությանը: Երկնային որոշմանը հնազանդվելով՝ մենք պետք է ուսում փնտրենք՝ տրամաբանությամբ, ինչպեսև հայտնությամբ....

«Աստծո բաները հնարավոր չէ սովորել միայն ուսումնասիրմամբ և տրամաբանությամբ.... Մենք չենք կարող գալ Աստծո բաների իմացությանը, երբ հրաժարվում ենք կամ չենք օգտագործում անհրաժեշտ մեթոդը, որն Աստված նախատեսել է այդ բաները սովորելու համար: Աստծո բաները պետք է սովորել նրա իսկ ձևով՝ Աստծո հանդեպ հավատքով և Սուրբ Հոգու հայտնությամբ» (*The Lord's Way*, 16, 56):

■ Երեց Հենրի Բ. Այրինգն օգտագործել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ որպես օրինակ, թե ինչպես է Տերն օրհնում նրանց, ովքեր ուսումնասիրում են սուրբ գրությունները հավատքով. «Սուրբ գրությունների շուրջ խորհելը ձեզ կառաջնորդի աղոթքով տալ ճիշտ հարցը: Եվ ճիշտ ինչպես երկինքները բացվեցին Ջոզեֆ Սմիթին՝ նրանից հետո, երբ նա հավատքով խորհեց սուրբ գրությունների մասին, Աստված կպատասխանի նաև ձեր աղոթքներին և ձեռքից բռնած կառաջնորդի ձեզ» (տես «Conference Report», հոկ. 2002, 81 կամ «Ensign», նոյ. 2002, 76):

■ ԵրեցՀենրի Բ. Այրինգը խոսել է նաև երկու բանալիների մասին, որոնք անհրաժեշտ են Հոգին ստանալու համար.

«Որպեսզի հրավիրենք, որ Հոգին մեզ առաջնորդի խոսել ճիշտ խոսքերը, երբ սնում ենք ուրիշներին, կա երկու մեծ բանալի: Դրանք սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունն են և հավատքի աղոթքը:

Սուրբ Հոգին մեզ կառաջնորդի ինչ ասել, եթե ամեն օր ուսումնասիրենք սուրբ գրությունները և խորհենք դրանց մասին....

Մենք գանձում ենք Աստծո խոսքը ոչ միայն սուրբ գրությունների խոսքերը կարդալով, այլ դրանք ուսումնասիրելով: Մենք կարող ենք ավելի շատ սնվել՝ խորհելով մի քանի խոսքերի մասին, թույլ տալով, որ Սուրբ Հոգին դրանք գանձ դարձնի մեզ համար, քան արագ և մակերեսային ձևով անցնեք սուրբ գրության ամբողջական գլուխներով:

Ճիշտ ինչպես սուրբ գրությունների մասին խորհելը հրավիրում է Սուրբ Հոգին, նմանապես օգնում է ամենօրյա աղոթքներում խնդրելը: Եթե աղոթքով չխնդրենք, Նա հազվադեպ կայցելի մեզ, և առանց մեր խնդրանքի, քիչ հավանական է, որ Նա կմնա.... Սուրբ Հոգու ընկերակցության համար սրտաբուխ, հաստատուն խնդրանքները, մեր Երկնային Հոր զավակներին սնելու անկեղծ միտումը, հաստատապես օրհնություններ կբերի թե մեզ և թե նրանց, ում մենք սիրում ու ծառայում ենք »: (տես «Conference Report», հոկ. 1997, 114–15 կամ «Ensign», նոյ. 1997, 83–84):

> *«Մեր ուսուցումն արդյունավետ կլինի, եթե դրան մոտենանք խոնարհությամբ՝ աղոթելով ու ուսումնասիրելով»:*

Աստված Սուրբ Հոգին խոստանում է նրանց, ովքեր գանձում են Նրա խոսքը:

■ Երբ միսիոներները վճարում են վերականգնված ավետարանն ուսումնասիրելու գինը՝ ուսումնասիրելով և հավատքով, Սուրբ Հոգին նրանց օրհնում է ուսուցանելու զորությամբ՝ այնպիսի մի ձևով, որը հագեցնում է ճշմարտությամբ հետաքրքրվողների հոգևոր ծարավը և նրանց դրդում է ավելի շատ մոտենալ Հիսուս Քրիստոսին՝ ընդունելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված փրկության սկզբունքներն ու արարողությունները:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ալմա 17.2–3
- Վարդապետություն և Ուխտեր 84.85

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը՝ Յոթանասունի նախագահությունից, ներբմբռնում է տվել այն մասին, թե ինչպես կարելի է Հոգով ուսումնասիրել. «Որպեսզի ավետարանը գրվի ձեր սրտում, դուք պետք է իմանաք, թե ինչ է այն և ավելի լիարժեք աճեք՝ ըմբռնելով այն: Դա նշանակում է, որ դուք այն կուսումնասիրեք: Երբ ասում եմ *ուսումնասիրել*, ես նկատի ունեմ ավելի շատ, քան կարդա-

լը: Լավ բան է, երբեմն, սահմանված ժամանակում կարդալ սուրբ գրության որևէ հատոր, որպեսզի ընդհանուր պատկերացում ձեռք բերել նրա ուղերձի մասին, սակայն դարձի գալու համար, պետք է ավելի շատ մտածել սուրբ գրություններում անցկացրած ժամանակի մասին, քան տվյալ ժամանակահատվածում կարդացած էջերի մասին: Ես պատկերացնում եմ ձեզ, որ կարդում եք մի քանի հատված, դադար եք տալիս, որ խորհեք, կրկին կարդում եք այդ հատվածները, և մինչ մտորում եք դրանց նշանակության մասին, աղոթում եք, որ հասկանաք, հարցեր եք տալիս ձեր մտքում, սպասում եք հոգևոր տպավորությունների և գրի եք առնում տպավորությունները և ներըմբռնումները, որպեսզի հիշեք դրանք և ավելի շատ սովորեք: Այս կերպ ուսումնասիրելով՝ կես ժամում կարդացած գլուխների քանակը շատ չի լինի, սակայն դուք ձեր սրտում տեղ կտաք Աստծո խոսքին և այն կխոսի ձեզ հետ» (տես «Conference Report», ապրիլ 2004, 9–10 կամ «Ensign», մայիս 2004, 11):

«Սուրբ Հոգին մեզ կառաջնորդի ինչ ասել, եթե ամեն օր ուսումնասիրենք սուրբ գրությունները և խորհենք դրանց մասին»:

■ Այն եղանակը, որով Տերը ցանկանում է, որ մենք ուսուցանենք, պահանջում է, որ մենք մեզ պատրաստենք Հոգու համար: Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների քվորումից, ուսուցանել է. «Մեր ուսուցումն արդյունավետ կլինի, եթե դրան մոտենանք խոնարհությամբ՝ աղոթելով ու ուսումնասիրելով: Այդ ժամանակ մենք օժանդակություն կստանանք Հոգու կողմից՝ խոսքից բաժին հանելու համար, հետևողական ու ներդաշնակ ձևով, ըստ նրա ինչ Տերը կցանկանա, որ մենք ուսուցանենք» (տես «Conference Report», ապրիլ 1999, 7 կամ «Ensign», մայիս 1999, 8):

■ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է, թե ինչպես է սուրբ գրությունները կարդալը բերում Սուրբ Հոգու ազդեցությունը. «Տարիների փորձն ինձ սովորեցրել է, որ եթե մենք եռանդով հետամուտ լինենք այս արժանավոր անձնական նպատակին [սուրբ գրությունները խորությամբ կարդալու և ուսումնասիրելու] վճռական և բարեխիղճ ձևով, մենք իսկապես կգտնենք մեր խնդիրների պատասխաններն ու մեր սրտերի խաղաղությունը : Մենք կնկատենք, որ Սուրբ Հոգին լայնացնում է մեր ըմբռնումը, կգտնենք նոր ներըմռնումներ, ականատես կլինենք, թե ինչպես են սուրբ գրությունները բացվում մեզ համար. և Տիրոջ վարդապետություններն ավելի իմաստալից կդառնան մեզ համար, քան երբևէ հնարավոր ենք կարծել: Արդյունքում մենք ավելի շատ իմաստություն կունենանք մեզ և մեր ընտանիքներն առաջնորդելիս, որպեսզի ծառայենք որպես լույսի և ուժի աղբյուր ոչ անդամ մեր ընկերների համար, որոնց հանդեպ մենք պարտավորություն ունենք՝ կիսվել ավետարանով» («Always a Convert Church: Some Lessons to Learn and Apply This Year», *Ensign*, սեպ. 1975, 3):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներները հաճախ կիսվեն իրենց վկայությամբ:
- Ի՞նչ եղանակներով դուք կարող եք հավատքով ուսումնասիրել:
- Ի՞նչ է նշանակում «շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը» (ՎԿՈՒ 84.85) արտահայտությունը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Որոշեք հաջորդ ծոմի և վկայության ժողովի ժամանակ ձեր ծխում կամ ճյուղում կիսվել ձեր վկայությամբ:
- Մորմոնի Գրքից ընտրեք սիրելի մի գլուխ կամ Վարդապետություն և Ուխտերից՝ սիրված մի բաժին և նշանակալից ժամանակ տրամադրեք «հավատքով ուսուցանելու»: Ժամանակ հատկացրեք աղոթելու, խորհելու այդ սուրբ գրության վերաբերյալ, վերլուծելու, սկզբունքներ բացահայտելու և որոշելու, թե ինչպես կարող եք կիրառել ձեր սովորածը ձեր կյանքում: Զրուցեք ձեր ջանքերի մասին մոտ ընկերոջ կամ քահանայության ղեկավարներից մեկի հետ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Սուրբ գրքերի ամենօրյա ուսումնասիրությունը» (173–174 էջեր)
- «Վկայություն» (182–184 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 7

Երկնային Հոր ծրագիրը

ՆԱԽԱԲԱՆ

Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր զավակներն ուրախության լիությունը վայելեն: Նա ծրագիր է պատրաստել, որով Իր զավակները կարող են նմանվել Իրեն և վայելեն ուրախության լիությունը: Այս ծրագիրը հաճախ անվանում են փրկության ծրագիր, փրկագնման ծրագիր կամ երջանկության ծրագիր: Հիսուս Քրիստոսը և Նրա քավիչ զոհաբերությունը կարևոր են այս ծրագրի համար:

Երկնային Հոր ծրագրում կա երեք՝ նախամահկանացու, մահկանացու և ետմահկանացու շրջան: Ծրագիրը հնարավոր դարձնող երեք կենսական տարրերն են՝ Ստեղծումը, Անկումը և Քավությունը: Որպես Երկնային Հոր ոգեղեն զավակներ մեր նախամահկանացու գոյության ժամանակ մենք չէինք կարող լիովին նմանվել Նրան առանց ֆիզիկական մարմնում մահկանացու կյանքի փորձառության: Հետևաբար, Հոր ղեկավարության ներքո՝ Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրը (տես Եբրայեցիս 1.1–3): Ադամի և Եվայի անկմամբ հնարավոր դարձավ, որ մենք ծնվենք մահկանացու ծնողներից, ֆիզիկական մարմին ձեռք բերենք և ազատ կամք գործադրենք՝ ընտրելով բարու և չարի միջև (տես 2 Նեփի 2.25–27): Հիսուս Քրիստոսի քավությունը հնարավոր է դարձնում հարությունը, մեղքերի ներումը և դատաստանը՝ փառքի աստիճանի համար (տես Ա Կորնթացիս 15.40–42, Հայտնություն 20.12–13, 2 Նեփի 9.22, Ալմա 42.23):

Հիսուս Քրիստոսը առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրի բոլոր մասերում: Նա տառապեց և մահացավ, որպեսզի իրականացնի մեր անմահությունն ու հավերժական կյանքը (տես Մովսես 1.39): Մենք ընդունում ենք Նրա քավիչ զոհաբերությունը՝ հավատք գործադրելով Նրա հանդեպ, ապաշխարելով, Աստծո կողմից իշխանություն ունեցողի կողմից մկրտվելով, ստանալով Սուրբ Հոգու պարգևը և ապրելով ներդաշնակ՝ Նրա պատվիրաններով:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Երկնային Հոր ծրագրում կա երեք՝ նախամահկանացու, մահկանացու և ետմահկանացու շրջան:
- Հիսուս Քրիստոսն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում:
- Հիսուս Քրիստոսի քավությունը հնարավոր է դարձնում հոգևոր և ֆիզիկական մահի խոչնդոտները հաղթահարել:
- Երկնային Հայրը փառքի աստիճաններ է պատրաստել Իր զավակների համար:



Հիսուս Քրիստոսի քավությունը փրկությունը հնարավոր է դարձնում:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկնային Հոր ծրագրում կա երեք՝ նախամահկանացու, մահկանացու և ետմահկանացու շրջան:

■ Գիտելիքն այն մասին, թե որտեղից ենք մենք եկել և ինչու ենք այստեղ՝ այս մահկանացու կյանքում, մեզ օգնում է հասկանալ, որ մենք ապրում ենք երեք շրջան ունեցող ճամփորդության մեջ: Առաջին շրջանը մեր նախամահկանացու կյանքն էր, երկրորդը՝ մահկանացու կյանքն է, իսկ երրորդը՝ մեր ետմահկանացու կյանքն է: Մահկանացու կյանքը հավատարիմ մարդկանց պատրաստում է վերադառնալ՝ ապրելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

Pre-Existence, by Jerry Harston, © IRI

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Երեմիա 1.5
- Ալմա 12.25
- Ալմա 34.32
- Ալմա 42.11
- Մովսես 3.4–5
- Մովսես 5.11

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Որպես Յոթանասունի քվորումի անդամ՝ Երեց Ալեքսանդր Բ. Մորիսոնն ուսուցանել է, որ կա ծրագիր, որը մեզ հնարավորություն կտա վերադառնալ մեր Երկնային Հոր ներկայությունը. «Վերջին օրերի Սրբերը հաստատում են, որ Հոր «երջանկության մեծ ծրագրի» (Ալմա 42.8) համատեքստում կյանքը երեք շրջան ունի: Դեռ շատ վաղուց, նախքան այս երկրի ստեղծվելը, որի վրա մենք ապրում ենք, մեր Հայր Աստվածը՝ հզոր Էլոհիմը, որի զավակներն ենք մենք, մի ծրագիր հաստատեց, ըստ որի նրա զավակները մահկանացու կյանք կունենային, իր բոլոր փորձություններով, գայթակղություններով և հնարավորություններով, և այնուհետև, կվերադառնային հավերժական փառքով բնակվելու Նրա հետ: Ծրագիրը կատարյալ ձև էր ապահովում Աստծո բոլոր զավակների համար, որպեսզի ստանան անմահություն և ձեռք բերեն հավերժական կյանք: Հիրավի, Աստծո գոյության բուն նպատակը՝ նրա գործն ու փառքն է. «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39)» («Life—the Gift Each Is Given», *Ensign*, Դեկ. 1998, 15–16):

«Կյանքը չի սկսում ծննդով, ոչ էլ ավարտվում է մահով»:

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, տվել է հետևյալ նմանությունը. «Սա մահկանացու փորձառության օրեր են: Մենք կարող ենք մեր հավիտենական ճամփորդությունը համեմատել երեք շրջան ունեցող մրցավազքի հետ: Մենք հաջողությամբ անցել ենք առաջին շրջանը [մեր նախամահկանացու կյանքը] և հրաշալի առաջադիմություն ենք գրանցել: Մենք սկսել ենք երկրորդ շրջանը: Կարո՞ղ եք պատկերացնել աշխարհի մակարդակի վազորդի, որը կանգնում է այս մասում և ծաղիկներ է հավաքում կամ ընկնում է իր ճանապարհով անցած նապաստակի ետևից: Սա այն է, ինչ մենք անում ենք, երբ մեր ժամանակը զբաղեցնում ենք աշխարհիկ զբաղմունքներով, որոնք մեզ չեն մոտեցնում երրորդ շրջանին, որը մեզ տանում է դեպի հավերժական կյանք՝ Աստծո պարգևներից ամենամեծը [տես ՎԿՈՒ 14.7]» (տես «Conference Report», ապրիլ 1998, 15 կամ «Ensign», մայիս 1998, 14):

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հեռանկար և հույս է տվել մարդու հավերժական գոյության վերաբերյալ. «Կյանքը չի սկսում ծննդով, ոչ էլ ավարտվում է մահով: Նախքան մեր ծնունդը մենք բնակվել ենք որպես մեր Երկնային Հոր ոգեղեն զավակներ: Այնտեղ մենք անհամբեր սպասում էինք երկիր գալու և ֆիզիկական մարմին ստանալու հնարավորությանը: Գիտակցելով՝ մենք ցանկանում էինք փորձել մահկանացու կյանքը, որը թույլ կտար ազատ կամք և պատասխանատվություն գործադրել: «Այս կյանքը [պետք է դառնար] փորձնական վիճակ. մի ժամանակ՝ պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն» (Ալմա 12.24): Սակայն մենք տուն վերադառնալը համարեցինք այդ երկար սպասված ճամփորդության լավագույն մասը, ինչպեսև հիմա: Նախքան որևէ ճամփորդություն սկսելը, մենք ցանկություն ունենք հավաստիանալ, որ վերադարձի տոմսի հնարավորություն կա: Երկրի վրայից մեր երկնային տուն վերադառնալը պահանջում է, որ մենք

անցնենք մահվան դռներով և չշրջանցենք այն: Մենք ծնվել են, որ մահանանք, և մենք մահանում ենք, որ ապրենք (տես Բ Կորնթացիս 6.9): Որպես Աստծո տնկիներ՝ մենք հազիվ կոկոմ ենք տալիս երկրի վրա. մեր ծաղիկը լիարժեք բացվում է երկնքում» (տես «Conference Report», ապրիլ 1992, 102 կամ «Ensign», մայիս 1992, 72):

■ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, երբ Առաջին Նախագահության խորհրդական էր, նկարագրել է պատճառներից մի քանիսը, թե ինչու մենք ընտրեցինք գալ մահկանացու կյանք և առանձնանալ Երկնային Հոր ներկայությունից. «Ակնհայտ է, որ երկրի վրա ապրելու մեր առաջնային նպատակներից մեկը մսից ու ոսկորից մարմին ստանալն է»: Մենք այստեղ ենք, որպեսզի փորձառություն ձեռք բերենք, որը կարող էր գալ միայն երկնային ծնողներից առանձին ապրելով: Հազարավոր ձևերով մենք արտոնություն ունենք ինքնուրույն ընտրություն կատարել: Այստեղ մենք սովորում ենք փորձառության դժվար վերակացուից: Մենք զանազանում ենք բարին ու չարը: Մենք տարբերում ենք դառը քաղցրից: Մենք սովորում ենք, որ որոշումներն են սահմանում ճակատագիրը» («Invitation to Exaltation», *Ensign*, հունիս 1993, 4):

«Մենք այստեղ ենք, որպեսզի փորձառություն ձեռք բերենք, որը կարող էր գալ միայն երկնային ծնողներից առանձին ապրելով»:

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է նախամահկանացու կյանքում դեպի մահկանացու կյանք գալու մեր զգացումների մասին.

«Ձեր կյանքի ամենաուրախալի պահերից մեկը, երբ դուք լցված էիք ակնկալիքներով, հուզմունքով և երախտագիտությամբ, դուք ի վիճակի չեք հիշել: Այդ փորձառությունը տեղի է ունեցել նախամահկանացու կյանքում, երբ ձեզ տեղեկացրեցին, որ վերջապես ձեր ժամը եկել է՝ թողնելու հոգիների աշխարհը՝ մահկանացու մարմնով երկրի վրա բնակվելու համար:

Դուք գիտեիք, որ անձնական փորձառությամբ կարող էիք սովորել դասերը, որոնք երջանկություն կբերեին երկրի վրա՝ դասեր, որոնք ի վերջո կառաջնորդեին դեպի վեհացում և հավերժական կյանք՝ որպես փառավորված, սելեստիալ էակ, ձեր Սուրբ Հոր և Նրա Սիրելի Որդու ներկայության մեջ:

Դուք հասկանում էիք, որ կլինեին փորձություններ, քանի որ դուք ապրելու էիք թե՛ արդար և թե՛ չար ազդեցությունների միջավայրում: Այնուամենայնիվ, անկասկած դուք վճռեցիք, որ անկախ վճարվող գնից, անկախ պահանջվող ջանքերից, չարչարանքներից և փորձություններից, դուք կվերադառնաք հաղթանակած» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 5 կամ «Ensign», մայիս 2001, 6):

Հիսուս Քրիստոսն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում:

■ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Փրկչի քավությունը էական դեր ուներ փրկության ծրագրում. «Մեր կրոնի հիմնական սկզբունքներն Առաքյալների և Մարգարեների վկայություններն են Հիսուս Քրիստոսի մասին՝ որ նա մահացել է, թաղվել է և կրկին, երրորդ օրը, հարություն է առել և համբարձվել է երկինք. բոլոր մյուս բաները, որոնք վերաբերում են մեր կրոնին, միայն դրա հավելումներն են» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 121):

Երեց Էրլ Ս. Թինգին՝ Յոթանասունի Նախագահությունից, ուսուցանել է. «Երբ խոսում ենք Քավության մասին, մենք նկատի ունենք Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Միածին Որդու կամավոր գործը, որը եկավ երկիր միջոցներ նախապատրաստելու, որով բոլոր մարդկությունը կարող էր ընտրել՝ վերադառնալ իրենց սիրող Հոր մոտ: Այդ փառահեղ «երջանկության ծրագիրը» կարևոր է մեզ համար և պետք է ոգեշնչի, որպեսզի Քավության ապահովված միջոցներով արժանի գտնվենք ստանալ փրկություն և հավերժական կյանք»: (*The Atonement: Fulfilling God's Great Plan of Happiness* [2000], 8):

Գիտակցությունը, որ Հիսուս Քրիստոսը նախքան այս աշխարհի հիմնադրվելը նախակարգվել էր որպես Քավիչ Մեսիա, մեզ հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ մեր կախումը նրանից: Նա առանցքային դեր ուներ Երկնային Հոր ծրագրում մեր առաջին վիճակում և նա առաջնային դեր ունի Նրա ծրագրում ինչպես մեր երկրորդ վիճակում, այնպես էլ ետմահկանացու գոյության մեջ: Առանց Քրիստոսի Քավության անմահությունն ու հավերժական կյանքը հնարավոր չէին լինի: Միայն Քրիստոսի մեջ և միջոցով էր հնարավոր, որ մեր փրկության ծրագիրն իրականանար:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 2 Նեփի 2, 9
- Մոսիա 3–5, 14–16
- Ալմա 5, 7, 34, 42
- Մովսես 6.62–63

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, որ փրկության ծրագրում Քրիստոսն առանցքային դեր ունի.

«Մեր Երկնային Հայրը գիտեր , որ Իր զավակներին կարիք կլիներ հիշեցնել այն խոստումների մասին, որոնք Նա տվել էր մեզ , եթե մենք հնազանդվենք Նրա օրենքներին: Նման ուխտեր անելիս Տերն օրհնություններ է առաջարկել՝ որոշակի պատվիրանների հնազանդվելու համար: Ամենասկզբից մեզ ծրագիր էր ներկայացվել: Նրա փրկության ծրագրի առանցքային դերակատարը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսն էր: Ողջ մարդկության համար կատարած Նրա քավիչ զոհաբերությունն առանցքային իրադարձությունն էր այս երկրի վրա մեր Երկնային Հոր զավակների պատմության մեջ:

Մեզանից յուրաքանչյուրն, ով ընդունում է աստվածային ծրագիրը, պետք է ընդունի մեր Փրկչի դերը և ուխտ անի՝ պահելու Նրա օրենքները, որոնք մեր Հայրը ստեղծել է մեզ համար: Երբ հոգով և գործերով ընդունում ենք Քրիստոսին, մենք կարող ենք վաստակել մեր փրկությունը: Սուրբ գրություններում կարդում ենք. «Ուստի դու պետք է ամեն ինչ անես Որդու անունով, և դու պետք է ապաշխարես և կանչես առ Աստված առհավետ՝ Որդու անունով» (Մովսես 5.8)» (տես «Conference Report», ապրիլ 1996, 77–78 կամ «Ensign», մայիս 1996, 53):

«Հիսուս Քրիստոսի քավությունը անարատ սիրո կատարած գործ էր»:

■ Սկզբից ի վեր Հիսուս Քրիստոսը առանցքային դեր ուներ Իր զավակների համար Երկնային Հոր ծրագրում.

«Նախքան երկրի վրա ձեր ծնվելը դուք ապրում էիք ձեր Երկնային Հոր ներկայության մեջ՝ որպես նրա ոգեղեն զավակներից մեկը: Նախամահկանացու այդ գոյության ժամանակ Երկնային Հոր մյուս զավակների հետ, դուք ներկա եք գտնվել մի խորհրդի: Այդ խորհրդի ժամանակ Երկնային Հայրը ներկայացրել է երջանկության Իր մեծ ծրագիրը (տես Աբրահամ 3.22–26):

Երջանկության ծրագրին համահունչ նախամահկանացու Հիսուս Քրիստոսը՝ Հոր Անդրանիկ ոգեղեն Որդին, ուխտարեց լինելու Փրկիչը (տես Մովսես 4.2, Աբրահամ 3.27): Ովքեր հետևեցին Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, նրանց թույլ տրվեց երկիր գալ մահկանացու կյանքի փորձառությունն անցնելու և դեպի հավերժական կյանքն առաջադիմելու համար: Լյուցիֆերը՝ Աստծո ոգեղեն զավակներից ևս մեկը, ապստամբեց ծրագրի դեմ, և փնտրեց «կործանել մարդու կամքի ազատությունը» (Մովսես 4.3): Նա դարձավ Սատանան և նա ու նրա հետևորդները երկնքից դուրս քշվեցին և մերժվեցին ֆիզիկական մարմին ստանալու և մահկանացու կյանք վայելելու արտոնությունից (տես Մովսես 4.4, Աբրահամ 3.27–28)» («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 200):

■ Երեց Բրյուս Ռ. ՄակՔոնկիին, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, բացատրել է մարդկության փրկության գործում Քրիստոսի կատարած դերերից մի քանիսի մասին.

Նախքան մենք կ սկսենք հասկանալ բոլոր բաների ֆիզիկական արարումը, մենք պետք է իմանանք, թե իրականում ինչպես և ինչ ձևերով են այս երեքի գոյությունը՝ Ստեղծումը, Անկումը և Քավությունը, անբաժանորեն միահյուսված կազմում փրկության ծրագիրը: Դրանցից ոչ մեկն առանձին չէ. յուրաքանչյուրը կապված է մյուս երկուսի հետ. և առանց դրանց բոլորի մասին գիտելիքի, հնարավոր չէ իմանալ ճշմարտությունը նրանցից ոչ մեկի մասին:

Պետք է իմանալ, որ փրկությունը Քրիստոսում է և գալիս է նրա քավիչ զոհաբերության շնորհիվ: Տեր Հիսուս Քրիստոսի քավությունը հայտնված կրոնի սիրտը , էությունն ու առանցքն է: Այն մարդկանց փրկագնում է ֆիզիկական և հոգևոր մահից, որն աշխարհ է բերվել Ադամի անկման միջոցով: Բոլոր մարդիկ հարություն կառնեն, որովհետև ինքը , մեր երանելի Տերը մահացավ և կրկին համբարձվց, այդպիսով դառնալով ննջեցյալների առաջնեկը:

Եվ ավելին. Քրիստոսը մահացավ, որպեսզի փրկի մեղավորներին: Նա իր վրա վերցրեց բոլոր մարդկանց մեղքերը՝ ապաշխարության պայմանով: Հավերժական կյանքը՝ Աստծո բոլոր պարգևներից մեծագույնը, մատչելի է նրա շնորհիվ, ինչ արեց Քրիստոսը Գեթսեմանի այգում և Գողգոթայի բլրի վրա: Նա հարությունն է և կյանքը: Անհամությունն ու հավերժական կյանքը Քավության զավակներն են: Մարդուն տված ոչ մի լեզու, ոչ էլ արտահայտման որևէ միջոց չի կարող նկարագրել Քավչի փրկագնող զորության փառքը , սքանչելիքը և անսահման կարևորությունը» («Christ and the Creation», *Ensign*, հունիս 1982, 9):

Հիսուս Քրիստոսի քավությունը հնարավոր է դարձնում հոգևոր և ֆիզիկական մահի խոչընդոտները հաղթահարելը:

The Greatest of All, by Del Parson, © 1987 IRI

• Ի՞նչու է մեզ անհրաժեշտ Քավությունը՝ Երկնային Հոր ներկայություն վերադառնալու համար: Մի՞թե մեր լավագույն ջանքերը բավարար չեն մեր Հոր մոտ վերադառնալու համար: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը նկարագրել է մեր վիճակը և պատճառը, թե ինչու ենք մենք կախված Փրկչի զոհաբերությունից.

Մի մարդ, որը քայլում էր ճանապարհով, պատահաբար ընկնում է մի հոր, որն այնքան խորն ու մութ էր, որ չէր կարող ոչ մագլցել և ոչ էլ դուրս գալ ազատություն: Ինչպե՞ս կարող է նա իրեն փրկել այդ դժվար իրավիճակից: Ոչ մի ճիգ չի օգնի, քանի որ անհնար է դուրս գալ այդ հորից: Նա օգնության է կանչում, և մի բարեհոգի մարդ, լսելով օգնության նրա կանչը, շտապում է օգնության հասնել, և մի սանդուխք իջեցնելով, նրան հնարավորություն է տալիս, կրկին բարձրանալ հողի երես:

Սա ճիշտ այն իրավիճակն է, որում Ադամը դրեց իրեն և իր հետնորդներին, երբ ճաշակեց արգելված պտղից: Գտնվելով հորում, ոչ ոք չէր կարող բարձրանալ երկրի մակերես և ազատել մյուսներին: Այդ հորը խորհրդանշում էր տարագրումը Տիրոջ ներկայությունից և ֆիզիկական մահը՝ մարմնի վախճանը: Եվ բոլորը լինելով մահվան ենթակա ՝ չէին կարող ազատվելուոչ ոքի միջոց ապահովել:

Ուստի, իր անսահման ողորմությամբ, Հայրը լսեց իր զավակների աղաղակը և ուղարկեց իր Միածին Որդուն, որը ենթակա չէր ոչ մահվան, ոչ էլ մեղքի, պատրաստելով ՝ազատվելու միջոց : Նա ապահովեց այդ իր անսահման քավության և հավիտենական ավետարանի միջոցով» («Doctrines of Salvation», comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:126–27):

Ավետարանի մեծ ուրախությունն ու բարի լուրն այն է, որ Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ մենք կրկին կապրենք: Հիսուս Քրիստոսի միջոցով բոլոր խոչընդոտները կարող են հաղթահարվել՝ հնազանդվելով ավետարանի օրենքներին ու արարողություններին: Միայն նա կարող էր սատարել և փրկել մարդկանց զավակներին, որովհետև Նա «վայր իջավ բոլոր բաներից ցած, որով և ըմբռնեց բոլոր բաները» (ՎԱՈՒ 88.6): Նա վճարեց մեղքի գինը. հետևաբար, երբ մենք գալիս ենք Քրիստոսի մոտ կոտրված սրտով ու փշրված հոգով, մենք կարող ենք վերադառնալ Հոր ներկայությունը (տես ՎԱՈՒ 45.3–5): Ի լրումն, «երբ մենք ապավինում ենք Հիսուս Քրիստոսի Քավությանը, Նա կարող է օգնել մեզ դիմանալ մեր փորձություններին, հիվանդություններին և ցավին: Մենք կարող ենք լցված լինել ուրախությամբ, խաղաղությամբ և մխիթարությամբ: Այն ամենը, ինչ անարդար է կյանքում, կարող է դառնալ ճիշտ՝ Հիսուս Քրիստոսի Քավությամբ» («Քարոզիր իմ ավետարանը» [2004], էջ 56):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ա Կորնթացիս 15.19–23
- 2 Նեփի 2.25–27
- 2 Նեփի 9.10–13
- Ալմա 34.8–10
- Վարդապետություն և Ուխտեր 93.33

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը կիսվել է Քավության մասին իր զգացումներով.

«Ես ուրախությունից արտասվում եմ, երբ մտորում եմ այդ ամենի նշանակալիության մասին: Փրկագնվել նշանակում է քավություն ստանալ՝ ընդունվել Աստծո գրկում, որն արտահայտում է ոչ միայն Նրա ներողամտությունը, այլ սրտով ու մտքով մեկ լինելը: Ինչպիսի՜ արտոնություն: Եվ ինչպիսի՜ մխիթարություն նրանց համար, որոնց հարազատները լքել են ընտանեկան սիրո օղակն անցնելով , այն դարպասի միջով, որն անվանում ենք մահ» (տես «Conference Report», հոկ. 1996, 46 կամ «Ensign», նոյ. 1996, 34):

■ «Ինչպես սուրբ գրքերում է օգտագործվում, քավել նշանակում է կրել տույժ գործած մեղքի համար, դրա միջոցով վերացնելով մեղքի հետևանքները ապաշխարող մեղավորներից , թույլ տալով նրանց հաշտվել Աստծո հետ: Հիսուս Քրիստոսը տառապեց Գեթսեմանիում և խաչի վրա: Նա միակն էր, որը կարողացավ իրականացնել կատարյալ Քավություն ողջ մարդկության համար: Գեթսեմանիում Նա կրեց տույժը մեր մեղքերի համար և մահացավ խաչի վրա: Նա Իր վրա վերցրեց մեր բոլորի ցավերը, հիվանդությունները, գայթակղությունները, չարչարանքներն ու թուլությունները (տես Ալմա 7.11–12)» («Քարոզիր իմ ավետարանը», էջ 65):

■ Հոգևոր մահը նկարագրվում է որպես «Հեռացում Աստծուց և նրա ազդեցությունից. մահանալ արդարության վերաբերող բաների նկատմամբ: Լյուցիֆերը և

երկնային զորքերի մեկ երրորդ մասը հոգևոր մահ ապրեցին, երբ նրանք դուրս գցվեցին երկնքից (ՎԱՈՒ 29.36–37):

Հոգևոր մահն աշխարհ մտավ Ադամի անկման միջոցով (Մովսես 6.48): Չար մտքերով, խոսքերով և գործերով մահկանացու մարդիկ հոգով մահացած են, չնայած որ ֆիզիկապես ապրում են երկրի վրա (Ա Տիմ. Ե.6): Հիսուս Քրիստոսի քավության և ավետարանի սկզբունքներին ու արարողություններին հնազանդվելու միջոցով, տղամարդիկ և կանայք կարող են մաքրվել մեղքերից և հաղթահարել հոգևոր մահը»: (Սուրբ գրքերի ուղեցույց, «Մահ հոգևոր», էջ 145):

«Փրկությունը Քրիստոսում է և գալիս է նրա քավիչ զոհաբերության շնորհիվ»:

■ Երեց Էրլ Ս. Թինգին բացատրել է ֆիզիկական մահը հաղթահարելու կարիքը.

«Ֆիզիկական մահը հոգու առանձնացումն է ֆիզիկական մարմնից: Մահվան ժամանակ մարմինը դրվում է հողում և արդար հոգիներն ընդունվում են երջանկության վիճակում, որը կոչվում է դրախտ (Ալմա 40.11–12): Նրանք, ովքեր ամբարիշտ են և մահկանացու կյանքում չարը նախընտրել են բարուց, ետմահկանացու հոգիների աշխարհում գնում են մի վայր, որն անվանում են «խավար» (Ալմա 40.13–14) կամ հոգիների բանտ: Դրախտի արդար հոգիներից միսիոներներ են ընտրվում՝ ուսուցանելու ավետարանը նրանց, ովքեր հոգիների բանտում են (ՎԱՈՒ 138.30):

Երբեք նախատեսված չի եղել, որ ոգին ու մարմինը նդմիշտ առանձնացած մնան: Ի վերջո, «ոգին ու մարմինը՝ մարդու հոգին են» (ՎԱՈՒ 88.15): Մարդը ստեղծվել է Աստծո պատկերով նմանությամբ (Ծննդոց 1:26–27), որը փառավորված անձնավորություն է և ունի ոգի և կատարյալ ֆիզիկական մարմին (Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.17): Երբ մենք, որպես ոգեղեն անձնավորություններ, ապրում էինք նախաերկրային կյանքում, մենք գիտեինք, որ Աստված ունի ոգի և կատարյալ մարմին: Կարո՞ղ էինք մենք միայն ոգի ունենալով դառնալ Աստծո նման: Ո՛չ: Մենք պետք է ֆիզիկական երկրի վրա ծննդի միջոցով ստանայինք մարմին: Այդ գործընթացն սկսվեց, երբ Ադամն ու Եվան դարձան առաջին ֆիզիկական էակները երկրի վրա, որոնք ունեին մարմին՝ բնակարան իրենց հոգու համար (Մովսես 3.7): Երբ Ադամն ու Եվան ֆիզիկապես մահացան, ինչպես յուրաքանչյուր մարդ, նրանց հոգիներն առանձնացան իրենց մարմնից:

Հիսուս Քրիստոսի առաքելություններից մեկը , բառացի՝ ֆիզիկական մահը հաղթահարել էր, ընդհանրական հարություն ապահովելը՝ ողջ մարդկության համար» (*The Atonement*, 56–57):

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, վկայություն է բերել Փրկչի մասին. «Հիսուս Քրիստոսի քավությունը՝ անարատ սիրո կատարած գործը, հաղթահարեց Անկման արդյունքները և ուղի ապահովեց ողջ մարդկության համար՝ վերադառնալու Աստծո ներկայությունը: Որպես քավության մաս Փրկիչը հաղթահարեց ֆիզիկական մահը և Հարության միջոցով անմահություն ապահովեց Աստծո զավակներից յուրաքանչյուրի համար: Նա հաղթահարեց նաև հոգևոր մահը և հավերժական կյանքի հնարավորություն ստեղծեց՝ այն կյանքի, որով ապրում է Աստված, որն Աստծո պարգևներից մեծագույնն է: Նա արեց դա, Իր վրա վերցնելով ողջ մարդկության մեղքերի տառապանքները» (տես «Conference Report», հոկ. 1996, 96–97 կամ «Ensign», նոյ. 1996, 71):

■ Մեր մեղքերի համար Փրկչի տառապանքները Նրա Քավության մասն էր: Մենք ունեինք քավության կարիքը, որպեսզի ազատվեինք ֆիզիկական և հոգևոր մահից: Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկին նկարագրել է Տիրոջ չարչարանքները.

«Մենք չգիտենք, մենք չենք կարող ասել՝ մահկանացու ոչ մի միտք չի կարող ըմբռնել ողջ կարևորությունն այն ամենի, ինչ արեց Քրիստոսը Գեթսեմանիում....

Մենք գիտենք, որ ինչ-որ ձևով, որն անըմբռնելի է մեզ համար, նրա չարչարանքները բավարարեցին արդարադատության պայմանները, փրկագնեցին զղջացող հոգուն մեղքի ցավից ու պատժից, և ողորմությունը հնարավոր դարձրին նրանց համար, ովքեր հավատում են նրա սուրբ անվանը....

.... Գագաթ կոչվող բլրի վրա.... հռոմեական զինվորները նրան խաչը բարձրացրին:

Ուժեղ հարվածներով նրանք երկաթե բևեռներով մեխեցին նրա ոտքերը, ձեռքերն ու դաստակները: Հիրավի, նա խոցոտվեց մեր օրինազանցությունների համար և խոշտանգվեց մեր անօրինությունների համար....

.... Խաչի վրա.... տեղի ունեցան Գեթսեմանիի բոլոր անսահման տվայտանքներն ու անողորմ ցավերը:

Եվ, ի վերջո, երբ քավիչ տվայտանքները կատարեցին իրենց գործը, երբ հաղթանակն իրականացավ՝ երբ Աստծո Որդին կատարեց Հոր կամքը բոլոր բաներում, այդ ժամանակ նա ասաց. «Կատարված է» (Հովհաննես 19.30), և նա պատրաստակամ հոգին տվեց....

Երրորդ օրվա Նրա հարությունը Քավության պսակն էր: Կրկին, մեզ անհասկանալի մի ձևով, հարության ազդեցությունը տարածվեց ողջ մարդկության վրա, այնպես որ բոլորը կբարձրանան գերեզմանից» (տես «Conference Report», ապրիլ 1985, 9–11 կամ «Ensign», մայիս 1985, 9–10):

■ Երեց Բրյուս Ս. Հեֆենը՝ Յոթանասունից, ուսուցանել է, թե ինչ պետք է անենք, որպեսզի հաղթահարենք հոգևոր մահը. «Փրկիչը քավել է մեր *անձնական մեղքերը* մեր

ապաշխարության պայմանով: Անհատական ապաշխարությունը փրկության համար անհրաժեշտ պայման է, սակայն ինքնին բավարար չէ փրկություն երաշխավորելու համար: Առանց քավության մեր ապաշխարությունը մեզ չի փրկի: Մարդ պետք է նաև ընդունի մկրտության արարողությունը և ստանա Սուրբ Հոգին, որով մարդ վերստին ծնվում է որպես Քրիստոսի հոգևոր զավակ» («The Restored Doctrine of the Atonement», *Ensign*, Դեկ. 1993, 12):

«Արդար մարդիկ.... վերջ ի վերջո կգնան փառքի արքայություն, ավելի հրաշալի, քան մեզանից որևէ մեկը կարող է պատկերացնել»:

Երկնային Հայրը փառքի աստիճաններ է պատրաստել Իր զավակների համար:

■ Թե՛ հին և թե՛ ժամանակակից սուրբ գրությունները, մեզ օգնում են հասկանալ, որ Աստծո բոլոր զավակները, բացառությամբ կորստի որդիների, փրկվելու են փառքի որևէ աստիճանով (տես ՎԱՈՒ 76.41–43): Սելեստիալ, թերեստրիալ և թելեստիալ արքայությունների փառքերը վեր են մեր հասկացողությունից: Սելեստիալ արքայությունը փառքի ամենաբարձր աստիճանն է և միակ արքայությունն է, որտեղ մենք կարող ենք դառնալ մեր Երկնային Հոր նման:

The City Eternal. © 2000 Keith Larson. Ուսանողներին չի թույլատրվում

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հովհաննես 14.2
- Ա Կորնթացիս 15.40–42
- Վարդապետություն և Ուխտեր 98.18

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե որքան մատչելի է Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը. «Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի աստվածաբանությունը մատչելի է, համապարփակ, ողորմած և ճշմարիտ: Մահկանացու կյանքի անհրաժեշտ փորձառությունից հետո, Աստծո բոլոր որդիներն ու դուստրերն, ի վերջո, հարություն կառնեն և կգնան փառքի որևէ արքայություն: Արդար մարդիկ, անկախ ներկա կրոնական պատկանելությունից կամ հավատքից, վերջ ի վերջո կգնան փառքի արքայություն, ավելի հրաշալի, քան մեզանից որևէ մեկը կարող է պատկերացնել: Անգամ ամբարիշտները, կամ նրանցից գրեթե բոլորը, ի վերջո, կգնան մի սքանչելի փառքի արքայություն, չնայած որ այն կլինի ավելի ցածր փառքիարքայություն: Այդ բոլորը տեղի կունենա Իր զավակների հանդեպ Աստծո սիրո և Հիսուս Քրիստոսի քավության ու հարության շնորհիվ, «ով փառավորում է Հորը և փրկում է իր ձեռքի բոլոր գործերը» (ՎԱՈՒ 76.43)» (տես «Conference Report», ապրիլ 1995, 115 կամ «Ensign», մայիս 1995, 87):

■ Երեց Դեյվիդ Բ. Հեյթը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, ուսուցանել է, թե ինչպես ենք բոլորս հավասար, երբ փնտրում ենք ժառանգել սելեստիալ արքայությունը.

Ջոզեֆ Սմիթին տրված հայտնություններն ընդարձակում են մարդու գիտելիքը, որ Հիսուս Քրիստոսը խաչվեց՝ աշխարհը մեղքերից փրկելու համար, որպեսզի նրա փրկագնման գործի շնորհիվ ողջ մարդկությունը հարություն առնի գերեզմանից և հավերժական կյանքի հնարավորություն ունենա՝ հնազանդվելով ավետարանի սկզբունքներին:

Մեզ ուսուցանվածը լրացուցիչ լուսաբանվում է Հիսուսի հայտարարությամբ, որ «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան» (Հովհաննես 14.2): Մենք սովորում ենք ոչ միայն փառքի աստիճանների և նրանց մասին, ովքեր արժանի են, այլ որ մարդ պետք է ձգտի իր համար մատչելի դարձնի ամենաբարձր «երկինքը», որը հասանելի է միայն Աստծո պատվիրաններին հնազանդվելով: Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն ասել է. «Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցիկ բաներից մեկն այն է, որ այն բոլորիս կանգնեցնում է մեկ հարթության վրա: Սելեստիալ արքայությունում բարձր տեղ ժառանգելու համար կարիք չկա, որ մարդ լինի ցցի նախագահ կամ Տասներկուսի Քվորումի անդամ: Եկեղեցու ամենախոնարհ անդամը, եթե պահում է Աստծո պատվիրանները, ձեռք կբերի վեհացում ճիշտ այնքան, որքան որևէ այլ մարդ սելեստիալ արքայությունում: Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցկությունը նրանում է, որ այն մեզ բոլորիս հավասար է դարձնում.... Երբ պահում ենք Տիրոջ պատվիրանները.... մենք հավասար հնարավորություններ ենք ստանում վեհացման համար» (տես «Conference Report», հոկ. 1933, p. 25)» (տես «Conference Report», հոկ. 1979, 33–34 կամ «Ensign», նոյ. 1979, 23–24):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ինչո՞ւ է կամքի ազատությունը և պատասխանատվությունը կարևոր հավերժական գոյության երեք շրջանում:
- Ինչպե՞ս է մեր անմահությունն ու հավերժական կյանքը կախված Հիսուս Քրիստոսից:
- Ի՞նչ իմաստով կարելի է Անկումը դրական իրադարձություն համարել մարդկության համար:
- Ինչո՞ւ է ոգու և մարմնի միացումը կենսական մեր փրկության համար:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուսումնասիրեք «Քավել, քավություն» թեման Սուրբ գրքերի ուղեցույցում (224–225 էջեր): Հնարավոր է դուք ցանկանաք ընդգծել տեղեկությունը, որ մտադրված եք Քավության մասին ուսուցանելիս օգտագործել:
- Պատրաստեք փրկության ծրագրի մեկ էջանոց ամփոփ նկարագրություն:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Փրկագնման ծրագիր» (199–202 էջեր)
- «Հիսուս Քրիստոս» (109–111 էջեր)
- «Հոգի» (121–122 էջեր)
- «Արարչագործություն» (37–38 էջեր)
- «Անկում» (21–24 էջեր)
- «Հիսուս Քրիստոսի քավությունը» (113–120 էջեր)
- «Մահ ֆիզիկական» (131–132 էջեր)
- «Մահ հոգևոր» (133 էջ)
- «Հարություն» (107–108 էջեր)
- «Փառքի արքայություններ» (196–199 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Moses and the Tablets, by Jerry Harston

Մարգարեները եվ ուրացությունը

ՆԱԽԱԲԱՆ

Տերը կանչում է մարգարեներ, որպեսզի իր զավակներին ուսուցանի փրկության ծրագիրը: Ադամն առաջին մարգարեն էր, որին հետևեցին ուրիշներ, ինչպես՝ Նոյը, Աբրահամը և Մովսեսը: Շարունակաբար, աշխարհի պատմությանինչ որ ընթացքում, վերջ ի վերջո, մարդիկ մերժում էին մարգարեների ուղերձը: Երբ դա տեղի էր ունենում, թե մարգարեները, և թե քահանայության արարողությունները վերցվում էին, և մարդիկ ապրում էին հոգևոր խավարի մեջ: Խավարի այդ ժամանակաշրջանները հայտնի են որպես *ուրացության* ժամանակաշրջաններ: Տերն իր ողորմության պատճառով, որոշ ժամանակ անց կանչում և ուղարկում է նոր մարգարեներ, որպեսզի վերականգնի Իր ավետարանը: Ուսուցման, մերժման և վերականգնման այս օրինակը հասկանալը մարդուն պատրաստում է ճանաչել Տիրոջ ձեռքը վերջին օրերի Վերականգնման գործում՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, որը սկիզբ դրեց ժամանակների լրության տնտեսությանը:

> *«Փրկության ծրագիրը.... հայտնվել և ուսուցանվել է յուրաքանչյուր տնտեսության ժամանակ»*

Ավետարանի տնտեսությունը ժամանակաշրջան է, որի ընթացքում Տերը երկրի վրա ունի առնավազն մեկ լիազորված ծառա, որը կրում է սուրբ քահանայությունը և բանալիները, և որն աստվածային լիազորություն ունի ավետարանն առաքելու երկրի բնակիչներին: Երբ դա տեղի է ունենում, ավետարանը կրկին բացահայտվում է, հիմնականում , որպեսզի այդ տնտեսության մարդիկ փրկության ծրագրի գիտելիքի համար կախված չլինեն նախկին տնտեսություններից....

Փրկության ծրագիրը, որն ավելի հին է, քան երկիրը, հայտնվելէ Ադամից սկսած , ուսուցանվել է յուրաքանչյուր տնտեսության ժամանակ, , և եղել է անփոփոխ աշխարհի բոլոր ժամանակաշրջաններում» (Bible Dictionary, «Dispensations», 657–58):

Երկրի վրա եղել են մի քանի տնտեսություններ: Առաջին տնտեսությունը սկսվել է Ադամից: Նրան պատվիրվեց ուսուցանել ավետարանն իր ընտանիքին (տես Մովսես 5.12): Անցավ ժամանակ. շատերն ընտրեցին չլսել, ոչ էլ չհնազանդվել և մերժեցին Աստծո փրկության ծրագիրը (տես Մովսես 5.13): Իր սիրո և ողորմածության պատճառով Երկնային Հայրը Հիսուս Քրիստոսի ավետարանը կրկին հայտնի դարձրեց Նոյ մարգարեի միջոցով (տես Մովսես 8.16–17): Սակայն, ինչպես Ադամի ընտանիքի դեպքում, շատ մարդիկ լույսի փոխարեն ընտրեցին խավարը և, ի վերջո, շրջվեցին ճշմարտությունից (տես Մովսես 8.20):

Ուրիշ տնտեսություններ տրվեցին մարգարեներին, ինչպես Աբրահամին (տես Աբրահամ 1.2–5) և Մովսեսին (տես Ելից 3.1–10): Բոլոր տնտեսությունները մարդկանց հնարավորություն էին տալիս գալ Քրիստոսի մոտ հավատքով առ Նա, ապաշխարությամբ, մկրտությամբ և Սուրբ Հոգու պարգևը ստանալով:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Տերն ապահովում է ճշմարտությունը, քահանայության իշխանությունը, արարողությունները և կազմակերպությունն Իր մարգարեների միջոցով:
- Պատմության ընթացքում ուրացության և վերականգնման շրջանը մի քանի անգամ կրկնվել է:
- Փրկչին մերժելու, Նրա ուսմունքները և քահանայության իշխանությունը մերժելու արդյունքում Նոր Կտակարանի Եկեղեցին Ուրացության երթարկվեց:

- Բարեփոխումների աշխատանքը Եվրոպայում օգնեց ճանապարհ նախապատրաստել Վերականգնման համար:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տերն ապահովում է ճշմարտությունը, քահանայության իշխանությունը, արարողությունները և կազմակերպությունն Իր մարգարեների միջոցով:

■ Աստված սիրում է իր զավակներին և նրանց համար փրկության և երջանկության ծրագիր է պատրաստել: Այդ ծրագրում ներառված են փրկարար ճշմարտություններ և արարողություններ: Նա միշտ հայտնում է իր ծրագիրն Իր մարգարեների միջոցով: Աստվածային առաջնորդության ներքո մարգարեները հավաստիանում են, որ ավետարանի ճշմարտություններն ուսուցանելը և փրկարար արարողություններ կատարելն արվում են ճիշտ ձևով և պատշաճ իշխանությամբ: Մարգարեներին նաև տրված է հավաստիանա լ, որ Եկեղեցին կազմակերպված է պատշաճ ձևով և գործում է հոգուտ նրանց, ովքեր ընդունում են Տիրոջ պատվիրանները: Նրանց համար, ովքեր ծանոթ չեն մարգարեների դերին, միսիոներներն ուսուցանում են, թե ինչու են անհրաժեշտ այդ ոգեշնչված մարդիկ:

> *«[Մելքիսեդեկյան Քահանայությունն] այն անցուղին է, որով.... ամեն մի կարևոր խնդիր բացահայտվում է երկնքից»:*

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է, որ մարգարեների դերերից մեկը միշտ եղել է Տիրոջ զավակներին ճշմարտությունը հասանելի դարձնելը. «Հին մարգարեները ոչ միայն զգուշացնում էին գալիք բաների մասին, այլ, ինչն ավելի կարևոր է, նրանք դառնում էին ճշմարտություն հայտնողները մարդկանց համար: Նրանք էին, որ մարդկանց ցույց էին տալիս, թե ինչպես ապրեին, որ երջանիկ լինեին և խաղաղություն գտնեին իրենց կյանքում»: (*Be Thou an Example* [1981], 124):

■ Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է, որ Մելքիսեդեկյան Քահանայությունն «այն անցուղին է, որով ողջ գիտելիքը, վարդապետությունը և փրկության ծրագիրը և ամեն մի կարևոր խնդիր բացահայտվում է երկնքից.... Դա այն անցուղին է, որով Ամենազորը սկսեց հայտնի դարձնել Իր փառքն այս երկրի ստեղծման ժամանակ, և որի միջոցով Նա շարունակել է Իրեն հայտնի դարձնել մարդկանց զավակներին մինչև ներկա ժամանակը, և որի միջոցով նա Իր նպատակները հայտնի կդարձնի մինչև ժամանակների վերջը» (*History of the Church*, 4:207, պարբերության բաժանումը փոփոխված է):

■ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է, որ Տերը տրամադրում և ղեկավարում է Իր սրբազան արարողությունների օգտագործումն Իր մարգարեների միջոցով. «Ամեն մի դարաշրջանում, երբ ավետարանը երկրի վրա է, այն պետք է հայտնի դարձվի Տիրոջ մարգարեներին, և նրանք պետք է կանչվեն որպես օրինական կառավարիչներ՝ կատարելու և ղեկավարելու փրկության արարողությունների կատարումն իրենց մերձավորների համար (տես «Conference Report», հոկ. 1970, 6):

■ Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին, որն Առաջին Նախագահության խորհրդական էր, ուսուցանել է, թե ինչու էր անհրաժեշտ, որպեսզի Ավետարանը վերականգնվի և Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերահաստատվի. «Մարգարե Ջոզեֆ Սմիթ կրտսերի միջոցով Տերը նորից հայտնել է այս տնտեսությունը մարդկության փրկության համար՝ այս աշխարհում և գալիք աշխարհում: Նրա միջոցով Տերը նաև.... վերահաստատել է իր Եկեղեցին.... «այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին» (ՎԱՈՒ 115.4).... Այս Եկեղեցին Տիրոջ նշանակած խնամակալն ու նրա արարողությունների օրինական կառավարիչն է» (տես «Conference Report», ապրիլ 1965, 105):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ամովս 3.7
- Մատթեոս 16.18–19
- Եփեսացիս 2.19–20
- Եփեսացիս 4.11–14
- Ալմա 12.27–30
- Վարդապետություն և Ուխտեր 1.38
- Հավատո Հանգանակ 1.6

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

Պատմության ընթացքում ուրացության և վերականգնման շրջանը մի քանի անգամ կրկնվել է:

■ Երկնային Հայրը սիրում է իր զավակներին և նրանց համար ծրագիր է նախապատրաստել, որ վերադառնան և ապրեն իր հետ: Իր սերը ցույց տալու համար՝ Նա կանչում է մարգարեներ, որոնց Նա տալիս է քահանայության իշխանություն և հայտնություն: Մարգարեները միշտ ուսուցանել են Երկնային Հոր ծրագիրն իր զավակներին: Նրանք, ովքեր հետևում են մարգարեների խոսքերին, օրհնվում են մեծ երջանկությամբ: Սակայն, նրանք, ովքեր ընտրում են չհարգել կամ աղավաղում են ավետարանի սկզբունքներն ու արարողությունները, սկսում են ապրել հոգևոր խավարում: Տերը հաճախ իր մարգարեներին հեռացնում է այդպիսի մարդկանց միջից, ովքեր մերժում են նրանց: Երբ ալյես մարգարեներ չեն լինում, ճշմարտությունը, քահանայության իշխանությունը, արարողությունները և Եկեղեցու կազմակերպությունը աղավաղվում, փոփոխվում կամ կորչում են (*ուրացություն*): Երբ գալիս է ճիշտ ժամանակը, Աստված կանչում է նոր մարգարե, որպեսզի վերականգնի Իր ճշմարտությունը, քահանայության իշխանությունը, արարողությունները և Եկեղեցու կազմակերպությունը (*վերականգնում*):

Ուրացության և Տիրոջ մարգարեների միջոցով վերականգնման շրջանը մի քանի անգամ կրկնվել է Հին Կտակարանի ժամանակներում:

The Restoration of the Melchizedek Priesthood, by Kenneth Riley, © 1965 IRI

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ամովս 8.11–12
- Մատթեոս 21.33–43
- Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3
- 2 Նեփի 25.17, տես նաև Եսայիա 11.11–12

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Մերիոն Ջ. Ռոմնին նկարագրել է ուրացության և վերականգնման կրկնվող օրինակը. «Սա կրկնվում է արդեն մոտ 6000 տարի: Ավետարանի յուրաքանչյուր տնտեսության ժամանակ մարդիկ մերժել են ավետարանը, և որպես հետևանք, ընկել են ուրացության, ուխտադրժության և խավարի մեջ: Յուրաքանչյուր տնտեսության ժամանակ Աստվածագլխի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու էությունը ևս մեկ անգամ հայտնվել է: Բացահայտվել և նոր ձևով շեշտադրվել են նաև հիմնարար սկզբունքներն ու արարողությունները: Շեշտվել է նաև ավետարանի ուսմունքներին ենթարկվելու կարևորությունը» («Choose Ye This Day», *Ensign*, Feb. 1977, 2):

■ «Ադամն առաջին մարգարեն էր երկրի վրա: Հայտնությամբ Ադամն իմացավ Հայր Աստծո, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ մարդկության ճիշտ փոխհարաբերության մասին, Հիսուս Քրիստոսի Քավության և Հարության, ավետարանի առաջին սկզբունքների և արարողությունների մասին: Ադամն ու Եվան սովորեցրեցին այս ճշմարտություններն իրենց զավակներին և հորդորեցին նրանց հավատք զարգացնել և ապրել ավետարանով իրենց կյանքի բոլոր բնագավառներում: Ադամին հետևեցին ուրիշ մարգարեներ, բայց ժամանակի ընթացքում Ադամի սերունդն ուրացավ ավետարանը և ընկավ ուրացության մեջ, ընտրելով լինել ոչ արդարակյաց:

Այսպիսով, սկսվեց մարգարեական ժամանակաշրջանների ձևը, որից բաղկացած է Հին Կտակարանում արձանագրված պատմության մեծ մասը: Երկնային Հայրն Իր ավետարանը հայտնում էր մարգարեներին ուղիղ հաղորդակցության միջոցով, ինչպես օրինակ՝ Նոյին, Աբրահամին և Մովսեսին: Յուրաքանչյուր մարգարե կանչվում է Աստծո կողմից՝ սկսելու ավետարանի նոր ժամանակաշրջան: Այս մարգարեներից յուրաքանչյուրին Աստված շնորհում էր քահանայության իշխանություն և բացահայտում հավերժական ճշմարտություններ: Դժբախտաբար, յուրաքանչյուր ժամանակաշրջանում մարդիկ ի վերջո օգտագործում էին իրենց ազատ կամքը՝ ընտրելով ավետարանը մերժելը և հետո ուրացության մեջ էին ընկնում»: («Քարոզիր իմ ավետարանը» [2004], էջ 36):

■ Երեց Չարլզ Դիդիեն՝ Յոթանասունի Նախագահությունից, բացատրել է տնտեսությունների ժամանակ ճշմարտության վերականգնման գործում ունեցած մարգարեների դերը.

«Այն բանի շնորհիվ, ինչ լսել և տեսել էր Ադամը, որպես մարդուն տրված հայտնության անձնական վկա՝ նա արժանի եղավ կանչվելու երկրի վրա , որպես առաջին մարգարե : Այժմ նրա մեծ պատասխանատվությունն էր պահպանել ավետարանի ճշմարտությունը և ուսուցանել այն, ինչպես որ տրվել էր իրեն: Մյուս կողմից՝ Սատանան, ներկայացնելով ընդդիմությունը, պատրաստվում էր ուսուցանել ցանկացած բան, որը ժխտում, մերժում կամ անտեսում էր հայտնությամբ ստացված ավետարանը, այդպիսով, մարդկանց, ովքեր ընդունել էին այն, դրդելով ուրացության՝ շփոթմունքի, բաժանումների, լքվածության կամ իրենց նախկին հավատքից հրաժարման:

Հին Կտակարանի մնացած պատմությունն, այդ ժամանակ, դարձավ տնտեսություններ կոչվող տարբեր ժամանակաշրջաններում բազմաթիվ մարգարեների՝ Նոյի, Աբրահամի և Մովսեսի միջոցով ևս մեկ ուրացության պատճառով վերականգնելու՝ շարունակ հայտնություններ ստանալու կրոնի պատմություն: Այդ մարգարեները միշտ կանչվում էին Աստծո կողմից: Նրանց տրվում էր աստվածային իշխանություն. նրանք ունեին քահանայության բանալիները. նրանց տրվում էր աստվածային հանձնարարություն՝ Տիրոջ անունով խոսելու և ուսուցանելու և մարգարեանալու Հիսուս Քրիստոսի՝ աշխարհի Փրկչի և Քավչի սպասվող Քավության մասին (տես Ամովս 3.7)» (տես «Conference Report», հոկ. 2003, 77 կամ «Ensign», նոյ. 2003, 74):

Փրկչին մերժելու, Նրա ոամունքները և քահանայության իշխանությունը մերժելու արդյունքում Նոր Կտակարանի Եկեղեցին Ուրացության երթարկվեց:

■ Հիսուս Քրիստոսի ծննդից հարյուրավոր տարիներ առաջ մարդիկ նորից ընկան ուրացության մեջ: Երկնային Հայրն ուղարկեց Իր Որդուն՝ մեր մեղքերը քավելու և Իր ավետարանը վերականգնելուհամար : Փրկիչն ուսուցանեց ավետարանը և շատ հրաշքներ գործեց իր ծառայության ժամանակ: Նա կանչեց տասներկու տղամարդու, որ լինեն Իր Առաքյալները և ձեռնադրեց նրանց, որպեսզի նրանց քահանայության իշխանություն պարգևի: Նա կազմակերպեց իր Եկեղեցին և իրականացրեց մարգարեությունները: Ամենակարևորը՝ Նա իրագործեց Քավությունը: Աստծո Որդին կատարեց բոլոր բաները, որոնց համար Իր Երկնային Հայրն իրեն ուղարկել էր, որ կատարեր:

Հիսուս Քրիստոսն Իր Առաքյալներին իշխանություն տվեց ուսուցանելու Իր ավետարանը, կատարելու փրկության արարողությունները և հաստատելու Իր Եկեղեցին: Ինչևէ, շատ մարդիկ մերժեցին Հիսուսին, և Նրան խաչեցին: Մարդկանց ամբարշտությունն ավարտվեց հալածանքներով, սպանությամբ և Առաքյալների ու Եկեղեցու անդամների ցրմամբ: Առանց հայտնության ու քահանայության իշխանության կեղծ վարդապետություններ սկսվեցին ուսուցանվել և Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կորսվեց: Եվս մեկ անգամ, Իր զավակների ուրացության պատճառով, Աստված թույլ տվեց, որ ճշմարտությունը, ինչպեսև Իր քահանայության իշխանությունը, արարողությունները և Եկեղեցու կազմակերպությունը վերցվի երկրի վրայից:

Այս ուրացության արդյունքում բազմաթիվ եկեղեցիներ գոյացան: Ուսուցանվում էին կեղծ գաղափարներ և Հոր, Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու ճշմարիտ էության և բնության մասին ճշմարիտ գիտելիքը կորսվեց: Ապաշխարության վարդապետությունը աղավաղվեց: Մկրտությունն ու այլ արարողություններն ու ուխտերը փոփոխվեցին կամ մոռացվեցին: Սուրբ Հոգու պագևն այլևս մատչելի չէր: Այս ժամանակաշրջանը, երբ ճշմարիտ Եկեղեցին այլևս երկրի վրա չէր, հայտնի է դարձել որպես Մեծ Ուրացություն: Այն տևեց մինչև Վերականգնումը՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Ապագա միսիոներները պետք է հասկանան այս ուրացության մասին և ի վիճակի լինեն պարզ ձևով ուսուցանել այն իրենց հետաքրքրվողներին:

Paul Mann, © 2002 IRI

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մատթեոս 24.24
- Գործք 20.29–30
- Ա Կորնթացիս11.18–19
- Գաղատացիս 1.6–8
- Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3
- Բ Տիմոթեոս 1.15

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, երբ Առաջին Նախագահության խորհրդական էր, նկարագրել է այն փաստերը, որոնք տարել են դեպի Մեծ Ուրացություն.

«Մարդկանց մեծ մասը չէր գալիս Քրիստոսի մոտ, ոչ էլ հետևում էին Նրա ուսուցանածին: Տերը խաչվել էր, Առաքյալների մեծ մասը սպանվել էին, ճշմարտությունը՝ մերժվել: Լուսավորության պայծառ շողն անցավ և մութ գիշերվա երկար ստվերը պատանեց երկիրը:

Սերունդներ առաջ Եսայիան մարգարեացել էր. «Խաւարը պիտի ծածկի երկիրը, թանձր մթությունը՝ ժողովուրդներին» [Եսայիա 60.2]: Ամովսը կանխատեսել էր սով երկրի վրա՝ «ոչ թե հացի սով կամ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու» [Ամովս 8.11]: Պատմության մութ դարերը կարծես երբեք չէին վերջանալու: Մի՞թե ոչ մի երկնային սուրհանդակ չէր երևալու» (տես «Conference Report», ապրիլ 1997, 73 կամ «Ensign», մայիս 1997, 51):

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է.

Առաքյալների մահից հետո Քրիստոնեության դրույթներն առաջին դարերում խառնվեցին [հունական] իմաստասիրության դրույթների հետ: Օրինակ՝ այդ ժամանակվա իմաստասերները հակված էին այն մտքին, որ ֆիզիկական նյութը չարից էր, և որ Աստված ոգի էր՝ առանց կրքերի ու զգացումների: Այդ համոզմունքներն ունեցող մարդիկ, այդ թվում ուայալ մարդիկ, որոնք Քրիստոնեության ազդեցիկ նորադարձներ էին, դժվարությամբ էին ընդունում վաղ Քրիստոնեության հասարակ ուսմունքները. Միածին Որդուն, որն ասում էր, որ իր Երկնային Հոր ճշգրիտ պատկերն էր, և որն իր հետևորդներին ուսուցանում էր մեկ լինել, ինչպես ինքը և իր Հայրն էին մեկ, և Մեսիային, որը մահացավ խաչի վրա և ավելի ուշ հայտնվեց իր հետևորդներին որպես հարություն առած էակ՝ մսից և ոսկրից մարմնով:

Հունական մտահայեցողական իմաստասիրության և վաղ Քրիստոնեաների հասարակ, ուղիղ հավատքի ու սովորությունների միջև հակասությունները սուր հակառակությունների արդյունք էին դառնում, և սպառնում էին ընդարձակել թուլացած Հռոմեական կայսրության քաղաքական բաժանումները....

Մեր անվանած Ուրացության ժամանակշրջանում, Հին և Նոր Կտակարաններում նկարագրված շոշափելի, անձնավորված Աստվածը փոխարինվեց հունական մտահայեցողական իմաստասիրությամբ նկարագրված վերացական, անըմբռնելի աստվածությամբ: Աստվածաշնչի ընդունված լեզուն մնաց, սակայն սուրբ գրությունների այսպես կոչված թաքնված մտքերն, ի տարբերություն բնօրինակի, այժմ բացատրվում էին օտար իմաստասիրական բառապաշարով» (տես «Conference Report», ապրիլ 1995, 113 կամ «Ensign», մայիս 1995, 84–85):

■ Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է այն մասին, թե քահանայության իշխանությունն ինչպես է կորսվել երկրի վրայից.

«Վաղ Քրիստոնյաները տանում էին հալածանքներ ու զրկանքներ: Պետրոսն ու մյուս եղբայրները դժվարությամբ էին պահում Եկեղեցին միասնական, իսկ վարդապետությունը՝ անաղարտ: Նրանք երկար ճամփորդում էին և միմյանց նամակներ էին գրում իրենց առջև ծառացած խնդիրների վերաբերյալ, սակայն տեղեկությունն այնքան դանդաղ էր տարածվում և Եկեղեցին ու նրա ուսմունքներն այնքան նոր էին, որ կեղծ ուսմունքներին դիմագրավելը, նախքան դրանց արմատավորվելը, դժվար էր [տես Բ Թեսաղոնիկեցիս 2.3, Բ Տիմոթեոս 4.3–4]....

Վերջ ի վերջո Պետրոսն ու մյուս Առաքյալները նահատակվեցին, բացի Հովհաննես Սիրելիից: Հովհաննես Առաքյալը և Եկեղեցու մյուս անդամները գոյության պայքար էին մղում սարսափելի ճնշումների ներքո: Ի հավիտենական երախտիքս իրենց՝ Քրիստոնեությունը գոյատևեց և աչքի ընկնող ուժ դարձավ Ք.ծ.հ. երկրորդ դարի վերջում: Բազմաթիվ քաջարի սրբեր Քրիստոնեության գոյատևման միջոցը դարձան:

Չնայած այդ Սրբերի նշանակալից ծառայությանը, նրանք չունեին նույն առաքելական իշխանությունը, որն ստացել էին Պետրոսը և մյուս Առաքյալները՝ կարգվելով անձամբ Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքերի ներքո: Երբ իշխանությունը կորսվեց, վարդապետությունն ըմբռնելու համար մարդիկ սկսեցին ապավինել այլ աղբյուրների: Որպես արդյունք՝ բազմաթիվ պարզ և արժեքավոր ճշմարտություններ կորսվեցին» (տես «Conference Report», հոկ. 1994, 84–85 կամ «Ensign», նոյ. 1994, 65–66):

Բարեփոխումների աշխատանքը Եվրոպայում օգնեց ճանապարհ նախապատրաստել Վերականգնման համար:

■ Երեց Ջեյմս Է. Թալմեջը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, բացատրել է, որ «առաքյալների և նրանց հետևող ժամանակաշրջանում ընդհանուր ուրացություն տեղի ունեցավ, և որ նախնական Եկեղեցին կորցրեց որպես աստվածային հաստատություն իր զորությունը, իշխանությունն ու շնորհը և ետ զարգանալով դարձավ միայն երկրային կազմակերպություն» (*The Great Apostasy* [1958], iii):

Առաքյալների բացակայության արդյունքում, Եկեղեցու տեղական սպասավորներն, աստիճանաբար, ավելի մեծ իշխանություն էին ստանձնում, չունենալով քահանայության իշխանություն: Տեղական այս ղեկավարները իրենց տարածքներում քաղաքական և վարդապետական որոշումներ էին կայացնում տեղական տարածքների համար, պնդելով, որ իրենք Առաքյալների պատշաճ հաջորդող-

ներն են: Տեղական այդ ղեկավարներն ապավինում էին ավելի շուտ տրամաբանությանն ու լեզվական կարողություններին, քան հայտնությանը և փոփոխում էին Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ուսմունքները:

«Հոգևոր խավարի դարերից հետո ճշմարտություն որոնող տղամարդիկ և կանայք բողոքեցին առկա կրոնական կարգերի դեմ: Նրանք ճանաչեցին, որ ավետարանի շատ վարդապետություններ և արարողություններ փոխվել էին կամ կորել: Նրանք ավելի մեծ հոգևոր լույսի էին ձգտում և շատերը խոսում էին ճշմարտության վերականգնման մասին: Բայց նրանք չէին պնդում, որ Աստված է կանչել իրենց լինելու մարգարե: Ընդհակառակը, նրանք փորձում էին փոխել ուսմունքներն ու կարգերը, որ նրանք հավատում էին, որ փոփոխվել էին կամ աղավաղվել: Նրանց ջանքերը բերեցին Բողոքական բազմաթիվ եկեղեցիների կազմավորմանը: Ռեֆորմացիան առաջացրեց ավելի մեծ շեշտադրում կրոնական ազատության վրա, որը ճանապարհ բացեց վերջնական Վերականգնման համար» («Քարոզիր իմ ավետարանը», 37–38 էջեր):

«Ռեֆորմացիան ավելի մեծ շեշտադրում կրոնական ազատության վրա, որը ճանապարհ բացեց վերջնական Վերականգնման համար»:

Martin Luther Posts His Religious Theses, Dale Kilbourn, © IRI

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հովել 2.28–29

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրության վերաբերյալ:

■ Երեց Ռասսել Մ. Բալլարդը բացատրել է, թե ինչպես Աստված օգնեց ստեղծել մի միջավայր, որտեղ ավետարանը կարող էր վերականգնվել.

«1517 թվականին Հոգին ներգործեց գերմանական մի քահանայի՝ Մարտին Լյութերի վրա, որն անհանգստացած էր, թե որքան է եկեղեցին հեռացել Քրիստոսի ուսուցանած ավետարանից: Նրա աշխատանքն առաջնորդեց բարեփոխումների, մի շարժման, որը շարունակեցին տեսլականՏԵՍԼԱԿԱՆ ? տեսակետ ունեցող այլ մարդկանց կողմից, ինչպիսիք էին Ջոն Կալվինը, Հուլդրիխ Ցվինգլին, Ջոն Ուեսլին և Ջոն Սմիթը:

Ես հավատացած եմ, որ այս բարեփոխողները ոգեշնչված էին այնպիսի կրոնական մթնոլորտ ստեղծելու, որտեղ Աստված կարող էր վերականգնել կորած ճշմարտություններն ու քահանայության իշխանությունը: Նմանապես, Աստված ոգեշնչեց Ամերիկայի առաջին հետազոտողներին ու գաղութարարներին և Միացյալ Նահանգների Սահմանադրության հիմնադրողներին, որպեսզի ստեղծեն մի երկիր և կառավարող սկզբունքներ, որի մթնոլորտում ավետարանը կարող էր վերականգնվել» (տես «Conference Report», հոկ. 1994, 85 կամ «Ensign», նոյ. 1994, 66):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է, որ բարեփոխողներն անում էին լավագույնը, որպեսզի գտնէին Մեծ Ուրացության ժամանակ կորած ճշմարտությունները.

«Սա.... լուսավորության զարգացման ժամանակ էր: Տարիների անողոք երթի հետ մեկտեղ նոր օրվա արևաշողը սկսեց բացվել երկրի վրա: Դա Ռենեսանսն էր՝ Վերածնության դարաշրջանը, արվեստի, ճարտարագիտության և գրականության զարմանահրաշ բարգավաճումը:

Բարեփոխողներն աշխատում էին փոխել Եկեղեցին, մասնավորապես այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Լյութերը, Մելանքտոնը, Հուսը, Ցվինգլին և Թինդալը: Նրանք մեծ քաջության տեր մարդիկ էին, նրանցից ոմանք դաժան մահով մահացան իրենց համոզմունքների պատճառով: Բողոքականությունը ծնվեց բարեփոխման իր ճիչով: Եվ երբ այդ բարեփոխումները չիրականացան, բարեփոխողները կազմակերպեցին իրենց սեփական Եկեղեցին: Նրանք արեցին դա առանց քահանայության իշխանության: Նրանց միակ նպատակը հարմար միջոց գտնելն էր Աստծուն երկրպագելու համար, այնպես ինչպես նրանք զգում էին, որ Նրան պետք էր երկրպագել» (տես «Conference Report», հոկ. 1999, 92–93 կամ «Ensign», նոյ. 1999, 73):

■ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է բարեփոխողների վճռորոշ ներդրման մասին.

«Ծարաված սրտերով ազնիվ մարդիկ, վտանգի տակ դնելով իրենց իսկ կյանքերը, փորձում էին հիմնել շրջադարձային հիմնակետեր, որպեսզի գտնեին ճշմարիտ ուղին: Սկսվեց Բարեփոխման դարաշրջանը, սակայն առջևում դժվար ճանապարհ էր: Հալածանքները դաժան էին, անձնազոհություններն՝ անթիվ, իսկ գինը՝ անչափ բարձր: Բարեփոխում կատարողները նման էին պիոներ-

ներին, որոնք սայլերով անցնում էին տափաստաններով, հուսահատ փնտրելով կորսված նշանակետերը, որոնք, իրենց կարծիքով, կառաջնորդեին մարդկությանը ետ՝ դեպի Հիսուսի ուսուցանած ճշմարտությունները:

Երբ Ջոն Ուիքլիֆը և ուրիշներ ավարտեցին Աստվածաշնչի լատիներեն վուլգատ օրինակից առաջին անգլերեն թարգմանությունը, այդ ժամանակի եկեղեցական իշխանություններն արեցին ամեն բան, ինչ կարող էին, որպեսզի ոչնչացնեն այն: Կրկնօրինակներն արտագրվում էին ձեռքով և գաղտնի կերպով: Աստվածաշունչը համարվում էր փակ գիրք, որը հասարակ մարդիկ կարդալու իրավունք չունեին: Ուիքլիֆի շատ հետևորդներ դաժանորեն պատժվեցին, իսկ ոմանց խարույկի վրա այրեցին:

Մարտին Լյութերը հաստատեց Աստվածաշնչի գերիշխանությունը: Սուրբ գրությունների նրա ուսումնասիրությունները նրան առաջնորդեցին եկեղեցու վարդապետությունն ու սկզբմունքները համեմատել սուրբ գրությունների ուսմունքների հետ: Լյութերը ոտքի ելավ անհատի պատասխանատվության և անհատի խղճի իրավունքների օգտին, և նա արեց այդ իր կյանքը վտանգի ենթարկելով: Չնայած նրան սպառնում և հետապնդում էին, այնուամենայնիվ, նա քաջաբար հայտարարում էր. «Ահա ես, իմ համոզմունքներով. այլ կերպ ես չեմ կարող վարվել: Աստվա՜ծ ինձ օգնական»:

Ջոն Հյուսին (կամ Հուսին), որն անվախ խոսում էր եկեղեցու անկման դեմ, տարան քաղաքից դուրս, որ այրեն: Նրան պարանոցից կապեցին ցցին և մինչև կզակը լցրեցին խեժապատ փայտերով ու ցախերով. ապա նրան հարցրեցին վերջին անգամ, թե արդյոք չի հրաժարվում իր խոսքերից: Երբ կրակը բարձրացավ, նա երգում էր, սակայն քամին կրակը փչեց նրա երեսին և նրա ձայնը խլացրեց:

Ցվինգլին՝ Շվեցիարիայից, իր գրությունների ու ուսմունքների միջոցով փորձում էր նորովի ներկայացնել քրիստոնեական վարդապետությունը՝ համահունչ աստվածաշնչյան տերմիններին: Նրա ամենահայտնի հայտարարություններից մեկն է եղել. «Ի՞նչ նշանակություն ունի: Նրանք կարող են սպանել մարմինը, բայց ոչ հոգին»:

Եվ ո՞վ կարող է այսօր չգնահատել Ջոն Նոքսի խոսքերը. «Աստծո հետ մարդ միշտ մեծամասնություն է կազմում»:

Ջոն Կալվինը, հիվանդությունից ու իր նախաձեռնած անդադար աշխատանքներից վաղաժամ ծերացած, ի մի բերեց իր անձնական իմաստասիրությունը հետևյալ հայտարարությամբ. «Մեր իմաստությունը.... գրեթե ամբողջովին, բաղկացած է երկու մասից. Աստծո մասին գիտելիքից, և մեր մասին գիտելիքից»:

Հիրավի, շատերի մասին կարելի է նշել, սակայն Վիլյամ Թինդլի մի դիտողություն, հավանաբար, բավական կլինի: Թինդլը մտածում էր, որ մարդիկ իրավունք ունեին իմանալ, թե սուրբ գրություններում ինչ խոստումներ էին տրվել իրենց: Թարգմանության իր աշխատանքի քննադատներին նա հայտարարեց. «Եթե Աստված խնայի իմ կյանքը.... ես հնարավոր կդարձնեմ, որ անգամ գութանով հողը վարող տղան կիմանա սուրբ գրությունների մասին ավելի, քան դուք գիտեք»:

Այսպիսին էին մեծ բարեփոխողների ուսմունքներն ու կյանքը: Նրանց գործերը հերոսական էին, ներդրումները՝ բազմաթիվ, զոհաբերությունները՝ մեծ, սակայն նրանք չվերականգնեցին Հիսուս Քրիստոսի ավետարանը: (տես «Conference Report», ապրիլ 1975, 20–21 կամ «Ensign», մայիս 1975, 15–16):

■ Եզրափակելով՝ Նախագահ Մոնսոնն ասել է, որ բարեփոխողների գործը զուր չէր: Այն պայմաններ ստեղծեց, երբ Աստվածաշունչը մատչելի դարձավ ճշմարտության ազնիվ փնտրողներին, այդ թվում նաև երիտասարդ Ջոզեֆ Սմիթ կրտսերին. «Արդյոք նրանց զոհաբերությունը զո՞ւր էր: Արդյոք նրանց պայքարն ապարդյո՞ւն էր»: Ես հիմնավորված պատասխան եմ տալիս՝ ո՛չ: Սուրբ Աստվածաշունչն այժմ մատչելի է բոլոր մարդկանց: Յուրաքանչյուր անձ կարող է գտնել ճշմարտության իր ուղին: Ա՜խ, եթե միայն բոլորը կարողանային կարդալ և կարողանային հասկանալ: Սակայն ոմանք կարող են կարդալ, մյուսները՝ լսել, և Աստված հասանելի է բոլորին աղոթքի միջոցով» (տես «Conference Report», ապրիլ 1997, 74 կամ «Ensign», մայիս 1997, 51):

■ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրել է, որ բոլոր այս բարեփոխողների աշխատանքը ճանապարհ է պատրաստել ավետարանի Վերականգնման համար.

Ի նախապատրաստություն այս վերականգնմանը՝ Տերը բարձրացրել է ազնիվ մարդկանց, ինչպիսիք են Լյութերը, Կալվինը, Նոքսը և ուրիշներ, որոնց անվանում ենք բարեփոխողներ, և նրանց զորություն տվեց՝ քանդելու շղթաները, որոնք կապել էին մարդկանց և նրանց զրկում էին խղճի թելադրանքի համաձայն Աստծուն երկրպագելու սրբազան իրավունքից....

Վերջին օրերի Սրբերն այս ամենի համար հարգանքի տուրք են մատուցում բարեփոխողներին, որոնք ջարդեցին կրոնական աշխարհի կապանքները: Տերը նրանց պահապանն էր այդ առաքելության ընթացքում, որը լցված էր բազմաթիվ վտանգներով: Այդուամենայնիվ, ժամանակը դեռ չէր եկել ավետարանի լրիվության վերականգնման համար: Բարեփոխողների աշխատանքը մեծ կարևորություն ուներ, սակայն այն նախապատրաստական աշխատանք էր» («Doctrines of Salvation», comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:174–75):

■ Նախագահ Սմիթը բացատրել է, որ բարեփոխումների դարաշրջանը «մեր ներկա օրերի արշալույսն էր: Այդ մեծ զորության լուծը, որը կապված էր պահում ազգերին, ոչ միայն ֆիզիկապես, այլ հոգևորապես, կոտրվել էր. լույսի

ճառագայթներն սկսեցին իրենց ճանապարհը հարթել, այնպես որ կրոնական հավատքի անկախություն և ազատություն հաստատվեց» («Doctrines of Salvation», 1:177): Ժամանակն ու պայմաններն այժմ համապատասխան էին, որպեսզի երիտասարդ Ջոզեֆ Սմիթ կրտսերը կանչվեր որպես Վերականգման առաջին մարգարե:

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ կարող ենք սովորել ուրացության և վերականգնման կրկնվող շրջանից:
- Ի՞նչպիսի ուղիներով բարեփոխողներն օգնեցին, որպեսզի Վերականգնումը հնարավոր դառնա:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի հայտնաբերենք և պաշտպանենք մեզ անձնական ուրացությունից:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մտապահեք առնավազն երկու սուրբ գրություն, որոնք ուսուցանում են Ուրացության մասին: Այդ հղումները ներառում են՝ Եսայիա 29.13–14, Ամովս 8.11–12, Գործք 20.29–30, Գաղատացիս 1.6–8, Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3; 2 Նեփի 27.1, Մորմոն 8.28, և Վարդապետություն և Ուխտեր 1.14–16:
- Կարդացեք Առաջին տեսիլքի պատմությունը Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.5–20 հատվածներում:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Ուրացություն» (194–196 էջեր)
- «Մարգարեներ» (134–135 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 9

Վերականգնումը և նոր սուրբ գրությունների երևան գալը

ՆԱԽԱԲԱՆ

Մենք ապրում ենք ժամանակների լրության տնտեսության ժամանակ: Ավետարանի այս վերջին տնտեսությունը բացվեց Առաջին Տեսիլքով: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Աշխարհում տեղի ունեցած ամենամեծ իրադարձությունը, Աստծո Որդու գերեզմանից հարություն առնելուց և երկինք համբարձվելուց հետո, Հոր և Որդու հայտնվելն էր պատանի Ջոզեֆ Սմիթին՝ ճանապարհ նախապատրաստելու հիմքը դնելու իր թագավորության՝ ոչ մարդկային թագավորություն, որն այլևս չպետք է դադարի, ոչ էլ կործանվի» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 495):

Առաջին տեսիլքով Աստված Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով սկսեց ճշմարտության, իշխանության, սուրբ գրությունների, սրբազան արարողությունների և Եկեղեցու ճշմարիտ կազմակերպության վերականգնումը: Մենք այս ուղերձով աշխարհի հետ կիսվելու պարտականություն և սրբազան արտոնություն ունենք:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Աստված Ջոզեֆ Սմիթին կանչեց Վերականգնման մարգարե լինելու:
- Աստծո զորությամբ ու պարգևով Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և երևան բերեց այլ սուրբ գրություններ:
- Մորմոնի Գիրքն օգնում է մարդկանց բերել Քրիստոսի մոտ:
- Մորմոնի Գիրքը Վերականգնման համոզիչ փաստն է:
- Հիսուսի Քրիստոսի ղեկավարության ներքո, Իր ծառաների միջոցով, վերականգնվեց քահանայությունը և Եկեղեցին:

> *«Աշխարհում տեղի ունեցած ամենամեծ իրադարձությունը, Աստծո Որդու.... հարություն առնելուց.... հետո, Հոր և Որդու հայտնվելն էր պատանի Ջոզեֆ Սմիթին»:*

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստված Ջոզեֆ Սմիթին կանչեց Վերականգնման մարգարե լինելու:

■ Վերջին օրերի փառավոր իրադարձություններից մեկը Հայր Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հայտնվելն էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Առաջին Տեսիլքով սկսվեց Ջոզեֆ Սմիթի աշխատանքը որպես վերջին օրերի մարգարե և Տիրոջ օծյալ՝ սկսելու ժամանակների լրության տնտեսությունը:

Ջոզեֆ Սմիթը Աստծո կողմից կանչված առաջին մարգարեն չէր: Ինչպես քննարկվեց ուսանողի այս ձեռնարկի 8-րդ գլխում, Աստված միշտ կանչել է մարգարեներ: Իր մարգարեների միջոցով նա տալիս է կամ վերականգնում է ճշմարտությունները, իշխանությունը, արարողություններ և սուրբ գրությունները: Նա կազմավորում է Իր Եկեղեցին երկրի վրա՝ Իր զավակների օգտի և փրկության համար: Եթե, ուրացության միջոցով, ավետարանի ճշմարտությունն ու իշխանությունը կորսվում է, Աստված, ի վերջո, պատշաճ ժամանակ և պատշաճ տեղում կանչում է մեկ այլ մարգարե, որպեսզի վերականգնի Իր իշխանությունն ու ճշմարտությունը: Մարգարե Ջոզեֆ Սմիթը կանչվեց սկսելու ավետարանի մի տնտեսություն, որն առաջնորդելու էր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը և Հազարամյակը:



Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 1.17
- Վարդապետություն և Ուխտեր 136.37
- Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.17

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, ուսուցանել է քահանայության իշխանության վերականգնման անհրաժեշտության մասին.

«Հիսուսը կանչեց և կարգեց Առաքյալներ և նրանց տվեց արքայության բանալիները: Այդ բանալիները նրանց իշխանություն տվեցին արարողությունները կապել հավերժության համար....

Առաքյալները նահատակվեցին և ժամանակի ընթացքում ուրացություն տեղի ունեցավ: Եկեղեցու վարդապետությունն աղավաղվեց և արարողությունները փոխվեցին: Քահանայության իշխանության բանալիները կորսվեցին: Համընդհանուր այս ուրացությունը պահանջում էր վարդապետության, իշխանության, քահանայության բանալիների, և արարողությունների վերականգնում:

Աստված՝ Հավերժական Հայրը, և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, անձամբ այցելեցին Ջոզեֆ Սմիթին: Նրանք ասացին նրան, որ հատուկ աշխատանք ունեն նրա համար, որ անի: Նրա միջոցով բանալիները պետք է վերականգնվեին, և Եկեղեցին, ինչպես որ հաստատվել էր Հիսուս Քրիստոսի միջոցով, երբ նա երկրի վրա էր, պիտի վերականգնվեր....

Ջոզեֆ Սմիթն ու Օլիվեր Քաուդերին Հովհաննես Մկրտչի կողմից կարգվեցին Ահարոնյան Քահանայության (տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.68–69): Հին Առաքյալների Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից նրանք կարգվեցին Մելքիսեդեկյան Քահանայության (տես ՎԵՈՒ 27.12): Այդ արարողությունները վերականգնեցին Աստծո արքայության իշխանությունն ու բանալիները, որոնք այլևս չէին վերցվելու երկրի վրայից:

1830 թվականի ապրիլին Մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմավորեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին ևս մեկ անգամ մարդկանց մեջ էր՝ «Ավետարանը քարոզելու և նրա արարողությունները սպասավորելու» իշխանությամբ (Հավատո Հանգանակ 1.5)» («Restoration», *First Worldwide Leadership Training Meeting,* Jan. 2003, 2):

■ Նախագահ Ալվին Ռ. Դայերը, որն Առաջին Նախագահության խորհրդական էր, շեշտել է ավետարանի այս վերջին տնտեսության կարևոր և եզակի բնույթը. «Ջոզեֆ Սմիթին տեղեկացրին, որ նա նախակարգվել է և, հետևաբար, կանչվել է գործիք լինելու, որի միջոցով Աստված գործ կկատարի՝ հաստատելով նրա արքայությունն այստեղ՝ երկրի վրա, ինչպես որ եղել է նախորդ ընդհատվող տնտեսությունների ժամանակ: Սակայն այս մեկը՝ բոլոր տնտեսություններից վերջինը, բնորոշվելու է ավելի շատ ճշմարտությամբ՝ պահուստային ժամանակաշրջան, երբ Աստծո՝ մեր Երկնային Հոր կողմից նախաերկրային կյանքում ծրագրված բոլոր ճշմարտությունները, բոլոր օրենքները, բոլոր ուխտերը, բոլոր խոստումները, որոնք մասնակիորեն հայտնվել են մարդուն մահկանացության տարբեր ժամանակներում՝ իր հոգևոր զավակների փրկագնման և վեհացման համար, այժմ պետք է ամբողջովին բացահայտվեին և մատչելի դարձվեին մարդկությանը: Այդպես էր Տերը խոսել Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ» (տես «Conference Report», ապրիլ 1963, 50):

■ Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Հնադարյան մարգարեները հայտարարել են, որ վերջին օրերում երկնքի Աստվածը մի թագավորություն կհաստատի, որը երբեք չի կործանվի, ոչ էլ ուրիշ ժողովրդի կտրվի.... Ես համարում եմ, որ Տիրոջ խոսքով Դանիելի թագավորության հաստատման գործիքներից մեկն եմ եղել, և ես մտադիր եմ մի հիմք դնել, որը կհեղափոխի ողջ աշխարհը» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 365–66; paragraphing altered):

Աստծո զորությամբ ու պարգևով Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և երևան բերեց այլ սուրբ գրություններ:



■ Հնարավոր է մենք չիմանանք բոլոր մանրամասներն այն մասին, թե Մարգարե Ջոզեֆ Սմիթն ինչպես թարգմանեց Մորմոնի Գիրքը, սակայն մենք գիտենք, որ այդ գործընթացը ոգեշնչված է եղել: Հոգևոր պարգևները՝ Ջոզեֆ Սմիթի հավատքի և քրտնաջան աշխատանքի հետ միավորված, նրան հնարավորություն տվեցին իրագործել այդ թարգմանության աստվածային նպատակը: Նա գործիք եղավ նաև լրացուցիչ սուրբ գրություններ երևան բերելիս, որոնց թվում են Վարդապետություն և Ուխտերը, Թանկագին Մարգարիտը և Աստվածաշնչի Հակոբ թագավորի տարբերակի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ, 1-ին պարբերություն
- 1 Նեփի 13.39–40
- 2 Նեփի 3.11–12
- Վարդապետություն և Ուխտեր 1.29
- Վարդապետություն և Ուխտեր 17.6
- Վարդապետություն և Ուխտեր 124.125

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսել է Աստծո զորությամբ Մորմոնի Գրքի թարգմանության հրաշալի իրագործման և այլ հայտնություններ ի լույս բերելու մասին.

«Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մորոմնի Գիրքը Աստծո պարգևով ու զորությամբ:

Համեմատեք այդ եզակի գործը սուրբ գրությունների այլ թարգմանությունների հետ: Աստվածաշնչի Հակոբ թագավորի տարբերակի վրա, օրինակ, աշխատել են անգլիացի 50 գիտնականներ, որոնք իրենց աշխատանքն ավարտեցին յոթ տարում, թարգմանելով միջին հաշվարկով օրական *մեկ* էջ: Մասնագետ թարգմանիչները մեր օրերում նույնպես լավ են աշխատում, եթե կարողանում են թարգմանել սուրբ գրություններն օրական մեկ էջ արագությամբ:

Ի տարբերություն՝ Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը օրական մոտավորապես *10* էջ հաճախականությամբ, ավարտելով աշխատանքը մոտավորապես 85 օրո՞ւմ....

Այդպիսի արագությունն ավելի ուշագրավ է դառնում, հաշվի առնելով այն պայմանները, որի ներքո աշխատում էր Մարգարեն: Այդ նույն ժամանակահատվածում, դիմագրավելով շարունակ ընդհատումներին և անդադար թշնամանքին, Ջոզեֆ Սմիթը տեղափոխվեց 160 կիլոմետր Պենսիլվանիայի Հարմոնիից դեպի Ֆայեթ՝ Նյու Յորք: Նա դիմեց հեղինակային իրավունքների համար: Նա ստացավ Վարդապետություն և Ուխտերի առաջին 12 գլուխները կազմող հայտնությունները: Երկնային էակները վերականգնեցին սուրբ քահանայությունը: Այդուհանդերձ, նա ավարտեց թարգմանությունը երեք ամսից ավելի քիչ ժամանակաշրջանում» (*Helping Missionaries Understand the Role of the Book of Mormon in Conversion* [ելույթ նոր միսիայի նախագահների սեմինարին, հունիս 23, 2000], 4–5):

■ Երեց Նիլ Ա. Մաքսվելը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, նույնպես անդրադարձել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից կատարած թարգմանության տպավորիչ արագությանը.

«Թարգմանության ընթացքը, իսկապես, «զարմանալիք և զարմանք էր» կամ ինչպես շարադրվում է եբրայերենում «զարմանալի հրաշք» (Եսայիա 29.14): Թարգմանության նրա հաճախականությունից կախված, մասնագետները հաշվարկել են, որ Ջոզեֆը, 1829-ին ամենօրյա միջին հաշվարկով թարգամանել է այսօրվա տպագրական էջերի չափով ութից տասներեք էջ (տես John W. Welch and Tim Rathbone, "The Translation of the Book of Mormon: Basic Historical Information" [Provo: Foundation for Ancient Research and Mormon Studies, 1986], pp. 38–39): Ունակ, մասնագետ թարգմանիչը, վերջերս ինձ ասաց, որ օրական մեկ օր թարգմանությունը համարվում է արդյունավետ աշխատանք:

Ջոզեֆ թարգմանիչից, որն ուսուցանված չէր աստվածաբանության մեջ, ավելի շատ տպագրված սուրբ գրություններ են մեզ հասել, քան որևէ այլ մահկանացու մարդուց» (տես «Conference Report», ապրիլ 1992, 54–55 կամ «Ensign», մայիս 1992, 38):

«Ջոզեֆ թարգմանիչից.... ավելի շատ տպագրված սուրբ գրություններ են մեզ հասել, քան որևէ այլ մահկանացու մարդուց»:

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը Վերականգնման գործում Մորմոնի Գրքի ի հայտ գալու ժամանակը դիտել է որպես դրա կարևորության փաստ.

«Մորմոնի Գրքի կարևորության զորեղ վկայություն է.... նշել այն, թե ժամանակագրական առումով որտեղ է Տերը դրել

նրա երևան գալը Վերականգնման գործում: Միակ բանը, որ նախորդել էր դրան, Առաջին Տեսլիքն էր: Այդ զարմանալի հայտնության ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեց Աստծո ճշմարիտ էությունը, և որ Աստված իր համար աշխատանք ուներ անելու: Մորմոնի Գրքի ի հայտ գալը հետևող հաջորդ աշխատանքն էր:

Մտածեք, թե դա ինչ է նշանակում: Մորմոնի Գրքի ի հայտ գալը նախորդեց քահանայության վերականգնմանը: Այն հրատարակվեց Եկեղեցու կազմավորումից մի քանի օր առաջ: Սրբերին տրվում էր կարդալ Մորմոնի Գիրքը, նախքան նրանց տրվում էր այնպիսի մեծ վարդապետության հայտնությունները, ինչպես փառքի երեք աստիճանները, սելեստիալ ամուսնությունը կամ մահացածների համար աշխատանքը: Այն ի հայտ եկավ նախքան քահանայության քվորումների և Եկեղեցու կազմակերպության հայտնվելը: Մի՞թե սա չի հուշում, թե ինչ տեղ ունի այս գիրքը Տիրոջ աչքում» (տես «Conference Report», հոկ. 1986, 3 կամ «Ensign», նոյ. 1986, 4):

■ Նախագահ Բենսոնը շեշտել է, որ ի լրումն Մորմոնի Գրքի, Մարգարե Ջոզեֆ Սմիթը երևան է բերել այլ սուրբ գրություններ. ««Այս սերունդը,– ասել է Տերը Ջոզեֆ Սմիթին,– իմ խոսքը կունենա քո միջոցով» (ՎԱՈՒ 5.10): Այնպես որ դա եղել է Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի և ժամանակակից այլ հայտնությունների միջոցով» (տես «Conference Report», ապրիլ 1987, 104 կամ «Ensign», մայիս 1987, 83):

«Ողջ աշխարհով մարդիկ Մորմոնի Գրքում տրված Հիսուս Քրիստոսի մասին վկայությունն են փնտրում»:

Մորմոնի Գիրքն օգնում է մարդկանց բերել Քրիստոսի մոտ:

■ Յոթանասունի անդամ՝ Երեց Ռոբերտ Ք. Դելենբախն ասել է. «Ողջ աշխարհով մարդիկ Մորմոնի Գրքում տրված Հիսուս Քրիստոսի մասին վկայությունն են փնտրում: Նրանք տարբեր ազգերից, ցեղերից, լեզուներից ու ժողովուրդներից են: Ինչպես հայտնվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթին. «Աշխարհի ծայրերը գիտելիք կփնտրեն քո անվան մասին» (ՎԱՈՒ 122.1): Եվ ինչո՞ւ են նրանք փնտրում Ջոզեֆ Սմիթի անվան մասին: Որովհետև Մորմոնի Գիրքը վկայում է Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, աստվածայնության և քավության մասին: Որովհետև Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարգարեն է» (տես «Conference Report», ապրիլ 1995, 11 կամ «Ensign», մայիս 1995, 11):

Եթե կարդանք Մորմոնի Գիրքը մաքուր սրտով և անկեղծ միտումով, այն մեզ կհամոզի, «որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը» (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 1 Նեփի 6.4
- 1 Նեփի 19.18
- 2 Նեփի 25.23, 26

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Առաջին Նախագահության խորհրդական՝ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը, ուսուցանել է, որ «Մորմոնի Գրքի հաստատող վկայությունն համոզում է, «որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը», և նաև, հոգևորապես հավաստիացնում Ջոզեֆ Սմիթի աստվածային կոչման մասին, և որ նա իսկապես տեսել է Հորը և Որդուն» («The Keystone of Our Religion», *Ensign*, Jan. 2004, 4):

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե ինչ կարևորություն ունի Մորմոնի Գիրքը մարդկանց Քրիստոսի մոտ բերելու գործում.

«Սուրբ գրության այս ոգեշնչված գիրքը միսիոներական քարոզչության առանցքն է: Դեպի այդ գիրքը դարձի գալը դեպի Քրիստոսը դարձի գալ է, որովհետև այդ գիրքը պարունակում է Քրիստոսի խոսքերը: Մորմոնի Գրքի հենց տիտղոսաթերթը հռչակում է նրա նպատակը. «որպեսզի համոզի հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է»:

Ի լրումն, դեպի այս գիրքը դարձի գալը դարձի գալ է դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը, որովհետև այն պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանը: Վարդապետություն և Ուխտերում Տերն ասել է Ջոզեֆ Սմիթին. «Եվ բացի այդ, այս եկեղեցու երեցները, քահանաներն ու ուսուցիչները պետք է ուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են, և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (ՎԱՈՒ 42.12)» («The Book of Mormon: The Heart of Missionary Proselyting», *Ensign*, սեպ. 2002, 14):

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը նկարագրել է Մորմոնի Գրքի Քրիստոսի վրա կենտրոնացած ազդեցությունը.

« Ազնիվ Ճշմարտություն փնտրողը կարող է վկայություն ստանալ, որ Հիսուսը Քրիստոսն է, եթե նա աղոթքով խորհրդածի Մորմոնի Գրքի ոգեշնչված խոսքերը:

Մորմոնի Գրքի բոլոր հատվածների գրեթե կեսը վերաբերում են մեր Տիրոջը: Քրիստոսն իր անվան որևէ ձևով, ըստ գրքի հատվածների քանակի, ավելի հաճախ է հիշատակվում Մորմոնի Գրքում, քան անգամ Նոր Կտակարանում:

Մորմոնի Գրքում նշվում է նրա անվան հարյուրից ավելի տարբերակներ: Այդ անունները որոշակի նշանակություն ունեն Նրա աստվածային էությունը նկարագրելիս....

.... Եկեք կարդանք Մորմոնի Գիրքը և համոզվենք, որ Հիսուսը Քրիստոսն է: Եկեք շարունակաբար վերընթերցենք Մորմոնի Գիրքը, որպեսզի ավելի լիովին մոտենանք Քրիստոսին, նվիրվենք Նրան, կենտրոնանանք Նրա վրա և կլանվենք Նրանով» (տես «Conference Report», հոկ. 1987, 101, 104 կամ «Ensign», նոյ. 1987, 83, 85):

Մորմոնի Գիրքը Վերականգնման համոզիչ փաստն է:

■ Մորմոնի Գրքի ճշմարտությունը վկայություն է Վերականգնման մյուս ճշմարտությունների մասին: Մորմոնի Գիրքը կանգնած է որպես վկա ոչ միայն Հիսուս Քրիստոսի համար, այլ նաև Նրա ծառայի՝ Ջոզեֆ Սմիթի համար, որը թարգմանեց այն և հիմք դրեց վերջին օրերի Աստծո թագավորության համար:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 1 Նեփի 13.40
- Վարդապետություն և Ուխտեր 20.8–12

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բացատրել է Մորմոնի Գրքի կարևորության մասին կապված Եկեղեցու և Աստվածաշնչի հետ.

«Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Եկեղեցին ճշմարիտ է, քանի որ այն նույն իշխանությունը, որի ներքո այդ սրբազան հիշատակարանն ի լույս եկավ, ներկա է և գործում է մեր մեջ այսօր: Այն Պաղեստինում Փրկչի կողմից հաստատած Եկեղեցու վերականգնումն է: Այն վերականգնումն է այն Եկեղեցու, որը Փրկիչը հաստատեց, երբ այցելեց այս մայրցամաք, ինչպես որ գրված է սրբազան հիշատակարանում:

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Աստվածաշունչը ճշմարիտ է: Աստվածաշունչը Հին Աշխարհի վկայությունն է: Մորմոնի Գիրքը՝ նոր աշխարհի վկայությունն է: Մեկը Հուդայի հիշատակարանն է, մյուսը՝ Հովսեփինը, և նրանք մեկ են դարձել Տիրոջ ձեռքում՝ որպես Եզեկիելի մարգարեության իրականացում: Միասին նրանք հայտարարում են աշխարհի Քավիչի Թագավոր լինելը և նրա թագավորության իրական լինելը» (տես «Conference Report», հոկ. 1959, 119):

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը վկայել է, որ Մորմոնի Գիրքը Վերականգնման ճշմարիտ լինելու վկայության պորտաքարն է. «Մորմոնի Գիրքը վկայության պորտաքար է: Ճիշտ ինչպես կամարն է փլուզվում, երբ պորտաքարը հանվում է, այնպես էլ ողջ Եկեղեցին կանգուն է կամ ընկնում է, կախված Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելուց: Եկեղեցու թշնամիները սա հստակ հասկանում են: Այդ պատճառով են նրանք այդքան շատ ջանք գործադրում՝ ապացուցելու, որ Մորմոնի Գիրքը կեղծ է, քանզի, եթե այն վարկաբեկվի, Մարգարե Ջոզեֆ Սմիթը նույնպես կվարկաբեկվի, ինչպես նաև և քահանայության բանալիները, հայտնությունը և վերականգնված Եկեղեցին: Սակայն նույն կերպով, եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, իսկ այսօր միլիոնավոր մարդիկ են վկայել, որ ստացել են Սուրբ Հոգու վկայությունը, որ այն ճշմարիտ է, ապա պետք է ընդունել Վերականգնումը և այն ամենը, ինչ կապված է դրա հետ» (*A Witness and a Warning* [1988], 19):

■ Նախագահ Բենսոնը նաև ոգեշնչված խորհուրդ է առաջարկել այն մասին, թե ինչպես օգտագործել Մորմոնի Գիրքը, այն առարկություններին արձագանքելիս, որ կարող են ունենալ հետաքրքրվողները ավետարանի վերականգնման մասին.

«Մենք պետք է օգտագործենք Մորմոնի Գիրքը Եկեղեցու դեմ առարկություններին արձագանքելիս....

.... Բոլոր առարկությունները, կապված լինեն արհեստական վիժեցման, բազմակնության, յոթերորդ օրվա երկրպագության, թե այլ հարցերի հետ, հիմնականում կախված են նրանից, թե արդյոք Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարե էր և թե արդյոք նրան հաջորդողները մարգարե են, որոնք աստվածային հայտնություն են ստանում: Այստեղ է, ահա, որ կարելի է օգագործել Մորմոնի Գիրքը, որըկարող է լուծում տալ առարկությունների մեծ մասին:

Նախ՝ հասկացեք առարկությունը:

Երկրորդ՝ պատասխանը տվեք հայտնություններից:

Երրորդ՝ ցույց տվեք, թե ինչպես է պատասխանի ճշմարտությունը կախված նրանից, թե արդյոք կան ժամանակակից մարգարեներ, որոնք իսկապես հայտնություն են ստանում:

Չորրորդ՝ բացատրեք, որ մենք ունենք ժամանակակից մարգարեներ և հայտնությունը, իրականում արդյոք կախված չէ նրանից, թե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, թե ոչ:

Հետևաբար, իրական խնդիրը, որ առարկողը պետք է պարզի իր համար, այն է, թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Քանի որ եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Հիսուսը Քրիստոսն է, Ջոզեֆ Սմիթը մարգարե է եղել, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճշմարիտ է և այսօր այն առաջնորդվում է մարգարեի կողմից, որը հայտնություն է ստանում:

Մեր հիմնական խնդիրն է հայտարարել ավետարանը և անել այդ արդյունավետ ձևով: Մենք պարտավոր չենք պատասխանել յուրաքանչյուր առարկության: Յուրաքանչյուր մարդ, ի վերջո, պաշտպանված է հավատքով, և դրանում է, որ նա պետք է հաստատ կանգնի» (*A Witness and a Warning*, 4–5):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խորհուրդ է տվել, որին կարող են հետևել անհատապես և կիսվել հետաքրքրվողների հետ. «Փորձեք կարդալ Մորմոնի Գիրքը ոչ թե նրա համար, որ պարտավորված եք, այլ որ ցանկանում եք: Ձեզ համար բացահայտեք, որ այն ճշմարիտ է: Երբ կարդում եք յուրաքանչյուր էջը, հարցրեք. «Կարո՞ղ էր այս գիրքը որևէ մարդ գրել, թե այն մեզ է հասել ինչպես Ջոզեֆ Սմիթն է վկայել»: Կիրառեք ձեր սովորած ուսմունքները: Դրանք ձեզ ուժ կտան Սատանայի չարագործության դեմ: Հետևեք Մորոնիի խորհրդին: Անկեղծորեն խնդրեք Հայր Աստծուն՝ Հիսուս Քրիստոսի անունով, անկեղծ միտումով, թե արդյոք Մորմոնի Գրքի ուսմունքները ճշմարիտ են (տես Մորոնի 10.3–5): Խնդրեք անձնական հաստատում ստանալու ցանկությամբ, ոչնչի չկասկածելով.... Ես գիտեմ, որ դուք կարող եք հոգևոր հաստատում ստանալ, որ գիրքը ճշմարիտ է: Այդ ժամանակ դուք կիմանաք, որ Հիսուս Քրիստոսն ապրում է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե եղել է և կա, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ Եկեղեցին է (տես Մորմոնի Գրքի նախաբանը. հատկապես վերջին պարբերությունը): Դուք կհաստատեք, որ Փրկիչն առաջնորդում է Իր Եկեղեցին ապրող մարգարեի միջոցով: Այդ ճշմարտությունները հիմք կդառնան ձեր արդյունավետ կյանքի համար» (տես «Conference Report», հոկ. 2003, 45 կամ «Ensign», նոյ. 2003, 42–43):

«Փորձեք կարդալ Մորմոնի Գիրքը ոչ թե նրա համար, որ պարտավորված եք, այլ որ ցանկանում եք»:

Հիսուս Քրիստոսի ղեկավարության ներքո, Իր ծառաների միջոցով, վերականգնվեց քահանայությունը և Եկեղեցին:

■ Վերականգնումը ցրեց Ուրացության խավարը: Քահանայության իշխանությունը վերականգնվեց: Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը կրկին երկրի վրա կազմավորեց Իր Եկեղեցին, որպեսզի ավետարանի փրկարար սկզբունքներն ու արարողությունները ճշտորեն սպասավորվեն, մարդկանց օգնելու համար, որպեսզի գան Քրիստոսի մոտ:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Գործք 3.20–21
- Վարդապետություն և Ուխտեր 1.30
- Վարդապետություն և Ուխտեր 13.1
- Վարդապետություն և Ուխտեր 27.12–13
- Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.72
- Հավատո Հանգանակ 1.5–6

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին պատկառանքով է խոսել Մելքիսեդեկյան Քահանայության մասին, որը կրել և վերականգնել են Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը.

«Ոչ մի թագավոր, ոչ մի նախագահ, ոչ մի նահանգապետ, ոչ մի գործարար, ոչ էլ որևէ աշխարհիկ պաշտոնյա չունի նման իշխանություն.... Այդուհանդերձ, այն տրվել էր այդ խոնարհ տղամարդկանց, ովքեր քայլեցին Հիսուսի հետ որպես Նրա Առաքյալներ:

Այդ ընտրված առաքյալներից երեքը՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, հայտնվեցին Ջոզեֆին և Օլիվերին մի «ամայի» վայրում՝ Սեսքուեհանա գետի ափին: Նրանք իրենց ձեռքերը դրեցին նրանց գլխին և նրանց շնորհեցին սուրբ քահանայությունը:

Ճշգրիտ օրը մենք չգիտենք, սակայն փաստերը ցույց են տալիս, որ դա եղել է 1829 թվականի մայիսի վերջին կամ հունիսի սկզբին» (address given at the Priesthood Restoration 175th Anniversary, մայիս 16, 2004):

■ Երեց Դեյվիդ Բ. Հեյթը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, վկայել է. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հայտարարում է աշխարհին, որ այս եկեղեցին Քրիստոսի եկեղեցու վերականգնումն է: Վերականգնումն անհրաժեշտ էր, որովհետև մարգարեներն ու Առաքյալները, որոնք Տիրոջ նախնական Եկեղեցու հիմքն էին, սպանվեցին կամ այլ կերպ վերցվեցին: Այսօր Եկեղեցին, որպես անկյունաքար ունենալով Հիսուս Քրիստոսին, և լինելով մարգարեների և Առաքյալների հիմքի վրա՝ կառուցված է: Հետևաբար, սա բարեփոխում չէ, ոչ էլ վերափոխում կամ վերակազմավորում, ոչ էլ պարզապես մի աղանդ: Սա վերջին օրերին վերականգնված Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է» (տես «Conference Report», ապրիլ 1986, 7 կամ «Ensign», մայիս 1986, 7):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նույնպես վկայություն է բերել, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է.

«Սա Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին է.... Մենք վկայում ենք, որ երկինքները բացվել են, որ վարագույրը բացվել է, որ Աստված խոսել է, և որ Հիսուս Քրիստոսն իրեն հայտնել է, որին հետևել է աստվածային իշխանության շնորհումը:

Հիսուս Քրիստոսն այս աշխատանքի անկյունաքարն է, և այն կառուցված է «առաքյալների ու մարգարեների.... հիմքի վրա» (Եփեսացիս 2.20)» (տես «Conference Report», հոկ. 2002, 87 կամ «Ensign», նոյ. 2002, 81):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչով է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին տարբեր մյուս եկեղեցիներից:
- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը ձեզ ավելի շատ մոտեցրել Փրկչին:
- Ի՞նչպես կօգտագործեք Մորմոնի Գիրքը, որպեսզի օգնեք ուրիշներին վկայություն ձեռք բերել Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Վերականգնման մասին:
- Ի՞նչ եք զգում, երբ մտածում եք, որ Տերը երիտասարդ երեցների հետ կիսվել է քահանայության իշխանությամբ, որը նա շնորհել էր Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընտանեկան երեկոյի կամ ուրիշ հարմար առիթի դեպքում ուսուցանեք այս գլխում անցած սկզբունքներից մեկը կամ մի քանիսը: Օգտագործեք հիմնական սուրբ գրությունները և վկայություն բերեք այդ սկզբունքների ճշմարտության մասին (Լավ փորձառություն կլինի ուսուցանելուց առաջ դասի ծրագիրը կազմել):
- Մտապահեք հետևյալ սուրբ գրությունները. Գործք 2.37–38, 7.55–56, Եփեսացիս 2.19–20, 4.11–14:
- Մտապահեք Մորմոնի Գրքի տիտղոսաթերթի երկու պարբերությունը:
- Ջոզեֆ Սմիթ–Պատմությունից ընտրեք մի քանի առանցքային հատվածներ և մտապահեք դրանք:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Ավետարանի վերականգնում» (30–34 էջեր)
- «Ջոզեֆ Սմիթ» (167–168 էջեր)
- «Քահանայություն» (206–211 էջեր)
- «Ահարոնյան Քահանայություն» (7–8 էջեր)
- «Մելքիսեդեկյան Քահանայություն» (142–143 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 10

© 1988 Greg K. Olsen. Courtesy Mill Pond Press and Dr. Gerry Hooper. Պատճենահանել չի թույլատրվում

Հավատքը եվ դարձի գալը

ՆԱԽԱԲԱՆ

Արդյոք ավետարանի առաջնային սկզբունքը հավա՞տքն է: Ո՛չ: Հավատո Հանգանակի չորրորդ կետն ուսուցանում է, որ Ավետարանի առաջնային սկզբունքն է *հավատքն առ Հիսուս Քրիստոս:* Հավատքն առ Հիսուս Քրիստոս ներառում է հաստատուն համոզմունք, որ Նա Աստծո Որդին է և աշխարհի Փրկիչն ու Քավիչը: Մենք գիտակցում ենք, որ կարող ենք վերադառնալ ապրել մեր Երկնային Հոր հետ միայն ապավինելով Նրա Որդու շնորհին ու ողորմածությանը, մինչ հնազանդվում ենք Նրա պատվիրաններին: Երբ մենք հավատք ունենք առ Քրիստոս, մենք ընդունում ենք Նրա Քավությունը և Նրա ուսմունքները, որը մեզ առաջնորդում է մկրտության՝ «ջրով և Հոգով» (Հովհաննես 3.5):

Հավատքն առ Հիսուս Քրիստոս միսիոներներին դրդում է ջանասիրաբար աշխատել, հնազանդվել միսիայի կանոններին և ջանասիրաբար փնտրել՝ անկեղծ հետաքրքրվողներ գտնելով: Հավատքը հավաստիացում է բերում, որ նրանք կատարում են Տիրոջ աշխատանքը և ներկայացնում են Նրան, մինչ ուսուցանում են փրկության ուղերձը: Մինչ միսիոներները զարգացնում են անձնական հավատքը, նրանք ավելացնում են իրենց զորությունը ուսուցանելու և օգնելու հետաքրքրվողներին՝ դարձի գալ դեպի Տեր Հիսուս Քրիստոսը և Նրա վերականգնված ավետարանը:

Ծանոթություն. Այս գլուխը կենտրոնանում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի կարևորության վրա, թե ինչպես կարող ես զարգացնել քո հավատքը, հավատքի դերը դարձի գալու գործում և թե ինչպես է այն կապված ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարգև ստանալու հետ: Կհիշեք, որ ապաշխարությունն ավելի մանրամասնորեն քննարկվում էր ուսանողի այս ձեռնարկի 2-րդ գլխում:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս կենսական է հոգևոր զարգացման համար:
- Հավատքը կարող է աճել:
- Հավատքն առաջնորդում է դարձի գալուն:
- Դարձի գալը ներառում է ապաշխարություն, մկրտություն և Սուրբ Հոգու պարգև ստացում:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս կենսական է հոգևոր զարգացման համար:



© 1996 Del Parson. Պատճենահանել չի թույլատրվում

■Հավատքը, որը տանում է փրկության, պետք է կենտրոնացած լինի Տեր Հիսուս Քրիստոսի վրա: «Հավատք ունենալ առ Քրիստոս նշանակում է լիովին ապավինել Նրան՝ վստահելով Նրա անսահման զորությանը, բանականությանն ու սիրուն: Դա ներառում է Նրա ուսմունքներին հավատալը: Դա նշանակում է, որ չնայած դուք չեք հասկանում բոլոր բաները, Նա հասկանում է.... Նա միշտ պատրաստ

է օգնել ձեզ, երբ հիշեք Նրա խնդրանքը՝ ապավինել Իրեն յուրաքանչյուր մտքում, առանց կասկածելու, առանց վախենալու (ՎԱՈՒ 6.36)» («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 102):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 1 Նեփի 7.12
- 2 Նեփի 9.23
- 2 Նեփի 31.19
- Ալմա 37.33
- Մորոնի 7.26
- Հավատո Հանգանակ 1.4

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը բացատրել է, թե ինչու պետք է մեր հավատքը կենտրոնացնենք առ Տեր Հիսուս Քրիստոսը.

«Մեր կրոնի հիմնարար սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոսը: Ի՞նչու է անհրաժեշտ, որ մեր վստահությունը, հույսը և մեր ապավենը լինի մեկ եզակի անձնավորություն: Ինչո՞ւ է հավատքն առ նա այդքան անհրաժեշտ մտքի խաղաղության համար այս կյանքում և հույսի համար՝ հանդերձյալ աշխարհում....

«Հավատքն առ Հիսուս Քրիստոս նշանակում է ամբողջովին ապավինել Նրան»:

.... Միայն Հիսուս Քրիստոսն է եզակիորեն օժտված հաղորդելու այդ հույսը, այդ վստահությունը և այդ ուժը՝ հաղթահարելու աշխարհը և վեր բարձրանալու մեր մարդկային ձախողումներից....

Հավատքն առ նա ավելին է, քան պարզապես ընդունելը, որ նա ապրում է: Դա ավելին է, քան խոսքով դավանելը:

Հավատքն առ Հիսուս Քրիստոս նշանակում է ամբողջովին ապավինել Նրան: Որպես Աստված՝ Նա ունի անսահման զորություն, բանականություն և սեր: Չկա մարդկային խնդիր, որ Նա չկարողանա լուծել: Քանի որ Նա իջել է ամենից ցած (տես ՎԱՈՒ 122.8), Նա գիտի ինչպես ամենօրյա դժվարություններից վեր բարձրացնի մեզ» (տես «Conference Report», հոկ. 1983, 5, 7 կամ «Ensign», նոյ. 1983, 6, 8):

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, որ Հիսուս Քրիստոսի վրա կենտրոնացած հավատքը մեզ օգնում է վստահություն զարգացնել առ Աստված.

Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս համոզվածություն է և վստահություն, որ Աստված գիտի մեզ և սիրում է մեզ և կլսի մեր աղոթքներն ու կպատասխանի մեզ, մեզ համար լավագույն ձևով:

Փաստորեն, Աստված ավելին կանի, քան լավագույնը, որ մենք կարող ենք անել: Նա կանի լավագույնը մեզ համար և Երկնային Հոր բոլոր զավակների համար: Համոզվածությունը, որ Տերը գիտի ավելին, քան մենք գիտենք, և որ նա կպատասխանի մեր աղոթքներին այն ձևով, որը լավագույնն է մեզ համար և իր մյուս զավակների համար, առ Տեր Հիսուս Քրիստոսն ուղղված հավատքի կենսական տարրերից մեկն է....

Հավատքը պետք է ներառի վստահություն.... Եթե հավատք ունենք առ Տեր Հիսուս Քրիստոսը, պետք է վստահենք նրան: Մենք պետք է նրան բավականաչափ վստահենք, որպեսզի հոժար լինենք նրա կամքն ընդունել, իմանալով, որ նա գիտի, թե որն է լավագույնը մեզ համար....

.... Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելը միշտ ենթարկվելն է երկնային կարգին՝ Տիրոջ նախախնամությանը և կամքին և իմաստությանը և ժամանակին: Ահա թե ինչու մենք չենք կարող ճշմարիտ հավատք ունենալ առ Տերը, առանց ամբողջովին վստահելու Տիրոջ կամքին և Տիրոջ ժամանակին: Եթե մենք ունենանք այդպիսի հավատք և վստահություն Տիրոջ հանդեպ, մենք կունենանք ապահովություն մեր կյանքում....

Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոսը ձեզ պատրաստում է ամեն բանի, որ կյանքը կարող է մատուցել: Նման հավատքը ձեզ նախապատրաստում է գործ ունենալ կյանքի հնարավորությունների հետ՝ օգտվել նրանցից, որոնք տրվում են, և անցնել հուսահատության միջով նրանցից, որոնք կորսվել են» («Faith in the Lord Jesus Christ», *Ensign*, մայիս 1994, 99–100):

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե ինչպես կարող ենք իմանալ, երբ է մեր հավատքն Աստծո կամքի հետ ներդաշնակ.

«Ինչպե՞ս ենք իմանում, երբ է մեր հավատքը համապատասխանում Երկնային Հոր կամքին և Նա հավանություն է տալիս նրան, ինչ մենք փնտրում ենք: Մենք պետք է իմանանք Աստծո խոսքը: Պատճառներից մեկը, որ մեզ խորհուրդ ենք սուրբ գրությունների մեջ, մարդու հետ Երկնային Հոր գործերը հասկանալն է: Եթե մեր սրտի ցանկությունները սուրբ գրություններին հակառակ են, ապա չպետք է շարունակենք դրանք:

«Հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս ձեզ պատրաստում է ամեն բանի, որ կյանքը կարող է մատուցել»:

Հաջորդը՝ մենք պետք է ուշք դարձնենք վերջին օրերի մարգարեների խորհրդին, երբ նրանք ոգեշնչված հրահանգներ են տալիս:

Ի լրումն, մենք պետք է խորհենք և աղոթենք և փնտրենք Հոգու առաջնորդությունը: Եթե այդպես վարվենք, Տերը խոստացել է. «Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում» [ՎԿՈՒ 8.2]:

Միայն երբ մեր հավատքը մի գծի վրա է մեր Երկնային Հոր կամքի հետ, մենք զորություն կունենանք , կստանաք մեր փնտրած օրհնությունները» (տես «Conference Report», հոկ. 2002, 90 կամ «Ensign», նոյ. 2002, 84):

Հավատքը կարող է աճել:

■ Ինչպես է մեր հավատքն աճում: Հավատքը Աստծո պարգև է, որը պետք է ցանկանանք և փնտրենք: «The Bible Dictionary» բառարանն ուսուցանում է, որ «չնայած որ հավատքը պարգև է, այն պետք է փնտրել և կրթել, մինչև որ փոքր սերմից աճի հասնի մեծ ծառի» («Faith», 670): Երեց Նիլ Ա. Մաքսվելը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, բացատրել է. «Տերը պահանջում է գիտակցաբար սնում, քանի որ այն հաստատուն չէ. այն կա՛մ աճում է, կա՛մ նվազում» (*Lord, Increase Our Faith* [1994], 1):

«Մեր հավատքն աճեցնելը պահանջում է մեր ողջ սրտով Տիրոջը վստահել»:

Փրկչի Առաքյալները հասկանում էին ավելի մեծ հավատք ունենալու կարիքը: Նրանք աղերսում էին. «Տե՛ր, զորացրու մեր հավատքը (Ղուկաս 17.5): Հաջողակ միսիոներական աշխատանքի համար պետք է հասկանալ, թե ինչպես է աճում հավատքը:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հռովմայեցիս 10.17
- Հակոբ 4.6
- Հելաման 3.35

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:



■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը բացատրել է, թե ինչ կարող ենք անել, որպեսզի մեր հավատքն աճի. «Եթե մենք ուսումնասիրենք, խորհենք և աղոթենք, մեր հավատքը կաճի Աստծո այն բաների հանդեպ, որոնք տեսանելի չեն, բայց ճշմարիտ են: Անգամ եթե մենք գործադրենք «հավատքի մի մասնիկ.... նույնիսկ եթե [մենք] չենք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ [Ալմա 32.27, տես նաև 28–43 հատվածները], սնելու ցանկությամբ հավատքի փոքր մասնիկը կարող է աճել և դառնալ վկայության դալար, ամուր, պտղաբեր մի ծառ» (տես «Conference Report», հոկ. 1998, 32 կամ «Ensign», նոյ. 1998, 26):

■ Լինելով Յոթանասունի անդամ, Երեց Ջոն Ք. Կարմակն առաջարկել է մեր հավատքն աճեցնելու ձևեր.

«Մեր հավատքն աճեցնելը պահանջում է մեր ողջ սրտով Տիրոջը վստահել: Մենք չենք կարող ասել. «Մենք արել ենք ամեն բան և արժանի ենք հանգստանալու»: Ոչ էլ աճը գալիս է սահմանումների, տրամաբանության կամ իմաստասիրության միջոցով: Փոխարենը, մենք պետք է.

- Ճիշտը գործենք և ծառայենք Տիրոջը, որովհետև ճանաչում, վստահում և սիրում ենք Նրան մեր ողջ հոգով:
- Չմտածենք, որ արժանի ենք պարգևի կամ շնորհակալության մեր գործերի համար, չնայած որ պարգևն անպայման կհետևի:
- Խոնարհաբար խնդրենք, փնտրենք և թակենք:
- Ոչինչ չպահանջենք Տիրոջից, որովհետև մենք միշտ պարտական ենք Նրան:
- Նրան թողնենք վերջնական որոշումը բոլոր բաներում, ունենալով հետևյալ մոտեցումը. «Ոչ թե իմ կամքը, այլ քո կամքը թող կատարվի»:
- Պատրաստ լինենք զոհաբերելու, անգամ կյանքը, մեր ողջ կյանքի ընթացում:

«Որպես Տիրոջ Եկեղեցու անդամներ՝ մենք կարող ենք հավատք աճեցնել, եթե ցանկանանք, անելով ավետարանի նվազագույն պահանջներից ավելին և լիարժեք վստահություն զարգացնելով Տիրոջ հանդեպ» («Lord, Increase Our Faith», *Ensign*, մարտ 2002, 57):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, պատմել է ձևեր, որով կարող ենք հավատք աճեցնել, որպեսզի պաշտպանիչ ուժ ձեռք բերենք մեր կյանքում.

«Հավատքը պատրանք չէ, ոչ էլ մոգություն, այլ հավերժական սկզբունքներով արմատավորված զորություն: Դուք նրանցի՞ց եք, որը փորձել է հավատք գործադրել և ոչ մի օգուտ չի զգացել: Եթե այո, ապա շատ հավանա-

կան է, որ դուք չեք հասկացել և հետևել այն սկզբունքներին, որոնց վրա հիմնված է հավատքը....

Դուք կվայելեք հավատքի պտուղները, երբ հետևեք այն սկզբունքներին, որոնք Աստված հաստատել է դրա օգտագործման համար: Ահա այդ սկզբունքներից մի քանիսը.

- Ապավինեք Աստծուն և Նրա կարիքի դեպքում օգնություն տրամադրելու Նրա պատրաստակամությանը, անկախ նրանից, թե ինչ դժվար իրավիճակում եք հայտնվել:
- Հնազանդվեք Նրա պատվիրաններին և ապրեք, որպեսզի ցույց տաք, որ Նա կարող է վստահել ձեզ:
- Զգայուն եղեք Հոգու խաղաղ հուշումներին:
- Քաջությամբ հետևեք այդ հուշումներին:
- Համբերատար և ըմբռնող եղեք, երբ Աստված ձեզ թույլ է տալիս չարչարվել, որպեսզի աճեք և պատասխանները գալիս են մաս առ մաս երկար ժամանակի ընթացքում....

Կարող եք սովորել հավատքն ավելի արդյունավետ օգտագործել՝ կիրառելով Մորոնիի ուսուցանած սկզբունքները. «Հավատքը բաներ են, որոնց համար հույս ունենք և չենք տեսնում. ուստի, մի վիճեք, եթե դուք չեք տեսնում, քանզի նախքան *ձեր հավատքի փորձությունը*, դուք վկայություն չեք ստանում» [Եթեր 12.6, շղագիրն ավելացված է]: Այդպիսով, ամեն անգամ, երբ *փորձում եք ձեր հավատքը*, այսինքն՝ արժանի ձևով գործում եք ըստ հուշումների, դուք կստանաք Հոգու հաստատող վկայությունը: Այդ զգացումները կամրացնեն ձեր հավատքը: Երբ կրկնեք այդ օրինակը, ձեր հավատքը կամրանա....

Անգամ երբ գործադրեք ձեր ամենահզոր հավատքը, Աստված միշտ չի հատուցի ձեզ անմիջապես՝ ըստ ձեր ցանկության: Ավելի շուտ նա կանի այն, ինչը ձեզ համար ամենալավն է իր հավերժական ծրագրի մեջ: Նա ձեզ սիրում է այնպիսի խորությամբ ու ամբողջությամբ, որ դուք չեք կարող ըմբռնել ձեր մահկանացու վիճակում: Իսկապես, եթե դուք կարողանաք իմանալ Նրա ամբողջ ծրագիրը, դուք երբեք չեք խնդրի հակառակ նրա կամքին, նույնիսկ եթե ձեր զգացումները փորձում են ձեզ անել այդպես: Անկեղծ հավատքը տալիս է մեր Երկնային Հոր ցանկությունը ընդունելու ըմբռնում և հզորություն, երբ նրա կամքը տարբեր է մեր կամքից: Մենք կարող ենք ընդունել Նրա կամքը խաղաղությամբ և համոզվածությամբ, վստահությամբ որ Նրա անսահման իմաստությունը գերազանցում է Նրա ծրագիրը հասկանալու մեր անձնական ունակությանը, քանի որ այն բացահայտվում է մաս առ մաս» (տես «Conference Report», ապրիլ 2003, 78–79 կամ «Ensign», մայիս 2003, 76–77):

■ Առաջին Նախագահության խորհրդական՝ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը, առաջարկել է հավատքը պահպանելու ուղիներ. «Հավատքը պահպանելու համար, յուրաքանչյուրս պետք է լինի խոնարհ և կարեկից, բարի և շռայլ աղքատների ու կարիքավորների հանդեպ: Բացի այդ, հավատքը պահպանվում է հոգևորության ամենօրյա բաժնով, որը գալիս է մեզ, երբ ծնկի ենք իջնում աղոթքում: Այն սկսում է մեզանից՝ անհատներից, և շարունակվում է ընտանիքներով, որոնք պետք է ամրանան արդարության մեջ: Ազնվությունը, պարկեշտությունը, շիտակությունը և բարոյականությունը,– բոլորը մեր հավատքի անհրաժեշտ բաղկացուցիչ մասերն են և սրբավայր կդառնան մեր հոգիների համար» (տես «Conference Report», ապրիլ 2000, 22 կամ «Ensign», մայիս 2000, 18):

Հավատքն առաջնորդում է դարձի գալուն:

■ Միսիոներները պետք է հասկանան ոչ միայն իրենց հավատքն աճեցնելու ձևերը, այլ պետք է սովորեն օգնել ամրապնդել նրանց հավատքը, ում իրենք ուսուցանում են: Երբ ուսուցանվում է վերականգնված ավետարանը, հետաքրքրվողի սրտում հույսի սերմ է սերմանվում, և սկսում է հավատք զարգանալ: Այդ հավատքը կարող է առաջնորդել գիտակից զգացման, որը հաստատում է ուղերձի ճշմարտությունը: Երբ գալիս է այդ զգացումը, հավատքն աճում է և առաջացնում է ցանկություն՝ ընդունել ուղերձը և ապրել ըստ ավետարանի չափանիշների: Վկայություն ստանալը և դարձի գալը հավատքի աճելու արդյունքն է:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- 2 Նեփի 31.19–20
- Ալմա 32.7–8, 28–29, 41

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ռոբերտ Դ. Հելյզը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, որ հավատքն այն բերրի հողի մի մասն է, որը նպաստում է դարձի գալուն.

«Դարձի գալու առաջին սերմերն սկսում են Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին իրազեկությունից և ցանկությունից՝ իմանալու ճշմարտությունը Նրա վերականգնված Եկեղեցու մասին: «Թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեզանում» (Ալմա 32.27): Ճշմարտությունն իմանալու ցանկությունը նման է սերմին, որն աճում է հավատքի, համբերության, ջանասիրության և երկայնամտության հողում (տես Ալմա 32.27–41)....

© 1987 Robert T. Barrett. Պատճենահանվել չի թույլատրվում

.... Դարձի գալու ժամանակ մենք ապաշխարում ենք, որը բերում է խոնարհություն և կոտրված ու փշրված սիրտ, նախապատրաստելով մեզ մկրտության, մեղքերի թողության և Սուրբ Հոգու ստացման: Դրանից հետո, ժամանակի ընթացքում, և մեր հավատարմության միջոցով, մենք հաղթահարում ենք փորձություններն ու ձախողությունները և համբերում ենք մինչև վերջ» (տես «Conference Report», ապրիլ 1997, 111 կամ «Ensign», մայիս 1997, 80):

■ Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին, որն Առաջին Նախագահության խորհրդական էր, շեշտել է, որ հավատքը դարձի գալու անհրաժեշտ բաղադրամասն է. «Դարձի գալը նշանակում է մի համոզմունքից փոխվել դեպի մյուսը: Դարձի գալը և՛ հոգևոր, և՛ բարոյական փոփոխություն է: *Դարձի գալը* չի ենթադրում պարզապես մտավոր ընդունել Հիսուսին և նրա ուսմունքները, այլ նաև եռանդուն հավատք ունենալ նրա և նրա ավետարանի հանդեպ՝ հավատք, որը կերպարանափոխում է, իրական փոփոխություն կյանքի իմաստի մարդու ըմբռնման մեջ, և նվիրվածություն Աստծուն՝ հետաքրքրությամբ, մտածողությամբ և վարքով: Նրանում, ով իրապես ամբողջովին դարձի է եկել, Հիսուս Քրիստոսի ավետարանին հակառակ ցանկությունները մահանում են: Եվ, հետևաբար, փոխարինվում են Աստծո հանդեպ սիրով, հաստատուն և կառավարվող վճռականությամբ՝ պահելու նրա պատվիրանները» (տես «Conference Report», Guatemala Area Conference 1977, 8):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նշել է, որ դարձի գալը սկսում է հավատքի փոքր քայլերից. «Դարձի գալու ժամանակ Եկեղեցով հետաքրքրվողը շատ չի լսում: Նա հնարավոր է շատ չկարդա: Նա չի ըմբռնում՝ չի կարող ըմբռնել այդ ամենի ողջ սքանչելիքը: Սակայն եթե նա լուրջ է իր փնտրումներում, եթե նա պատրաստակամ է ծնկի իջնել և աղոթել դրա մասին, Հոգին դիպչում է նրա սրտին, հավանաբար, շատ թեթևակի: Այն նրան ցույց է տալիս ճիշտ ուղղությունը: Նա տեսնում է մի քիչ, ինչ նախկինում երբեք չէր տեսել: Եվ հավատքով, գիտակից, թե անգիտակից, նա մի քանի զգույշ քայլեր է անում: Այնուհետև, մեկ այլ ավելի պայծառ տեսարան է բացվում նրա առաջ» (տես «Conference Report», ապրիլ 2002, 84 կամ «Ensign», մայիս 2002, 72):

■ Նախագահ Հինքլին խոսել է նաև այն մասին, թե ինչպես կարող է անդամների հավատքը սնել հետաքրքրվողների բողբոջող հավատքը.

> *«Դարձի գալը և՛ հոգևոր, և՛ բարոյական փոփոխություն է»:*

«Հետաքրքրվողի հավատքը նման է բոցավառ կրակի մեջ գցված կանաչ ճյուղին. Բոցերից տաքանալով՝ այն չորանում է և սկսում է այրվել: Սակայն եթե նրան կրակից դուրս հանես, այն չի կարող ինքնուրույն այրվել: Նրա առկայծող բոցերը հանգչում են: Սակայն եթե մնում է կրակի մեջ, այն աստիճանաբար, սկսում է այրվել վառ կրակով: Շուտով այն բոցավառվող կրակի մասն է և կբոցավառի ուրիշ կանաչ ճյուղերի:

Եվ այդպես է գործում նաև հավատքի այս մեծ աշխատանքը, իմ եղբայրներ և քույրեր, բարձրացնելով մարդկանց աշխարհով մեկ, ավելի մեծ հասկացողություն բերելով Տիրոջ ճանապարհների վերաբերյալ և ավելի մեծ երջանկություն՝ հետևելով Նրա օրինակին» (տես «Conference Report», ապրիլ 2002, 86 կամ «Ensign», մայիս 2002, 74):

Դարձի գալը ներառում է ապաշխարություն, մկրտություն և Սուրբ Հոգու պարգևի ստացում:

■ Դարձի գալու ընթացքում հավատքը և ապաշխարությունը հետաքրքրվողներին նախապատրաստում են մկրտության և հաստատման արարողություններին: Մկրտությունը և ձեռնադրմամբ Սուրբ Հոգու ստացումն անհրաժեշտ են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ դառնալու համար:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մատթեոս 3.16
- Հովհաննես 3.5
- 2 Նեփի 31.13, 17
- Հավատո Հանգանակ 1.3–4

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Դալին Հ. Օքսն ուսուցանել է, որ դարձի գալը պահանջում է ամբողջական պատրաստակամություն՝ թողնելու ամեն մի սովորությունը, որը համահունչ չէ վերականգնված ավետարանի ուսմունքներին. «Հիսուս Քրիստոսի ավետարանը փոխվելու մարտահրավեր է մեզ համար: «Ապաշխարեք» թեման ամենահաճախ կրկնվող ուղերձն է, իսկ ապաշխարել նշանակում է թողնել մեր անձնական, ընտանեկան, էմոցիոնալ և ազգային բոլոր այն սովորությունները, որոնք համահունչ չեն Աստծո

պատվիրանների հետ: Ավետարանի նպատակը հասարակ մարդկանցից սելեստիալ քաղաքացիներ դարձնելն է, իսկ դա պահանջում է փոփոխություն» (տես «Conference Report», հոկ. 2003, 39 կամ «Ensign», նոյ. 2003, 37):

«Հիսուս Քրիստոսի ավետարանը փոխվելու մարտահրավեր է մեզ համար»:

■ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է հետևյալ սկզբունքը մկրտության արարողության վերաբերյալ.

Մի մարդ մկրտեք, թե մի պարկ ավազ, տարբերություն չի լինի, եթե դա չարվի մեղքերի թողության և Սուրբ Հոգին ստանալու համար: Ջրով մկրտությունը միայն մկրտության կեսն է, և ոչնչով օգտակար չէ առանց մյուս կեսի, այսինքն՝ Սուրբ Հոգով մկրտության....

.... Ջրով մկրտությունը, առանց դրան հետևող կրակով և Սուրբ Հոգով մկրտության, օգուտ չունի. դրանք անհրաժեշտորեն և անբաժանելիորեն կապված են» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 314, 360):

■ Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, ուսուցանել է, որ միսիոներները պետք է հասկանան, որ մկրտությունն ավելին է, քան ջրով արարողություն.

«Երբ ուսուցանում եք հետաքրքրվողներին և պատրաստում եք նրանց ջրով մկրտության, դուք պետք է նաև մտածեք Սուրբ Հոգու պարգևի՝ կրակով մկրտության մասին: Մտածեք դրանց մասին որպես մեկ նախադասություն: Նախ գալիս է ջրով մկրտությունը, այնուհետև, կրակով մկրտությունը:

«Ինչ-որ մեկը կարող է ձեզ հարցնել. «Ինչպե՞ս են ընթանում գործերը» կամ «Դուք ուսուցանո՞ւմ եք ինչ-որ մեկի»:

«Դուք ինքնաբերաբար պատասխանում եք. «Այո՛, մենք մի ընտանիքի պատրաստում ենք մկրտության ու հաստատման՝ *Սուրբ Հոգու պարգևի համար*»: Ես կրկնում եմ՝ *մկրտվելու* և *Սուրբ Հոգու պարգև ստանալու,* կապեք այդ երկուսը մեկմեկու» (*The Gift of the Holy Ghost: What Every Missionary Should Know—and Every Member As Well* [ելույթ նոր միսիայի նախագահների սեմինարին, հունիս 24, 2003], 2):

© 2001 Derek Israelsen. Դասընթացների թույլատրելի

■ Երեց Հենրի Բ. Այրինգը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խոսելով նրանց մասին, ովքեր չեն ստացել Սուրբ Հոգու պարգևը, բացատրել է. «Սուրբ Հոգին կարող է լինել նրանց հաստատուն ընկերը միայն եթե նրանք հավատարիմ են եղել և միայն եթե նրանք ստացել են պատշաճ իշխանությամբ մկրտության և ձեռնադրման արարողությունները: Սակայն անգամ մինչև մկրտությունը Սուրբ Հոգին ցանկացած երեխայի կամ չափահասի սրտին կարող է վկայել սրբազան ճշմարտությունների մասին: Նրանք պետք է գործեն ըստ այդ վկայության, որպեսզի պահպանեն այն, սակայն այն նրանց կառաջնորդի ընդունելու և պահելու ուխտերը, որոնք ժամանակին նրանց կբերեն Սուրբ Հոգու ընկերակցությունը» (տես «Conference Report», ապրիլ 1996, 84 կամ «Ensign», մայիս 1996, 62):

■ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը բացատրել է, որ ճշմարտության վկայությունը կարող է գալ մարդուն նախքան մկրտությունը, սակայն առանց Սուրբ Հոգու պարգևի, Հոգու սպասավորությունները սահմանափակ են.

«Եկեղեցուց դուրս շատերն են հայտնություն ստացել Սուրբ Հոգու զորությամբ, որը նրանց համոզում է ավետարանի ճշմարտության մասին: Այդ զորության միջոցով անկեղծ հետաքրքրվողները նախքան մկրտությունը վկայություն են ստանում Մորմոնի Գրքի և ավետարանի սկզբունքների մասին: Այդուամենայնիվ, առանց Սուրբ Հոգու պարգև ստանալու, Սուրբ Հոգու սպասավորությունը սահմանափակ կլինի:

Նրանք, ովքեր մկրտությունից և հաստատումից հետո ստանում են Սուրբ Հոգու պարգևը, կարող են ավելի շատ գիտելիք ու վկայություն ստանալ: Սա այն պատճառով է, որ Սուրբ Հոգու պարգևը «մնայուն վկա և ավելի մեծ օժտում է, քան Սուրբ Հոգու սովորական դրսևորումը» [in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:4]: Այն ավելի մեծ օժտում է, քանի որ Սուրբ Հոգին կարող է գործել որպես «սրբող անձնավորություն՝ մարդուն մաքրելու և բոլոր մեղքերից սրբագործելու համար» [Bible Dictionary, «Holy Ghost», 704]» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 73 կամ «Ensign», մայիս 2001, 58):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Խորհեք Հավատո Հանգանակի 4-րդ կետի մասին: Ինչ եք կարծում, ինչո՞ւ են սկզբունքներն ու արարողությունները թվարկված հենց այդ կարգով: Ինչ եք կարծում, ինչո՞ւ է հավատքն առ Հիսուս Քրիստոս առաջինը նշված:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ձեր հավատքն առ Հիսուս Քրիստոս աճի:
- Ի՞նչ է նշանակում հավատք *գործադրել* առ Հիսուս Քրիստոս:

- Եթե դուք աշխատեիք հետաքրքրվողների հետ, որոնք ասում են, որ կցանկանային , հավատալ , Առաջին Տեսիլքի պատմությանը և Մորմոնի Գրքին, ի՞նչ խորհուրդ կտայիք, որ նրանք անեն: Ինչո՞ւ կտայիք այդ խորհուրդը:
- Ինչո՞ւ է ջրով մկրտությունը միայն «մկրտության կեսը»:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մտապահեք Եբրայեցիս 11.1, Ալմա 32.21 և Եթեր 12.6 սուրբ գրությունները:
- Վերընթերցեք Երեց Ջոն Ք. Կարմակի (էջ 00 [83]) և Երեց Ռիչարդ Ջ. Սքոթի (00 [83–84] էջեր) հայտարարությունները: Մտածեք, թե ինչպես է ձեր վերաբերմունքն ու կարողությունները համընկնում նրանց առաջարկած կետերին: Ընտրեք մեկ-երկու կետ, որի ուղղությամբ կցանկանայիք կատարելագործվել և ծրագիր կազմեք, որը ձեզ կօգնի առաջադիմել: Աղոթքում կիսվեք այդ ծրագրով ձեր Երկնային Հոր հետ և օգնություն խնդրեք աճեցնել ձեր հավատքը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Մկրտություն» (147–153 էջեր)
- «Դարձ» (50–53 էջեր)
- «Հավատք» (102–104 էջեր)
- «Սուրբ Հոգի» (178–180 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ 11

Ֆիզիկական և էմոցիոնալ նախապատրաստություն

ՆԱԽԱԲԱՆ

Ապագա միսիոներները պետք է իրենց պատրաստեն միսիոներական աշխատանքի դժվարություններին: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին շեշտել է լիաժամկետ միսիայում ծառայելիս մտավոր և ֆիզիկական լավ առողջություն ունենալու կարևորությունը.

«Այս աշխատանքը խստապահանջ է: Այն ուժ և կենսունակություն է պահանջում: Այն պահանջում է մտավոր արթնություն և ունակություն....

.... Միսիոներական աշխատանքը Եկեղեցում հաստատվելու պարտադիր ծես չէ: Այն Եկեղեցու Նախագահի կողմից ստացվող կոչում է նրանց համար, ովքեր արժանի և ունակ են այն իրականացնելու....

Ֆիզիկական և մտավոր լավ առողջությունը կենսական է....

Կան ծնողներ, որոնք մտածում են. «Եթե միայն կարողանանք Ջոննիին օգնեք որ գնա միսիա, Տերը նրան կօրհնի առողջությամբ»:

Փորձը ցույց է տալիս, որ դա այդպես չէ: Փոխարենը, ֆիզիկական կամ մտավոր ինչպիսի թերություն որ միսիոներն ունի միսիան սկսելիս, աշխատանքի ճնշման տակ միայն ծանրանում է:

Մենք պետք է պարզ նայենք փաստերին: Մենք միլիոնավոր դոլարներ ենք ծախսում բժշկական խնամքի համար և անհամար ժամեր՝ խնդիրներ ունեցողների հետ, որպեսզի օգնենք նրանց աշխատանքը կատարելիս....

.... Կան ուրիշ ոլորտներ, որտեղ առողջական խնդիրներ ունեցողները կարող են ծառայել և բավարարող փորձառություն ունենալ: Եվ Տերը նրանց կօրհնի իրենց կարողության սահմաններում ծառայելիս....

Թույլ տվեք ինձ շեշտել, որ մենք ունենք միսիոներների կարիք, սակայն նրանք պետք է ունակ լինեն աշխատանքը կատարել....

> *«Ֆիզիկական և մտավոր լավ առողջությունը կենսական է»:*

Խանդավառություն և ցանկություն պետք է լինի աշխարհի համար որպես Տիրոջ դեսպաններ ծառայելիս: Եվ պետք է լինի նաև առողջություն և ուժ՝ թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, քանի որ աշխատանքը պահանջկոտ է, ժամերը երկար և ճնշումը կարող է ծանր լինել» («Missionary Service», *First Worldwide Leadership Training Meeting,* Jan. 2003, 17–18):

Միսիոներական աշխատանքի խստապահանջ բնույթը հասկանալը և պատշաճ ֆիզիկական ու էմոցիոնալ նախապատրաստությունը կբարձրացնի կյանքի նոր պայմաններին հարմարվելու և Տիրոջ աշխատանքում հաջողակ լինելու ապագա միսիոների կարողությունը:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Ապագա միսիոներները պետք է պատրաստ լինեն լիաժամկետ միսիայի ֆիզիկական և մտավոր պահանջներին:
- Ֆիզիկական կամ էմոցիոնալ վիճակի պատճառով քահանայության ղեկավարների կողմից ազատված ապագա միսիոներների համար կան լիաժամկետ միսիայի այլընտրանքային այլ պատվավոր ծառայություններ:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապագա միսիոներները պետք է պատրաստ լինեն լիաժամկետ միսիայի ֆիզիկական և մտավոր պահանջներին:

Պատկնանումն չի թույլատրվում

■ Միսիոներական աշխատանքը դժվար է և խստապահանջ: Ապագա միսիոներներից պահանջվում է արժանի լինել միսիայում ծառայելու համար: Դա ներառում է ոչ միայն նրանց հոգևորության աստիճանը, այլ նրանց ֆիզիկական, մտավոր և էմոցիոնալ պատրաստվածությունը: Եթե միսիոները ֆիզիկական կամ մտավոր առողջության խնդիր ունի, նա անբարենպաստ վիճակում կլինի Աստծո արքայությունը կառուցելիս: Մտավոր և էմոցիոնալ առողջությունը նույնպես վճռական գործոն է միսիոների հաջողության համար, որպեսզի ծառայի Տիրոջը «ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 4.2): Նախքան միսիայի կանչվելը սնվելու, ֆիզիկական վարժությունների, քնելու և անձնական հիգիենայի լավ սովորություններ զարգացնելը կմեծացնի միսիոներական ծառայության պայմաններին հաջողությամբ հարմարվելու հավանականությունը:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 4.2
- Վարդապետություն և Ուխտեր 88.124

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին քահանայության ղեկավարներին միսիոներների ֆիզիկական և էմոցիոնալ պատրաստվածությունը որոշելու համար, տվել է հետևյալ խորհուրդը.

«Եղբայրնե՛ր, մենք ձեզ խնդրում ենք ավելի մանրակրկիտ զննել նրանց, ում երաշխավորում եք: Թող որ ձեր մարդիկ իմանան, թե նրանցից ինչ է պահանջվելու միսիայի ծառայության համար: Թող որ նրանց ծնողներն իմանան, թե ինչ է պահանջվելու նրանց որդիներից ու դուստրերից....

Գիտակցում եմ, որ մեր դիրքորոշումը անտրամաբանական և կոպիտ կթվա բազմաթիվ ծնողների համար, ովքեր կխնդրեն, որպեսզի իրենց որդիներին ու դուստրերին միսիայում ծառայելու հնարավորություն տրվի: Սակայն, եղբայրնե՛ր, մենք զգում ենք, որ պետք է ուշադիր վերանայենք միսիոներական աշխատանքի բուն նպատակը և այդ նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ որոշակի պատրաստվածության կարիքը: Հուսով եմ, որ բոլոր մտահոգ անդամները կգիտակցեն, որ ավելի լավ է չգնալ, քան գնալ և կարճ ժամանակ անց հուսախաբ վերադառնալ՝ անհաջողության զգացում ապրելով: Եղբայրնե՛ր, թող Տերն օրհնի ձեզ ոգեշնչմամբ, առաջնորդությամբ և հրահանգմամբ, սիրով նրանց հանդեպ, ում համար պատասխանատու եք և քաջությամբ, որ հաստատուն լինեք նրանում, ինչ ճիշտ է և ողջամիտ....

Թույլ տվեք ինձ շեշտել, որ մենք ունենք միսիոներների կարիք, սակայն նրանք պետք է ունակ լինեն աշխատանքը կատարելու....

Խանդավառություն և ցանկություն պետք է լինի աշխարհի համար որպես Տիրոջ դեսպաններ ծառայելիս: Եվ պետք է լինի նաև առողջություն և ուժ՝ թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր, քանի որ աշխատանքը պահանջկոտ է, ժամերը երկար և ճնշումը կարող է ծանր լինել:

Մենք կատարելություն չենք սպասում: Տիրոջ գործը կատարվում է սովորական մարդկանց միջոցով, որոնք աշխատում են արտասովոր ձևով» (*First Worldwide Leadership Training Meeting*, Jan. 2003, 18):

■ Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, շեշտել է մեր մարմնի մասին ամեն հոգ տանելու կարևորությունը. «Բազմաթիվ մարդիկ.... դժվարությամբ են ժամանակ գտնում ֆիզիկական վարժությունների և բավականաչափ հանգստանալու համար: Մենք պետք է մեր ամենօրյա օրացույցում ժամանակ հատկացնենք նման միջոցառումների համար, եթե ցանկանում ենք առողջ և հավասարակշռված կյանք վայելել: Ֆիզիկական բարեուսությունը բարձրացնում է մեր արժանապատվությունն ու ինքնահարգանքը» (տես «Conference Report», ապրիլ 1987, 17 կամ «Ensign», մայիս 1987, 15):

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նախկին վիրաբույժ սրտաբանը, խոսել է այն մասին, թե ինչպես են ֆիզիկական վարժություններն օգնում մտավոր առողջությանը. «Պատշաճ ֆիզիկական վարժություններն օգնում են պայքարել ընկճվածության դեմ» (տես «Conference Report», հոկ. 1988, 8 կամ «Ensign», նոյ. 1988, 8):

■ Միսիոներները չպետք է սկսեն իրենց միսիան վատ սովորություններով, որոնք հավանական է վերածվեն լուրջ խնդիրների: Ամեն մարդ կարող է փոխվել և կատարելագործվել: Ապագա միսիոներները, որոնք սննդակարգի , հիգիենայի և ֆիզիկական վարժությունների լավ սովորություն չունեն, կարող են անմիջապես սկսել փոխել իրենց վարքը: Ինքնակառավարում կարելի է սովորել ցանկացած տարիքում, սակայն գործնթացը միշտ չէ, որ հեշտ է: Եթե խնդիրը լուծեք նախքան միսիոներական ծառայությունը սկսելը, դուք ձեզ կազատեք մեծ վշտից ու շատ ձախողումներից:

Ապագա միսիոներները պետք է իրենց կյանքը գնահատեն հետևյալ ոլորտներում և փոփոխություններ կատարեն, որոնք նրանց ֆիզիկական և էմոցիոնալ կերպով կնախապատրաստեն ծառայելու Տիրոջը.

Սնունդ. Միսիոներները պետք է Տիրոջ առողջության օրենքին՝ Իմաստության Խոսքին հետևելու լավ օրինակ լինեն (տես ՎԵՈՒ 89): Ի լրումն վնասակար նյութերից խուսափելուն՝ «Տերը հայտնել է, որ հետևյալ ուտելիքները լավ են մեր մարմնի համար.

«Բոլոր երիտասարդ տղաներն ու աղջիկները պետք է կանոնավոր ֆիզիկական վարժություններ կատարեն»:

- Բանջարեղեն և մրգեր, որոնք պետք է օգտագործվեն խելամտությամբ և երախտագիտությամբ (տես ՎԵՈՒ 89.10–11):
- Կենդանիների և օդի թռչունների միսը, որը պետք է օգտագործվի խնայողաբար: (ՎԵՈՒ 89.12–13)
- Հատիկավորներից, ինչպիսիք են՝ ցորենը, բրինձը և վարսակը, որոնք «կյանքի նեցուկն են»: (ՎԵՈՒ 89. 14–17) («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 75):

Քանի որ միսիոներները պատասխանատվություն ունեն հաճախ պատրաստել իրենց անձնական ուտելիքը, ապագա միսիոներները կարող են սկսել այժմ իրենց համար ճաշ պատրաստել, սովորելով պատշաճ օրապարենի ընտրություն կատարել և ապա, միսիայի ընթացքում հետևողական լինել սնվելու կերակրաժամերին: Շարունակ բարձր կալորիականության ճեպասննդի, գազավորված ըմպելիքների և բարձր շաքարայնությամբ խմորեղենի օգտագործումը չպետք է կանոնավոր կերակրառեժիմ լինի: Փոխարենը, հիմնական սննդատեսակները ,հնարավորին չափ պետք է օգտագործել հավասարակշռված : Օտար երկրներում ծառայող միսիոներները, հնարավոր է, կարիք ունենան հարմարվելու, օգտագործելով հնարավորինս սննդարար և առողջարար ուտելիք:

Կանոնավոր ֆիզիկական վարժություններ. Բոլոր երիտասարդ տղաներն ու աղջիկները պետք է կանոնավոր ֆիզիկական վարժություններ կատարեն: Անկախ մարդու տարիքից և կարողությունից, բոլորին անհրաժեշտ ֆիզիկական ակտիվության երեք ծրագրերն են՝ շարժունակության, ճկունության պահպանման և սրտանոթային համակարգի (աէրոբիկա կամ թթվածին պահանջող) վարժությունները.

1. Շարժունակության – Այս վարժությունները ձգում են մկանները, ջիլերը և հյուսվածքները և պետք է կատարվեն ամեն օր:
2. Ճկունության պահպանման – Մկանային յուրաքանչյուր համակարգ պետք է առանձին վարժեցնել:
3. Սրտանոթային համակարգի – Այս վարժություններն ամրացնում են սիրտը, բարելավում են ընդհանուր դիմադրողականությունը և բարձրացնում են տրամադրությունը: Քայլելը և հեծանվավազքը լավ վարժություններ են միսիոներական ծառայությանը նախապատրաստվելու համար:

Պատշաճ հիգիենա. Պատշաճ հիգիենան կարող է կանխել բազմաթիվ վարակիչ հիվանդություններ: Դրանում ներառվում է ձեռքերը կանոնավոր լվանալը (հավանաբար, լավ հիգիենայի և շատ հիվանդությունների կանխարգելման ամենակարևոր միջոցը) և հաճախակի լողանալն ու լոգանք ընդունելը:

Ատամների խնամքը. Ատամները պետք է խոզանակով և թելով մաքրել ամեն օր: Ապագա միսիոներները, որոնք կանոնավոր չեն այցելում ատամնաբույժի, պետք է որքան հնարավոր է վաղ սկսեն ատամների ստուգումը, որպեսզի նախքան միսիոներական ծառայություն սկսելը բավականաչափ ժամանակ ունենան ատամները բուժելու համար: Ապագա միսիոներները պետք է տեղեկություններ հայթայթեն և հրահանգներ ձեռք բերեն ատամների կանխարգելիչ խնամքի վերաբերյալ:

Բնակարանային պայմանները. Միսիոներներից սպասվում է իրենց բնակարանները մաքուր և կոկիկ պահել: Ֆիզիկական միջավայրը, որում նրանք ապրում են, պետք է արտացոլի նրանց կոչման արժանապատվությունը:

Պատվաստումներ. Միսիոներական բաժանմունքը լրացուցիչ տեղեկություններ կտրամադրի պատվաստումների վերաբերյալ, երբ միսիոները ստանա իր միսիայի նշանակումը: Ինչևէ, կան տիպական պատվաստումներ, որ յուրաքանչյուր ապագա միսիոներ պետք է ստանա: Խորհրդակցեք բժշկի հետ առաջարկվող պատվաստումների վերաբերյալ:

Հիվանդությունների ու վնասվածքների բուժում. Միսիոներները պետք է առողջ լինեն, երբ սկսում են միսիոներական ծառայությունը: Ապագա միսիոներները, որոնք ունեն ֆիզիկական կամ էմոցիոնալ խնդիրներ, պետք է խորհրդատվություն և բուժում անցնեն որակավորված բժիշկների մոտ, որպեսզի միսիան սկսելուց առաջ վերականգնած լինեն իրենց առողջությունը:

Որպես միսիոներական ծառայության դիմումի մաս՝ ապագա միսիոներները պետք է ճշգրիտ տեղեկություններ լրացնեն իրենց առողջության վերաբերյալ: Չլուծված առողջական խնդիրների պատճառով միսիայի ծառայության ընդհատումը կամ վաղաժամկետ դադարեցումը հաճախ կործանարար է լինում միսիոների և նրա ընտանիքի համար: Ճշգրիտ և ամբողջական տեղեկությունն առողջության վերաբերյալ, ինչպես պահանջվում է միսիոներական դիմումի վրա, էական նշանակություն ունի, որպեսզի հասանելի լինի այն Բարձրագույն Իշխանավորներին, ովքեր կատարում են միսիոներական նշանակումներ:

Էմոցիոնալ պատրաստությունը. Ֆիզիկական պատրաստվածությանը զուգահեռ, մտավոր և էմոցիոնալ պատրաստություն է անհրաժեշտ՝ երջանիկ և արդյունավետ միսոներ լինելու համար: Փոփոխությունները և դժվարությունները դրական ձևով հաղթահարելը, ուշադրությունը պահպանելով միսիայի նպատակի վրա, ապագա միսիոների նախապատրաստության կարևոր մասն է:

Լավ էմոցիոնալ բնութագիր ունեցող մարդիկ հաճախ ունենում են հետևյալ հատկանիշներից շատերը.

1. Նրանք իրենց մասին լավ կարծիքի են:
   - Նրանք կառավարում են իրենց զգացումները (վախը, բարկությունը, նախանձը, մեղավորության զգացումը, անհանգստությունը, սերը):
   - Նրանք կարող են դիմակայել կյանքի բնական հիասթափություններին:
   - Նրանք հեշտ բնավորություն ունեն և ի վիճակի են կողմնորոշվել շատ իրավիճակներում:
   - Նրանք պատշաճ աշխատում են իրենց թերությունների վրա:
   - Նրանք հարգում են թե՛ իրենց, թե՛ ուրիշներին:
2. Նրանք լավ զգացումներ ունեն ուրիշների նկատմամբ:
   - Նրանք կարողանում են հաշվի առնել ուրիշների հետաքրքրությունները:
   - Նրանք ընկերասեր են:
   - Նրանք ընդունում են ուրիշներին և նրանց կողմից լավ ընդունվում:
   - Նրանք հարգում են տարբերությունը մարդկանց միջև:
   - Նրանք համարձակ են, բայց ոչ գերիշխող:
   - Նրանք զգում են, որ իրենք խմբի մի մասն են:
   - Նրանք պատասխանատվության զգացում ունեն ուրիշների հանդեպ:
3. Նրանք ի վիճակի են դիմակայել կյանքի պահանջներին:
   - Նրանք ինչ-որ բան անում են առկա խնդիրների վերաբերյալ:
   - Նրանք ընդունում են իրենց պատասխանատվությունը:
   - Անհրաժեշտության դեպքում նրանք հարմարվում են իրենց միջավայրին:
   - Նրանք նախապես ծրագրում են և չեն վախենում ապագայից:
   - Նրանք ընդունում են նոր փորձառությունները:
   - Նրանք օգտագործում են իրենց բնական շնորհները:
   - Նրանք իրենց համար հասանելի նպատակներ են դնում:
   - Նրանք կարող են մտածել և սեփական որոշումը կայացնել:
   - Նրանք լավագույն ջանքերն են գործադրում իրենց գործի մեջ և բավականություն են զգում այն կատարելուց:

■ Երիտասարդ տղաներն ու աղջիկները կարող են միջոցներ ձեռնարկել, որպեսզի բարելավեն էմոցիոնալ պատրաստվածությունը միսիոներական ծառայության համար: Արժեքավոր միջոցներ կարող են լինել.

- Սովորել կառավարել զգացումները՝ ուրիշների հետ խնդիրներ լուծելիս և հարաբերություններ պարզելիս:
- Կարիքի դեպքում զրուցել ծնողների, եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ, կամ մասնագետ խորհրդատուի հետ՝ անձնական և ուրիշների հետ առկա խնդիրները լուծելիս:

- Ակտիվ լինել Եկեղեցում, մասնակցելով միսիոներական դասերին, հանձնարարվելու դեպում աղոթքներ ասելով, ելույթներ ունենալով և ժողովներ վարելով, որպեսզի մարդկանց առաջ խոսելիս վստահություն ձեռք բերեք:
- Դպրոցում ներդնել լավագույն ջանքերը՝ կանոնավոր հաճախելով դպրոց, տնային աշխատանքները ժամանակին կատարելով, լավ գնահատականներ ստանալով և դպրոցական կանոններին ենթարկվելով:
- Նախասիրություններն ու հետաքրքրությունները զարգացնել:
- Որոշ ժամանակ տանից հեռու անցկացնել, որպեսզի միսիայի համար ընտանիքից առանձնանալը դվարություն չառաջացնի:
- Ընկերություն զարգացնել և սովորել հարմարավետ զգալ խմբում:
- Աշխատել սովորել:
- Փողամիջոցները կառավարել սովորել՝ տասանորդ վճարելով, այլ հաշիվներ վճարելով և միսիայի համար գումար տնտեսելով:
- Կամավորական ծառայություններ կատարել լիաժամկետ միսիոներների հետ:

■ Միսիան ներառում է առօրյա կյանքի դժվարություններից շատերը, և դա հասկանալը ձեզ կօգնի ձեր էմոցիոնալ նախապատրաստության գործում: Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, խոսել է կյանքի հաճախ կրկնվող փորձությունների մասին.

«Կյանքը նախատեսված է եղել դժվար լինելու: Անհանգստություն, ընկճվածություն, հուսախաբություն, նույնիսկ որոշ չափով անհաջողություն ունենալը բնական բաներ են:

Ուսուցանեք մեր անդամներին, որ եթե նրանք ժամանակ առ ժամանակ կամ մի քանի օր շարունակ թշվառ օրեր են ունենում, ապա թող հաստատուն լինեն: Դիմակայեք դրանց և դրանք կկարգավորվեն:

Կյանքի դժվարությունների մեջ մեծ նպատակ կա» («*That All may Be Edified*“ [1982], 94):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին կիսվել է միսիայի սկզբում ունեցած փորձառության մասին, որն ազդեցություն է ունեցել մնացած իր ողջ ծառայության վրա.

«Ես լավ չէի զգում, երբ ժամանեցի: Առաջին մի քանի շաբաթը հիվանդության և մեր զգացած ընդդիմության պատճառով ես հուսահատված էի: Ես նամակ գրեցի տուն՝ իմ բարի հորը, և նրան ասացի, որ կարծում եմ, որ վատնում եմ իմ ժամանակն ու նրա փողերը: Նա իմ հայրն էր և իմ ցցի նախագահը, և նա իմաստուն և ոգեշնչված մարդ էր: Նա մի հակիրճ նամակ գրեց ինձ, որում ասվում էր. «Սիրելի Գորդոն, ես ստացա քո նամակը: Ես միայն մի առաջարկ ունեմ. Մոռացիր քեզ և տրվիր աշխատանքին»: Ավելի վաղ՝ այդ առավոտյան, սուրբ գրությունների ուսումնասիրման մեր դասի ժամանակ, ես գործընկերոջս հետ կարդացել էի Տիրոջ հետևյալ խոսքերը. «Որովհետև ով որ կամենա իր անձն ապրեցնել՝ կկորցնե նորան. և ով որ իր անձն ինձ համար և ավետարանի համար կորցնե, նա կապրեցնե նորան» (Մարկոս 8.35):

Վարդապետի այդ խոսքերը, որին հետևեց հորս նամակն ինձ մոռանալու և գործի անցնելու իր խորհրդով, թափանցեցին սիրտս: Հորս նամակը ձեռքիս ես գնացի Վադիամ մայրուղու 15 հասցեում գտնվող մեր բնակարանի իմ ննջասենյակը, և ծնկի իջա և խոստում արեցի Տիրոջ հետ: Ես ուխտեցի, որ կփորձեմ մոռանալ իմ անձը և կորցնել ինձ Տիրոջ ծառայության մեջ:

1933 թվականի հուլիս ամսվա այդ օրը որոշիչ էր ինձ համար: Մի նոր լույս եկավ իմ կյանք և մի նոր լույս մտավ իմ սիրտը: Մառախուռը Անգլիայի վրայից կարծես բարձրացավ, և ես սկսեցի տեսնել արևի շողերը: Ես լիառատ և հրաշալի միսիոներական փորձառություն ունեցա, որի համար ընդմիշտ երախտապարտ կլինեմ» («Taking the Gospel to Britain: A Declaration of Vision, Faith, Courage, and Truth», *Ensign,* July 1987, 7):

■ Շատ միսիոներների համար ընդհանուր փորձություն է տան կարոտը: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը լուծում է առաջարկել տան կարոտով տառապող միսիոներների համար. «Ես հաճախ եմ ասել, որ միսիոներական աշխատանքի ամենամեծ գաղտնիքը աշխատա՛նքն է: Եթե միսիոներն աշխատում է, նա կստանա Հոգին. եթե ստանա Հոգին, նա Հոգով կուսուցանի. և եթե Հոգով ուսուցանի, նա կդիպչի մարդկանց սրտերին և երջանիկ կլինի: Չի լինի ոչ տան կարոտ, ոչ մտահոգություն ընտանիքի մասին, քանի որ ողջ ժամանակը և շնորհները և հետաքրքրությունները կենտրոնացած են ծառայության աշխատանքի վրա: Աշխատել, աշխատել, աշխատել՝ չկա այլ բավարար փոխարինող, հատկապես միսիոներական աշխատանքի մեջ» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 200):

■ Մեկ այլ առիթով Նախագահ Բենսոնն ուսուցանել է. «Եթե ցանկանում եք Հոգին ձեզ հետ մնա, որ սիրեք ձեր միսիան և չտանջվեք տան կարոտից, դուք պետք է աշխատեք: Սակայն հիշեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերը. «Առանց տեսիլքի աշխատանքը բեռ է: Առանց աշխատանքի տեսիլքը երազ է: Տեսիլքի հետ միասին աշխատանքը ճակատագիր է»: Չկա ավելի մեծ խնդություն կամ բավարարվածություն,

«Մոռացիր քեզ և տրվիր աշխատանքին»:

քան միսիոներական քրտնաջան աշխատանքի օրվա վերջում զգալ, որ արել ես քո լավագույնը» (*Teachings of Ezra Taft Benson*, 200–201):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին վկայակոչել է մի լրագրողի խոսքերը, որպեսզի ցույց տա պատշաճ և դրական վերաբերմունքի կարիքը փորձությունների ժամանակ: Նրա խորհուրդը տեղին է նրանց համար, ովքեր պատրաստվում են լիաժամկետ միսիայի ամենօրյա դժվարություններին:

«Ինձ դուր են գալիս Ջենկենս Լոյդ Ջոնսի խոսքերը, որոնք կտրել եմ «Deseret News» օրաթերթի այունակներից տարիներ առաջ.... Ասել է նա.

« Յուրաքանչյուրն ով պատկերացնում է, որ հաջողություն ունենալը բնական վիճակ է, շատ ժամանակ կծախսի դեսուդեն վազելով ու բղավելով, որ իրեն կողոպտել են:

Գ նդակի հարվածներից շատերը շեղ են: Տավարի միսը մեծամասամբ դժվար է ծամվում: Երեխաներից շատերը մեծանալով սովորական մարդ են դառնում: Հաջողակ ամուսնություններից շատերը պահանջում են փոխադարձ զիճման բարձր մակարդակ: Աշխատանքների մեծ մասն ավելի շուտ ձանձրալի են, քան հակառակը:

Կ յանքը նման է հին ժամանակների երկաթգծի աշխատանքին՝ ուշացումներ, մյուս գնացքներին զիճելու կանգառներ, ծուխ, փոշի, ածխահոտ, ցնցումներ, որոնք տեղի են տալիս գեղեցիկ տեսարաններին ու արագության հուզիչ զգացմանը միայն ժամանակավորապես:

Ի մաստությունը նրանում է, որ Տիրոջը գոհություն հայտնես ուղևորության հնարավորություն ունենալու համար» (*Deseret News*, 12 հունիս 1973)»: (*Teachings of Gordon B. Hinckley* [1997], 254):

■ Եթե մարդ էմոցիոնալ որևէ հիվանդություն ունի կամ ունեցել է նախկինում (ինչպես ընկճվածությունը, դյուրագրգիռ լինելը կամ վտանգավոր վարքի մոլություն ունենալը), ապա միսիայի նախապատրաստվելու համար հնարավոր է մասնագիտական բուժման և դեղորդայքների շարունակ օգտագործման կարիք լինի: Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, խորհուրդ է տվել. «Միսիոներական աշխատանքը չափազանց խստապահանջ է: Եթե դուք էմոցիոնալ խնդիրներ ունեք, որոնք հնարավոր է կարգավորել, որ կարողանաք դիմակայել լիաժամկետ միսիայի դժվարություններին, դուք կարող եք կանչվել ծառայության: Կենսական է, որ դուք շարունակեք օգտագործել ձեր դեղորայքը միսիայի ընթացքում կամ մինչև որ երաշխավորված բժիշկը այլ խորհուրդ կտա: Ընդունեք, որ ֆիզիկական և էմոցիոնալ խնդիրները նման են իրար: Մարդ պետք է անի ամեն հնարավոր բան՝ իրավիճակը բարելավելու համար, ապա սովորի ապրել մնացածի սահմաններում: Աստված տալիս է դժվարություններ, որպեսզի աճենք՝ դրանք հաղթահարելով» (տես «Conference Report», հոկ. 2003, 45 կամ «Ensign», նոյ. 2003, 43):

«Կան ուրիշ ոլորտներ, որտեղ առողջության խնդիրներ ունեցողները կարող են ծառայել և բավարարող փորձառություն ունենալ»:

Նման խնդիրների վերաբերյալ եպիսկոպոսի կամ ցցի նախագահի հետ վաղաժամ խորհրդակցելը կենսական է միսիայի ձեր նախապատրաստության համար:

Ֆիզիկական կամ էմոցիոնալ վիճակի պատճառով քահանայության ղեկավարների կողմից ազատված ապագա միսիոներների համար կան լիաժամկետ միսիայի այլընտրանքային այլ պատվավոր ծառայություններ:

■ Երբ ապագա միսիոներներն աշխատում են քահանայության իրենց ղեկավարների հետ, հնարավոր է ոմանց համար որոշում կայացվի, որ առողջական վիճակը բավարար չէ լիաժամկետ միսիայում ծառայելու համար: Լիաժամկետ միսիայի այլընտրանքային այլ պատվավոր ծառայություններ կան, որոնք կարող են նպաստել առաջ տանելու Տիրոջ աշխատանքը:

■ Եպիսկոպոս Ռիչարդ Ս. Էջլին՝ Նախագահող եպիսկոպոսությունից, բացատրել է, որ ոմանք ազատված են միսիոներական ծառայությունից. «Արժանավոր շատ տղաներ և աղջիկներ կան, ովքեր իրենց սրտում միսիայում ծառայելու մեծ ցանկություն ունեն, սակայն ֆիզիկական առողջության կամ այլ սահմանափակումների պատճառով պատվով ազատվում են այդ պարտավորությունից» (տես «Conference Report», հոկ. 1996, 83 կամ «Ensign», նոյ. 1996, 62):

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խոսել է ծառայության համար սահմանափակումներ ունեցողների մասին. «Կան ուրիշ ոլորտներ, որտեղ առողջության խնդիրներ ունեցողները կարող են ծառայել և բավարարող փորձառություն

ունենալ: Եվ Տերը նրանց կօրհնի իրենց կարողության սահմաններում ծառայելիս» (*First Worldwide Leadership Training Meeting*, Jan. 2003, 18):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը խոսել է այլընտրանքային ծառայության մասին, այն անհատների համար, ովքեր պատվով ազատվում են լիաժամկետ միսիոներական ծառայությունից. «Ձեր ֆիզիկական կամ էմոցիոնալ վիճակը կարող է այնպիսին լինել, որ դուք Եկեղեցու Նախագահի կողմից ազատված լինեք լիաժամկետ միսիոներական ծառայությունից (տես "Statement on Missionary Work" attached to First Presidency letter, Դեկ. 11, 2002): Ձեզ համար իմաստալից ծառայություն մատուցելու այլ ձևեր կան, որ հարմար կլինեն ձեր պայմաններին: Ձեր եպիսկոպոսը կամ ցցի նախագահը ձեզ կարող է օգնել նման ծառայություն գտնել այնտեղ, որտեղ դուք ապրում եք: Դա կարող է լինել Եկեղեցու ընտանեկան պատմության կենտրոնում, տաճարում, բարօրության նախագծերում կամ կարիերայի կենտրոնում կամ տեղական հիվանդանոցում, ծերանոցում, անոթևանների ապաստարանում կամ որևէ այլ տեղ: Շատ տեղեր կան, որտեղ օգնության կարիք կա: Դուք կարող եք ապրել տանը և մեծ ներդրում ունենալ: Այդպիսի կոչումը կարող է լինել ամսով կամ ավելի երկար: Ձեր ցցի նախագահը կորոշի, թե որտեղ կա ձեր ծառայության կարիքը և ինչ ժամանակով: Ապա նա պաշտոնապես կկանչի ձեզ: Ինչպիսին էլ լինի ձեր կոչումը, ուսումնասիրեք Վերականգնման ուղերձն այն նյութերով, որոնք կարող են ապահովել լիաժամկետ միսիոներները: Ապա հնարավորություն գտեք կիսվելու այդ ուղերձով: Երբ բարեխիղճ ձևով անեք այդ, դուք կառաջնորդվեք այնպիսի մարդիկ գտնելու, ովքեր կցանկանան ավելի շատ սովորել» (տես «Conference Report», հոկ. 2003, 45–46 կամ «Ensign», նոյ. 2003, 43):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Արդյոք ձեր ֆիզիկական առողջությունը համապատասխանո՞ւմ է միսիոներական ծառայության պահանջներին: Ինչպե՞ս կարող եք պահպանել և բարելավել այն:
- Արդյոք ձեր մտավոր և էմոցիոնալ առողջությունը համապատասխան է միսիոներական ծառայությանը:
- Ի՞նչ կարող եք անել բարելավելու ձեր մտավոր և էմոցիոնալ նախապատրաստությունը:
- Կա՞ն արդյոք մտահոգություններ, որոնք պետք է քննարկեք ձեր եպիսկոպոսի և ցցի նախագահի հետ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ծրագրեք մեկ շաբաթվա կերակրատեսականի, և ապա, բաղադրամասեր գնեք ու մի քանի առողջարար ուտելիքներ պատրաստեք ընտանիքի անդամների կամ սենյակի դասընկերների համար:
- Տնային ընտանեկան երեկոյին մի դաս պատրաստեք անձնական հիգիենայի և ամենօրյա սովորությունների կիրառման վերաբերյալ:
- Մեկ շաբաթ շարունակ ամեն օր ֆիզիկական վարժություններ կատարեք (բացի Հանգստության օրից): Օրինակ՝ հնարավոր է ցանկանաք աշխույժ քայլել օրական մեկ ժամ (նախընտրելի է աստիճաններով կամ բլրով դեպի վեր և դեպի վար) կամ հեծանվով գնալ այն տեղերը, ուր սովորաբար գնում եք մեքենայով:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Երջանկություն» (62–64 էջեր)
- «Հույս» (124–126 էջեր)
- «Իմաստության խոսք» (74–76 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակի իմաստուն օգտագործումը մարդկանց Քրիստոսի մոտ բերելիս

ՆԱԽԱԲԱՆ

Խոսելով միսիոներների մասին՝ Տերը հայտարարել է. «Նրանք ուղարկվել են քարոզելու իմ ավետարանն.... ուստի, ես նրանց տալիս եմ այսպիսի պատվիրան. Ծուլությամբ մի վատնիր ժամանակդ» (ՎԱՌ 60.13): Աշխատելով միասին ներդաշնակությամբ՝ միսիոներական զույգերը կենտրոնացնում են իրենց ջանքերը, աղոթքով հաստատելով իմաստալից նպատակներ և ուշադիր ծրագրելով միսիայի հատկացված ժամանակը՝ ի նպաստ Աստծո արքայության աճի:

Միսիոների նպատակն է գտնել հետաքրքրվողներ և նրանց ուսուցանել վերականգնված ավետարանը, առաջնորդելով նրանց հավատքի առ Քրիստոսը, մեղքերից ապաշխարության և մկրտության և Սուրբ Հոգին ստանալու: Դրական և ընկերական ձևով հավանական հետաքրքրվողներին մոտենալը և Հոգու կողմից առաջնորդվել սովորելը կարևոր են հաջողակ միսիոներական աշխատանքի համար: Բացի այդ, Եկեղեցու անդամները անգնահատելի և քիչ օգտագործվող միջոց են գտնելու այնպիսի հետաքրքրվողներ, որոնք, ի վերջո, կընդունեն վերականգնված ավետարանը: Պատրաստված և կազմակերպված միսիոներն ավելի արդյունավետ է գտնում, ուսուցանում և մկրտում նրանց, ում Տերը պատրաստել է ընդունելու վերականգնված ավետարանի օրհնությունները:

> *«Ծուլությամբ մի վատնիր ժամանակդ»:*

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Մարդկանց գտնելն ու ուսուցանելը և՛ միսիոներների, և՛ Եկեղեցու անդամների պարտականությունն է:
- Արդյունավետ ծրագրավորումը, նպատակներ դնելը և ժամանակի կառավարումը օգնում են կենտրոնանալ միսիոներական ջանքերի վրա և ավելացնում են գործի հաջողությունը:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդկանց գտնելն ու ուսուցանելը և՛ միսիոներների, և՛ Եկեղեցու անդամների պարտականությունն է:

■ Որպես Տիրոջ ներկայացուցիչներ, դուք կգնեք «նրանց, ովքեր կընդունեն ձեզ» (ՎԱՌ 42.8): Տերն ասել է.

«Բարձրացրեք ձեր ձայնը դեպի այս ժողովուրդը. ասեք այն մտքերը, որոնք ես կդնեմ ձեր սրտում, և դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ.

Քանզի այն նույն ժամին, այո, այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք»: (ՎԱՌ 100.5–6):

Միսիոներները միայնակ չեն ուսուցանելու մարդկանց փնտրելու պարտականության մեջ: Հետաքրքրվողներ փնտրելու գործում նրանք աշխատում են նաև անդամների հետ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է. «Նոր մարդկանց Եկեղեցի բերելու գործընթացը միայն միսիոներների պարտականությունը չէ: Նրանք ավելի հաջողակ են լինում, երբ անդամներն են դառնում նոր հետաքրքրվողներ գտնելու աղբյուրը» («Find the Lambs, Feed the Sheep», Ensign, մայիս 1999, 106): Եթե փնտրեք Եկեղեցու անդամների օգնությունը, ծառայեք մարդկանց, խոսեք հանդիպած յուրաքանչյուր մարդու հետ և օգտագործեք այլ օգտակար

աղբյուրներ, հետաքրքրվողներ գտնելու ձեր ջանքերը կբազմապատկվեն:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 123.12–13

Գրեք այս սուրբ գրության ձեր տպավորություններն ուսումնասիրման ձեր օրագրում:

■ Անդամների դերը կարևոր է այնպիսի հետաքրքրվողներ գտնելիս, որոնք ի վերջո կմկրտվեն և ակտիվ ու հավատարիմ կմնան Եկեղեցում: Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է. «Բոլորովին վերջերս մենք ուսումնասիրություն ենք արել նորադարձների մկրտությունների վերաբերյալ և գտել, որ միսիոներների ուսուցանած հետաքրքրվողների միայն 10 տոկոսն է, որ գտնվել են անդամների ծանոթությունների կողմից»: Սակայն մկրտվող հետաքրքրվողների 60 տոկոսը այդ ծանոթություններից են» (*The Role of Members* [ելույթ նոր միսիայի նախագահների սեմինարին, հունիս 24, 2003], 3):

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նույնպես շեշտել է անդամների կենսական դերն ավետարանով կիսվելիս. «Անդամների կողմից միսիոներներին բերվող հետաքրքրվողի մկրտվելու համար 10 անգամ ավելի շատ հավանականություն կա, քան երբ միսիոներները ծանոթության իրենց ջանքերով են գտնում նրանց: [Արդյոք այս գործակիցը] գրավո՞ւմ է ձեր ուշադրությունը միսիոներների ուսուցանման համար մարդիկ գտնելու անդամների դերի կարևորության հարցում» («The Role of Members in Conversion», *Ensign*, մարտ 2003, 54):

«Անդամների դերը կարևոր է այնպիսի հետաքրքրվողներ գտնելիս, որոնք ի վերջո կմկրտվեն և ակտիվ ու հավատարիմ կմնան Եկեղեցում»:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նկարագրել է հետաքրքրվողներին գտնելիս և աջակցելիս անդամներին օգտագործելու օգուտը.

«Ամեն անգամ, երբ անդամն է ծանոթացնում հետաքրքրվողին, անմիջական աջակցություն համակարգ կա: Անդամը վկայություն է բերում աշխատանքի ճշմարտության մասին: Նա հետաքրքրված է հետաքրքրվող ընկերոջ երջանկության հարցում: Նա ոգևորվում է, երբ ընկերն առաջադիմում է ավետարանը սովորելու գործում:

Իրական ուսուցումը կարող են անցկացնել լիաժամկետ միսիոներները, սակայն անդամը, երբ հնարավոր է, կլինի ուսուցման թիկունքում, առաջարկելով իր տունը՝ առաջ տանելու միսիոներական այս ծառայությունը: Նա անկեղծորեն վկայություն կբերի աշխատանքի աստվածայնության մասին: Նա մատչելի կլինի պատասխանելու հարցերին, երբ միսիոներները ներկա չեն լինի: Նա ընկերություն կանի նորադարձի հետ, որը մեծ և հաճախ դժվար փոփոխություններ է կատարում իր կյանքում» (*Ensign*, մայիս 1999, 105):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ամփոփել է, թե ինչպես կարող են Եկեղեցու անդամներն աջակցել մարդկան Քրիստոսի մոտ բերելու գործում. «Անդամները կարող են մասնակցել դարձի գալու գործընթացին, գտնելով հետաքրքրվողներ, ընկերություն անելով դարձի գալու ընթացքում և որոշիչ պահերին՝ վկայություն բերելով: Սակայն մկրտությունից հետո նորադարձներն աջակցության կարիք ունեն, տեղափոխվելու աշխարհից դեպի նոր միջավայր: Եվ դա, հավանաբար, այն տեղն է, որտեղ անդամները կարող են ամենահեշտ ձևով միսիոներական աշխատանք կատարել: Անդամների համար, որոնք հասկանում են կարիքը, և որոնք Տիրոջից առաջնորդություն են փնտրում, դժվար չէ հետևել դրան՝ լինի նոր անդամներին տուն հրավիրելը, թե հաղորդության ժողովին նրանց կողքին նստելը, թե օգնելը նրանց հասկանալու, թե ով ենք մենք և ինչպես ենք ապրում» (in "Teaching from the Heart», *Ensign*, հունիս 2004, 11):

■ Հետևեք Հիսուս Քրիստոսի օրինակին, որը «քայլում էր բարիք անելով» (Գործք 10.38): Բաց մի թողեք ծառայելու հնարավորությունները: Դրանք կարող են լինել ծրագրավորված կամ ինքնաբուխ: Ուրիշներին ծառայելը հաճախ վերականգնված ավետարանն ուսուցանելու հնարավորությունների դուռ կբացի: Ինչպես էլ որ ծառայեք, դուք դա պետք է անեք որովհետև սիրում եք Տիրոջ բոլոր զավակներին և հույս ունեք, աղոթում եք և լրջորեն ցանկանում եք ուսուցանել նրանց վերականգնված ավետարանը:

Տերը ձեզ կօգնի գտնել մարդկանց, ում ծառայում եք: Ձեր առջև մարդիկ կհայտնվեն, ովքեր պատրաստվել են Վերականգնված ավետարանի ուղերձը լսելու: Ձեր բարի գործերն ու խոսքերը կօգնեն, որպեսզի մարդկանց բերեք Քրիստոսի մոտ: Աղոթեք և հնարավորություն գտեք ծառայելու, օգնելու և բարձրացնելու մարդկանց: Մինչ ծառայում եք, խոսեք բոլորի հետ, ում հանդիպում եք և

նրանց քաջալերեք ավելի շատ սովորել վերականգնված ավետարանի մասին:

■ Երեց Էրլ Ս. Թինգին՝ Յոթանասունի Նախագահությունից, հետևյալ առաջարկությունն է արել լիաժամկետ միսիոներներին.

«Բացեք ձեր բերանը: Տերը մեզ ասում է. «Դու պետք է բացես քո բերանը բոլոր ժամանակներում՝ հայտարարելով իմ ավետարանը ցնծության հնչումով» [ՎԱՈՒ 28.16]:

Խոսեք բոլոր մարդկանց հետ, բոլորի, ում հանդիպում եք խանութում, ավտոբուսում, փողոցում » (տես «Conference Report», ապրիլ 1998, 53 կամ «Ensign», մայիս 1998, 40):

© 2005 Robert Casey. Դասագրքամատենաշարի թույլատրությամբ

■ Ձեր վկայությունը կօգնի ձեզ գտնելու մարդկանց, ում հետ կարող եք կիսվել Վերականգնման ուղերձով: Երբ մարդիկ եք փնտրում ուսուցանելու, հաճախ վկայեք Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին: Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հաստատել է. «Երբ հռչակում եք ճշմարտությունը, հետաքրքրվողների ականջներում այն կարծագանքի, հիշողություն կարթնացնի, նույնիսկ եթե դա ենթագիտակցական հիշողություն է, որ նրանք նախկինում լսել են այս ճշմարտության մասին, և իհարկե, դա ճիշտ է: Միսիոների վկայությունը վկայության մեծ ժառանգություն է ծնում, որը տանում է ետ, մինչև երկնքի խորհուրդը նախքան աշխարհի լինելը: Այնտեղ, ավելի վաղ եղած ժամանակ, այդ նույն մարդիկ լսել են այս ծրագրի ուրվագծումը և լսել են իրենց փրկության գործում ունեցած Հիսուս Քրիստոսի դերի մասին» («Missionary Work and the Atonement», *Ensign,* մարտ 2001, 11):

■ Աղոթեք, որպեսզի ծառայելու և ուսուցանելու հնարավորություններ գտնեք: Հանդիպեք որքան հնարավոր է շատ մարդկանց հետ ամեն օր: Օգտագործեք յուրաքանչյուր հարգի միջոց, որպեսզի գտնեք մարդիկ, ովքեր կամենում են լսել ձեր ուղերձը: Աղոթեք օգնության համար, որ քաջություն ունենաք խոսելու նրանց հետ, ում հանդիպում եք: Զարգացրեք ընկերական և վախ չներշնչող ձևեր, խոսելու մարդկանց հետ:

«Միսիոների վկայությունը վկայության մեծ ժառանգություն է ծնում, որը տանում է ետ, մինչև երկնքի խորհուրդը»:

■ Բազմաթիվ, աննախադեպ իրավիճակներում դուք պետք է կարողանաք ձեր ուղերձը ներկայացնել կարճ ժամանակահատվածում: Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը մեկնաբանություն է տվել այս հմտության վերաբերյալ. «Մենք ունենք միսիոներներ, որոնց համար ավետարանի ուղերձն իրենց էության անբաժան մասն է դարձել, որ ավտոբուսի կանգառի ցանկացած անկյունում նրանք կարող են մեկ ու կես րոպեանոց, կամ՝ հինգ րոպեանոց դաս անցկացնել: Նրանք շատ լավ պատրաստված են խոսելու մարդկանց հետ իրենց լեզվով և ներկայացնել նրանց Վերականգնման փառահեղ ուղերձը ցանկացած մակարդակում » (in *Ensign,* հունիս 2004, 11):

■ Մարդիկ, ում կյանքում նշանակալից փոփոխություններ են տեղի ունենցել , ինչպես՝ ծնունդը, մահը կամ նոր տուն տեղափոխվելը, հաճախ պատրաստ են սովորել վերականգնված ավետարանի մասին և նոր ծանոթություններ հաստատել: Օրինակ՝ միսիոներները, որոնք հանդիպում են մարդու հետ, որի ընտանիքում վերջերս հարազատ է մահացել, կարող են կիսվել այն ուղերձով, որ նրանք կարող են մահկանացու կյանքից հետո կրկին վերամիավորվել հարազատների հետ:

■ Ընտանեկան պատմության վերաբերյալ աշխարհում տարածված հետաքրքրությունը նույնպես կարող է ձեզ օգնել, որ մարդիկ գտնեք ուսուցանելու: Սովորեք, թե ինչ մատչելի աղբյուրներ կան այն տարածքում, որտեղ ծառայում եք: Հանդիպեք Եկեղեցու անդամների հետ, որոնք հասկանում են Եկեղեցու պատմությունը և հրավիրեք նրանց օգնել ներկայացնելու Եկեղեցու աղբյուրները նրանց, ովքեր Վերջին օրերի Սրբեր չեն:

■ Կան ուրիշ շատ արժանապատիվ միջոցներ, որպեսզի գտնեք ապագա հետաքրքրվողների: Միսիոներների վերապատրաստումը կառաջարկի բազմաթիվ այլ միջոցներ: Աղոթքն ու մտորումները նույնպես կոգեշնչեն այլ մտքերով, թե ինչպես մարդիկ գտնեք ուսուցանելու և հրավիրելու նրանց գալ Քրիստոսի մոտ՝ ընդունելով վերականգնված ավետարանի սկզբունքներն ու արարողությունները:

Արդյունավետ ծրագրավորումը, նպատակներ դնելը և ժամանակի կառավարումը օգնում են կենտրոնանալ միսիոներական ջանքերի վրա և ավելացնում են գործի հաջողությունը:

■ Միսիոներներն, ովքեր իրենց գործերում նախապատվությունը տալիս են աղոթքին , կարող են շատ ավելին իրագործել: Ըստ տեղի մշակութային առանձնահատկությունների, Միսիայի նախագահը ձեզ կառաջարկի օրվա ընդհանուր ռեժիմը, ներառյալ այն, թե երբ պետք է արթնանալ առավոտյան, ուսումնասիրել, նախապատրաստվել շաբաթվա մյուս օրերին, քարոզելու և քնելու ժամերը : Միսիոներները պատասխանատու կլինեն ծրագրելու իրենց ամենօրյա գործերը, համաձայն միսիայի կանոնների, որպեսզի իրականացնեն Տիրոջ աշխատանքը: Գիտելիքը, թե ինչպես ծրագրել միսիոներական ամենակարևոր գործերը ամենաարդյունավետ ժամերին, կավելացնի ծառայության հաջողությունը: Նպատակներ դնելը ձեզ կօգնի կենտրոնանալ ամենաարդյունավետ միսիոներական գործերի վրա:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 109.8

Գրեք այս սուրբ գրության ձեր տպավորություններն ուսումնասիրման ձեր օրագրում:

■ Երեց Դալին Հ. Օքսը մատնանշել է, թե ինչին պետք է մենք նախապատվությունը տանք, երբ բացատրել է.

«Մեր նախապատվությունները ցույց են տալիս, թե ինչ ենք փնտրում կյանքում....

Հիսուսն ուսուցանել է նախապատվությունների մասին, երբ ասել է. «Մի՛ փնտրեք այս աշխարհի բաները, այլ փնտրեք նախ կառուցել Աստծո արքայությունը և հաստատել նրա արդարությունը և բոլոր այդ բաները Աստված ձեզ ավելով կտա» (Joseph Smith Translation, Matthew 6:38; in Matthew 6:33; footnote *a*):

« Փնտրեք նախ կառուցել Աստծո արքայությունը» նշանակում է առաջինը՝ նախապատվությունը տալ Աստծուն և Նրա աշխատանքին: Աստծո գործն Իր զավակների հավերժական կյանքն իրականացնելն է (տես Մովսես 1.39), և այն ներառում է մեր Երկնային Հոր զավակների ծնվելը, կնքվելը, դաստիարակվելը և ուսուցանվելը : Մնացած ամեն բան նախապատվությունների շարքում ավելի ցածր է.... Ինչպես մեկն ասել է՝ եթե մենք չենք ընտրում Աստծո արքայությունը, վերջին հաշվով կարևոր չէ, թե ինչ ենք ընտրում դրա փոխարեն....

Մեր նախապատվություններն ավելի շատ երևում են նրանում, թե ինչպես ենք օգտագործում մեր ժամանակը.... Ժամանակի հարցում մենք միայն մեկ հնարավորություն ունենք ընտրելու, իսկ դրանից հետո, այն երբեք չի վերադառնում» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 108–9 կամ «Ensign», մայիս 2001, 83–84):

■ Երբ միսիոներները վերանայում են իրենց օրվա ռեժիմն ու գործերը, նրանք պետք է հարց տան. «Որքա՞ն արդյունավետ է արվում միսիոներական աշխատանքը»: Երեց Օքսը բացատրել է.

Ոչ մեկս չպետք է նմանվենք ձկնորսի, որը մտածում է, որ ամբողջ օրը ձուկ է որսացել, երբ, իրականում, նա ժամանակի մեծամասնությունը ծախսել է ջուր մտնելու և դուրս գալու, ճաշ պատրաստելու և ձկան կարթով զբաղվելու վրա: Ձկնորսության արդյունավետությունը նրանում է, թե որքան ժամանակ է կարթը եղել ջրի մեջ, ոչ թե նրանում, թե որքան ժամանակ ես տանից բացակայել: Որոշ ձկնորսներ տանից բացակայում են տասներկու ժամ և իրենց կարթը տաս ժամ ջրի մեջ են թողնում: Մյուսները տասներկու ժամ բացակայում են և իրենց կարթը ջրի մեջ է լինում միայն երկու ժամ: Այս վերջին տեսակի ձկնորսները կարող են մտածել, թե ինչու չեն ուրիշների նման հաջողակ:

Միևնույն սկզբունքը կիրառելի է նաև միսիոներների համար, որոնց Վարդապետն անվանել է «մարդկանց ձկնորսներ»: Միսիոների կարթը պետք է ջուրը գցվի անմիջապես բնակարանից դուրս գալուց հետո»: (*Introduction* [ելույթ նոր միսիայի նախագահների սեմինարին, հունիս 20, 2000], 6):

■ Տիրոջից ստացած ձեր կոչումը կիրականանա, եթե ձեր գործերը մարդկանց առաջնորդ են հավատքի առ Հիսուս Քրիստոս և Նրա Քավությունը, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելուն : Եկեղեցու ղեկավարները սահմանել են հիմնական ցուցանիշներ, որպեսզի օգնեն մարդկանց դարձի գալ այնպես, որ այն հարատևի: Դուք գրանցելու եք հիմնական ցուցանիշների ուղղությամբ ձեր առաջընթացը և կանոնավոր ձևով հաշվետվություն եք տալու ձեր միսիայի նախագահին.

- Ստացած ծանոթությունները և շփումները
- Նոր հետաքրքրվողները
- Անդամների ներկայությամբ հետաքրքրվողներին ուսուցանած դասերը
- Ուսուցանած մյուս դասերը
- Առաջադիմող հետաքրքրվողները (նրանք, ովքեր ուսուցանվել են երկու կամ ավելի անգամ և պահում են կարդալու, աղոթելու և մյուս իրենց պարտավորությունները)
- Հաղորդության ժողովին հաճախող հետաքրքրվողները
- Մկրտության ամսաթիվ ունեցող հետաքրքրվողները
- Մկրտված և հաստատված հետաքրքրվողները

- Նորադարձներին ու քիչ ակտիվ Եկեղեցու անդամներին ուսուցանած դասերը

■ Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է գործընկերներով ամեն օր ծրագրավորելու և նպատակներ դնելու կարևորությունը. «Միսիոներները չեն կարող անել այս աշխատանքը միայն ասելով. «Դե՛, ինչ ենք մենք պատրաստվում անել»: Միսիոներները պետք է նպատակներ դնեն: Գործընկերներով ուսուցանելու ժամանակ երկու միսիոներներ նպատակ են դնում իրենց համար: Նրանք գիտակցում են, որ եթե ունենան լավ նպատակներ, ապա շատ ավելի հաջողակ կլինեն հետաքրքրվողներ գտնելով , ուսուցանելով , օգնելով , որ առաջադիմեն և նրանց մկրտելով , որպեսզի նրանք հաստատվեն և ստանան Սուրբ Հոգու պարգևը» (*Planning* [ելույթ նոր միսիայի նախագահների սեմինարին, հունիս 25, 2003], 2):

■ Երեց Նիլ Ա. Մաքսվելը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, քաջալերել է, որ երբ ձգտում ենք նպատակներ դնել և դրանց հասնել, լավ կլինի մի փոքր շատ ծավալվենք , մտածելով , որ կարող ենք ավելին կատարել.

«Մեր նպատակները մեզ պետք է քիչ-քիչ ձգեն: Շատ հաճախ, երբ թվում է, թե հասել ենք ամենաբարձր կետին, իրականում, դա հոգեբանական կամ փորձառնական կետ է լինում , որը մենք ենք մեզ համար սահմանել: Մենք կառուցել ենք, մենք էլ կարող ենք այն հեռացնել....

Մենք անձնական զարգացում չպետք է ակնկալենք, եթե չենք զգում ցավ կամ ինչ-որ տեսակի «վերանորոգում»» (*Deposition of a Disciple* [1976], 33–34):

■ «Նպատակները արտացոլում են մեր սրտերի ցանկությունները և մեր հասկացողությունը, թե ինչին պետք է հասնենք: Նպատակների և ծրագրերի միջոցով, մեր հույսերը վեր են ածվում գործի: Նպատակներ դնելը և պլանավորումը հավատքի գործեր են: Աղոթքով նպատակներ դրեք, որոնք ներդաշնակ են Փրկչի կոչին. «Բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը» (Մատթեոս 28.19):

.... Արեք հնարավոր ամեն ինչ այդ նպատակներին հասնելու համար, միևնույն ժամանակ հարգելով ուրիշների ընտրությունը: Հաջողության վերջնական չափանիշը նպատակներն իրականացնելու մեջ չէ միայն, այլ այն ծառայության մեջ, որը դուք մատուցում եք, ինչպես նաև մարդկանց հաջողության մեջ է: Նպատակները միջոցներ են, որոնք ձեզ օգնում են բարին գործել Երկնային Հոր զավակների մեջ: Դրանք չպետք է օգտագործվեն ճանաչում ստանալու համար:

Մանրակրկիտ մշակված նպատակները ձեզ հստակ ուղղություն կտան և կօգնեն ձեր օրերը լցնել այնպիսի գործերով, որոնք մարդկանց կօգնեն ամրացնել Փրկչի հանդեպ իրենց հավատքը և առաջանդիմել դեպի մկրտությունը, հաստատումը և Եկեղեցում լիարժեք գործունեությունը: Դժվարահաս նպատակները կօգնեն ձեզ ավելի արդյունավետ աշխատել և կտանեն ձեզ դեպի աճ և զարգացում» («Քարոզիր իմ ավետարանը» [2004], էջ 164):

■ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, երբ Առաջին Նախագահության խորհրդական էր, նպատակներին հասնելու գործում առաջադիմության մասին հաշվետվություն տալու կարևորությունն ուսուցանելիս վկայակոչում էր հետևյալ սկզբունքը. «Երբ աշխատանքը գնահատվում է, այն բարելավվում է: Երբ աշխատանքը գնահատվում և զեկուցվում է, բարելավման արագությունը մեծանում է» (տես «Conference Report», հոկ. 1970, 107):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ որոշակի քայլ կարող ես անել, որպեսզի ավելի լավ պատրաստվես ծառայելու Տիրոջը միսիայի ընթացքում:
- Ո՞ւմ ես ճանաչում, որ կարող ես ծանոթացնել միսիոներների հետ:
- Որո՞նք են այն մի քանի ձևերը, որով կարող ես ընկերակցել ուրիշներին, որպեսզի նախապատրաստես նրանց ուսուցանվելու միսիոներների կողմից:
- Որո՞նք են այն մի քանի ձևերը, որով կարող ես ընկերակցել նորադարձ անդամներից մեկին, որը քիչ ակտիվ է Եկեղեցում:
- Ինչպե՞ս են Վարդապետություն և Ուխտեր 88.119 և 109.8 հատվածները վերաբերում տաճարներին և միսիոներներին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Եթե դեռ չեք կիրառում այդ, սկսեք օգտագործել գործերի ծրագրման օրացույց, որպեսզի ըստ առաջնահերթության կազմակերպեք ձեր ամենօրյա գործերը:

- Ըստ առաջնահերթության՝ իրատեսական նպատակներ դրեք, որոնք ձեզ կօգնեն առաջադիմել ձեր միսիային նախապատրաստվելիս:
- Գրեք չորս տարբեր համառոտ օրինակ, թե ինչպես կարող եք կիսվել վերականգնված ավետարանի ուղերձով ինչ-որ մեկի հետ, ով Եկեղեցու անդամ չէ: Փորձեք բանավոր ներկայացնել յուրաքանչյուր օրինակը՝ սկզբում նշումներով, ապա առանց նշումների:
- Հաջորդ շաբաթվա ընթացքում մի բացիկով հրավիրեք Եկեղեցու անդամ չհանդիսացող որևէ մեկին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Սեր» (էջ 170)
- «Միսիոներական աշխատանք» (145–147 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետաքրքրվողներին մկրտության և հաստատման պատրաստելը

ՆԱԽԱԲԱՆ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի Աստվածային քահանայության իշխանությունը՝ սպասավորելու արարողություններ, որոնք կապող են երկրի վրա և երկնքում: Այդ արարողությունների միջոցով մենք ուխտեր ենք անում Տիրոջ հետ, որոնք կարող են մեզ առաջնորդել փրկության և վեհացման: Այս ուխտերն ու արարողությունները, երբ հավատարմորեն ընդունվում են, մեզ հնարավորություն են տալիս Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մաքրվել մեր մեղքերից և դառնալ երկրի վրա Տիրոջ Եկեղեցու անդամ: Ուխտեր անելով և պահելով, մենք մեզ պաշտպանում ենք աշխարհի ամբարշտությունից, և ստանում ենք օրհնություններ, որոնք պահված են նրանց համար, ովքեր ընտրում են հետևել Տիրոջը:

Միսիոներները սրբազան վստահություն ունեն Տիրոջից՝ հետաքրքրվողներին պատրաստելու, որ մկրտվեն և ստանան Սուրբ Հոգու պարգևը: Միսիոներները պետք է նաև հասկանան, որ հետաքրքրվողների մկրտությունն ու հաստատումը վերջնանպատակը չէ: Նոր մկրտված անդամները պետք է սկսեն նախապատրաստվել ստանալու տաճարային արարողությունները:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Երբ հետաքրքրվողները գալիս են դեպի Քրիստոսը և նախապատրաստվում են դառնալու Եկեղեցու անդամ, նրանք պետք է հասկանան փրկության արարողությունների հետ կապված ուխտերը և պատրաստակամ լինեն կապել և պահել այդ սրբազան պարտավորությունները:
- Միսիոներներն օգնում են նորադարձներին նախապատրաստվել մկրտությանը, հաստատմանը և Տիրոջ Եկեղեցու անդամակցությանը:
- Վեհացման համար անհրաժեշտ ուխտերն ու արարողությունները ստանում են Տիրոջ տաճարում:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ հետաքրքրվողները գալիս են դեպի Քրիստոսը և նախապատրաստվում են դառնալու Եկեղեցու անդամ, նրանք պետք է հասկանան փրկության արարողությունների հետ կապված ուխտերը և պատրաստակամ լինեն կապել և պահել այդ սրբազան պարտավորությունները:

■ Ուսուցման որոշիչ պահերից մեկն այն է, երբ դուք, որպես միսիոներ, մկրտվողին հրավիրում եք մկրտվելու: Երբ հետաքրքրվողը դարձի գալու անցումային շրջանում է, նա պետք է հասկանա Տիրոջ հետ ուխտեր կապելու սրբազան էությունը, ինչպեսև պատրաստակամ լինի անձնական պատասխանատվություն վերցնել ընդունելու և պահելու ուխտերը: Ավետարանի օրհնությունները հնարավոր չէ ամբողջովին ստանալ առանց ուխտեր կապելու և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի փրկարար արարողություններն ընդունելու: Նորադարձները կապում են առաջին ուխտերը, երբ ընդունում են ջրով և Հոգով մկրտվելու արարողությունը: Այս և մյուս ուխտերն օրհնություններ են բերում և բացում են Աստծո արքայությունում փրկության դռները:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մորոնի 6.1–4
- Վարդապետություն և Ուխտեր 20.37
- Վարդապետություն և Ուխտեր 42.78
- Վարդապետություն և Ուխտեր 45.9

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ [Ուխտը] Աստծո և մարդու միջև համաձայնություն է, որի մեջ սակայն, նրանք չեն գործում որպես հավասարներ: Աստված տալիս է ուխտի պայմանները, և մարդիկ համաձայնվում են անել այն, ինչ նա խնդրում է անել: Այնուհետև, Աստված մարդկանց որոշակի օրհնություններ է խոստանում նրանց հնազանդության համար:

Սկզբունքներն ու արարողություններն ընդունվում են ուխտի միջոցով: Եկեղեցու այն անդամները, որոնք նման ուխտեր են կապում, խոսք են տալիս հարգել դրանք: Օրինակ՝ անդամներն ուխտ են կապում Տիրոջ հետ մկրտության ժամանակ և նորացնում են այդ ուխտերը՝ ճաշակելով հաղորդությունից: Նրանք լրացուցիչ ուխտեր են կապում տաճարում: Տիրոջ ժողովուրդն ուխտյալ ժողովուրդ է, և նա մեծապես օրհնվում է՝ պահելով Տիրոջ հետ կապած ուխտերը»: (Սուրբ գրքերի ուղեցույց, «Ուխտ», էջ 213):

Աստված միշտ պահում է Իր ուխտերը: Ուխտը կորցնում է իր ուժը միայն երբ տղամարդը կամ կինը չեն հնազանդվում և չեն պահում ուխտի իրենց մասը:

«Սկզբունքներն ու արարողություններն ընդունվում են ուխտի միջոցով»:

■ Առաջին Նախագահության խորհրդական՝ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը, հաստատել է ուխտերի հիմնական նպատակը. «Ուխտերն ըստ էության ձևական ծիսակատարություններ չեն, այլ փոփոխության իրական ու արդյունավետ միջոցներ: «Վերստին ծնունդը կատարվում է Աստծո Հոգով՝ արարողությունների միջոցով» [*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith (1976), 162]: Մենք միշտ պետք է հարգենք և սուրբ պահենք Տիրոջ հետ կապած մեր ուխտերը: Եթե վարվենք այդպես, նա խոստացել է, որ մենք կստանանք հայտնություն հայտնության վրա, իմաստություն իմաստության վրա, որ մենք կիմանանք գաղտնիքները և խաղաղարար բաները, որ բերում են ուրախություն և հավիտենական կյանք [ՎԿՈՒ 42.61]» (տես «Conference Report», ապրիլ 1998, 19 կամ «Ensign», մայիս 1998, 17):

Մեր կյանքի համար վճռական ստուգարք է տեսնել, թե արդյոք մենք կկապենք և կպահենք [Աստծո] հետ մեր ուխտերը»:

■ Երեց Հենրի Բ. Այրինգը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է. «Վերջին օրերի սրբերը ուխտի ժողովուրդ են: Մկրտության օրից մինչև մեր կյանքի հոգևոր փորձառության ճանապարհը, մենք խոստումներ ենք տալիս Աստծուն, և Նա խոստումներ է տալիս մեզ: Նա միշտ պահում է Իր լիազորված ծառաների միջոցով տրված խոստումները, սակայն մեր կյանքի համար վճռական ստուգարք է տեսնել, թե արդյոք մենք կկապենք և կպահենք Նրա հետ մեր ուխտերը» (տես «Conference Report», հոկ. 1996, 40 կամ «Ensign», նոյ. 1996, 30):

■ Երեց Ֆ. Բարտոն Հովարդը՝ Յոթանասունից, նկարագրել է, թե ինչ է նշանակում ուխտեր կապելը և դրանք պահելը. «Մենք ուխտյալ ժողովուրդ ենք: Եթե կա Եկեղեցու անդամներին բնորոշ որևէ առանձին հատկանիշ, դա այն է, որ մենք ուխտեր ենք կապում: Սակայն մենք պետք է հայտնի լինենք նաև որպես ուխտեր *պահող* ժողովուրդ: Խոստումներ տալը հեշտ է, սակայն մեկ այլ բան է դրանց հետևելը և մեր խոստումները կատարելը: Դրա համար պետք է մնալ ճանապարհին՝ լինելով հաստատուն և անսասան: Դա նշանակում է պահել հավատքը և հավատարիմ լինել մինչև վերջ, անկախ հաջողությունից ու ձախողումից, կասկածից կամ հիասթափությունից: Դա մեր ողջ սրտով Տիրոջը մոտենալն է: Դա մեր խոստումները մեր ողջ զորությամբ կատարելն է, անգամ երբ ցանկություն չենք զգում դա անելու» (տես «Conference Report», ապրիլ 1996, 38 կամ «Ensign», մայիս 1996, 28):

■ Երեց Ռասսել Մ. Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, որ ուխ տ կապելու մեջ կա ավելին, քան վարդապետությունն իմանալն ու հասկանալը. «Մեր պարտականությունն է օգնել մարդկանց, Հոգու զորության շնորհիվ, *իմանալ* և *հասկանալ* ավետարանի վարդապետությունն ու սկզբունքները: Յուրաքանչյուր

անձ պետք է *զգա*, որ Վերականգնման վարդապետությունը ճշմարիտ է և մեծ արժեք ունի : Եվ յուրաքանչյուր անձ, ով ընդունում է ուղերձը, պետք է ձգտի *ապրել* ավետարանով, կապելով ու պահելով սրբազան ուխտերը և մասնակցելով փրկության և վեհացման բոլոր արարողություններին» (տես «Conference Report», հոկ. 2000, 97 կամ «Ensign», նոյ. 2000, 75):

■ Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, թե ինչու է կարևոր, որ մենք ապրենք այնպես, որ Սուրբ Հոգին վավերացնի մեր ուխտերը. «Մեր Փրկիչն աշխարհի լույսն է: Մենք պետք է ապրենք այնպես, որպեսզի լուսավորվենք Հոգու կողմից, և որպեսզի լսենք և ուշք դարձնենք վավերացնող կնիքին Սուրբ Հոգու, որը վկայում է Հոր և Որդու մասին (տես ՎԿՈՒ 20.26).... Մենք պետք է հավատարիմ լինենք Հիսուս Քրիստոսի անունով կապած մեր ուխտերին» (տես «Conference Report», հոկ. 1987, 79 կամ «Ensign», նոյ. 1987, 66):

Միսիոներներն օգնում են նորադարձներին նախապատրաստվել մկրտությանը, հաստատմանը և Տիրոջ Եկեղեցու անդամակցությանը:

■ Միսիոներները հետաքրքրվողներին ուսուցանում են Տիրոջ պատվիրանները, և ապա, հրավիրում են գործել ըստ նրա, ինչ սովորեցին: Հետաքրքրվողներին հրավիրում են հավատք ունենալ առ Տերը, ապաշխարել և պատվիրանները պահելու պարտավորություններ ընդունել: Սա նրանց օգնում է նախապատրաստվել մկրտության առանձնազրույցին, որի ժամանակ նրանց հարց կտրվի այս պատվիրանները մինչև կյանքի վերջ պահելու պարտավորության մասին: Երբ հետաքրքրվողները մկրտվելու պարտավորություն են վերցնում, նրանցից պահանջվում է հավատարմություն արժանավորության չափանիշներին (տես Մորոնի 6.1–4):

Երբ հետաքրքրվողները մկրտվելու պարտավորություն են վերցնում, նրանցից պահանջվում է հավատարմություն արժանավորության չափանիշներին:

Երկնային Հայրը սիրում է Իր զավակներին և ցանկանում է օրհնել նրանց: Պատվիրանները օրհնությունների հնարավորություններ են բերում (տես ՎԿՈՒ 130.20–21): Այս բաժնում քննարկված պատվիրաններն այն պատվիրաններն են, որոնք հետաքրքրվողները պետք է հասկանան և ընդունեն նախքան իրենց մկրտությունը: Այդ պատվիրաններից յուրաքանչյուրին հնազանդվելը էական է, որպեսզի արժանի լինել մկրտվելու համար: Այդ պատվիրանների թվում են.

- Հանգստության օրը սուրբ պահել:
- Հետևել մարգարեներին:
- Ապրել մաքրաբարոյության օրենքով:
- Իմաստության խոսքին հնազանդվել:
- Ապրել տասանորդի օրենքով:

Հանգստության օրը սուրբ պահել

Հանգստության օրվա մեր պահվածքը Աստծուն պատվելու և երկրպագելու մեր պարտավորության արտացոլումն է: Հանգստության օրը սուրբ պահելով՝ մենք Աստծուն ցույց ենք տալիս մեր ուխտերը պահելու պատրաստակամությունը: Վերջին օրերի Սրբերը պետք է այս սուրբ օրն առանձնացնեն աշխարհի գործերից և նվիրվեն երկրպագությանը, գոհաբանությանը, ծառայությանը և ընտանիքի վրա կենտրոնացած գործերին, որոնք պատշաճ են Հանգստության օրվա համար: Եթե Եկեղեցու անդամները հետամուտ լինեն, որպեսզի Հանգստյան օրվա իրենց գործերը համահունչ լինեն Տիրոջ Հոգուն, նրանց կյանքը կլցվի ուրախությամբ և խաղաղությամբ:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ելից 20.8–11
- Վարդապետություն և Ուխտեր 59.9–10

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին Հանգստության օրը պատշաճ անցկացնելու վերաբերյալ տվել է հետևյալ խորհուրդը. «Կարիք չկա, որ մարդիկ Կիրակի օրը գնումներ կատարեն և դրանով իսկ սրբապղծեն Հանգստության օրը: Այն նպարեղեն գնելու օր չէ.... Դուք շաբաթվա մեջ վեց օր ունեք.... Կարիք չկա գնումներ կատարել Կիրակի օրը.... Դուք ոչինչ չեք կորցնի, եթե ձեր գնումները կատարեք մնացած օրերին և չանեք դա Կիրակի օրը: Թո՛ղ այս օրը լինի խորհելու, սուրբ գրությունները կարդալու, ձեր ընտանիքի անդամների հետ զրուցելու և Աստծո գործերը կատարելու օր: Եթե վարվեք այդպես, դուք կօրհնվեք» («Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley», *Ensign*, ապրիլ 1998, 74):

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է, թե ինչպես էր Հանգստության օրը հարգվում նախկին տնտեսությունների ժամանակ. «Ավետարանի հավերժական ճշմարտություններն ու սկզբունքները կարևոր էին և կարևոր են ինչպես հնադարյան այնպես էլ ժամանակակից Իսրայելի ժողովրդի համար: Օրինակ՝ Հանգստության օրը սերունդներ շարունակ հարգվել է տարբեր պատճառներով: Ադամի

ժամանակից մինչև Մովսես, Հանգստության օրը պահվել է ի հիշատակ Տիրոջ արարչագործությունից հանգստանալու օր (տե՛ս Ելից 20.8–11, 31.16–17): Մովսեսի ժամանակից մինչև Տիրոջ հարությունը Հանգստության օրը նշվել է նաև ի հիշատակ Եգիպտոսում Իսրայելացիների ճորտությունից ազատագրման օր (տե՛ս Բ Օրինաց 5.12–15, Եսայիա 58.13, Եզեկիել 20.20, 44.24, Մոսիա 13.19): Վերջին օրերին Սրբերը Հանգստության օրը պահում են ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության (տե՛ս Գործք 20.7, Ա Կորնթացիս 16. 2, Հայտնություն 1.10, Վ և Ու 59.9–19)» («Ելիցը կրկնվեց», Լիահոնա, ապրիլ 2002):

Հետևել մարգարեներին

Քրիստոսն Իր Եկեղեցին կառուցել է մարգարեների և առաքյալների հիմքի վրա: Առաքյալներն ու մարգարեները Եկեղեցին առաջնորդում էին հայտնությամբ: Տերը կանչեց Ջոզեֆ Սմիթին որպես առաջին մարգարե, որպեսզի առաջնորդի Իր Եկեղեցին այս վերջին տնտեսության ժամանակ: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին առաջնորդող մարդիկ մարգարեն և առաքյալներ են: Եկեղեցու նախագահը ապրող մարգարե է: Մենք հավատում ենք Աստծո ընտրված մարգարեներին և հետևում ենք նրանց խորհրդին ու ուսմունքներին:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ամովս 3.7
- Վարդապետություն և Ուխտեր 1.38
- Վարդապետություն և Ուխտեր 21.4–6

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը նկարագրել է Աստծո մարգարեին աջակցելուց եկող օրհնությունները.

«Ովքեր որ ցանկանում են խավարից դուրս գալ դեպի լույս, պետք է համոզվեն, որ նրանք ներդաշնակ են այն ոգեշնչմանն ու հայտնությանը, որը գալիս է մարգարեներից, տեսանողներից ու հայտնողներից.... Նրանք մարգարեական պատգամներ հաղորդողներ են, որոնք դարերի ընթացքում սնվել են երկնային հաղորդակցության կայաններից, պատասխանատվություն ունենալով փոխանցել Տիրոջ խոսքերը:

Ձեզ համար, երիտասարդնե՛ր, Փրկչի հետ ավելի ներդաշնակ լինելու լավագույն ձևը երկրի վրա ապրող Նրա մարգարեին աջակցելն է, որը Եկեղեցու նախագահն է, և մեր օրերում՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: Եթե չհետևենք ապրող մարգարեին, ով էլ որ նա լինի, մենք հոգևորապես մահանալու վտանգի տակ կլինենք.... Ես կարող եմ վկայել, որ շարունակական հայտնությունը գալիս է Եկեղեցուն շատ հաճախ: Այն գալիս է ամեն օր» (*Come out of the Darkness into the Light* [CES fireside for young adults, սեպ. 8, 2002], 4):

■ Երեց Ռոբերտ Դ. Հելյզը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, քննարկել է մարգարեներին հետևելու կարևորությունը.

Այսօր Եկեղեցին ղեկավարում են ապրող մարգարեները: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ամենալավագույն ապավոհությունը գալիս է նրանից, որ սովորենք լսել և հնազանդվել ապրող մարգարեների միջոցով տրված Տիրոջ խոսքերին ու պատվիրաններին....

.... Մեր հոգևոր անվտանգությունը գալիս է ապրող մարգարեի պարզորոշ ձայնը լսելուց: Եթե լսենք նրա ձայնը և հնազանդվենք նրա խորհրդին, մենք կկարողանանք ապրել այնպես, ինչպես Քրիստոսը կցանկանար, որ ապրեինք, և կհամբերենք մինչև վերջ, որպեսզի մի օր, մեր ընտանիքների հետ միասին, վերադառնանք Մեր Երկնային Հոր և մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ներկայությունը» (տես «Conference Report», ապրիլ 1995, 19, 21 կամ «Ensign», մայիս 1995, 17):

Ապրել մաքրաբարոյության օրենքով

Աստված հիանում է Իր որդիների ու դուստրերի մաքրաբարոյությամբ և ատում է սեռական մեղքը: Մաքրաբարոյությունը սեռական մաքրությունն է: Մաքրաբարո լինելու համար մենք պետք է բարոյապես մաքուր լինենք մեր մտքերով, խոսքերով և գործերով: Նախքան օրինական ամուսնությունը ոչ մի սեռական հարաբերություն չպետք է ունենալ: Նրանք, ովքեր ամուսնացած են, պետք է ամբողջովին հավատարիմ լինեն իրենց ամուսնուն կամ կնոջը: Պոռնոգրաֆիայի ցանկացած դրսևորումից պետք է հեռու մնալ: Աստծո կողմից տրված ծննդաստեղծ զորությանը և մեր մարմիններին պետք է սուրբ վերաբերվել: Մկրտության թեկնածուները պետք է ապրեն մաքրաբարոյության օրենքով, որն արգելում է օրինական ամուսնությունից դուրս որևէ սեռական հարաբերություն, այդ թվում նաև համասեռամոլ հարաբերությունները: Նրանք պետք է նաև չմասնակցեն արհեստական վիժեցման: Եթե սեռական մեղք է գործվել, նրանք պետք է ապաշխարեն, նախքան Տերը կարող է Իր ներումը շնորհել նրանց:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 42.22–25
- Վարդապետություն և Ուխտեր 63.16

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Առաջին Նախագահություն և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները հայտարարել են. «Աստված պատվիրել է, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին» («The Family: A Proclamation to the World», *Ensign,* նոյ. 1995, 102):

■ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը հակադրել է նրանց կյանքը, ովքեր խախտում են մաքրաբարոյության օրենքը, նրանց հետ, ովքեր ապրում են բարոյապես մաքուր կյանքով.

«Նրանք, ովքեր ֆիզիկական մտերմություն են ունենում ամուսնությունից դուրս, ավելի մեծ հավանականությամբ մեղավորության զգացում կունենան, ինչպեսև էմոցիոնալ և ֆիզիկական ցավ կզգան: Տիրոջ նշանակած սահմաններից դուրս տղամարդու և կնոջ միջև սեռական հարաբերությունները նրանց բերում են մեծ թշվառություն, ամոթ, ցածրացման և ապերջանիկ վիճակի:

Ի հակադրություն՝ երբ այս սրբազան պարգևները օգտագործվում են Տիրոջ նշանակած ձևով, տաճարային ամուսնության սահմաններում, նրանք մեզ բերում են ամենամեծ ուրախությունն ու երջանկությունը: Մենք միանում ենք Տիրոջը ստեղծման աշխատանքում, ունենալով ընտանիք և ժառանգություն: Մաքրաբարոյությունը ամուսնությունից առաջ և հավատարմությունը ամուսնությունից հետո, ինքնահարգանքի և երջանկության սրբազան անձնագիր է բոլորի համար» («The Virtues of Righteous Daughters of God», Ensign, մայիս 2003, 109):

■ Երեց Դալին Հ. Օքսը խոսել է մաքրաբարոյության օրենքի մասին.

«Մահկանացու կյանք ստեղծելու զորությունն ամենավեհ զորությունն է, որ Աստված տվել է իր զավակներին: Դրա օգտագործումը պարտադրվել է առաջին պատվիրանով, սակայն մեկ այլ կարևոր պատվիրան է տրվել դրա չարաշահումը արգելելու համար: Մաքրաբարոյության օրենքի վրա դրվող շեշտադրումը բացատրվում է Աստծո ծրագիրն իրականացնելիս ծնունդ ստեղծելու մեր զորության օգտագործման նպատակը հասկանալուց:

Ծննդաստեղծ զորության օգտագործումը հաճելի է Աստծո համար, սակայն նա պատվիրել է, որ այն պետք է ամփոփվի ամուսնական հարաբերություններով: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ ն ուսուցանել է, որ «օրինական ամուսնության սահմաններում սեռական հարաբերությունների մտերմությունն օրինական է և ունի աստվածային հավանություն: Սեռական հարաբերությունների մեջ չկա ոչ մի անսուրբ, ոչ էլ ցածրացնող բան, քանի որ դրա միջոցով տղամարդն ու կինը սիրո արտահայտմամբ միանում են արարչության գործին» (*The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball [Salt Lake City: Bookcraft, 1982], p. 311):

Ամուսնության կապից դուրս ծնունդ ստեղծելու զորության բոլոր օգտագործման ձևերը մեղք է՝ տարբեր աստիճանի, որը ցածրացնում և այլասերում է տղամարդու և կնոջ ամենաաստվածային հատկանիշները» (տես «Conference Report», հոկ. 1993, 99 կամ «Ensign», նոյ. 1993, 74):

Իմաստության խոսքին հնազանդվել

Իմաստության Խոսքը մեզ ուսուցանում է հոգ տանել մեր ֆիզիկական մարմնի մասին: Մասնավորապես, այն ուսուցանում է, որ մենք պետք է ձեռնպահ մնանք վնասակար նյութերի, այդ թվում ալկոհոլի, ծխախոտի, թեյի և սուրճի օգտագործումից: Մենք պետք է նաև խուսափենք չարտոնված թմրանյութերի օգտագործումից: Նախքան մկրտվելը և դրանից հետո, հետաքրքրվողները պետք է հնազանդվեն Իմաստության Խոսքին: Նրանք, ովքեր հնազանդվում են այս օրենքին, ստանում են առողջություն, ուժ և պաշտպանություն չարի դեմ:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Ա Կորնթացիս 6.19–20
- Վարդապետություն և Ուխտեր 89.18–21

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին զգուշացրել է Իմաստության Խոսքի պատվիրանը խախտելու դեմ. «Մարմինը, որ դուք ունեք, Աստծո տաճար է: Այն սրբազան է: Այն Աստվածության վարպետության գործ է: Ես և դուք, ո՛չ մի դեպքում, չպետք է օգտագործենք չարտոնված թմրանյութեր: Դրանք ամբողջովին կկործանեն ձեզ: Դրանք կհեռացնեն ձեր ինքնատիրապետումը: Դրանք ձեզ կդրդեն անազնիվ արարքներ, որպեսզի գումար գտնեք այն գնելու համար: Հեռու մնացեք այն բաներից, որոնք գրված են Իմաստության Խոսքում՝ ո՛չ մի ալկոհոլ, ո՛չ մի գարեջուր, ո՛չ մի ծխախոտ: Ինչպիսի՞ օրհնություն է սա: Ինչպիսի՞ օրհնություն է իմաստության խոսքը, որը Տերը տվել է Իր Եկեղեցուն՝ ապրելակերպ, որը կօրհնի մեր կյանքը» («Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley», *Ensign,* մարտ 1999, 73):

Ապրել տասանորդի օրենքով

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամակցության մեծ օրհնություններից մեկը տասանորդ վճարելու միջոցով Աստծո արքայության աճում ներդրում ունենալու արտոնությունն է: Տասանորդը աստվածային հին օրենք է: Օրինակ՝ Հին Կտակարանի մարգարե Աբրահամն իր ունեցածից տասանորդ էր վճարում (տես Ալմա 13.15):

Տերը մեզ պատվիրել է մեր տարեկան եկամուտի մեկ տասներորդը նվիրաբերել, օգնելու Իր թագավորության կառուցմանը: Մեր տասանորդը սուրբ է Տիրոջ համար, և տասանորդ վճարելով, մենք ցույց ենք տալիս մեր հարգանքը նրանց հանդեպ: Աստված խոստանում է առատորեն օրհնել նրանց, ովքեր ազնիվ տասանորդ են վճարում (տես Մաղաքիա 3.10–12):

Տասանորդի հիմնադրամներն օգտագործվում են աջակցելու Եկեղեցու ընթացիք գործունեությանը, ինչպիսիք են տաճարներ ու ժողովատներ կառուցելն ու պահպանելը, միսիոներական աշխատանքին աջակցելը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները և ուրիշ շատ արժանապատիվ գործեր: Տասանորդը չի օգտագործվում Եկեղեցու տեղական ղեկավարներին վճարելու համար. տեղական բոլոր համայնքները նախագահում են չվճարվող սպասավորներով, որոնք չեն վճարվում Եկեղեցական իրենց ծառայության համար:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մաղաքիա 3.10–12
- Վարդապետություն և Ուխտեր 119.4

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին կիսվել է նրանով, թե ինչու ենք մենք տասանորդ վճարում. «Օրհնություն է միշտ Տիրոջը վերադարձնել մեկ տասներորդն այն ամենի, ինչ Նա տվել է մեզ: Ես մեծ վկայություն ունեմ տասանորդի վերաբերյալ՝ իմ եղբայրներ և քույրեր: Ինձ համար երբեք դժվար չէ եղել վճարել իմ տասանորդը, անգամ ֆինանսական ճնշվածության ժամանակ, որովհետև Տերը խոստում է տվել, որ կօրհնի մեզ, եթե մենք անենք այդ: Ես չեմ տվել այդ խոստումը: Ձեր եպիսկոպոսը չէ տվել այդ խոստումը: Ինքը Տերն է տվել այդ խոստումը, և Նա ի զորու է պահելու այդ խոստումը» (*Ensign*, ապրիլ 1998, 74):

■ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը բացատրել է, որ տասանորդ վճարելը հարուստ կամ աղքատ լինելու խնդիր չէ.

«Տասանորդի օրենքը պարզ է. վճարում ենք մեր տարեկան շահույթի մեկ տասներորդ մասը: Շահույթը առաջին նախագահության կողմից մեկնաբանվել է որպես եկամուտ: Որքա՞ն է կազմում մեր անձնական եկամտի 10 տոկոսը մեզանից յուրաքանչյուրի ու Արարչի գործն է: Չկա ոչ մի օրինաչափություն: Կորեայում մի նորադարձ ասել է. «Ինչ վերաբերում է տասանորդին, ապա կարևոր չէ հարուստ եք դուք, թե՝ աղքատ: Դուք վճարում եք 10 տոկոսը և չպետք է ամաչեք, որ շատ չեք վաստակել: Եթե դուք ստանում եք խոշոր գումարներ, ապա վճարում եք 10 տոկոսը: Եթե ստանում եք շատ քիչ՝ դուք կրկին վճարում եք 10 տոկոսը: Երկնային Հայրը կսիրի ձեզ դրա համար: Դուք կարող եք հպարտորեն բարձր պահել ձեր գլուխը....

Ոմանք կմտահոգվեն, որ չեն կարողանա վճարել տասանորդը, բայց Տերը խոստացել է, որ ճանապարհ կհարթի մեզ համար՝ պահելու Իր բոլոր պատվիրանները [տես 1 Նեփի 3.7]: Տասանորդ վճարելը սկզբում հավատի գործադրում է պահանջում, սակայն ինչպես ասել է Հիսուսը. «Եթե մեկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար»: Մենք սովորում ենք տասանորդի մասին՝ վճարելով այն: Իսկապես, ես հավատում եմ, որ հնարավոր է հաղթել աղքատությանը հավատալով մեր ունեցած քչի մի մասը Տիրոջը վերադարձնելուն» (տես «Conference Report», հոկ. 1998, 73–74 կամ «Ensign», նոյ. 1998, 59):

Վեհացման համար անհրաժեշտ ուխտերն ու արարողությունները ստանում են Տիրոջ տաճարում:

■ Տաճարային արարողություններն անհրաժեշտ են վեհացման համար: Միսիոներները հետաքրքրվողներին նախապատրաստում են ընդունելու վերականգնման ավետարանի սկզբունքներն ու արարողությունները: Եկեղեցու հավատարիմ անդամները շարունակում են առաջադիմել, որպեսզի արժանի լինեն վեհացման սելեստիալ արքայությունում: Մեզ ոչ միայն պատվիրվել է մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը, այլ եթե կամենում ենք ստանալ Երկնային Հոր բոլոր օրհնությունները, մենք պետք է ընդունենք այն արարողությունները, որոնք առաջարկվում են Տիրոջ տանը:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 131
- Վարդապետություն և Ուխտեր 132.15, 18–19

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Նախագահ Հովարդ Վ. Հանտերը բացատրել է տաճարային արարողությունների կարիքը. «Տաճարային արարողությունները բացարձակորեն վճռական են. առանց դրանց մենք չենք կարող վերադառնալ Աստծո ներկայությունը: Ես քաջալերում եմ յուրաքանչյուրիդ արժանիորեն այցելել տաճար կամ աշխատել այն օրվա համար, երբ կարող եք մտնել այդ սուրբ տունը, որպեսզի ստանաք ձեր արարողություններն ու ուխտերը» («A Temple-Motivated People», *Ensign*, Feb. 1995, 5):

«Տաճարային արարողությունները բացարձակորեն վճռական են. առանց դրանց մենք չենք կարող վերադառնալ Աստծո ներկայությունը»:

■ Նախագահ Հանթերը շեշտել է, որ մկրտությունը վերջնանպատակ չէ հետաքրքրվողների համար. «Ավետարանը հռչակելու, Սրբերին կատարելագործելու և մահացածներին փրկագնելու բոլոր մեր ջանքերը մեզ տանում են դեպի սուրբ տաճար: Սա այն պատճառով է, որ տաճարային արարողությունները բացարձակորեն վճռական են. մենք չենք կարող առանց դրանց վերադառնալ Աստծո ներկայությունը» (տես «Conference Report», հոկ. 1994, 118 կամ «Ensign», նոյ. 1994, 88):

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է, թե ինչպես է հավերժական կյանքի ճանապարհին վերականգնված ավետարանն առաջնորդում դեպի տաճարը. Տաճարը Տիրոջ տունն է: Տաճարային յուրաքանչյուր արարողության և ուխտի հիմքը՝ փրկության ծրագրի սիրտը, Հիսուս Քրիստոսի Քավությունն է: Եկեղեցում կատարվող յուրաքանչյուր միջոցառում, յուրաքանչյուր դաս, ամեն բան, ինչ անում ենք Եկեղեցում, մատնանշում է Տիրոջը և Նրա սուրբ տունը: Ավետարանը հռչակելու, Սրբերին կատարելագործելու և մահացածներին փրկագնելու մեր բոլոր ջանքերն առաջնորդում են դեպի տաճար....

Տաճարային արարողությունները, ուխտերը, օժտումները և կնքումները անհատին հնարավորություն են տալիս հաշտվել Տիրոջ հետ, իսկ ընտանիքներին՝ կնքվել մահվան վարագույրից այն կողմում: Տաճարային ուխտերին հնազանդվելը մեզ պատրաստում է հավերժական կյանքի՝ մարդուն տրված Աստծո ամենամեծ պարգևի համար [տես ՎԿՈՒ 14.7]: Հավերժական կյանքն ավելին է, քան անմահությունը: Հավերժական կյանքը վեհացում է երկնքի ամենաբարձր աստիճանում՝ կյանք, որն Աստված է վայելում» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 40 կամ «Ensign», մայիս 2001, 32–33):

■Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է, որ վեհացման համար պահանջվում է քահանայության լրիվությունը.

«Աստծո արքայությունում վեհացում հնարավոր չէ առանց քահանայության լրիվության.... Այս օրհնությունները ձեռք են բերվում Տիրոջ տան արարողությունների և ուխտերի հնազանդության միջոցով....

Տերը դա հնարավոր է դարձրել այս Եկեղեցու յուրաքանչյուր տղամարդու համար, հնազանդության շնորհիվ, Տիրոջ տաճարի արարողությունների միջոցով ստանալ քահանայության լրիվությունը: Ուրիշ տեղ դա հնարավոր չէ ստանալ» («Doctrines of Salvation», comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 3:132):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ նշանակալից բան կա Աստծո հետ ուխտ կապելու մեջ:
- Ինչո՞ւ են փրկարար արարողությունները կապված ուխտերի հետ:
- Ի՞նչ ձևով են Տիրոջ պատվիրաններն ուրախություն բերում մեր կյանքում:
- Ինչ եք կարծում, ի՞նչ պետք է ուսուցանվեն հետաքրքրվողները տաճարների մասին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուխտերի մի ցանկ կազմեք, որոնք կապել եք ձեր կյանքում, և մտածեք, թե ինչ ազդեցություն են դրանք ունեցել ձեր կյանքում և ինչպես են պաշտպանել ձեզ:
- Կիրառեք այս գլխում քննարկված թեմաներից մեկը տնային ընտանեկան երեկոյի ժամանակ, ընկերոջ կամ սենյակի դասընկերոջ հետ:
- Եթե վերջերս չեք արել դա, զրուցեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ տաճար գնալու մասին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Մկրտություն» (147–153 էջեր)
- «Մաքրաբարոյություն» (136–141 էջեր)
- «Ուխտ» (193–194 էջեր)
- «Մարգարեներ» (134–135 էջեր)
- «Հանգստյան օր» (100–101 էջեր)
- «Տաճարներ» (184–189 էջեր)
- «Տասանորդ» (189–191 էջեր)
- «Իմաստության խոսք» (74–76 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրիստոսանման հատկանիշները

ՆԱԽԱԲԱՆ

Որպես Աստծո որդիներ և դուստրեր՝ մենք աստվածային հատկանիշներ ենք ժառանգել: Նախամահկանացու մեր փորձառությունները մեզ պատրաստել են մահկանացու կյանքի համար, որտեղ մենք շարունակում ենք սովորել և աճել: Միսիայի ծառայությունը հրաշալի հնարավորություն է շարունակել զարգացնել և մեծացնել մեր աստվածային հատկանիշները, մինչ մենք փորձում ենք ավելի շատ նմանվել Փրկչին:

Հիսուս Քրիստոսը մեզ ցույց է տվել ինչպես պետք է ապրենք. «Ահա, ես եմ լույսը. ես օրինակ եմ ծառայում ձեզ համար» (3 Նեփի 18.16): Քրիստոսանման կյանք ապրելն այն կատարելատիպն է, որին ձգտում ենք (տես Մատթեոս 5.48, 3 Նեփի 12.48): Քրիստոսանման հատկանիշներին հետամուտ լինելու լավագույն ձևերից մեկն է ուսումնասիրել Փրկչի կյանքը և փորձել նմանվել Նրան: Արդյունավետ միսիոների Քրիստոսանման հատկանիշները հետաքրքրվողների համար կարող են վկայություն լինել միսիոների կյանքում վերականգնված ավետարանի հաղորդած գեղեցկության մասին: Հետաքրքրվողները ցանկանում են ունենալ այն, ինչ միսիոներներն ունեն և սկսում են ավետարանի լրիվության ծարավ զգալ: Եթե հավատարիմ լինենք, Հիսուս Քրիստոսը կշարունակի մեծացնել մեր շնորհներն ու կարողությունները և մեզ կօգնի ավելի շատ նմանվել Իրեն: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ավետարանի ամենահամոզիչ հրավիրատոմսը հավատարիմ Վերջին օրերի Սրբերի օրինակելի կյանքն է» (տես «Conference Report», ապրիլ 1982, 68 կամ «Ensign», մայիս 1982, 45):

«Ավետարանի ամենահամոզիչ հրավիրատոմսը հավատարիմ Վերջին օրերի Սրբերի օրինակելի կյանքն է»:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ

- Միսիոներները ձգտում են Քրիստոսանման հատկանիշներ զարգացնել:
- Միսիոներներին պատվիրվում է ծառայել Աստծուն ողջ իրենց «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 4.2):
- Հնազանդությունը կենսական հատկանիշ է միսիոներական աշխատանքի մեջ:

ՀԱՍՏԱՏՈՂ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միսիոներները ձգտում են Քրիստոսանման հատկանիշներ զարգացնել:

■ Որպես Տեր Հիսուս Քրիստոսի դեսպաններ՝ միսիոներները պետք է Նրան բնորոշ հատկանիշներ դրսևորեն բոլորի առաջ, ում ուսուցանում են: Հետաքրքրվողները հաճախ դրական ձևով են արձագանքում միսիոներներին ու անդամներին, ովքեր ձգտում են նմանվել Փրկչին: Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, նկարագրել է Քրիստոսանման հատկանիշներ ունեցող անդամների օրինակի զորության ուժը. «Անկասկած, չկա միսիոներական ավելի զորավոր ուղերձ, որը կարող ենք աշխարհ ուղարկել, քան սիրով լի և

երջանիկ Վերջին օրերի Սրբերի կյանքի օրինակը: Միսիոներական ոչ մի հրավիրատոմս ոչ էլ տեսաժապավեն չի կարող փոխանցել այն ջերմությունն ու ազդեցությունը, որը թողնում է Եկեղեցու հավատարիմ անդամի վարվելակերպն ու պահվածքը, ժպիտն ու բարությունը: Մարդիկ Եկեղեցու չեն միանում իրենց գիտելիքի պատճառով: Նրանք միանում են իրենց զգացածի պատճառով՝ այն պատճառով, ինչ նրանք տեսնում և ցանկանում են հոգևորապես: Այդ տեսանկյունից մեր հոգին ու վկայությունը կփոխանցվեն ուրիշների, եթե մենք թույլ տանք: Ինչպես Տերն ասել է Ալմային ու Մոսիայի որդիներին. «Առաջ գնացեք.... որպեսզի նրանց համար դուք կարողանաք ցույց տալ լավ օրինակ ինձանում, և ես կդարձնեմ ձեզ մի գործիք իմ ձեռքում՝ ի փրկություն շատ հոգիների» [Ալմա 17.11]» (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 16 կամ «Ensign», մայիս 2001, 14):

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Մատթեոս 25.40
- Ղուկաս 10.30–37
- Հովհաննես 13.4–17
- 2 Նեփի 31.9–10
- 3 Նեփի 18.24
- Վարդապետություն և Ուխտեր 4.5–6

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, մեզ քաջալերել է Քրիստոսանման հատկանիշներ զարգացնել, որպեսզի դառնանք արդյունավետ միսիոներներ. «Եթե մենք պետք է իրագործենք բոլոր մեր եղբայրների ու քույրերի համար երկինքները բացելու Տիրոջ պատվիրանը, մենք պետք է պատրաստվենք ուսուցանելու ավետարանը: Սուրբ գրություններն ուսումնասիրելով, ծոմ պահելով, աղոթելով՝ մենք զորացնում ենք մեր վկայությունները: Մենք կարող ենք Քրիստոսանման հատկանիշներ զարգացնել՝ «հավատք, առաքինություն, գիտելիք, ժուժկալություն, համբերություն, եղբայրասիրություն, աստվածայնություն, գթություն, խոնարհություն [և] ջանասիրություն» [ՎԱՈՒ 4.6]» (տես «Conference Report», սեպ.–հոկ. 1995, 102 կամ «Ensign», նոյ. 1995, 76):

Այդ Քրիստոսանման հատկանիշները քննարկվում են այս բաժնի մնացած մասում:

Հավատք (տես նաև Գլուխ 10, «Հավատքը և դարձի գալը»)

■ Հավատքը բերում է գիտելիք և հասկացողություն: Նախագահ Բոյդ Ք. Փակերը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահը, բացատրել է.

«Երբ փորձարկում եք ավետարանի սկզբունքները հավատքով՝ առանց իմանալու, Հոգին կսկսի ուսուցանել ձեզ: Աստիճանաբար, ձեր հավատքը կվերածվի գիտելիքի:

Դուք կկարողանաք զանազանել կամ *տեսնել* հոգևոր աչքերով» (տես «Conference Report», հոկ. 1994, 78 կամ «Ensign», նոյ. 1994, 60):

■ «Քարոզիր իմ ավետարանը» միսիոներական ուղեցույցը բացատրում է առ Հիսուս Քրիստոսը մեր հավատքի և մեր ապրելակերպի մեջ եղած կապը. «Հավատքը մղում է գործի, ներառյալ ապաշխարության, հնազանդության և նվիրված ծառայության: Երբ դուք հավատք ունեք Հիսուս Քրիստոսի հանդեպ, դուք Տիրոջը բավականաչափ վստահում եք Նրա պատվիրանները պահելու համար, նույնիսկ, երբ դուք լիովին չեք հասկանում դրանք պահելու պատճառները: Դուք կատարում եք այն, ինչ Տերն է կամենում, որ դուք կատարեք: Դուք օգնում եք, որ բարին կատարվի ձեր սեփական կյանքում և ուրիշների կյանքում: Դուք կարողանում եք հրաշքներ գործել Տիրոջ կամքի համաձայն: Ձեր հավատքը կդրսևորվի ջանասիրությամբ և աշխատանքով» («Քարոզիր իմ ավետարանը» [2004], 130–131):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, շեշտել է հավատքի կարևորությունը. «*Հիսուս Քրիստոսի հանդեպ գործադրած հավատքը* բացարձակորեն էական է: Այն փրկության ծրագրի հիմքն է: Երբ հավատքի գործադրումը միանում է *Նրա խորհրդին լսելու* պատրաստակամության վրա հիմնված անկեղծ ջանքերին, անձնական մեծ աճ և օրհնություններ են հետևում» (տես «Conference Report», հոկ. 1993, 119 կամ «Ensign», նոյ. 1993, 87–88):

Առաքինություն

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը նկարագրել է առաքինության որոշ հատկանիշներ.

«Առաքինի պահվածքը ենթադրում է, որ [քահանայություն կրողը] ունի անկեղծ մտքեր և մաքուր գործեր....

Առաքինությունը մոտ է սրբությանը, որն աստվածային հատկանիշ է: Քահանայություն կրողը պետք է ակտիվորեն փնտրի այն, ինչն առաքինի է և հաճելի, ոչ թե այն, ինչը ցածրացնող է և ստոր: Առաքինությունն անդադար կզարդարի նրա մտքերը (տես ՎԵՈՒ 121.45): Ինչպե՞ս կարող է որևէ տղամարդ ներգրավվել պոռնոգրաֆիայի, հայհոյանքի կամ գռեհիկության չարիքի մեջ և իրեն լիովին առաքինի համարի» (տես «Conference Report», հոկ. 1986, 60 կամ «Ensign», նոյ. 1986, 46):

«Առաքինությունը.... ներառում է արդարության բոլոր գծերը»:

■ Առաջին Նախագահության խորհրդական՝ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստը, բացատրել է. «Շատերը լիովին չեն ըմբռնում *առաքինություն* բառի իմաստը: Ընդհանուր հասկացվող իմաստներից մեկը մաքրաբարո կամ բարոյական մաքուր լինելն է, սակայն *առաքինությունն* իր լիարժեք իմաստով ներառում է արդարության բոլոր գծերը, որոնք օգնում են ձևավորել մեր բնավորությունը: Նյուֆաունդլենդի թանգարանում գտնվող հին մի գործվածքի վրա, որը ասեղնագործվել է 1813 թվականին, գրված է. «Առաքինությունը մտքի ամենամեծ գեղեցկությունն է, մարդկության ամենաազնիվ զարդարանքը: Առաքինությունը մեր պաշտպանությունն է և մեր ուղեկից աստղը, որը շարժում է մեր բանականությունը, երբ մեր զգացումները խաբում են»»: («The Virtues of Righteous Daughters of God», *Ensign,* մայիս 2003, 108):

Գիտելիք

■ Գիտելիք փնտրելիս մենք ունենք հավասարակշռության կարիք: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ընդգծել է, որ պետք է զգուշություն ցուցաբերենք, թե ինչ տեսակի գիտելիք ենք փնտրում.

«Աշխարհիկ և հոգևոր գիտելիքի գանձերը թագնված են, սակայն թագնված են նրանցից, ովքեր պատշաճ ձևով չեն փնտրում ու ձգտում գտնել դրանք.... Հոգևոր գիտելիքը հասանելի չի դառնում միայն հարցնելով. նույնիսկ աղոթքները բավական չեն: Այն պահանջում է հաստատակամություն ու նվիրվածություն ողջ կյանքի ընթացքում: Աշխարհիկ կյանքի գիտելիքները ժամանակի համար են և սահմանափակ. հավերժական ճշմարտությունների մասին գիտելիքները ժամանակի և հավերժության համար են:

«Գիտելիքների ողջ գանձարանում ամենակենսական գիտելիքը Աստծո մասին գիտելիքն է»:

Գիտելիքների ողջ գանձարանում ամենակենսական գիտելիքը Աստծո մասին գիտելիքն է. նրա փորձառության, զորությունների, սիրո և խոստումների մասին....

Աշխարհիկ գիտելիքը, որքան էլ կարևոր լինի, երբեք չի կարող փրկել հոգին, ոչ էլ բաց անել սելեստիալ արքայությունը, ոչ էլ աշխարհներ ստեղծել, ոչ էլ մարդուն աստված դարձնել, սակայն կարող է լավագույնս օգտակար լինել այն մարդու համար, որը առաջնային բաներին նախապատվություն տալով, գտել է ճանապարհը դեպի հավերժական կյանք, և որն այժմ կարող է ողջ գիտելիքը կիրառել՝ դարձնելով այն իր գործիքն ու իր ծառան» (*The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball [1982], 389–91):

Ժուժկալություն

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է.

Ժուժկալությունն առաջարկում է զգաստություն և զսպվածություն պահվածքում: Այն հիշեցնում է մեր կապած ուխտերից մեկը....

Սուրբ գրությունները, շարունակաբար, ուսուցանում են, որ մենք պետք է «ժուժկալ լինենք բոլոր բաներում» (Ա Կորնթացիս 9.25, Ալմա 7.23, 38.10, ՎԵՈՒ 12.8): Ժուժկալությունը յուրաքանչյուրիս կարող է պաշտպանել անզսպության հետևանքներից» (տես «Conference Report», հոկ. 1991, 81 կամ «Ensign», նոյ. 1991, 60):

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը տվել է ժուժկալ մարդու նկարագիրը. «Քահանայություն կրողը տարբերվում է *ժուժկալությամբ*: Սա նշանակում է, որ նա կառավարում է իր հույզերն ու իր խոսքերը: Նա գործերն անում է չափավորության մեջ և չի տրվում անզսպության: Մի խոսքով՝ նա ինքնատիրապետում ունի: Նա իր հույզերի տերն է, ո՛չ թե հակառակը (տես «Conference Report», հոկ. 1986, 62 կամ «Ensign», նոյ. 1986, 47):

Համբերություն

■ Մեծ առավելություն կա կյանքին նայել համբերությամբ: Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինն ուսուցանել է.

«Մենք իրական ուրախություն և երջանկություն կունենանք միայն եթե համբերություն սովորենք:

Բառարանները համբերությունը սահմանում են այնպիսի տերմիններով, ինչպես ցավը և վիշտը հանգիստ և առանց դժգոհության տանել. շտապող և անհանգիստ չլինել. անկախ ընդդիմությունից, դժվարություններից կամ ձախորդություններից՝ հաստատուն մնալ....

.... Հավատացած եմ, որ համբերության պակասն այսօրվա աշխարհում դժվարությունների և երջանիկ չլինելու մեծ պատճառ է: Շատ հաճախ, մենք անհամբեր

ենք մեր նկատմամբ, մեր ընտանիքի անդամների ու ընկերների նկատմամբ, և անգամ, Տիրոջ նկատմամբ: Մենք կարծես պահանջում ենք մեր ուզածը հենց հիմա, անկախ նրանից, թե մենք դրան արժանի ենք, թե արդյոք այն մեզ համար լավ է, թե արդյոք այն ճիշտ բան է...

Մենք պետք է սովորենք համբերատար լինել: Մեր ուժեղ և թույլ կողմերը ճանաչելով՝ մենք պետք է ձգտենք առողջ դատողություն գործածել բոլոր ընտրություններում և որոշումներում, լավ օգտագործենք յուրաքանչյուր հնարավորությունը և մեր լավագույնն անենք հանձն առած յուրաքանչյուր ձեռնարկության մեջ: Ամեն անգամ, երբ արել ենք մեր լավագույնը, մենք չպետք է անտեղի վիատվենք, ոչ էլ հուսախաբվենք: Փոխարենը, պետք է բավարարված զգանք մեր առաջընթացով, անգամ եթե այն երբեմն դանդաղ է ընթանում» (տես «Conference Report», ապրիլ 1987, 35–37 կամ «Ensign», մայիս 1987, 30, 32):

Եղբայրասիրություն

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ասել է. «Նա ով ունի եղբայրասիրություն, կարեկից և սիրալիր է ուրիշների հանդեպ: Նա հաշվի է առնում ուրիշների զգացմունքները և բարեկիրթ է իր պահվածքում: Նա օգնական բնավորություն ունի: Բարությունը ներում է ուրիշների թուլությունները և սխալները: Բարությունը տարածվում է բոլորի վրա՝ տարեց մարդու և երիտասարդի, ցածր դիրք, թե բարձր դիրք ունեցողի և անգամ կենդանիների վրա» (տես «Conference Report», հոկ. 1986, 62 կամ «Ensign», նոյ. 1986, 47):

Աստվածայնություն

■ Երեց Ռասսել Մ. Նելսոնն ասել է.

«Աստվածայնությունը հատկանիշ է, որը դժվար է թե՛ սահմանել, թե՛ հասնել: Սուրբ գրություններում նշվում են, որ «աստվածայնության խորհուրդը մեծ է» (Ա Տիմոթեոս 3.16, ՎԱՈՒ 19.10)....

Սիմոն Պետրոսը մեզ խորհուրդ է տալիս լինել «սուրբ վարմունքով եւ աստուածապաշտ ընթացքով՝ սպասելով եւ ջանալով հասնել Աստծո օրուայ գալստեան» (2 Պետրոս 3.11–12):

Ք ահանայության արարողություններում է «բացահայտվում աստվածայնության զորությունը» (ՎԱՈՒ 84.20): Աստվածայնությունը կատարելության արդյունք չէ. այն կենտրոնանալու և նվիրաբերվելու արդյունք է:

Աստվածայնությունը բնորոշում է ձեզանից յուրաքանչյուրին, ով իրապես սիրում է Տիրոջը: Դուք հաստատուն ձևով մտածում եք Փրկչի քավության մասին և ուրախանում Նրա անվերապահ սիրով: Միևնույն ժամանակ դուք հաղթահարում եք անձնական հպարտությունը և սին փառասիրությունը: Դուք ձեր հաջողությունները կարևոր եք համարում միայն երբ դրանք օգնում են հաստատել Նրա արքայությունը երկրի վրա» (տես «Conference Report», հոկ. 1991, 83 կամ «Ensign», նոյ. 1991, 61):

■ Աստվածայնությունը կարելի է նկարագրել որպես անկեղծ համաձայնություն Աստծո կամքի հետ: Սկսելով վկայակոչել Մորոնիին՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

« «Այո, եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից. և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում. և եթե Աստծո շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում, դուք ոչ մի կերպ չեք կարող ուրանալ [Քրիստոսի] զորությունը» (Մորոնի 10.31–32)....

.... Իմ աղոթքն է, որ յուրաքանչյուրս լինենք մի փոքր ավելի բարի, մի փոքր ավելի հոգատար, մի փոքր ավելի քաղաքավարի: Իմ աղոթքն է, որ մենք զսպենք մեր լեզուն և թույլ չտանք, որ բարկությունը մեզ այնպիսի խոսքեր հուշի, որոնց համար հետո կափսոսանք: Իմ աղոթքն է, որ մենք ուժ և կամք ունենանք մյուս այտը դեմ տալու, մեկ մղոն ավելին քայլելու, որպեսզի բարձրացնենք թուլացած ծնկները և նրանց, որ վշտի մեջ են....

Թող Աստված օրհնի ձեզ, այս աշխատանքի իմ հրաշալի՛, հավատարի՛մ ընկերներ: Թող նրա խաղաղությունը և Նրա սերը լինի ձեր վրա և ձեր կյանքը լցնի աստվածայնության էությամբ» (տես «Conference Report», հոկ. 2003, 109–10 կամ «Ensign», նոյ. 2003, 103):

Գթություն

■ Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է, թե ինչպես ենք սովորում գթության մասին՝ հետևելով Փրկչի օրինակին. «Աստվածային էության վերջին առաքինությունն ու պսակն է *գթությունը* կամ Քրիստոսի մաքուր սերը (տես Մորոնի 7.47): Եթե իրապես ձգտենք ավելի շատ նմանվել մեր Փրկչին ու Վարդապետին, ապա նրան նման սիրելը պետք է լինի մեր գերագույն նպատակը: Մորմոնը համարում էր, որ գթությունը «բոլորից մեծ է» (Մորոնի 7.46):

Այսօր աշխարհը շատ է խոսում սիրո մասին, և շատերն են ձգտում գտնել այն: Սակայն Քրիստոսի մաքուր սերը մեծապես տարբերվում է նրանից, ինչ աշխարհն է սեր համարում: Գթությունը երբեք չի փնտրում եսասեր բավականություն: Քրիստոսի մաքուր սերը փնտրում է միայն ուրիշների հավերժական աճն ու ուրախությունը» (տես «Conference Report», հոկ. 1986, 62 կամ «Ensign», նոյ. 1986, 47):

■ Գթությունը պետք է լինի մեր գործերի դրդապատճառը, եթե ուզում ենք նմանվել Քրիստոսին: Երեց Դալին Հ. Օքսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է. «Դարձի գալու ընթացքում մեզ կոչ է արված շարժվել այն դիրքն ու վիճակը , որը կոչվում է հավերժական կյանք: Այն ձեռք է բերվում ոչ միայն ճիշտը գործելով, բայց նաև ճիշտ նպատակի համար գործելով՝ Քրիստոսի մաքուր սիրով: Պողոս առաքյալն այն լուսաբանել է սիրո (գթության) կարևորության մասին իր հայտնի ուսուցման մեջ (տես Ա Կորնթացիս 13): Պատճառը, որ գթությունը երբեք չի վերանա, և պատճառը որ գթությունն ավելի մեծ է, քան նրա թվարկած որևէ այլ նշանակալից բարի գործողություն, նրանում է, որ գթությունը՝ «Քրիստոսի մաքուր սերը» (Մորոնի 7.47), ոչ թե *գործողություն* , այլ *վիճակ* է կամ գոյավիճակ: Գթությունը ձեռք է բերվում շարունակական գործողություններով, որը դարձի է բերում: Գթությունը մի բան է, որով մարդ դառնում է գթառատ: Այսպիսով, ինչպես Մորոնին է ասել. «Եթե մարդիկ գթություն *չունենան*, նրանք չեն կարող ժառանգել այն տեղը, որը դու պատրաստել ես քո Հոր ապարանքներում (Եթեր 12.34, շղագիրն ավելացված է)» (տես «Conference Report», հոկ. 2000, 43 կամ «Ensign», նոյ. 2000, 34):

■ Հիսուս Քրիստոսը գթության կատարյալ օրինակ է: Մահկանացու կյանքի Իր ծառայության ընթացքում, Նա միշտ «շրջում էր բարիք անելով», սովորեցնելով ավետարանը, ցույց տալով գորովալի կարեկցանք աղքատների, չարչարվածների և թշվառների հանդեպ (տես Մատթեոս Դ. 23, Մարկոս Զ. 6, Գործք Ժ. 38): Նրա գթության դրսևորման գագաթնակետը Նրա անսահման Քավությունն էր: Նա ասել է. «Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհաննես ԺԵ.13): Սա երկայնամտության, բարության և անեսասիրության մեծագույն օրինակն է, որ մենք երբևէ կիմանանք....

Երբ շարունակեք ստանալ Փրկչի կատարյալ սերը և երբ ցույց տաք Քրիստոսանման սեր ուրիշների հանդեպ, դուք կտեսնեք, որ ձեր սերն աճում է: Դուք կզգաք ուրախություն՝ լինելով Տիրոջ ծառայության մեջ: Սուրբ Հոգին կլինի ձեր մշտական ուղեկիցը՝ ձեզ առաջնորդելով ձեր ծառայության մեջ և ուրիշների հետ ձեր հարաբերություններում»: («Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում (2004)», էջ 47):

Խոնարհություն

■ Երեց Ռիչարդ Զ. Սքոտն ուսուցանել է. «*Խոնարհությունը* էական դեր ունի հոգևոր գիտելիք ձեռք բերելիս: Խոնարհ լինել նշանակում է ուսուցանվող լինել: Խոնարհությունը ձեզ թույլ է տալիս դաստիարակվել Հոգու կողմից և ուսուցանվել Տիրոջ կողմից ոգեշնչված աղբյուրներից, ինչպիսիք են սուրբ գրությունները: Անձնական զարգացման և հասկացողության սերմերը ծլում ու ծաղկում են խոնարհության պարարտ հողում: Դրանց պտուղները հոգևոր գիտելիքն է, որը կառաջնորդի ձեզ և՛ ներկայում, և՛ ապագայում»: (տես «Conference Report», հոկ. 1993, 118 կամ «Ensign», նոյ. 1993, 87):

■ Որպես Յոթանասունի անդամ՝ Երեց Մարլին Կ. Ջենսենը, խոսել է խոնարհության և Աստծո կամքին հնազանդվելու կապի մասին. «Ճշմարիտ խոնարհությունը անխուսափելիորեն մեզ կտանի ասելու Աստծուն. «Քո կամքը թող կատարվի»: Եվ քանի որ մեր *էությունն* ազդում է մեր *գործերի* վրա, մեր հնազանդությունը կարտահայտվի մեր պատկառանքի, երախտագիտության և պատրաստակամության վրա՝ ընդունելու կոչումներ, խորհուրդ և ուղղություն»: (տես «Conference Report», մարտ–ապրիլ 2001, 10 կամ «Ensign», մայիս 2001, 10):

Ջանասիրություն

■ «Ջանասիրությունը Տիրոջ գործն անելիս հաստատուն, հետևողական, անկեղծ և եռանդուն ջանքն է: Տերն ակնկալում է, որ դուք կաշխատեք ջանասիրաբար, մեծ ճիգ գործադրելով և հոգածություն ցուցաբերելով: Ջանասեր միսիոներն արդյունավետ ձևով և հմտորեն է աշխատում: Միսիոներական աշխատանքում ջանասիրություն ցուցաբերելը Տիրոջ և Նրա գործի նկատմամբ ձեր սիրո արտահայտությունն է: Երբ ջանասեր եք, ձեր աշխատանքում ուրախություն և բավարարվածություն եք գտնում:

«Միսիոներական աշխատանքում ջանասիրություն ցուցաբերելը Տիրոջ.... նկատմամբ ձեր սիրո արտահայտությունն է»:

Շատ բարի գործեր արեք ձեր ազատ կամքով (տե՛ս ՎԱՈ 58.27): Մի սպասեք, որ ձեր ղեկավարներն ասեն ձեզ ինչ անել: Շարունակեք մինչև անեք այն ամենը, ինչ կարող եք, նույնիսկ, երբ դուք հոգնած եք: Կենտրոնացեք ամենակարևոր բաների վրա և խուսափեք ժամանակ վատնելուց: Աղոթեք առաջնորդության և ուժի համար: Ծրագրեք կանոնավորապես և արդյունավետորեն: Խուսափեք այն ամենից, ինչը շեղում է ձեզ ձեր մտքերից ու գործերից»: («Քարոզիր իմ ավետարանը», էջ 136):

■ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, երբ Առաջին Նախագահության խորհրդական էր, բացատրել է, թե ինչու միսիոներները պետք է ջանասիրաբար աշխատենք.

«Միսիոներական աշխատանքը դժվար է: Այն կլարի ձեր ուժերը: Այն կձգի ձեր կարողությունները: Այն կպահանջի ձեր լավագույն ջանքերը, հաճախ՝ կրկնակի ջանքերը: Հիշեք. «Ասպարեզն արագավազներինը չէ, ոչ էլ պատերազմը՝ քաջերինը» (Ժող. 9.11), այլ նրանցը, ովքեր համբերում են մինչև վերջ: Վճիռ կայացրեք.

Գործին կպչիր, մինչև այն քեզ կպչի:
Սկսողները շատ են, բայց ավարտողները՝ քիչ:
Պատիվ, զորություն դիրք և գովասանք
Կհասնի նրան, ով կդիմանա:
Գործին կպչիր, մինչև այն քեզ կպչի:
Հակվիր, քրտնիր, նաև ժպտա,–
Հակվածը, քրտնածը և ժպտացողը
Կյանքի հաղթանակին կհասնի քիչ անց [անհայտ հեղինակ]»
(տես «Conference Report», մարտ–ապրիլ 1979, 53 կամ «Ensign», մայիս 1979, 36–37):

Միսիոներներին պատվիրվում է ծառայել Աստծուն ողջ իրենց «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 4.2):

■ Միսիոներներն, ովքեր ծառայում են Աստծուն ողջ իրենց «սրտով, զորությամբ, մտքով և ուժով» (ՎԱՈՒ 4.2) կարող են ֆիզիկական, մտավոր և հոգևոր հաստատուն, անկեղծ և եռանդուն ջանքեր նվիրել՝ իրականացնելու իրենց նպատակը՝ հրավիրել «մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով» («Քարոզիր իմ ավետարանը», էջ 1): Ջանասեր միսիոները ժամանակ չի վատնի, այլ ամեն մի օրը Տիրոջը ծառայելու հնարավորություն կհամարի:

Միսիոներական աշխատանքը կարող է լինել հոգնեցուցիչ և դժվար: Որոշ օրեր կարծես այդքան արդյունավետ չեն լինի, մինչ մյուս՝ ավելի արդյունավետ օրերը կլրացնեն դվարների բացը: Մկրտությունների թիվը չէ որոշում միսիոներական ծառայության հաջողությունը: Միսիոներական ծառայության երջանկության մեջ էականը Հոգով արդյունավետ աշխատելը և ծառայելն է:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Վարդապետություն և Ուխտեր 4.2–5
- Վարդապետություն և Ուխտեր 18.15–16
- Վարդապետություն և Ուխտեր 88.84

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորություններն այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը խոսել է այն մասին, թե ինչ կապ կա միսիոներական աշխատանքի դժվարություններին դիմակայելու և Փրկիչի Քավությունը հիշելու մեջ.

«Ցանկացած մարդ, որն ինչ-որ տեսակի միսիոներական աշխատանք է կատարում, ինչ-որ ժամանակ հարց կտա. «Ինչո՞ւ է սա այդքան դժվար: Ինչո՞ւ չէ ավելի լավ առաջ գնում: Ինչո՞ւ չէ մեր հաջողությունն ավելի նկատելի: Ինչո՞ւ չեն ավելի շատ մարդիկ միանում Եկեղեցուն: Սա ճշմարտությունն է: Մենք հավատում ենք հրեշտակներին: Մենք ապավինում ենք հրաշքներին: Ինչո՞ւ շատ մարդիկ չ են հավաքվում մկրտության ավազանի մոտ: Մ իսիոներական աշխատանքի, Ինչո՞ւ չէ, միակ վտանգը՝ օր ու գիշեր մկրտության ավազանում թրջվելուց թոքերի բորբոքում ստանալը »:

Ժամանակ առ ժամանակ այդ հարցերը կառաջանան ձեզ մոտ: Ես այդ մասին շատ եմ մտածել: Ես դրան պատասխանում եմ որպես իմ անձնական զգացումներ: Համոզված եմ, որ միսիոներական աշխատանքն այդքան հեշտ չէ, որովհետև *փրկությունը էժանագին փորձառություն չէ:* Փրկությունը *երբեք* հեշտ չի եղել: Մենք Հիսուս Քրիստոսի Եկեղեցին ենք, մեր այս աշխատանքը ճշմարիտ է, և Նա է Գլուխը Մեծ Հավերժության: Ինչպե՞ս

կարող ենք հավատալ, որ մեզ համար հեշտ է լինելու, երբ Նրա համար երբեք, երբեք հեշտ չի եղել....

.... Երբ ձեզ համար դժվար է, երբ ձեզ մերժում են, երբ ձեր վրա թքում են և ձեզ դուրս են գցում և դուք սուլոցի և ռեպլիկի թիրախ եք դառնում, դուք ապրում եք այս աշխարհի երբևէ իմացած ամենալավ կյանքով, երբևէ ապրած միակ անկեղծ և կատարյալ կյանքով: Դուք պատճառ ունեք ողջ հասակով կանգնելու և երախտապարտ լինելու, որ Կենդանի Աստծո Կենդանի Որդին գիտի ձեր բոլոր վշտի ու չարչարանքների մասին» («Missionary Work and the Atonement», *Ensign*, մարտ 2001, 14–15):

■ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը բացատրել է, թե ինչու է միսիոներական աշխատանքը պահանջում մեր բոլոր միջոցների օգտագործումը. «Միսիոներական աշխատանքը ծանր աշխատանք է: Միսիոներական աշխատանքը կարիք ունի և պահանջում է ուսումնասիրման և նախապատրաստության երկար ժամեր, որպեսզի ինքը միսիոները կարողանա համապատասխանել այն աստվածային ուղերձին, որն ինքը հռչակում է: Սա սիրո աշխատանք է, բայց նաև զոհաբերության և պարտականությանը նվիրվածության աշխատանք» (տես «Conference Report», սեպ.–հոկ. 1995, 66 կամ «Ensign», նոյ. 1995, 49):

Հնազանդությունը կենսական հատկանիշ է միսիոներական աշխատանքի մեջ:

■ Զորություն կա, որը գալիս է հնազանդ միսիոներներին: Միսիայի ղեկավարները շեշտում են պատվիրանները պահելու, ինչպեսև միսիայի կանոնները պահելու կարևորությունը: Միսիոներները պետք է ոչ թե կուրորեն հնազանդվեն, այլ հավատարմորեն հնազանդվեն: Հավատարիմ հնազանդությունից մեծ խաղաղություն է գալիս:

Ուսանելու և խորհելու սուրբ գրություններ

- Հովհաննես 14.15
- 1 Նեփի 3.7
- Ալմա 37.35
- Վարդապետություն և Ուխտեր 82.10
- Վարդապետություն և Ուխտեր 130.20–21

Ուսանողի ձեր օրագրում գրի առեք ձեր տպավորությունները այս սուրբ գրությունների վերաբերյալ:

■ Միսիայի ընդհանուր կանոններին զուգահեռ միսիոներները հնարավորություն ունեն հետևելու առանձնահատուկ խորհրդին, որը տրվում է իրենց ղեկավարների կողմից: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին օրինակ է տվել այն զորության, որը գալիս է միսիայի նախագահին հնազանդվելուց.

«Տարիներ առաջ ես միսիայում էի Անգլիայում: Ես կանչվել էի ծառայելու Լոնդոնի Եվրոպական Միսիայի գրասենյակում՝ Տասներկուսի Խորհրդից՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մերիլի ղեկավարության ներքո, որն այդ ժամանակ Եվրոպական Միսիայի նախագահն էր: Մի օր Լոնդոնի օրաթերթերից մի քանիսը գրախոսություններ էին տպագրել՝ ինչ-որ մի հին գրքի վերատպումից, ծաղրական և տգեղ տոնով, նշելով, որ այդ գիրքը Մորմոնների պատմությունն էր: Նախագահ Մերիլն ինձ ասաց. «Ես ցանկանում եմ, որ դու գնաս այդ գրքի հրատարակչի մոտ և բողոքարկես այն»: Ես նայեցի նրան և քիչ էր մնում ասեի. «Միայն թե ոչ ես», սակայն հեզորեն ասացի. «Շատ լա՛վ, պարոն»:

Չեմ վարանում ասել, որ ես վախեցած էի: Ես գնացի իմ սենյակ և զգացի մի բան, որը կարծում եմ զգում էր Մովսեսը, երբ Տերը նրան խնդրեց գնալ և հանդիպել Փարավոնին: Ես աղոթք ասացի: Ես ներսում տակնուվրա էի լինում, քայլելով դեպի Գուջ փողոցի կայարանը, որպեսզի մետրոյով գնամ Ֆլիթ փողոցի կայարան: Ես գտա հրատարակչության նախագահի գրասենյակը և ներկայացրեցի իմ այցեքարտը ընդունարանում: Քարտուղարուհին վերցրեց այն և գնաց ներքին սենյակ և շուտով վերադարձավ, ասելով, որ նախագահը շատ զբաղված է և չի կարող ինձ ընդունել: Ես պատասխանեցի, որ հինգ հազար մղոն ճանապարհ եմ անցել, և որ ես կսպասեմ, մինչև նա ազատվի: Հաջորդ մեկ ժամվա ընթացքում նա երկու, թե երեք անգամ մտավ նրա գրասենյակ. ապա, վերջապես, ինձ ներս հրավիրեցին: Երբեք չեմ մոռանա այն պատկերը, երբ ներս մտա: Նա մի մեծ սիգար էր ծխում այնպիսի մի հայացքով, որը կարծես ասում էր. «Ինձ մի անհանգստացրեք»:

Գրախոսությունների մի քանի օրինակ իմ ձեռքում էին: Չեմ հիշում, թե ինչ ասացի ներս մտնելուց հետո: Իմ միջով կարծես մեկ այլ զորություն էր խոսում: Սկզբում նա անհարգալից և հարձակվողական դիրք ուներ: Ապա նա սկսեց փափկել: Վերջում նա խոստացավ, որ ինչ-որ բան կանի: Մեկ ժամվա ընթացքում լուրը հասավ Անգլիայի բոլոր գիրք վաճառողներին, որ գրքերը վերադարձնեն հրատարակչին: Մեծ ծախսեր անելով՝ նա տպագրեց և յուրաքանչյուր գրքում մի ներդիր փակցրեց, որ այդ գիրքը պատմություն չէր, այլ գեղարվեստական ստեղծագործություն, և որ հեղինակը ամենևին միտումնավոր չէր վիրավորել մորմոնական դավանանքի հարգալից մարդկանց: Տարիներ անց այդ մարդը Եկեղեցու համար այլ մեծարժեք շնորհ արեց, և դրանից հետո, մինչև իր մահը, ես ամեն տարի սուրբ ծննդյան բացիկ էի ստանում նրանից:

Ես հասկացա, որ երբ փորձում ենք հավատքով հնազանդվել քահանայության խնդրանքներին, Տերը ճանապարհ է բացում, անգամ երբ թվում է թե ճանապարհ չկա» («If Ye Be Willing and Obedient», *Ensign*, July 1995, 4–5):

■Միսիոներները, որոնք սովորում են հավատարմորեն հնազանդվել օրինվում են զորությամբ: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը ընդգծել է տարբերությունը դժկամորեն հնազանդվելու և պատրաստակամ հնազանդվելու միջև. «Երբ հնազանդությունը դաղարում է նյարդայնացնող լինել և դառնում է մեր որոնումը, այդ պահին Աստված մեզ օժտում է զորությամբ» (in Donald L. Staheli, տես «Conference Report», ապրիլ 1998, 108 կամ «Ensign», մայիս 1998, 82):

■ Երեց Դենիս Բ. Նյուենշվոնդերը՝ Յոթանասունից, խոսել է միսիայի կանոններին հնազանդվելու մասին. «Միսիայի կանոնները կարևոր են այն նույն ձևով, ինչպես կարևոր են պատվիրանները: Մենք բոլորս պետք է պահենք դրանք, հասկանալով, որ դրանք մեզ տալիս են ուժ, առաջնորդություն և սահմաններ: Խելացի միսիոները կսովորի կանոնների նպատակը և կօգտագործի դրանք իր բարիքի համար: Ձեր միսիան կարգուկանոնի ժամանակ է, երբ ձեր միտքն ունի մեկ կիզակետ: Ձեզանից կպահանջվի հրաժարվել ձեր ապրելաոճին բնորոշ որոշակի սովորություններից. երաժշտությունից, հեռուստացույցից, տեսաֆիլմերից, գեղարվեստական գրքերից, նույնիսկ աղջիկների հետ շփվելուց: Այս սովորությունների մեջ վատ բան չկա.... սակայն, միևնույն ձևով, վատ բան չկա նաև ուտելիքի մեջ, բացառությամբ, երբ դու ծոմ ես պահում, որի դեպքում անգամ մի գդալ ջուրը պատշաճ չէ օգտագործել» (տես «Conference Report», հոկ. 1991, 59 կամ «Ensign», նոյ. 1991, 43):

■ Երեց Ռիչարդ Ջ. Սքոտը բացատրել է, թե ինչպես կարող է անձնական հնազանդությունն օգնել միսիոներին զորությամբ վկայել. «Միսիոներները, որոնք տասանորդ են վճարել, օրինակ, կարող են վկայություն բերել խոստացված օրհնությունների մասին, որոնք Տերը տալիս է հնազանդության համար: Միսիոները, որն ապրել է արդար կյանքով, կարող է զորավոր վկայություն բերել, որովհետև հոգևոր փորձառություններ է ունեցել իր կյանքում: Նման փորձառությունները կապված են արժանավորության և Տիրոջ հանդեպ հավատքի հետ» (in "Teaching from the Heart», *Ensign*, հունիս 2004, 9):

ԽՈՐՀԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

- Այս դասում քննարկված Քրիստոսանման հատկանիշներից որո՞նք են, որոնց վրա կարիք կա կենտրոնանալ, որպեսզի զարգացնեք ձեր կյանքի այս ժամանակահատվածում:
- Ի՞նչ պետք է անեք, որպեսզի զարգացնեք ընտրած Քրիստոսանման հատկանիշները:
- Ինչպե՞ս են Քրիստոսանման հատկանիշները միսիոներներին հնարավորություն տալիս, որ ավելի արդյունավետ ձևով ուսուցանեն վերականգնված ավետարանը:
- Ինչո՞ւ են միսիոներական աշխատանքի համար կարևոր ջանասիրաբար ծառայելու թե՛ *կարողությունը*, թե՛ *ցանկությունը*:
- Ինչպե՞ս կարող եք ջանասիրաբար աշխատելու ավելի մեծ կարողություն զարգացնել, որպեսզի լինեք ջանասեր միսիոներ:
- Որո՞նք են օրհնություններից մի քանիսը, որոնք հնազանդության արդյունք են:
- Ո՞րն է հնազանդության և Սուրբ Հոգին ունենալու միջև եղած կապը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մտածեք Քրիստոսանման հատկանիշներ զարգացնելու ձեր առաջընթացի մասին: Ընտրեք կատարելագործելու մեկ կամ երկու ուղղություն և բարելավելու որոշակի ծրագիր կազմեք:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում» գրքույկ

- «Գթություն» (46–48 էջեր)
- «Հավատք» (102–104 էջեր)
- «Հույս» (124–126 էջեր)
- «Համեստություն» (89–91 էջեր)
- «Հնազանդություն» (120–121 էջեր)

ՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02369 13201 7
36913 201